

ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆ

ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ
ՏԱՄԸ ԴԱՏՈՐՈՎ

ԴԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստեփանակերտ
«Դիզակ պլյուս» հրատարակչություն
2009

ՀՏԴ 891.981-1 Խանյան
ԳՄԴ 84 Ն-5
Խ 256

Կազմեց՝ Սոկրատ Խանյանը
Խմբագրեց՝ Յովիկ Մուսայելյանը

ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆԻ 80-ամյակի
կապակցությամբ տասհատորյակը տպագրվում
է ԼՂՀ Գրողների միության վարչության
եւ Արցախի պետական համալսարանի
գիտական խորհրդի երաշխավորությամբ:

ԽԱՆՅԱՆ Ս.
Խ 256 Ընտիր երկեր: Հատոր II: Բանաստեղծ. / Սոկրատ
Խանյան.- Ստեփանակերտ, Դիզակ պյուս,
2009, 480 էջ:

Հատորում տեղ են գտել Սոկրատ Խանյանի ընտիր բա-
նաստեղծությունները 2000-2009 թթ. ժողովածուներից:


ՀՏԴ 891.981-1 Խանյան
ԳՄԴ 84 Ն-5

ISBN 978-9939-800-90-5

© Ս. Խանյան, 2009թ.

ԱՊԱԶԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾՆՉԻ
ՔԱՆԱՏՆԵՐԸ



Յուրաքանչյուր արվեստագետ ունի զնահատության չափորոշիչները։ Ընդհանուր, սխեմատիկ չափանիշներով գեղարվեստական գործը, խնդրո պարագայում՝ բանաստեղծությունը արժեւորելը անարդյունք մտավարժանք կոհիտվի, եւ արժանի անկողմնակալ բացահայտումը կկորցնի ճշմարիտ ու գիտական իր ելագիծը։ Ուրեմն, փորձենք բանաստեղծի խառնվածքին ու ստեղծագործական մաներային բնորոշ մոտեցումներով դիտարկել Սոկրատ Խանյանի «Իմ ծիածանը» բանաստեղծությունների հավաքածուն իր առանձնահատկությունների ու ընդհանրությունների մեջ։ Դա վերաբերում է եւ թեմատիկային, եւ արտահայտչական միջոցներին։

Ժողովածուում գետեղված բանաստեղծի համառոտ կենսագրականը ծանուցում է. «Արցախյան ազատագրական պայքարի եւ հետագա տարիներին բանաստեղծի գրած ստեղծագործությունների ընտրամին է»։ Այս հավաքածուում եւս Խանյանը, հարազատ մնալով իր գրելառջին, թեմատիկ նախասիրություններին, իր կարողություններին ու փորձին, իրապարակ է համել յուրովի մի տարեգրություն, որտեղ չափածո խոսքի տպավորիչ միջոցներով եւ օրագրային անկեղծությամբ ու անմիջականությամբ ստեղծել է Արցախյան հերոսամարտին նվիրված ներշնչանքի, ազգային արժանապատվությամբ զգացումի դրսեւորման մնայուն էջեր։ Յուրացնելով մեր մոտիկ անցյալի կենսական, գոյապայքարի հիմնական խնդիրները՝ բանաստեղծը «Իմ ծիածանը» ժողովածուով ընդարձակում է պոետական իրականության իր ըմբռնումների սահմանները։ Այս առումով տեղին ու ժամանակին հարիր է գրքի լույս աշխարհ գալը, մանավանդ որ՝ այն նվիրված է բանաստեղծի ծննդ-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Մյան 70-ամյակին եւ տպագրվել է ԼՂՀ կառավարության հովանավորությամբ:

Չորս՝ «Արցախի դասը», «Իմ հարազատներ, իմ կյանք», «Սիրո կրակներ» եւ «Պոեմներ» բաժիններից կառուցված ժողովածուում հերոսական ու լավատեսական ոգին, հարազատներին ծոնված նվազմերը, իրապարակախոսական շեշտադրումները պայմանավորված են մեր կյանքին ու ժամանակին ուղեկցող շրջադարձին: «Իմ ծիածանը» ժողովածուի տիրապետող շաղախը եւ բովանդակային մերանը վերազարդոնքի, ընդվզումի, տառապանքի, ազատագրական պայքարի ու հաղթանակի բանաստեղծական վերապրումներն են՝ սիրո, վերհուշի, կարոտի, թախծի ու կենսասիրության արծարծումներով:

Ժողովածուում, հեղինակի նախորդ գրքերի համեմատ, ավելի կենսահայտ հարցեր են շոշափվում, հայ մարդու ճակատագրի ավելի խոր շեշտեր են ընդգրկվում, եւ ծայրեծայր տիրապետում է քաղաքացիական հզոր շունչը: Այս գրքում զուտ քնարական հերոսին փոխարիմնելու է եկել ինքն իրեն հաղթահարած, իր արյան կանչին ու Յայ դատին հաղորդակից դարձած, վերլուծող, ազատ, արժանապատիվ ու հպարտ ապրելու ձգտումներով առլեցուն իրական հերոսը: Սոկրատ Խանյանի բանաստեղծական ներկապնակին հավելվող այս նոր գծերն ու բովանդակային երանգներն իրենց կնիքներն են դրել արտահայտչական միջոցների վրա, եւ տողը դարձել է զինվոր, քայլակը՝ վաշտ, ամբողջ բանաստեղծությունը կամ պոեմը՝ մի զորագունը:

«Արցախի դասը» բաժնի համանուն խորագրով բանաստեղծությունը, արդարեւ, կարող է բնաբան ծառայել գրքի թե՛ բանաստեղծությունների եւ թե՛ պոեմների համար:

Ամարասում եղավ մեր դասն առաջին,
Լույսի դաս էր, հույսի դաս էր, պայքարի,
Մեր դասը հար ծուլվեց արյան մեր կանչին,
Եվ Արցախը հայտնի դարձավ աշխարհին:

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Իր մեջ առաջ կյանքի ողջ լավատեսական լիցը, հաղթանակի բերկրանքը, մարտիկի հոգեբանությունը, ժողովրդի մասնիկը լինելու գիտակցությունը՝ Սոկրատ Խանյանը, միաժամանակ, քախող, կարոտող, հիասթավկող, բարեկամությունը, սերը, մարդուն պանծացնող բանաստեղծ՝ քաղաքացի ու մարդ՝ իր թուլություններով, նախասիրություններով, տագնապներով ու կորուստներով:

«Իմ ծիածանը» հավաքածուի լավատեսական, հերոսական ոգին արծարծվող նյութին բնորոշ պատկերներով ու չափատողներով կիզակետված է «Արցախի արծիվը», «Նահատակ լուսո» եւ «Սիեր» պոեմներում: Համադրելով պատմական եւ մեր նորօյյա գոյապայքարի դրվագները՝ վերոնշյալ պոեմներում Սոկրատ Խանյանը քնարեակիական շնչով, ռիթմական առանձնահատկություններով, արտահայտչական նորանոր միջոցներով երգում է հավերժի ճամփորդներ դարձած, մարտիրոսված հերոսների հավերժալուս փառքը, որոնց սիրանքն ու կորովը ոգեղենացել են մեր մեջ, քանզի

Արցախ աշխարհի փրկության համար


Մարտնչում է եւ զոհվածի հոգին:

Սոկրատ Խանյանի «Իմ ծիածանը» ընտրանու քաղաքացիականությունը պետք է որոնել ոչ թե թեմաների, առանձին գործերի մեջ, այլ, առաջին հերթին, խոստովանքային անկեղծության, բանաստեղծի ապրածի, դրամատիզմով հագեցած օրերի ու ժամանակակիցների հետ բանարվեստային զրույցում: Այս առումով քաղաքացիական առողջ լիցը հարուստ է Սոկրատ Խանյանի «Իմ ծիածանը» ժողովածուն:

Յենրի ԱՌՈՒՇԱՆՅԱՆ
Բանասեր-հրապարակախոս
«Ազատ Արցախ», 3 հուլիսի, 2001թ.

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

ՄԻՄԻ ԾԱՄՓԱՆ ԴԵՊԻ ԵՐԱՎԻՆ ՆԻ ՄՈՏԵՆ



Ընթերցելով ու վերընթերցելով Սոկրատ Խանյանի «Սիրո ճամփա» ժողովածուն, ին մեջ առաջացավ ժխտողական մի կարծիք՝ նրանց դեմ, ովքեր պնդում են, թե իբր բանաստեղծները իրենց 50-ը լրանալուց հետո համարյա դադարում են երգեր գրելուց, իսկ եթե գրում են, ապա ավելի շատ զգացվում է դիդակտիկան, իուշն ու ափսոսանքը: Ս. Խանյանի «Սիրո ճամփա»-ն հենց հակադիր է նման եզրահանգնանը: Դեռևս 1960-ական թթ. սկզբին գրաբնադատները նկատել են, որ Ս. Խանյանի պոեզիան աչքի է ընկնում գաղափարի եւ զգացմունքի գիրկընդիմառն շաղախով, որ նրա բանաստեղծություններում լավատեսությունն ու հավատը մարդկանց նկատմամբ փայլում է արեւային լույսով: Այսօր էլ կարող ենք հաստատել վաստակաշատ բանաստեղծի նախասիրությունների եւ ստեղծագործական խառնվածքի այդ դրսեւորումը:

«Սիրո ճամփա»-ն, որ իրատարակվել է 2007-ին, առաջին հերթին ազդարարեց, որ 77-ամյա բանաստեղծը առաջվա պես սիրահարված է կյանքին, որ նրա երգերի ակունքը հայրենի եզերքն է, նրա հազարամյակների տեր ու տնօրեն արցախցին, նրա փրկված ներկան ու ծաղկուն գալիքը: Այստեղից էլ այն ոգեւորությունն ու որդիկան սերը, որ պետական թարմ ու խոսուն պատկերներով արտահայտված են գրքի բաժիններում:

Ս. Խանյանը օրերին ծովլված, օրերի շունչն զգացող արվեստագետ է: Նավատարիմ իր ստեղծագործական 60-ամյա խառնվածքին ու դասական պոեզիայի ավանդույթներին, նա ընթերցողին է ներկայացրել հայրենիքին, սիրուն, մարդկային այլազան ապրումներին, ժամանակակից հասարակական-քաղաքական երեւույթներին նվիրված իր մտորումներն ու խոհերը՝ գեղարվեստական խոսքի ինքնատիպ հնարանքներով:

Գրքի խորագիրը, որ հյուսված է մարդկային սիրո թելադրանքով, միանշանակ չէ: Դա քաղաքացու ազմիվ զգացումների բուրումնավետ մի փունջ է՝ առ հայրենիք եւ ժողովուրդ, որոնք սրբու-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Թյունների սրբություն են յուրաքանչյուր անհատի համար: Դիմելով հայրենի Արցախին, բանաստեղծը վերիիշում է նրա դարավոր ուղին եւ արյան գնով ազատագրված ներկան ու հպարտության զգացումով բացականչում:

Դու վեր ելար՝ դարձած Միեր ու Դավիթ,
Ու վերջ դրիր սրտակեղեք մեր ցավին,
Չոհյալներիդ կենաց-գավաթ, իմ Արցախ,
Ապրողներիդ կենաց-հավատ, իմ Արցախ:

(«Իմ Արցախ»):

Արցախ աշխարհի տիրոջ ամենաշերմ զգացումներով բանաստեղծը աշխարհասփյուռ հայության յուրաքանչյուր ներկայացուցչի անունից հավաստիացնում է, որ Արցախը Յայոց երկիր է («Արցախս Յայաստան է»), որ լուսավոր ու ամուր է Առաքելական Եկեղեցուց ստացած մեր աղոթքը («Սեր հավատը»), որ հայ մայրերի կարով սնված զինվորյալները մի-մի դյուցազուններ են («Այս մեղալը»), որ 1988-ի փետրվարի 20-ը աստղալույս է մեր նոր ճանապարհին.

Նա մեր տենչերից ծնված թռչունն է,
Սեր հաղբ թեւերն է, երազը հուրիեր.
Նա հավերժածուի մեր փրկությունն է,
Սեր պատիվն է նա ու գալիքը մեր:

(«Փետրվարի 20, 1988»):

Ժողովրդական իմաստության պոետական առինքնող հյուսվածքներ են գրի «Պապն ու թոռը», «Զնձաղիկները», «Զրուց Յիսուսի հետ», «Շաբաթօրյա ձմեռային գիշեր», «Առեղծված» եւ այլ երգեր:


Սիրո հավերժական լույսի անմիջական թրթիռներ են «Սերս լեզենդ է» շարքը, որտեղ խանյանը բոլոր սիրողների անունից ընդհանրացնում է. «Սիրո խորհուրդը՝ առեղծված, անուրջ, Աստծոն ման՝ անսկիզբ, անվերջ» է:

«Սիրո ճամփա» գիրքը պոետական հասուն գրչի նվեր է իր ընթերցողներին:

Սիրուն ԲԱՂԴԱՍՍԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ

ԱՆԱԶՈՐԱՆԻ ՓՈԽՎՐԱՆ

ԱԽՏԾՎՐ ՔԱՆՅԱԿԱՆԵՐԻՒՄ



Սա իին-դասական կառույց է եւ դարերի ընթացքում, ի տարբերություն այլ ժամրերի, գրեթե չի ենթարկվել այլակերպումների: Ժամանակակից հայ եւ արեւմտյան գրականության մեջ մոդեռն չորս տողանոցները կարելի է քայյակ համարել պայմանականութեն, թեեւ եթե արմատական պահպանողական չենք կամ Հռոմի Պապի չափ պապական՝ դրանք էլ հնարավոր է ընկալել ու մեկնաբանել իրեն քայյակ: Այդուամենայնիվ, «քայյակ» անվան տակ մերը «դասագրքային» քայյակն է՝ Օնար Խայյամ, Քուչակ, Հովհաննես Թումանյան: Այսօր էլ այդ դպրոցին ենք պատկանում գրելով «Նրանց պես»: Բնավ մեղադրելի չէ, այլ հետաքրքիր է, որ քայյակը շարունակում է իր իին «հանգաբանությամբ» ապրել, նշանակում է հարաբերում է ժամանակակից մարդու հուզաշխարհին: Լիպարիտ Սարգսյանն այս կարգի քայյակների ծավալուն գիրը է լույս ընծայել: Սոլիրատ Խանյանն ընթերցողին է մերկայանում քայյակների «Թեւավոր ին կյանք» ժողովածուով (2006թ.):

Բանաստեղծ, բանասիրական գիտությունների դոկտոր, պր-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Դեսոր Սոկրատ Խանյանն իր բազում գրքերի ու հոդվածների շնորհիվ լայնորեն հայտնի հեղինակ է, հատկապես՝ արցախահայության մեջ, որին նվիրել է իր ամբողջ ստեղծագործական կյանքը, եղել արցախցի թե՛ ըստ ծննդաբանության եւ թե՛ հոգով։ Նրա քարյակները պատկանելիության այս ծիրում են՝ Արցախը, նրա մարդիկ, բնությունն իրենց յուրահատուկ խոհական զգացմունքայնությամբ։ Նա ամբողջովին ելնում է դասական քառյակի դպրոցից եւ, ըստ երեւույթին, չի էլ պատկերացնում ժամրն առանց դրա ընդունված-կանոնակարգված սկզբունքների։ Սա եւ՝ հեշտացնում, եւ՝ դժվարացնում է ամեն քառյակագրի աշխատանքը։ Հեշտացնում է, որովհետեւ կան հարուստ ավանդույթներ։ Դժվարացնում, քանի որ ակամայորեն խնդիր է առաջանում մրցել դրանց հետ։ Իսկ մրցությունը (ամեն մրցություն) դաֆան գործ է։ Լինեմ բարի ու բարյացական եւ ասեն, որ Խանյանի քառյակների լավագույն քառատողերը արտահայտում են լուսավոր տիրություն, անանձնական սեր, այս օրերի մասին կենսական մտածողություններ՝ մտերմանալով ժամանակակից նարդու հուզաշխարհին։ Տես «Ի՞նչ են հուշում», «Կյանքը գետ է», «Ով մոլախոտ», «Հոր համբավը», «Քո երազած», «Մայր են կանչում», «Կոռունկների երամից», «Քնած լինես», «Ինչ էլ լինի», «Լուսաբացիս շողը», «Հոգմած սիրտս», «Թշնամու դեմ», «Կյանքի-մահվան բերանում» բառերով սկսվող քարյակները։

«Թեւավոր իմ կյանք» ժողովածուն հարստացնում է Սոկրատ Խանյանի բանաստեղծական հետաքրքրությունների շրջանակը նոր գունագործերով՝ դրան հաղորդելով այնքան կարեւոր խոհական զգացմունքներ։

Նորայր ԱՌԱՅԵԱՆ
«Գրական թերթ», 2007թ.,
թիվ 8, 16 մարտի

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

«ԻՄ ՆՎԵՐԻ»



Այսպիսի խորագիր ունի Սոկրատ Խանյանի նոր երգերի փունջը, որ վերջերս լուս է ընծայել Աղրբեջանի «Գյանջլիք» հրատարակչությունը:

Դիմք բանաստեղծական ժողովածուների հեղինակ Ս. Խանյանը այս գրքույկը հասցեագրել է մանուկ ընթերցողներին: Գրքույկը նրա առաջին գրույցն է մանուկների հետ: Դեղինակը ազնվագույն նպատակ է միտում մանուկների մտածելակերպով, նրանց աշխարհընկալմանք, նրանց ապրումներով տեսնել, ճանաչել լավն ու բարին, ազնիվն ու գեղեցիկը, սիրելին ու ատելին, մանկան ուրախությունն ու տխրությունը, դրանով իսկ նպաստել նրա աշխարհաճանաչմանը.

Սեթը քրոջն
Ասաց՝ Նիմել,
Լուսացել է,
Ի՞նչ ես քնել:
Դե շուտ վեր կաց,
Կեսօր դառավ,
Բաժակիդ մեջ
Կաթը սառավ:
Փիսոն ծամիդ
Դետ խաղում է
Ու քեզ վրա
Ծիծաղում է:

(«Քնկոտ Նիմելը»)

Այստեղ մանուկներին հոգեհարազատ ասելիքը մատուցվում է պատշաճ ձեւի մեջ: Մանուկներն ունենում են հանգի, ոիթմի լավ զգացում, եւ երբ ոտանավորում ամեն ինչ տեղն է, նրանք անմիջապես անգիր են անում (անգամ եթե գրել, կարդալ չգիտեն) եւ չեն

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Մոռանում ողջ կյանքում:

Պետք է ասել, որ գրքոյիկի ոտանավորների մեծ մասը կատար-
յալ ձեւ ունի՝ կարծ եւ սահուն տողեր, երաժշտական բարեհնչյուն
հանգ, դյուրամարս ռիթմ, անպաճոյց միտք:

Յաճելի ծեւով լավ խոհեր են մատուցվում «Սիասին», «Մեր
Անուշը», «Մայրիկն ու բալիկը», «Խաղալիքների աշխարհում»,
«Խանութում», «Ինչու անուշ են» ոտանավորներում, որոնք, ան-
շուշտ, իրենց դրական ազդեցությունը կունենան մանուկ ընթեր-
ցողների նրբազգաց հոլգաշխարհում:

Յեղինակին հաջողվում է աշխույժ գրելաճեւով սյուժետավոր
ոտանավորներ ստեղծել: Մրամիտ է ծույլ Ավոյի եւ Դավոյի գրույ-
ցը: Ավոն հարցնում է Դավոյին, թե քանի օրում կարող է նա տան մի
անկյունից մյուսին հասնել: Դավոն պատասխանում է.

Առավոտյան թե շուտ ելնեմ,

Տատիկն օգնի՝

Ուտեմ, խմեմ,

Դե, ի՞նչ ասեմ,

Երեկոյան գուցե հասնեմ...

Մյուս ծույլը՝ Ավոն, խիստ զարմացած բացականչում է.

-Դավո,

Շատ ես հետաքրիր,

Ինքնաթի՞ո ես դու, թե իրիո...

Մի գեղեցիկ բնապատկեր է «Գարման ամպը»՝ գրված նուրբ
արվեստով, պարզ ու մատչելի:

Յետաքրությամբ է ընթերցվում նաեւ «Աղջիկների վեճը»:

Իսահակ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
«Սովետական Ղարաբաղ»,
11 հոկտեմբերի, 1973թ.

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

ԱՊԿՐԱՏ ԽԱՆՅԱՆ - 50
ՄԱՄՈՒՆԱՎՔԻ ՀԱՖԾ

1980թ. փետրվարի 2-ին իմ հայրենի Աղբուղադ գուղում կշնչեց իմ ծննդյան
50-ամյակը: Այն խաղմաներսել են գույի միջնակարգ դպրոցի կողեկիրիկ և
գրողների միության ԸՆԴՄՄ-ի բաժանումներ:

Այրեանակերպից եկեղ են մասնակցելու՝ Գ. Գարիելյանը, Ա. Հովհաննիս-
յանը, Հր. Վեգարյանը, Ա. Հակոբյանը, լրագրող-նկարիչ Ար. Ասրագյանը:

Հայրութիւն շրջանի՝ երերորդ քարտուսար Աշարակյանը և երրորդ քարտու-
սար Հ. Վիսնեանը, շրջողիրաբաժնի վարչի Արքահանյանը, Առվելական
Միության հերոս Աշոյ Գասպարյանը:

Մասնակցում եր «Դրուժա» սովորությունից պիտիկոր Ա. Նախասարյանը:
Երեսուն բացականացությունից պիտիկոր Խ. Պապարյանը:

Իմ կյանքի և արևծագործության մասին պետքանունի հանդես ենքավ դպրոցի
հայոց լիցիի և գրականության ուսուցչութիւն է. Ասրագարյանը: Հեղափոքիր է կայ-
մած պետքանունի: Վեհապետ մեզ ՅՈ աշակերտներ արդասանեցին իմ բանասեծծո-
րյուններից՝ դարձելու թեմաներուն: Աշխուիքու ինչ ողովուեցին սիրուելուերը, կա-
պեցին սիրուերանա փողիապ, ընդուղով իրենց զերպարի պատրավոր անդամ:

Եղույր ունեցած Գ. Գարիելյանը, Հր. Վեգարյանը, Ա. Հակոբյանը: Ա.
Հովհաննիսյանը հանձնեց բաժանումների ողովությունը: Ծերս են եղույթները,
սրբակը, անմիջական:

Գրողների հերոս եղույր ունեցած մեխանիկապոր Խ. Հովհաննիսյանը, պատրա-
ստիր վեհապետ Վ. Աղասյանը, ուսուցչութիւն Է. Պետրոսյանը, ուսաւողութիւններ
Ա. Պապարյանը, Հ. Աղասյանը:

Մեծ-Թաղերի ուսանողական ընկեր Ա. Բայրակը ասաց իր
սրբի խոսքը: Նրան շարունակեցին Հղիլութ միջնակարգ դպրոցի պիտիկորը, իմ
դպրոցական դասընկեր Ա. Պողոսյանը, ենոյն դպրոցի գրահանության ուսուցիչ Ա.
Խաչյանը: Անդում եղույր ունեցած են:

Երեկոյից հետո իմ հայրական օգախում շարունակեցինք պրոյց՝ և ույն գերմո-
թյանը և անմիջականությանը:

Անդրադ ԽԱՆՅԱՆ
23. 01. 1980թ.

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

ՀԱՌԳԵԼԻ ԱՌԱՄԱՏ ԽՎԱՅԱՆ

Աղբեկանի Թրողելիքի Միության Քեռևային Պարարադի մարզային բաժանմունքի պարական ու գերմորթն շնորհավորում է Չեկ՝ ծննդյան 50-ամյակի կապակցությամբ:

Անցելով սրեղծագործական երկարամյա ու բեղմանիոր ճանապարհ, զոյք ահա երեսուն տարի է, ինչ Չեկ գրիք ծառացելում եք սովորական ընթերցողների սրբերության, մարդկանության, հայրենասիրության, ժողովուրդների բարձրամուշյան վեհականական ու գերա զայտականության սերմանեան վեհ գործին: Անկենցությունը, անմիջականությունը, որով հայու են Չեկ սրեղծագործություններին, վաղու սերպ հաս են սրեղծել Չեկ ու Չեկ բարձրագործություններին միզեւ, ճանաչում բերել չեկ ոչ միայն մեր մարդուն, այլև եռա ասինանեար դրաւ:

Հարգելի բնիկեր Մոլոսպ Խալեյան, զոյք միաժամանակ չեք խնայում Չեկ զանիքերի ու կարողությունների հայ եւ սովորական ժողովուրդների գրական կապերի մերժեցնեան ու անհապելինան գործում, Չեկ բարձրորակ թարգմանություններով հայ ընթերցողին ներկայացնելով եղբայրական հայրապետությունների բանացեղների լավագույն գործերը: Ասկայ Չեկ զայտակի անօխություն եւ մի պայմանական է կազմում Չեկ զիրա-մանկավարժական գործունեությունը, որը լրացնում եւ անբողական է Չեկ գրական դիմանեարը:

Հիսուս կարին մարդու համար հասունության ամառ է, եւ Դոփ լեցուն եք սրեղծագործական այլունով ու եռաւեղով: Հասպար համոզիած ենք, որ Չեկ երկրորդ հիսուսիակի կիսառավորին սրեղծագործական նոր հազորություններով:

Հարգելի բնիկեր Մոլոսպ Խալեյան, քոյլ ցովեք մի անզամ ես գերմորթն ու պարական շնորհավորել Չեկ՝ Չեկ ծննդյան 50-ամյակի կապակցությամբ, երկար դարիների կյանք, քաջառողջություն ու սրեղծագործական խիստական մաղթել Չեկ գրական դժվարին, բայց պատրաբեր ճանապարհին:

Աղբեկանի գրողների միության
Քեռևային Պարարադի մարզային բաժանմունք
22. 04. 1980թ.

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

ԾՆԿԱԾ ԱՊԽՈՒՄՆԵՐԻՑ ԵՎ ԽՈՀՀԵՐԻՑ

Երգի աշխարհում

Երբ մտովի վերապրում ես բանաստեղծ Սոկրատ Խանյանի անցած ստեղծագործական ուղին, ընթերցում նրա գրքերը, կշռադատում եւ չափում նրա արածն ու ստեղծածը, հանգում ես հանրահայտ մտքին. «Լավ է մեկ անգամ տեսնել, քան տասն անգամ լսել»:

Իսկ բանաստեղծ Խանյանին տեսնում եւ ճանաչում են մարզի համարյա բոլոր անկյուններում, նրա երգ դարձած բանաստեղծությունները կատարում են պրոֆեսիոնալ եւ ինքնագործ շատ կոլեկտիվներ:

Կոմպոզիտոր Էդուարդ Ղազարյանը բազմից անդրադարձել է Ս. Խանյանի բանաստեղծություններին: Նա երաժշտություն է գրել «Կովկաս», «Բալլար տատիկի եւ պատերազմի մասին» («Այրող հուշ»), «Կարոտ», «Գովք Ղարաբաղին», «Մեր գյուղը» եւ հեղինակի այլ բանաստեղծությունների տեքստերով: «Բալլար տատիկի եւ պատերազմի մասին» երգում երգահանը մեծ հուզականությամբ է ներկայացրել Ղարաբաղի տատիկին, տալով նրա բարիությունն ու նրբությունը աշխարհի նկատմամբ: Ե. Ղազարյանը ստեղծել է «Ոտուզան» բալետի երաժշտությունը՝ Ս. Խանյանի լիբրետոյի հիման վրա: Այն դեռևս չի բեմադրվել:

Ս. Խանյանի բանաստեղծություններով շատ ու շատ երգեր ունի գրած ինքնուս երգահան Գուրգեն Գաբրիելյանը: Ղրանցից մեկը «Դանուբ» երգն է, որն արտահայտում է մարդկային հոգու ելեւէները: Տեղն է ասել, որ երգը մեծ հուզականությամբ կատարում է հենց ինքը՝ երգահան Գ. Գաբրիելյանը: «Դանուբ» բանաստեղծության մեջ պոետը սպասում է իր գոհված եղբօր վերադարձին.

Դանուբ, դու իմ Արաքսի քույր,
Քեզ շատ եմ երգել,
Խնդրում եմ քեզ, պատասխան տուր,
Չեռվից եմ եկել:
Իմ եղբօրը դու չե՞ս տեսել,
Զահել, գանգրահեր,

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Մինչեւ հիմա տուն չի հասել,
Սպասում ենք դեռ:

Յուզարաթավ թախիծ կա նաեւ Ս. Խանյանի եւ Գ. Գաբրիելյանի համատեղ ջանքերով ստեղծված «Ո՞ւր ես, մայր իմ» երգի մեջ, որը մի իսկական ներքող է մոր սուրբ հիշատակին:

Երգը շահեկան է, երբ ունի իր ուրույն կատարումը: Եվ երգի գլխավոր նպատակը կատարողական վարպետություն ցուցադրելը չէ, այլ ասելիքը տեղ հասցնելն է: Խոկ հանրապետության վաստակավոր արտիստուիդ Ելմիրա Առաքամյանը այդ լավ գիտե: Ամեն անգամ, երբ արտիստուիդն ավարտում է «Կարոտ», «Գովք Ղարաբաղին» երգերը (Երաժշտ. Ղազարյանի) դահլիճում ծայր են առնում ծափերը: Ահա «Գովք Ղարաբաղին» բանաստեղծության մի քառատողը.

Մեր ավանդական օջախ դու անմար,
Մեր քաջ պատերի կանգուն բերդապար,
Ղարերից ծնված մեր բախտի կամար,
Սրտերից սնված մեր հնչուն քնար:
Դու մեր վառ ներկան, պայծառ ապագան,
Մեր երազների փունջն անապական:

Ս. Խանյանի տեքստերով երգ է գրել նաեւ ինքնուս կոմպոզիտոր Նորայր Ղամիեյանը: Նորա «Մոր մասին» երգը բազմիցս հնչել եւ հիմա էլ հնչում է բեմահարթակներից:

Ս. Խանյանն իր ստեղծագործական աշխարհը համատեղում է հասարակական ակտիվ գործունեության հետ: Նա խաղաղության մարզային կոմիտեի նախագահն է: Տարբեր պատվիրակությունների կազմում լինելով Յունգարիայում, Նորվեգիայում, Ավստրիայում, գրել է երգերի նոր շարք՝ նվիրված խաղաղությանը: Յուսով ենք՝ կինչեն բեմերից, արժանանալով երգասերների ուշադրությանը:

Ողբերտ ՂԱՐԱՍՍԱՆՅԱՆ
ԼՂԻՄ ԳՄԿ-ի դիրեկտոր
«Սովետական Ղարաբաղ»,
5 նոյեմբերի, 1986թ.

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

ԱՄԿՐԱՏ ԽԱՆՅԱՆ - 60

ԼՂԻՄ ԿԱՏՈՒԿ ԿԱՌՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ԸՆԿ. Ս.Ա.ԽԱՆՅԱՆԻ ԼՂԻՄ հատուկ կառավարման
կոմիտեի պատվոգրով պարզեւատրելու մասին

Գրականության զարգացման եւ մանկավարժական կադրերի պատրաստման գործում ունեցած երկարամյա եւ ակտիվ գործունեության համար Սովորատ Աղալարի Խանյանին պարզեւատրել ԼՂԻՄ հատուկ կառավարման կոմիտեի պատվոգրով:

ԽՄԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ԲԱԺՄԻ ՎԱՐԻՀ, ԼՂԻՄ հատուկ
կառավարման կոմիտեի նախագահ
Ս. Վոլսկի, 12 հունվարի 1990թ.

ԻՆՑԻՖՅՆԻ ԽՈՒՄՔ՝ ՀԱՐԵՔՅԱՐԻՆ

Հարգելի Սովորատ Խանյան, ԴԳՄ վարչության քարտուղարությունը, այդ թվում եւ Արցախի գրողների կազմակերպությունը, սրտանց ողջունում են Զեզ՝ Զեր ծննդյան 60-ամյակի առթիվ:

Զնայած Աղրբեջանական հանրապետությունում հայ գրողի համար ստեղծված անբարենպաստ պայմաններին, Դուք չեք ընկնծել, ստեղծագործել եք նվիրումով ու արգասավոր: Դուք, ինչպես իրենց գրախոսականներում բացահայտել են անվանի գրողներ Ն. Զարյանը, Ս. Արմենը, Մ. Կորյունը, Մ. Հարությունյանը, գրականագետներ Ս. Սողոմոնյանը, Ս. Արգումանյանը, Գ. Գապայանը, Յ. Սերոբյանը, Ս. Ավագյանը, Ժ. Անդրյանը եւ ուղիշներ, կարողանում եք հոգածարակ ու գումեն պատկերել Արցախ աշխարհի բովիչ գեղեցկությունները, արցախցիների ազնիվ ապրումները եւ պայքարը պատմության խաչմեռուկներում:

Դուք որպես քաղաքացի-բանաստեղծ սիրահարված եք Զեր ծննդավայր Արցախ աշխարհին եւ Զեր կյանքի չափանիշը համարում եք նրան անմասնորդ ծառայելը: Եթե Զեր գրական գործունեությանը ավելացնենք Զեր հասարակական գործունեությունը որպես ԼՂ մարզային «Գիտելիք» ընկերության ղեկավարի, Խաչաղության պաշտպանության մարզային կոմիտեի նախագահի, ապա բանաստեղծ-քաղաքացու Զեր կերպարը կրկնակի կամբողջանա: Դուք Արցախի Զեր գրչեղարների հետ Ղարաբաղյան շարժման առաջին օրվանից դարձել եք ազգային-ազատագրական պայքարի ակտիվ մասնակիցներից մեկը: Սաղթում ենք Զեզ քաջառողջություն, ստեղծագործական եւ գիտամանկավարժական ակտիվ գործունեություն:

Ղայաստանի գրողների միության վարչության քարտուղարություն
Արցախի գրողների միության վարչություն
1990թ., 22 հունվար

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

«ԵԱ ԱՐԴԻՌՆ ԵԱ ՔՌ...»

Հիմա իմ սիրելի գրչեղբոր հետ միասին մենք կոչվում ենք ավագ սերունդը գրական այն ընտանիքի, որի հասակը հազիվ է գերազանցում մեր հասակին: Դա այն սերունդն է, որ գրական իր փորձերն արեց 50-ական թվականների սկզբներին եւ շարունակում է անուրանահն մատուցել մայր գրականության արցախյան թելին:

Եվ ահա շուրջ քառասուն տարի է ընթերցողի ականջին հնչում է Սոկրատ Խանյան անուն-ազգանունը՝ որպես բանաստեղծի, թարգմանչի, մանկավարժ-գրականագետի, լրագրողի, հասարակական գործչի, քաղաքացու:

1950-ին լույս տեսած առաջին բանաստեղծությունից սկսած մինչեւ 10-րդ գիրքը Սոկրատ Խանյան անցել է գրական մի ճանապարհ, ուր խորությունների անխուսափելիությունը չխաթարեց նրա ձեռագրին, եւ որը նրան բերեց-հասցրեց փոթորկալի այս օրերը:

Ինչպես իր սերնդի, այնպես էլ Սոկրատ Խանյանի անցած ճանապարհը, սակայն, հեշտ ու հարթ չեղավ, վկան այն ողջ տասնամյակն է, որ նա տվյալանքով անցավ առաջին երգից սկսած մինչեւ առաջին գիրքը:

Այդպես կարող էր պատահել միայն այն հանրապետությունում, ուր դժբախտություն է ունեցել հայտնվելու Արցախ հայրենիքը, որը 70 տարիներ ի վեր ոտնահարվել է ոչ միայն տնտեսապես ու քաղաքականապես, այլև մշակութային ու գրական առումնեով:

Զրկված լինելով գրական մամուլից, հրատարակչական հնարավորություններից, ամենատարրական իրավունքներից, հայզգի գրողը ստիպված էր ծարաված աչքը հառել այս հանրապետության «ողորմածությանը» եւ բեղից ընկած բրնձի «առատությամբ» տասը տարուց մեկ մի գիրք «Ճնորի բերել» հայ ստեղծագործողին:

Ահա այսպես ծնվեց նաեւ Սոկրատ Խանյանի «Կարկաչը» (1959թ.):

Երեսուն տարիների հեռվից այսօր այնքան թարմ են հնչում արցախյան լեռներին հասցեագրված տողերը.

Բայց ամենից շատ, հայրենի լեռներ,
Ես զագարներն եմ սիրում ձեր հպարտ,
Եվ այն պահը թեժ, երբ անթիվ հողմեր
Գալիս, պարտվում են ձեր ոտքերի տակ:

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Թարմ եմ ասում, որովհետեւ թվում է, թե այս երգը գրվել է արցախյան հեղափոխության օրերին եւ զգուշացնում է մեր լեռները շրջափակող վանդալ հողմերին, որ չմոտենան նրաց սրբազն գագաթներին, այլապես պարտված կփռվեն նրանց անդրդվելի ոտքերի տակ:

Իսկ «Ղարաբաղի երգը» կարծես արձագանքն է անպարտ լեռների եւ հպարտ լեռնցիների անընկճելիության.

Չի խոնարիվել Նադիր շահին,
Արյունարբու Կաջար խանին,
Շամիդի սեւ յաթաղանին
Երգը Ղարաբաղի:

Սոկրատ Խանյանի «Սիրտս ձեզ հետ է» գրքում սրտառուց երգերի թիվն ավելի ծավալվեց: Այստեղ նրա խոսքը ավելի ջերմացավ եւ շաղախվեց բնության նրբերանգների զգացողությամբ:

Իսկ «Արեւսար» գիրքը լիբն է հայրենի Արցախի բնության ու մարդկանց նախշերով.

Այն Ուխտաձորն է հավերժ դալարուն,
Այն զմրուխտ հագած մեր Արեւսարն է,
Այս էլ մանկության իմ ընկեր առուն,
Խոնարիվեմ մի պահ, կարոտս առնեմ...
Գալուստիս լուրջ հասել է մորս,
Նա արցունք, ժախտ իրար է խառնել,
Շասնեմ, համբուրեմ արցունքը նրա,
Կարոտս առնեմ:

«Լեռների երգում» բանաստեղծի խոսքը ավելի է հղկվում ու ջերմանում: Բացում ես գիրքը, եւ իրար հաջորդող մի քամի երգ քեզ դարձնում են «Աստղերին հասած լեռների ծնունդ», սուրբ «Ղարաբայյան լեռների որդի», որը հպարտությամբ ասում է.

Լանջերը կանաչ, փեշերը կանաչ,
Թեւերը կանաչ մեր սարերի,
Կանչերը կանաչ, հուշերը կանաչ,
Թեւելը կանաչ մեր դարերի:

Այնուհետեւ նա փոքրիկ ընթերցողներին մատուցեց իր գողտրիկ ընծամ «Իմ նվերը» մանկական գիրքը:

Ինը՝ Սոկրատ Խանյան էլ քաջ գիտի, որ այնքան էլ ոյուրին չէ ձեռք զարկել մանկան հոգեբանությանը: Բայց հաճելին այն է, որ

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Մանկավարժ բանաստեղի սրտում տարիների ընթացքում ամբարված պահուստը ժայթել է մի օր եւ դարձել անկեղծ զգացումների մի երգափունջ, որից մի ամբողջ շաբթ կարելի է ազատ կերպով երաշխավորել դպրոցական դասագրքերին: Այդ գործերից է «Գարնան ամպը», որը բնության մի գոլտրիկ կտոր է.

Ամպը գետի վրա չոքեց,
Մի կուշտ խմեց ու բարձրացավ,
Երկինքն անպին առավ գիրկը,
Ամպը շիկնեց ու թանձրացավ,
Ամպը ճչաց, գոռաց անպը,
Բարակ-բարակ անձրեւ տեղաց,
Ամպը գնաց անձրեւի հետ,
Ծիածանե գոտին թողած:

Անցած գրական ճանապարհին ծեռք բերած լավագույն ավանդույթներին հոգեհարազատ է նաև Խանյանի «Լեռնային դողանջներ» գիրքը, ուր հայրենի Արցախի նկատմամբ հեռավոր կարուտը վեր է ածվել կրակված սիրո, շատ վաղուց իր ծննդավայրի մասին խորհում է ոչ թե օտար ծովափերին, այլ հենց մայր ժողովրդի գրկում: Դրա համար էլ հեռավոր մորմոքները այստեղ վեր են ածվել «Լեռնային դողանջների».

Ելել եմ սարը, երկնքի հյուրն եմ,
Արեւ իջել է ու չոքել կողքիս,
Շուրջս ծաղկունքի ծփանք ու բույր է,
Ալեկոծված է խենթացած հոգիս:

Ստեղծագործողի ճանապարհին լինում են պահեր, երբ նրա երգերը ուղղակի, առանց ծիգ ու ջանքի, սրտից հոսում են գուլալ աղբյուրի պես, ինչում որպես հոգու թրթիռներ, եւ որովհետեւ սրտարուկս են, ապա հեշտությամբ էլ գտնում են սրտեր տանող ճանապարհը: Տեղն է հիշել «Սրտից թխած խոսքը սիրտ կմտնի» ժողովրդական իմաստությունը: Բանաստեղի «Քո անունից» եւ «Կանաչ ծփանք» ժողովածուները հողաբույր են, քաղաքացիական պարտքի լիրիկական արտահայտություններ, հայրենասիրության ընդգծված թրթիռներ, բարության, լուսի, անձնուրաց սիրո նվազներ:

Հայրենասիրական ամկեղծ ու վարակիչ զգացումների բանաստեղծական կատարյալ արտահայտություններ են «Խաղ», «Այց»,

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

«Պեղում», «Երկրիս», «Գարուն», «Որդիական» բանաստեղծությունները, «Ղարաբաղյան նվազներ» շարքը («Քո անունից» գրքում), «Քո գրկում», «Պարտք», «Կաղնի», «Գյուղ իմ», «Ղարաբաղի բնություն», «Յողի կարոտով» երգերը («Կանաչ ծփանք» ժողովածություն): Յաճելին այն է, որ Ս. Խանյանը հայրենասիրական իր խոհերը արտահայտելու թարմ ու նուրբ երանգներ է գտել, բանաստեղծական պատկերն ու ենթատեքստը ինքնարուխ են, եւ հավատում ես, որ դու ինքդ էլ այլ կերպ չես մտածի ու չես արտահայտվի: Որպես որդի («Որդիական»), դիմելով հայրենի երկրին, բանաստեղծը համեմատությունների ավանդական ձեւից հեռանում է, հակադրության հետաքրքիր հնարով հաստատում որդիական սիրո անսպառ ու անհատնում ծփանքը հայրենի հողի՝ մարդուն մարդ պահողի հանդեպ.

Իմ արմատները սրտիդ խորքումն են,
Բայց ոչ կաղնու պես, կաղնին ի՞նչ է որ,-
Ես որդին եմ քո:
Իմ թեւերը քեզ փայում են, շոյում,
Բայց ոչ ճյուղի պես, ճյուղը ի՞նչ է որ,
Ես ոգին եմ քո:

Ս. Խանյանի «Քո անունից» գրքի «Ղարաբաղյան նվազներ» շարքը գալիս է լրացնելու իրեն հարազատ այդ թեման ինքնասիպությամբ եւ գույների բազմազանությամբ: Շարքի «Առավոտը», «Անպը», «Արտերը», «Անաօը», «Կալերը», «Տատիկը», «Անձրեւը», «Զյունը», «Սարերը» ղարաբաղյան կոլորիտի, երանգների, հոգեբանության վառ արտահայտություններ են:

Չպետք է կարծել, թե Ս. Խանյանի գրքերը գերծ են թերություններից: Նրանցում տեղ են գտել այնպիսի բանաստեղծություններ, որոնք գեղարվեստական ընդհանրացումներով բույլ են, անկատար: Բանաստեղծը հաճախ չարաշահում է որոշ բառեր: Օրինակ, հաճախակի ենք հանդիպում երգ բարի հանգավորմանը: Սակայն այդ թերությունները որակ չեն կազմում, ստվեր չեն գցում նրա ստեղծագործությունների վրա:

Ուրախալին այն է, որ թվարկած գրքերի մեջ եղած եւ այդ գրքերից դուրս Խանյանի գրչին պատկանող վերջին տարիների լավագույն ստեղծագործություններն ընդիանրացնելու հնարավորություն կա այսօր մեկ հատընտիրում («Կարոսի կրակներ»), որի

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Պարիվ էլ գրվում է այս խոսքը՝ որպես խղճի պարտը:

Խանյանի «Կարոտի կրակները» բոցավովել են մեր գրական փրկված օջախի, տասնամյակների ու ոտնձգությունների եւ կապանքներից ձերբազատված ստեղծագործական կազմակերպության արմատների վրա: Կազմակերպություն, որն արդեն ունի իր գրական օրգանը՝ «Արցախը», իր հրատարակչական հնարավորությունները, իր վերածնունդը, որոնց առաջին ծիծեռնակը պետք է հաճարել հեղինակի միջոցներով լույս աշխարհ եկած այս ընտրանին՝ «Կարոտի կրակները»:

Եթե այսքանին ավելացնենք բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի եւ գրականության ամբիոնի վարիչ Սոկրատ Խանյանի մանկավարժական անխոնջ գործունեությունը, նրա ծառայությունը որպես խաղաղության պաշտպանության ԼՂ մարզային կոմիտեի, մարզային «Գիտելիք» ընկերության նախագահի, գրքասերների մարզային ընկերության նախագահության անդամի, ապա բանաստեղծ-քաքաղացու նրա կերպարը ավելի կամբողջանա:

Նրա գրական-ստեղծագործական ճանապարհի զարկերակը հայրենի լեռնաշխարհի նկատմամբ բոցավառ սերն է, որն ընդհանուացրել է իր այս ջերմ տոռելի մեջ.

Բո անհուն սիրով ծփում են քո մեջ,
Բայց ոչ ծովի պես, ծովը ի՞նչ է որ,
Կյանքիդ ալիքն եմ.

Կարոտս բորբոք միշտ ժպտում է քեզ,
Բայց ոչ աստղի պես, աստղն ինչ է որ,
Ես քո գալիքն եմ:

Գուրգեն ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
«Դպրություն», Երեւան, 6 հուլիսի 1990թ.

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

ԵՎ ԳՐԻՉՆ Է ՄԱՆՏՆՉՈՒՄ

Բանաստեղծ, բարգմանիչ ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆԸ ապրում եւ ստեղծագործում է Ստեփանակերտում: Բանաստեղծական 12 ժողովածուների հեղինակ է: Վերջերս Երեւանի պետական համալսարանի հրատարակչությունը լույս ընծայեց նրա նոր գիրքը՝ «Արցախյան դոդանցները», որի քնարական հերոսը հարազատ թերթ ու քարափներին կառչած, իր պատեմական հողն ու օջախը կրծքով պաշտպանող հպարտ արցախյին է: Այս հրաշալի գրքի հուզաբարակ բանաստեղծությունների տողերի միջից բարախում են մարտնչող արցախյուր սիրտն ու հավատի ոգին:

Ծանր է տաղանդավոր բանաստեղծի ճակատանարտը՝ իր սքանչելի տաճարների զանգերի լեզվակը հատել փորձող բիրտ ուժերի դեմ, պիտի մարտնչել նաեւ գրչով: Ու դեպի թշնամու դիրքերը մնվող ազատամարտիկի աներերությամբ մարտնչում է Սոկրատ Խանյանի հոգմել չիմացող գրիչը՝ շանթ ու որոտ տեղալով ոստիսի վրա: «Ի վերջո, հաղթանակը մերը կլինի, քանզի մենք գիտենք՝ ինչի համար ենք կրվում»: Սրանից մեկ տարի առաջ ասկան նրա խոսքերն ենք իիշում, վկան մեր վերջին հաղթանակները եւ ամենամեծը՝ Շուշիի ազատագրումը:

Սոկրատ Խանյանը 1958-ից գրողների միության անդամ է, բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր: Նա 6 մենագրությունների հեղինակ է հայ գրականության եւ ժողովուրդների գրական կապերի գծով: Գրականագետը աշխատում է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում որպես հայոց լեզվի ու գրականության ամբիոնի վարիչ:

Վերջերս անվանի բանաստեղծը Երեւանում էր, պիտի մեկներ Արցախ: Այցելեց խմբագրություն եւ մեզ տրամադրեց իր բանաստեղծությունների նոր շարքը:

«Դաշնակցություն» -Դայաստանի ՀՀԴ ԿԿ
պաշտոնաթերթ, № 12 (49),
հուլիս, 1992թ.

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

ԱՌԿՐԱՏ ԽԱՆՅԱՆ - 70

ԴՕ ՏԱՄԵԿԱՆՈՒՄ ԿՅԱՆՔԻՆ

ԱՄՊԱՀԱՄՎԱԾ ՄՆԱՔՆ ԵՐԾԱՆԿՈՒԹՅՈՒՆ Է

Լրացավ բանաստեղծ, գրականագետ, Արցախի պետական համալսարանի հայոց լեզվի եւ գրականության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սոկրատ Խանյանի 70-ամյակը: Լինելով Արցախի գրական ընտանիքի նահապետներից մեկը, Ս. Խանյանը, որպես գրչի անխոնց նշակ եւ հասարակական գործիչ, իր ուրույն տեղն ունի մտավորականության շարքում:

Ընթերցողներին ենք ներկայացնում բանաստեղծ Սոկրատ Խանյանի հետ մեր աշխատակցի ունեցած գրույցը:

-Ձեր առաջին բանաստեղծությունը «Խորիրդային Ղարաբաղ» թերթում հրատարակվել է 1940-ին: Դայտնի է, որ վիրաբույժ պիտի դառնայիք, բայց տարվեցիք գրականությամբ, ու պոեզիան հաղթեց: Ինչպե՞ս:

-ճշմարտություն է, ժխտել չես կարող: Այսօր էլ հիշողությանս մեջ բարձ են մնացել անցյալից «ժառանգած» պատառիկները: Դպրոցում շատ էի սիրուս նարենատիկան ու քիմիան: Ցանկացած խնդիրը լուծում էի հեշտությամբ, իսկ Սենդեկենի աղյուսակը ընդհանրապես անգիր գիտեի: Միջնակարգը գերազանց գնահատականներով ավարտելուց հետո դասընկերոջ՝ եղուարդ Միրզայանի հետ մեկնեցինք Բաքու եւ ընդունվեցինք բժշկական ինստիտուտի վիրաբուժության բաժինը: Սակայն նի օր, մասնակցելով դիահերձարանում հերթական պարապմունքներին, այլևս չվերադարձա ինստիտուտ: Հոգուս մեջ խռովք կար եւ անսահման բախիծ: Հույզն ու ներշնչանքն ավելի հաճախ էին ինձ ուղեկցում: Զահելներով հաճախ էինք հայկական թատրոն ու գրադարան այցելում, քննարկում մեր կարդացածը, տեսածն ու ընկալածը: Սիրոհարված էի արվեստին, գրականությանը, ընդհանրապես կյանքին: Շատ էի ուզում բանասիրական կրթություն ստանալ:

-Ինչպե՞ս հայտնվեցիք գրական միջավայրում:

-1953-ին ավարտեցի բուհը: Որպես երիտասարդ ստեղծագործող հաճախ էի այցելում դեռեւ 19-րդ դարի 70-ական թվականներին Բաքվի հայ բարեգործների հիմնադրած այն գրադարանը, ուր գրական աշխատանքային մթնոլորտ էր տիրում: Ժամանակին այն յուրովի հավաքատեղի էր հանդիսանում հայ գրողների եւ արվես-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Մտագետների համար, եւ հանդիպումների արդյունքում ազգանպաստ ոչ քիչ գաղափարներ էին ծնունդ առնում (ժամանակին գրադարանը սիրելի վայր էր եւ Ալ. Շիրվանզադեի համար): Գրադարանում գրքերի քննարկումներ էին կազմակերպվում, որոնց մասնակիցն ու ականատեսն էինք դաշնում սկսնակ բանաստեղծներս: Եսկ միջոցառումներին ներկա էին լինում Յամո Սահյանը, Սուլեյ Այվազյանը, Աթանես Սենալը, Գարեգին Սեւունցը, Արշավիր Դարբնին, Գարեգին Բեսը, Աշոտ Գրաշին: Յայկական համայնքի հետ սերտ կապեր ուներ Պարույր Սեւակը: Քննարկումներին մեր ստեղծագործություններից ներկայացնում էինք եւ երիտասարդ բանաստեղծներ՝ Վլ. Աբրահամյանը, Վ. Յովակիմյանը, ապա Գ. Օհանյանը, եւ, խրատ-խորհուրդների հետ մեկտեղ, քիչ չենք ստանում ավագ գրողների օրինանքը, ինչը մեզ ոգեշնչում էր: Առաջին բանաստեղծություններս եւ ակնարկներս տպագրվեցին «Կոմունիստ» հայերեն թերթում: Շուտով աշխատանքի հրավիրվեցի խմբագրություն, ուր եւ ինձ բախտ վիճակվեց ավելի մոտիկից շփվել գլխավոր խմբագիր, գրականագետ Յամո Ամիրխանյանի, խմբագրության այուների՝ Յ. Սահյանի, Ս. Այվազյանի, Ա. Սենալի, անվանի այլ գրողների հետ:

-ԵՎ ԻՆՉՎԵ՞Ն Եղավ, որ տեղափոխվեցիք Ստեփանակերտ:

-Դուք, հավանաբար, գիտեք, թե ինչ աշխույժ ու ակտիվ կյանքով եր ապրում Բաքվի հայ բնակչությունը, նորա տրամադրության տակ էին մշակույթի բազմաթիվ օջախներ, հայկական պետական թատրոնը: Աղբեցանի կենտրոնի հրահանգով իրար հետեւից փակվեցին այդ բոլոր օջախները: Մնաց մի թերթ ու մանկավարժական ինստիտուտի հայկական բաժինը: Վերջինս, Յ. Ալիեւի հրամանով, ինտերնացիոնալիզմի բարբաջանքների քողի տակ, տեղափոխվեց Ստեփանակերտ, իսկ «Կոմունիստ» հայկական թերթը դադարեց գործել Բաքվի հայկական հայտնի ջարդերից էլ առաջ: Ես դեռեւ 1969 թվականին էի վերադարձել Արցախ, ուր եւ մինչեւ այսօր ապրում, աշխատում եմ:

-Դուք բանաստեղծությունների երկու տասնյակ ժողովածուների հեղինակ եք, բազմաթիվ մենագրություններ, 200-ից ավելի գիտական հոդվածներ եք հրատարակել: 30 տարի անընդմեջ գլխավորում եք Արցախի պետհանալսարանի հայոց լեզվի եւ գրականության ամբիոնը: Արցախի գրական ընտանիքի նախապետներից մեկն եք, մի շարք հասարակական կազմակերպությունների անդամ: Գիտական, մանկավարժական աշխատանքը չի՝ խանգա-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Պում, արդյոք, բանաստեղծությանը...

-Ամենեւին: Գրական գործերով, բանաստեղծությամբ, առավել եւս հիմա, ընտանիք պահել չես կարող: Արդեն 45 տարի է հայ գրականություն եմ դասավանդում բուհում, եւ առանց ուսանողների իմ կյանքը չեմ պատկերացնում: Նրանց հետ ընդհանրապես տիսրել հնարավոր չէ: Իրենց կենսախինդ տրամադրությամբ ու անմիջականությամբ համակում, լուսավորում են ճանապարհ: Նման նպաստավոր պայմաններում, ուզած-չուզած, հավատն ու լույսն են քեզ ուղեկցում, մարդկանց բարի, խորհրդավոր հայացքները: Յոգուդ մեջ ծնվում է բանաստեղծությունը...

-Դուք բանաստեղծ եք եւ գրականագետ: Որի՞ն եք տալիս նախապատվությունը: Այնուամենայնիվ, ո՞վ է ձեր սիրած բանաստեղծը:

-Դժվար է ասել: Դայտնի ճշմարտություն է՝ գրողն առաջին հերթին պիտի կարողանա գնահատել գրական երկը: Մեր անցյալի գրողներից շատերը եւս գրականագետներ էին: Գրական երկի քննադատությունը նպաստում է ժամանակակից գրականության ընթացքի ձեւավորմանն ու զարգացմանը: Թվում է՝ միաժամանակ բանաստեղծ ու գրականագետ լինելն իրար ամենեւին չեն խանգարում: Ինչ-որ տեղ, կասեի՝ լրացնում, շարունակում են իրար:

-Բացի պոեզիայից եւ գրականությունից Դուք ունեք ոչ քիչ նախասիրություններ: Դրանցից ո՞րն է Ձեզ առավել հոգեհարազար: Ու վերջին հարցը. 70-ամյա հորելյարը արդյոք երջանի՞կ է համարում իրեն:

-Նախասիրություններ, իրոք, շատ ունեմ, կառանձնացնեի երգն ու երաժշտությունը: Թերիներս ճանաչված երաժիշտներ են եղել: Նվագում եմ երաժշտական մի քամի գործիքների վրա: Բայց չեմ թաքցնում, թախծի, տրտմության պահերին սրինգն է իմ ուղեկիցը: Երբ մարդ 70 տարեկան է ու ծերություն չի գտում, հարազատներով է շրջապատված ու շարունակում է ստեղծագործել, նա ավելի է սիրահարվում կյանքին: Իսկ դա ինքնին երջանկություն է:

Դավիթ Միքայելյան
«Դայաստանի Դամրապետություն» օրաթերթ,
5 փետրվարի, 2000թ.

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

ՀԱՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՄՑԱԶՐՈՒՅՑ

-Ինչպե՞ս եղավ, որ նախընտրեցիք բանասիրությունը:

-Ամեն անգամ, միջնակարգի իմ տարիներին անդրադառնալով, խորին երախտագիտությամբ եմ հիշում իմ քիմիայի ուսուցչին՝ Ապրես Առաքելյանին եւ գրականության ուսուցչուիուս՝ Արեւ Թամրազյանին:

Քիմիայի խնդիրների ժողովածումներում ինձ համար անլուծելի խնդիր չկար, Սենդելենի աղուսյակը գիտեի անգիր, սիրում էի նաեւ մաթեմատիկան: Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ Կոմկուսի Յաղորութիւ շրջանային կոմիտեն ինձ եւ Մեծ Թաղերի դպրոցը գերազանց ավարտած էղուարդ Միրզախսանյանին հատուկ որոշմանք ուղարկեց Բաքու՝ սովորելու բժշկական ինստիտուտում: 1947-ին էր: Ընդունվեցինք վիրաբուժության բաժինը, սակայն կարծ ժամանակից հետո, ծանոթանալով դիակերձարանին, իրաժարվեցի բժիշկ դառնալու մտադրությունից եւ վերադարձա գյուղ: Ծնողներս մտահոգվեցին: ճիշտն ասած, հայրս երազում էր, որ ֆինանսիստ դառնայի, մայրս՝ բժիշկ: Բայց իմ հոգում արմատ էր նետել պոեզիան: Գրում էի բանաստեղծություններ: Առաջին ուսանակությունը էր 1940թ. «Խորհրդային Ղարաբաղ» թերթում: Սովորում էի 4-րդ դասարանում, մասնակցել էի մարզային օլիմպիադային, հավանել էին եւ տպագրել «Ո՞վ է նվիրել» վերնագրով:

-Դա Ձեր գրական ստեղծագործական ճանապարհի սկիզբը կարելի է համարել:

-Ոչ: Իմ գրական գործումներության սկիզբը համարում եմ 1950թ., երբ «Կոմունիստ» թերթում տպագրվեց իմ՝ «Կիսատ երգը» բանաստեղծությունը՝ նվիրված Սեծ Յայրենականում զոհված ավագ եղբորս՝ բանաստեղծ Սուլեյմանյանի հիշատակին: 19 տարեկան էր, բազմաշնորհ էր, գրում էր, նկարում, արտասանում: Զգուրում էր իր իմացածը հաղորդել նաեւ ինձ: Ուրախանում էր, երբ ստացվում էր:

Ի դեպ, բժշկականը թողնելուց հետո մեր գրականության ուսուցչուին ասել էր. «Քո նախասիրությունը գրականությունն է: Այդ ուղղությամբ լուրջ մտածիր»:

Եվ մտածեցի, բայց երկու տարվա ընդմիջումից հետո: Իմ առաջին սերը գյուղում էր: 1948-ին նշանվեցի, 1949-ի օգոստոսին ընդունվեցի Բաքվի Լենինի անվան պետական մանկավարժական

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Ինստիտուտի լեզվագրական բաժինը, նույն ամսի 16-ին վերադարձա գյուղ, 19-ին ամուսնացա: Շատ էի սիրում Սրբուհուն, առանց նրան չէի պատկերացնում սերը: Ավարտելուց հետո օգնեցի, որ ինքն էլ ստանա բարձրագույն կրթություն: Այդպես էլ ստացվեց: Ինքն էլ դարձավ բանասեր:

-ԽՆԴՐՈՒՄ ԵՄ Աշեք Զեր ճախճնտրած թեմաները:

-Բանաստեղծի համար բոլոր թեմաներն էլ հրատապ եւ նախընտրելի են: Այստեղ մի խորհուրդ չպետք է մոռանալ, դա Յ. Թումանյանի պահանջն է «Ոչ թե ինչը, այլ՝ ինչպեսը»: Ասել է թե՝ թեման պետք է մարմնավորվի գեղարվեստական թարմ ու արինքնող միջոցներով: Երգել եմ հայրենիք, սեր, աշխատանք, խիղճ, երազ, կարոտ, հերոսություն, նահատակների փառք եւ այլն, եւ այլն: Դա է կյանքը, կյանքից դուրս պոեզիա չկա:

-Զեր սիրելի բանաստեղծը:

-Բոլոր մեծերը: Ումի՞ց չսովորես: Յուրաքանչյուր անհատականություն ուսուցիչ է: Միայն մի բան կարող եմ նշել: Ես ռեբումները չեմ ընդունել եւ չեմ ընդունում, ինձ համար գլխավորը արվեստի պարզությունն է: Իսկ ո՞վ չի պարզ. Գր. Նարեկացի՞ն, Յ. Թումանյա՞նը, Ավ. Իսահակյա՞նը, Վ. Տերյա՞նը, Ղ. Վարուժա՞նը, Ե. Չարե՞նցը, թե՞ Յ. Սահյանն ու Սեւակը: Բոլորն էլ պարզ եմ, բոլորն էլ իմ պաշտամունքն են:

-Դուք նաեւ ճանաչված գրականագետ եք, մանկավարժ: Գրականագիտությունը չի՞ խանգարել Զեր բանաստեղծությանը:

-Ոչ մի հայ գրող գուտ գրական հունձքով չի կարողացել ընտանիք պահել: Բոլորն էլ աշխատել են ինչ-որ բնագավառում: Ես նախընտրեցի լրագրությունը եւ ապա՝ մանկավարժ-գրականագետի բնագավառը: Երկուսն էլ մոտ են գեղարվեստական խոսքին: Աշխատել է պետք: Իհարկե, մանկավարժի գործը քիչ ժամանակ չի խլում, բայց ես կասեի, որ հաճելի աշխատանք է: 1960-ից հայ գրականություն եմ դասավանդում բուհում եւ առանց ուսանողության չեմ պատկերացնում կյանքը: Զգտել եմ հասցնել: Դամ էլ ի՞նչ բանաստեղծ, եթե գրական երկը զնահատել չգիտե: Սեր անցյալի բոլոր գրողները միաժամանակ գրականագետներ էին: Դա լավ օրինակ է մեզ համար:

-Դա պոեզիայի արցախյան օջախի նոր սերմիի մասին ի՞նչ կասեիք:

-Այդ սերնդի մասին այսօր միակ խոսք ասողը ես եմ: Երեւանում

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Մերոնց քիչ են կարդում, հատուկենտ գրքույկներ են գրախոսվում: Այսօր մենք ունենք իրեն գտած մի նոր սերունդ, որ եկել է Վ. Դակորյանից հետո՝ Ռ. Եսայան, Ա. Քոչարյան, Ժ. Բեզլարյան, Ղ. Միքայելյան, Ն. Գասպարյան, Յ. Ալեքսանյան եւ ուրիշներ, իսկ արձակագիրներից՝ Կ. Դանիելյան, Մ. Որմ, Կ. Գաբրիելյան եւ այլք: Կծվեն, իհարկե, նորերը կծնվեն: Բայց զարմանալիորեն կրկին մեր գրականության պոետական երակն է ուժեղ: Արձակը երերուն է: Երեւի դա էլ ազգային առանձնահատկություն է: Վ. Բրյուսովը 1916-ին նկատել է. «ճիշտ են ասում, որ հայ ժողովուրդը բանաստեղծ ժողովուրդ է»:

-Որպես գրականագետ՝ Զեր նախընտրած գրողը:

-Եթե բուհի դասախոս չլինեի, կարող էի մատս դնել մեկ կամ երկու գրողների վրա: Բայց 50 տարի է, ինչ հայ գրականության պատմություն եմ դասավանդում, 15 տարուց ավելի էլ դասավանդել եմ ռուս գրականություն: Տարբեր առիթներով թերթերում եւ ամսագրերում հանդես են եկել մեր դասական եւ նորագույն շրջանի ականավոր գրողների մասին: Գր. Նարեկացու, Սայաթ-Նովայի, Խ. Արովյանի, Յ. Թումանյանի, Ավ. Խաչակրյանի, Ե. Չարենցի, հետշարենցյան շրջանի գրողների մասին գրած հոդվածներս ի մի եմ հավաքել եւ առաջիկայում կիանձնեն տպագրության: Վերջին երկու տարվա ընթացքում աշխատել եմ «Հայրենիքի ազատության թեման ՀՀ դարի հայ պոեզիայում» գրքի վրա (1950-1990), որ հանձնված է տպագրության: Բայց որպես ձեր հարցին կոնկրետ պատասխան նշեմ, որ Արցախի գրական օջախի ներկայացուցիչների հունձքը իմ ուշադրության կենտրոնում է եղել: Լույս եմ ընծայել «Յավի ու սիրո պոեզիա» (Վ. Դակորյանի մասին), «Գ. Գաբրիելյանի աշխարհը», «Բ. Զանյանի պոեզիան», «Տաղանդի լույսը» (գրականագետ Ժ. Անդրյանի մասին), «Արցախյան պատերազմը եւ հայ պոեզիան» մենագրությունները: Ծավալուն խոսք եմ գրել երիտասարդ ստեղծագործողների մասին: Առաջիկայում եւս կշարունակեմ այդ գործը:

-Բացի պոեզիայից ու գրականագիտությունից ուրիշ ի՞նչ նախասիրություններ ունեք:

-Դասարակական աշխատանքը: Մեծ սիրով մասնակցել եմ այդ բնագավառի միջոցառություններին: Մի քանի տարի դեկավարել եմ մարզային «Գիտելիք» ընկերությունը, Խաղաղության պաշտպա-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Առության ԼՂ մարզային կոմիտեն, ակտիվ մասնակցություն են ունեցել Գրքասերների մարզային խորհրդի աշխատանքներին՝ որպես անդամ: Եվ գլուխ չեմ պահել, լավ եմ աշխատել: Դրա վկայությունները ԽՄՀՍ Գերագույն խորհրդի, ԽՄՀՍ բարձրագույն դպրոցի մեջալներն են, տասնյակ պատվոգրերն ու կրծքանշանները:

Սիրում են երաժշտությունը: Մորս կողմն՝ քերիներս, երաժշտական աշխարհի մարդիկ էին, նվագում էին ժողովրդական գործիքների վրա: Այդ շնորհքը անցել է ինձ: Գուցե եւ իմ շնորհքից անցել է նաև թոռանս՝ Յայկին, որ սովորում է Երեւանի Կոմիտասի անվան կրնակավատորիայի դաշնակահարների բաժնում եւ դեռ պատանի, դարձել է Ա. Խաչատրյանի անվան մրցույթի, Միջազգային մրցույթների դափնեկիր: Շնորհքը՝ շնորհք, բայց աշխատասիրություն էլ է պետք:

-Խնդրում եմ պատմեք Ձեր ընթացիկ գործերի մասին:

-Տպագրության են հանձնված բանաստեղծությունների եւ պոեմների մի նոր ժողովածու, գրականագիտական մի նոր աշխատություն: Շարունակում եմ ստեղծագործել: 70-ը մի տարիք է, երբ ավելի ես սիրահարվում աշխատանքին: Աստված ինձ նվիրել է շնորհք, ժողովուրդը՝ սեր, հայրենիքը՝ թեւեր, ընտանիքը՝ երազ: Ինչքան ուժ ու եռանդ ունեմ, պարտավոր եմ նվիրաբերել նրանց: Երեւի կյանքի իմաստը կայանում է հենց դրանում:

-Ի՞նչ դեր է խաղում ընտանիքը ստեղծագործողի կյանքում:

-Առանց հաշտ ու խաղաղ ընտանիքի հնարավոր չէ աշխատել: Այդ տեսակետից դժգոհ չեմ:

-Եվ ինչպե՞ս եք Ձեզ զգում այդ տարիքում:

-Երբ մարդ ֆիզիկակես առողջ է, նա ծերություն չի զգում: Դեռևս առույգ ու աշխատունակ եմ, երազանքներ ու ծրագրեր ունեմ եւ վստահ եմ, որ կիրականացնեմ դրանք:

Արմեն ՍԱՐԳՍՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
«Արցախի համալսարան», Վիետնամ, 2000թ.

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

«ՀԱՅՆԵՆԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԻ ՀԱՅ ՊՈՆՉՈՎՅԱՆ
ԳԼՈՒԽԱԿՈՐ ԵՐԱԿԱՆ Է...»

Լրացավ բանաստեղծ, գրականագետ, մանկավարժ, լրագրող, բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Սոկրատ Խանյանի ծննդյան 70-ամյակը: Իր կյանքի 70 տարիներից 50-ը նա նվիրել է ստեղծագործական աշխատանքին՝ հրատարակելով բազմաթիվ բանաստեղծական ժողովածուներ, որտեղ ներկայացրել է հայրենի բնաշխարհը, ժողովրդի կյանքն ու կենցաղը, մաքառումները, պայքարը՝ հանուն ազատության ու անկախության:

Թերթի ընթերցողների անունից շնորհավորելով Ս. Խանյանի ծննդյան 70-ամյակը, ներկայացնում ենք մեր թղթակցի եւ հոբեյանի միջեւ օրերս կայացած հարցագրույցը:

- **Պարոն Խանյան, դուք առավել շատ ծեզ գիտնակա՞ն եք համարում, թե՞ բանաստեղծ:**

- Առաջին հերթին ինձ բանաստեղծ եմ համարում... Առաջին բանաստեղծությունս տպագրվել է 1940թ. «Խորհրդային Ղարաբաղ» թերթում: Տպագրվելու մասին իմացա միայն 20 տարի անց, մեր ուսուցիչներից մեկն ինձ նվիրեց թերթի այդ համարը ու ես որպես մասունք պահպանում եմ այն: Իսկ իմ գրական գործությունները 1950թ.: Այդ թվականին տպագրվեց իմ «Կիսատ երգը» բանաստեղծությունը՝ նվիրված Հայրենական պատերազմում հերոսաբար զոհված իմ բանաստեղծ ավագ եղբոր հիշատակին: Իմ հոգում միշտ էլ եղել է բանաստեղծությունը: Բայց կա մի ծշմարտություն. բանաստեղծը նաեւ գրականագետ պիտի լինի... Գրականագիտությունը բանաստեղծական օրենքների, չափերի, էության բացահայտումն է... Դրան գումարած եւ մանկավարժական գործությունը: Ես դասավանդում եմ արդեն 40 տարի շարունակ, որն ինձ տարել է դեպի գրականագիտություն, եւ այսօր, որպես գրականագետ՝ տասնյակ մենագրությունների հեղինակ եմ, իման առանձնապես հետաքրքրել է Արցախում ստեղծվող գրականությունը: Ես 14 բանաստեղծական ժողովածուների հեղինակ եմ... իմ լավագույն գործերը՝ ընտրանիները, տպագրվել են 1990թ. Արցախում «Կարուտի կրակներ» վերնագրով, եւ տարիների իմ փայփայած երազանքը իրականացավ, երբ Երեւանի պե-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Մտական համալսարանը տպագրեց «Արցախյան ղողաճներ»-ի իմ ընտրանին: Ին 70-ամյակի առթիվ տպագրության եմ պատրաստել նոր գիրք, ուր տեղ են գտել 1990թ. առ այսօր գրած՝ արցախյան պատերազմի, Արցախի ազգային-ազատագրական պայքարի ընթացքին եւ մեր հերոսներին նվիրված քնարական բանաստեղծություններն ու մարտական երգերը: Այս, ես նախ բանաստեղծ եմ, եւ դրան գումարած նաեւ իմ գրականագիտական վաստակը:

- Զեր հորելյանական երեկոյին ասացիք, որ երջանիկ մարդ եք... Դրանք հավուր պատշաճի խոսքեր էին, թե՞, իրոք, մեր խայտարդետ դարու կարող եք «կիաստարկել» ծեզ բաժին հասած երջանկության չափը:

- Ես չեմ ընդունում այն մարդկանց, ովքեր միշտ նվազում են, ովքեր քիչ տալիս են, շատ պահանջում, նրանց՝ ում թվում է, որ եթե իրենք չլինեն, ուրեմն կյանքը չի շարունակվի... Ամենահամարեղ մարդն էլ եթե չլինի, միեւնույն է, ժողովուրդը հարատեսում է: Կյանքը անցողիկ է, իսկ մնայունը նրա՝ մարդու արած-թողածն է, եւ յուրաքանչյուր քաղաքացի, ծնող իր երջանկության շարունակությունը տեսնում է սերնդի մեջ... Այս առօտնով ես ինձ երջանիկ եմ համարում: Երջանիկ են, որ Ղարաբաղի ննան երկիր ունեն, որ արցախյիների պես հերոս մարտիկներ ունենք, զավակներ ունենք, երջանիկ են, որ Աստված ինձ բանաստեղծելու շնորհը է տվել: 1960-ից մանկավարժական գործունեությամբ եմ զբաղվում եւ 30 տարի է Արցախի պետական համալսարանում եմ, ռեկտորատի ու գիտական խորհրդի անդամ եմ, իմ փորձով պետք եմ համալսարանին: Երջանիկ են, որ Արցախում արդեն խսորվել է գրողների միություն, եւ որի շարքերում առանձնանում են անուններ, որ պատիվ են բերում մեր գրական ընտանիքին: Աստված մեզ շնորհը է տվել մեր ժողովողի հոգու գույները փնչելու:

Ո՞նց կարող եմ երջանիկ չզգալ, երբ հանրապետության ո՛ր դպրոց գնում եմ, իմ սաներն են այնտեղ: Եվ, վերջապես, ինչպե՞ս կարող եմ երջանիկ չլինել, երբ Արցախ աշխարհը մեր բոլորի հոգու թրթիռներով, մեր զավակների արյան գնով ձեռք բերեց ազատություն... Հազար տարվա ընթացքում մեր ժողովուրդը շատ բան է կորցրել, սա մեր պատվի հարցն էր, եւ փրկվեց մեր պատիվը՝ Հայաստանի եւ Սիյունքի թեւ ու թիկունք սատարումով:

- Զեր քնարերգության հիմնական թեմաներից է հայրենասիրա-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Կանք: Ի՞նչ է հայրենիքը ծեզ համար եւ ո՞րն է նրա տեղը ծեր ստեղծագործական կյանքում:

- Հաճախ հայրենիքը ներկայացվում է որպես տարածք... Հայրենիքը տարածք չէ, հայրենիքը հայրական, հայրենական օջախ է, որի ծուխը միշտ պիտի հասնի աստղերին: Հայրենիքն այն բակն է, որտեղ դու մեծացել ես եւ ուր քո բալիկներն են այսօր խաղուն: Հայրենիքը քո ծնողներն են, որոնք ի վերջո հեռանալով աշխարհց՝ պետք է համոզված լինեն, որ օջախը մնում է զավակներին եւ տիրություն է արվելու նրան:

Հայրենիքը յուրաքանչյուրի հոգու երազն է: Մեր ազգային վիշտը, մեր կորուսյալ Արեւմտյան Հայաստանն է... Ուսումնասիրում ես սփյուռքահայ գրականությունը եւ քեզնից անկախ արտասվում ես. խաբեցին մեր ժողովրդին, ողջ Արեւմտյան Հայաստանը տանուլ տվեցինք, եւ հիմա այն մեզ համար հոգեւոր Հայաստան է: Հայրենիքը ժողովուրդ է, լեզու է, օջախ է, հոգեբանություն է, պատիվ է եւ ամենից շատ՝ հայրենիքը սերունդների ապահով եւ պաշտպանված բնակավայրն է: Երբ ասում եմ՝ պաշտպանված, նկատի ունեմ մեր բանակը, առանց բանակի մեր ժողովուրդը կորստի եր մատնվելու եւ ուժացվելու էին սերունդները: Բանակը մեր փրկության ափն է, հովանին, մեր պատվի պահապանը:

- Արցախյան Ազատամարտը նոր լիցք հաղորդեց ծեր ներշնչանքին, բազմաբեղուն դարձնելով ծեր գրիչը... Դուք բավարպվա՞ծ եք, թե՝ շարունակում եք գովերգել Շայ զինվորին՝ Ազատամարտի զինվորին:

- Արցախյան պատերազմը կրկին եկավ ապացուցելու, որ երբ որոտում են թնդանորթները, մուսաները ոչ թե լռում են, այլ ընդհակառակը՝ նոր լիցք ու թափ են ստանում: Ժողովրդի ճակատագիրը պաշտպանող յուրաքանչյուր գրականություն պետք է նաեւ զինվորագրվի:

Այս տեսակետից մենք՝ գրողներս, զինվորագրվել ենք մեր պատերազմին: Իմ լավագույն բանաստեղծությունները՝ թե՝ մարտական եւ թե՝ քնարական, ծնվեցին պատերազմի թոհութուում, գրվեցին ներքնահարկում... Իմ տարիքը չէր ներում զենք բռնելու, սակայն իմ որդին, հարազատները ռազմաճակատում էին: Հարյուր հիսուն բնակիչ ունեցող հայրենի գյուղս 35 զոհ է տվել, դա նույն պես մեր պատվի մասին է խոսում: Մեր պատերազմին նվիրված 3

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Պատեմ եմ գրել: Առաջինը «Արցախի արծիվը» պատմական պոեմն է, որի համար արժանացել եմ Եղիշեի անվան մրցանակի, հաջորդը՝ «Նահատակ լուսո»-ն եւ Վերջինը՝ «Միեր» պոեմը: Մեր պատերազմը Մեծ հայրենականի շարունակությունն է, որը նույնպես իմ ստեղծագործություններում արծարծված է: Այսօր էլ աշխատում եմ նոր ստեղծագործությունների վրա, որոնց հերոսը հայ ազատամարտիկն է, որ կրակների միջից հանեց այն կապույտ երազը, որ մենք անվանում ենք՝ Ազատություն:

Դայրենասիրությունը իր մեջ ընդգրկում է մեր պաշտպանությունը, բանակի հերոսությունը, եւ ես չեմ կարող այդ թեմայից մի կողմ կանգնել, ընդհանրապես, հայրենասիրության թեման հայ պոեզիայի գլխավոր երակն է... Որովհետեւ մենք ունենք կորուսյալ երկիր, վտանգված հայրենիք, ունենք փրկված Արցախ, զորացող Դայաստան եւ հարազատ Սփյուռք: Եվ ինչպես կարելի է այդ ժողովրդի ճակատագիրը չբերել գրականություն, դա յուրաքանչյուրիս պարտականությունն է: Թեման շարունակվում է, եւ ի վերջո կամբոջանա արցախի հայրենասերի, զինվորի կերպարը՝ բոլոր հերոսական դրվագներով:

- ...ԵՎ Ի՞նչ կասեիք այդ զինվորին:

- Որ սիրի իր ծառայությունը, եւ որպես ծանր բեռ՝ իր ուսերից չնետի այն երկու տարին, որ ծառայում է բանակում, այլ համարի երկու տիրոջ պարտականություն: Եվ քաջ գիտակցի, որ իր օջախի ու երկրի ապագան փրկողը ինքն է: Ուրիշը մեր երկիրը չի փրկելու, եւ Ազատության թռչունը զինվորի ափերի մեջ է... Մեր ժողովրդի հույսն ու հավատը իր զավակն է՝ իր զինվորյալ զավակը:

*Միրվարդ ՄԱՐԳԱՐՅԱՆ
«Մարտիկ», հունվար, 2000թ.*

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

ՔԱՆԱՏԱՆԴՍ-ԳՐԱՎԱՆԱԳԵԼ
ՄԱՐՄԱՏ ԽԱՆՅԱՆ
(Դիմակար)

Ս. Խանյանը յոթամասուն տարեկան է: Պարզապես դժվար է հավատալ, ամենից առաջ այն պատճառով, որ ինչպես 2-3 տասնամյակ առաջ, այսօր էլ 70-ամյա բանաստեղծը լի է երիտասարդական ավունով եւ ստեղծագործական, անսպաս ներշնչանքով: Հորեւյարը մեծարվեց եւ նայր բուհում Արցախի պետական համալսարանում, եւ Ստեփանակերտի երիտասարդական պալատում՝ կառավարական մակարդակով: Խոսվեց Խանյան-բանաստեղծի, դասախոսի, գրականագետի մարդկային եւ ստեղծագործական արժանիքների մասին:

«Մարդու երջանկությունն աշխատասիրության մեջ է», մարդկային այս արժեքն ու առաքինությունն է բանաստեղծը դնում երջանկության իմքում եւ հազար անգամ իրավացի է նա, քանզի «հենց աշխատանքն է ստեղծել մարդուն»: Եվ պատահական չէ, որ անվանի բանաստեղծը պարզեւատրվել է նախկին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի «Աշխատանքային գերազանցության համար» մեդալով, ԽՍՀՄ բարձրագույն դպրոցի պետական կոմիտեի «Աշխատանքային գերազանց հաջողությունների համար» կոժքանշանով: Մյուս բազմաթիվ պարզեւներից մենք առանձնացնում ենք այս երկուսը հատկապես, դա ինքնանպատակ չէ: Յիրավի, առասպելական է բանաստեղծ-գրականագետ Ս. Խանյանի աշխատասիրությունը: Նա գրականագիտական մի շարք մենագրություններ, հարյուրավոր հոդվածներ եւ մեկ տասնյակից շատ բանաստեղծական ժողովածուներ է հեղինակում:

Կրկին շնորհավորում ենք բանաստեղծին՝ ծննդյան 70-ամյակի կապակցությամբ եւ մաղթում ստեղծագործական նորանոր հաջողություններ:

Սուլուտ Խանյանը հայ գրականության արցախսահայ հատկածի բազմավաստակ ներկայացուցիչներից է: Նրա անունն ընթերցողներին հայտնի դարձավ 1950-ական թվականների սկզբից: Որպես բանաստեղծ, թարգմանիչ, մանկավարժ, գրականագետ, հասարակական գործիչ, նա իր կարողությունները նվիրել եւ նվիրա-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Թերում է հայ պոեզիայի եւ գրականագիտության զարգացմանն ու հարստացմանը:

Բնությունը շռայլ է գտնվել Ս. Խանյանի հանդեա՝ ընծայելով ստեղծագործելու բազմաշերտ շնորհք եւ նախանձելի աշխատասիրություն: Եվ ինչի ծեռք է մեկնել բանաստեղծ-գրականագետը, հասցել է ավարտին, եւ ինչ ընծայել է ընթերցողին, արժանացել դրվատանքի: Նոր յուրաքանչյուր նոր գիրք եղել է նախորդի պատվարեր շարունակությունը՝ գաղափարական նոր ընդգրկումներով, կատարման նրերանգի թարմությամբ:

Բանաստեղծ-գրականագետ գրոգահեռ հասկացությունները հաճախ տարակուսանք են առաջացնում ընթերցողների մոտ: Նրանցից ոմանք համոզված են, որ բանաստեղծությունը խանգարում է գրականագիտությանը եւ՝ ընդհակարակը: Սակայն, իմ խորին համոզմամբ, ճիշտ չեն այդպես մտածողները: Գեղարվեստական մտքի զարգացման պատմությունն ապացուցում է, որ եթե ստեղծագործողը աշխարհ է եկել արյան կանչով ու հոգու կոչով, ապա նա կարողանում է հավասարապես ծառայել եւ՝ պոեզիային, եւ՝ գրականագիտությանը: Նմաններից է Ս. Խանյանը, որի գեղարվեստական հունձքը եւ գրականագիտական կուտակումը իրավունք են տալիս մեզ ասելու ամենաչերմ եւ ոգեւորիչ խոսքը:

Ս. Խանյանը արցախահայ պոեզիայի այնպիսի ներկայացուցիչներից է, առանց որի մժվար է պատկերացնել մեր գրական օջախի դիմանկարը: Նույնիսկ նոր բանաստեղծական ժողովածուների թվարկումը պատկառանք է առաջացնում այդ վաստակաշատ մտավորականի աշխատասիրության, արգասավոր շնորհքի, կյանքը բանաստեղծորեն ընկալելու եւ սեփական հնարանքներով ներկայացնելու անուրանալի տաղանդի հանդեա:

Ս. Խանյանի ստեղծագործական աճը «Լեռների երգը» գրքում նկատվում է յուրաքանչյուր շարքի մեջ: Ճիշտ է, գիրքը գնահատվել է ըստ արժանվույն, սակայն գրախոսողները ժամանակի հներցիայով (դա 70-ական թվականներին էր) ուշադրություն են դարձել ավելի շատ հայրենասիրական բանաստեղծություններին: Զարմանալի վերաբերմունք էր մշակվել քննադատների մոտ՝ ստեղծագործողների մարդկային բազմաշերտ հուզաշխարհը ներկայացնող գործերի նկատմամբ: Այդ առումով գնահատման խոսքի կարուտ են «Լեռների երգը» ժողովածուն, «Խոստովանություն»

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Չարքը եւ «Մորս հիշատակին» քնարական էսքիզները: Այդ էսքիզները կարելի է համարել նաեւ քնարական պոեմ: Մայրական թեման հայ պոեզիայում ամենից շատ արժարժված մոտիվներից է: Բավական է հիշել Ա. Խաչալյանի, Յ. Շիրազի ստեղծագործությունները՝ մեր ասածը հաստատելու համար:

Ուրեմն, այդ մեծություններից հետո մոր կերպարը բնութագրող ինքնատիկ երգեր գրելը դժվար է: Յամարձակորեն կարելի է ասել, որ Ս. Խանյանի «Մորս հիշատակին» շարքը նոր խոսք է թե՛ թեմայի բացահայտման, թե՛ գեղարվեստական առանձնահատկությունների տեսակետից: Շարքում առաջին հերթին արտահայտված է որդու կարոտը՝ հուշ դարձած մոր հանդեպ: Այդ կարոտը, սակայն, չպետք է հասկանալ որպես լաց ու կոծ: Բանաստեղծն, ստեղծելով հուշ դարձած մոր կերպարը, ընդգծում է մոր վեհությունն ու որդու անմնացորդ սերը, որի միասնության մեջ են գեղեցկանում աստվածային այդ զգացումները: Շարքի առաջին բանաստեղծության մեջ՝ կազմված ընդամենը ութ սողոյց, բանաստեղծը մի ամբողջ աշխարհ է բացում: Նա մանկության հավերժությունը տեսնում է մոր լինելիության մեջ:

Ս. Խանյանի՝ պատերազմական թեմայով գրված բանաստեղծությունները միաժամանակ բողոք են պատերազմի դեմ: Այս իմաստով նրա երգերն աչքի են ընկնում թե՛ գաղափարական իմաստով եւ թե՛ խոսքի հուզական լիցքով: Մեր կյանքում, մեր աչքերի առաջ տեղի ունեցող իրադարձությունների հենքի վրա բանաստեղծը հյուսել է կարոտի եւ ցասումի տողերը եւ հասել հաջողությունների: Պատերազմն աշխարհի դեմ սանձնազերծված մահվան քրքիջ է, այն պետք է բացառվի: Մարդկությունը պետք է զգն լինի եւ ժամանակին բռնի չարագործի ծեռքը, խափանի մարդակուլ հրդեհների բռնկումը: Աշխարհի խիլճը չպետք է քնի:

«Ղարաբաղյան նվազներում» Խանյանն աստիճանաբար արտահայտել է իր սերն ու կարոտը, տագնաան ու հպարտությունը Արցախ օջախի հանդեպ: Թեմայի եւ արտահայտման ոճային յուրովի գժերով բանաստեղծը բացում է նախ Արցախի եւ ապա իր երգերի հորիզոնները, այդ հորիզոնների մեջ էլ՝ Ղարաբաղը իր կենցաղով, բնության երեւույթներով, մի խոսքով՝ արցախյան կոլորիտով: «Զորոյց» բանաստեղծության մեջ, որ շարքի երկրորդ երգն է, Խանյանը հարցնում է Ղարաբաղ մորից: «Ե՞ս եմ քո հոգում, թե՝

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Դու կրծքիս տակ»: Ընդհանրացումը սիրո խոստովանանքի մի ջերմ նվագ է.

Ին արյան մեջ ես, ես էլ՝ քո արյան,
Մեր միջեւ չկան փակված դուռ-դարպաս,
Ես իմ անունն ու գույնը կունենամ,
Քանի աշխարհում ծփում ես ու կաս:

Թաղթաօի եւ Խաչեմի, Մռովի եւ Քիրսի կողքին թթենին է Ս. Խանյանի ամենասիրած մասունքը Արցախ աշխարհի պատկերի մեջ: Թթենին «Իր տիրոջը սիրում է ջերմ, չի պահանջում հատուցում», նա իր քաղցր պտուղները բաժանում է շռայլորեն, ամեն տարի բերք է տալիս, չի վախենում ոչ ցրտից եւ ոչ էլ տապից: Եվ ահա, երբ Ադրբեջանը սանձազերծել է պատերազմը արցախիների դեմ, ուղղակի գինվորագրվել են բոլորը: Դայ ազատամարտիկի կողքին գենքի ուժգնությամբ մարտնչում է նաեւ գրականությունը՝ առաջին պլանի վրա մղելով ոչ միայն առօրյայի խիզախությունը, այլև անցյալի հերոսական էջերը եւ անհատների գործունեությունը: Դայտնի է, որ 1992-ի տարեմուտին Արցախը ռմբակոծվում էր չորս կողմից, Ստեփանակերտը դեռեւս օղակնան մեջ էր: Բանաստեղծը դառնացած է աշխարհից, նա Ամանորի թեւերին տեսնում է Արցախի արյունը, արթնացել է մարդակեր գագանը, ձգտում է քերել հայոց տառերը Արցախա բերդերից, զավել անգամ մեր երգերը.

Խլացած աշխարհը նորից
Չի լսում օգնության կանչերս,
Կուրացած աշխարհը նորից
Չի տեսնում անարդար տանջվելս:

Սակայն բանաստեղծը չի հուսալքվում, նա, «Զահելացրե՛ք անտառը» իրաշալի բանաստեղծության մեջ քնարական հերոս ընտրելով իր խաչատուր պապին, արդար է համարում այն պատերազմը, որ, զոհեր խվելով հանդերձ, ապահովում է ժողովրդի ազատությունն ու անկախությունը: Բանաստեղծությունը գրված է քնարական շնչով, ժողովրդական մտածելակերպի արտահայտամիջոցների կնիքով: Խաչատուր պապը խորհուրդ է տալիս Զահելացնել անտառը, բազմանշանակ նա ասում է.

Ուր նայում ես՝ ծերերն են շատ,
Կարծես ստերջ է դարը,

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Փոքրերով է տունն արեւշատ,
Զահելացրեք անտառը:

Բանաստեղծը, դիմելով Արցախ աշխարհին, ներկայացնում է նրա հերոսական պատմությունը՝ արիությունը, աշխատասիրությունը: Բայց 20-րդ դարում «Մի նենզ ուղեղ» եւ «Մի սեւ ձեռք» Արցախը նետեց կառափնարան, սակայն, ի հեճուկս ոսդսների, Արցախն ապրեց անկախության երազը հոգում եւ ոտքի ելավ վերամիավորվելու իր մորը՝ Դայաստանին: Նպատակը հստակ է, երազը՝ վճռական:

Թո պատիվն եմ ուզում պահել,
Թո անունը, թո լեզուն..

Թշնամին ուզում է Արցախից խլել լեզուն, խաչել նրան, սակայն զուր ջանքեր են դրանք, որովհետեւ հայրենիքը պայքարում է իր պատվի համար:

Անահիտ ԱթԱՅԱՆ
Բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ
«Ստեփանակերտ», փետրվար, 2000թ.



Զախից՝ ԱրՊՅ գրականության եւ
լրագրության ամբիոնի ավագ
լաբորանտուիկի Լորա Այրինյանը

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

ԱՊԿՐԱՑ ԽԱՆՅԱՆ
(Գրական պիմանկար)

Բազմազան է Սովորատ Խանյանի ստեղծագործության թեմատիկան՝ հայրենիք եւ հայրական տուն, մանկության հոլշ եւ սեր, կյանք եւ ժամանակ:

Բանաստեղծի քնարական հերոսը կենսասեր է, սիրում է կյանքը, ուզում է ապրել, վայելել այն եւ զարմանում է, որ «արագ են անցնում օրերը», խնդրում է, որ «տարիները մի քիչ դամդաղ ցած իջնեն»: Նա տենչում է միայն իր համար չապրել, այլև օգտակար լինել ուրիշներին, լուսի սերմեր ցանել ամենուր.

Սերմնացան դառնամ, գոգնոցս կապեմ
Ու բերնեբերան լցնեմ աստղերով,
Ծայրեծայր ամբողջ աշխարհը չափեմ
Ճողի մշակի հպարտ քայլերով:

Մարդկանց իմ սրտի իղձը ավետեմ,
Բարի լուս մաղթեմ, մաղթեմ սեր, խնդրում,
Ամեն կրծքի տակ մի աստղ նետեմ
Ու սեր վաստակած վերադառնամ տուն:

/«Երազ»/

Մի այլ «Տենչ» բանաստեղծության մեջ նա երազում է.
Այնպէս ապրեմ, որ չերկատվեմ,
Բարին սիրեմ, չարը ատեմ,
Որ լուսաստղը այս աշխարհում
Նաեւ իմձ հետ համեմատեմ...

Բանաստեղծը երգում է կյանքի գեղեցկությունները, կյանքը գեղեցկացնող, բարիք արարող մարդկանց գովքը, նրանց ստեղծագործող աշխատանքը, փորձում թափանցել մարդու ներաշխարհը, վերարտադրել նրա ապրումներն ու խոհերը: Խանյանի քնարական հերոսը կյանքը պասիվ դիտող չէ, այլ արարման ծգտող, դժվարություններից չերկնչող, չընկրկող, որի համար բնութագրական է հետեւյալ երկտողը.

Օրը չպետք է ուղեկցել մի կերպ,
Այն հաղթանակով պիտի նվաճել:

Խանյանի ստեղծագործության մեջ ուրույն տեղ է գրադեցնում հայրենի գյուղի թեման, որն ամբողջանում է «Մեր օջախի մոտ»

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Բաժնում, ուր մանկության քաղցր օրոր կա, մայրական տաքուկ գիրկ, հայրական տան կարոտ ու կանչ, նաև՝ խորին տխրություն.

Սիրելիս, կաթսան բեր դիր կրակին,
Փայտե շերեփով թող թանը խառնեն,
ճարճատող մեր հին օջախի կողքին
Ճուշ դարձած իմ մոր կարոտը առնեն:
Ես իմ մոր եփած թանովն եմ հիշել,
Պղնձե կաթսան բեր դիր կրակին...

Հայրենի օջախը, որն իր մեջ սրբազն մասունքներ է անթեղում, հաճախ հանդես է բերվում որպես հայրենիքի խորհրդանշան, որի հետ բանաստեղծը կապված է հազար թելերով, որը թեւեր է տալիս նրան, կյանքի կարոտ ու սեր ներշնչում, ավելին կյանքի, ապրելու աղբյուր է ծառայում:

Հայրենիքի սիրուց է ծնվել «Ղարաբաղյան նվազմեր» շարքը, ուր հեղինակը նպատակ է ունեցել ոչ միայն ներկայացնելու հայրենի ինքնատիպ գեղեցկությունները, այլև՝ բնության տեսարանների միջոցով բացահայտելու իր երկրի «բարձունքների սովոր, խոյանքների տենչող» մարդկանց «բնութագիրը՝ շեշտելով նրանց ու մայր հողի, ասել է, թե՝ Արցախի եւ արցախցու անբաժանելիության գաղափարը /«իմ արմատները սրտիդ խորքում են»/.

Բարձունքներ եմ տեսնում անվերջ
Իմ խոհերի երամներում,
Նրանից չէ՝, որ օրորս
Լսել եմ ես բարձունքներում:

«Նվազմերում» խանյանի ձայնը անկաշկանու է հնչում, քանզի դրանք ոչ թե «հերթապահ», օրացուցային ոտանավորներ են, որոնք մի ժամանակ կարծեք թե պարտադիր էն եւ որոնց բավականին տուրք է տվել հեղինակը, այլ սիրո, նվիրվածության արտահայտություններ են իր բարձրիկ ու հպարտ լեռնաշխարհի հանդեպ, որն, ի հեծուկս մեր հին ու նոր թշնամիների, կանգում հայեցի է մնացել.

...Անենից շատ, հայրենի լեռներ,
Ես գագաթներն եմ սիրում ձեր հպարտ
Եվ այն պահը թեժ, երբ անթիվ հողմեր
Գալիս, պարտվում են ձեր ոտքերի տակ:

Այդուամենայնիվ, զգացնունքների անկեղծությամբ առանձնանում է «Սպասում ենք դեռ» բաժինը, որը «Խանյանի ստեղծագործական նախասիրության հեռուներում իր շիրիմը գտած, հերոսա-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Կան զինվորի կարոտի կարծես ամփոփող ու առավել հասունացած վերարտադրությունն է, որի հոգեբանական նրբերանգը այդ զինվորի հավերժ կենդանի գաղափարն է» /Ժան Անդրյան/: Շարքն ունի իր համգուցային՝ «Սպասում» բանաստեղծությունը, ուր այսպիսի սրտառուչ տողեր կան.

Դանուր, դու իմ Արաքսի քույր,
Քեզ շատ եմ երգել,
Խնդրում եմ քեզ, պատասխան տուր,
Ճեռվից եմ եկել:

Իմ եղբորը՝ դու չե՞ս տեսել՝
Զահել, գանգրահեր,
Մինչեւ հիմա տուն չի հասել,
Սպասում ենք դեռ:

Նրա վերջը սրտիդ Վրա,
Ասս ինձ, չկա՞,
Լուր տուր, Դանուր, տանեմ նրա
Սիրած աղջկան...

Մարդկայնորեն պարզ ու անկեղծ ապրումներից են հյուսվել գրքի մի շարք գործեր, որոնք հաստատում են այն ակնհայտ ճշմարտությունը, որ բանաստեղծության առաջին եւ վերջին պայմանը ապրումի բնականությունն է:

Այս գիծն է գլխավորապես իշխում նաեւ բանաստեղծի սիրային խոստովանություններում, որոնք թեեւ առանձին դեպքերում զուտ անձնական տարրեր են պարունակում, բայց ընդհանուր առմանը գովերգում են խկական, փոխադարձ սերը, որը երջանկացնում է մարդուն, հարստացնում նրա ներաշխարհը, իմաստավորում կյանքը, դժվար պահերին նեցուկ դառնում եւ այլն:

Երջանկությունս դու ես պարգեւում,
Ու քեզ է փարզում երջանկությունս,
Հանգիստս, քունս դու ես խանգարում,
Քեզնով եմ գտնում հանգիստս, քունս...

Խանյանն ունի խկական սիրո իր բանաձեւը, որը, թվում է, անսխալ է մեկնաբանում մարդկային ամենավեհ օգացումը /այն հեղինակը «քաղցր տառապանք» է անվանում/.

Թե ինչ է սերը - վիճում են անվերջ,
Ու մի համոզիչ պատասխան չկա...

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Ողջ աշխարհը տես քո սիրածի մեջ.
Իսկական սերը հենց դա է, որ կա:

Ս. Խանյանի բանաստեղծություններից մի քանիսը երգի են վերածվել Գուրգեն Գաբրիելյանի եւ Էդուարդ Դազարյանցի կողմից:

«Ինտերնացիոնալ» Բաքվից տեղափոխվելով Արցախ՝ Սոկրատ Խանյանը, մանավանդ մեր ազգային-ազատագրական շարժման բուռն տարիներին, ինչպես իր գրչընկերները, նորովի ընկալեց ու մարսեց շատ կենսական երեւությներ, որոնք ել օգնեցին նրան գրելու հիշատակության արժանի մի շարք գործեր։ Դրանց շարքում առանձնանում է «Արցախի արծիվը» պոեմը /1995թ./, որը լույս է տեսել առանձին գրքով, Ստեփանակերտում։ Պոեմում պատկերված են 9-րդ դարի հրադարձությունները Արցախում։ Յայ պատմագիրների տեղեկությունների հիման վրա հեղինակը ստեղծել է գեղարվեստական լայնակտավ երկ, որտեղ նկարագրում է Դիզակի գավառապետ Յովսեփի եւ նրա որդի Եսայու ղեկավարությանք արցախահայության հերոսական պայքարը արաբական խալիֆայության դաժան ոստիկան, ծագումով թուրք Բուղայի հրոսակների դեմ։ Խանյանի պոեմը հերոսության գովք է եւ ունի արդիական հնչեղություն։ Ավելորդ չէ հիշեցնել, որ արցախցի գրողները պատմական թեմայով շատ քիչ գործեր ունեն, եւ այս երկը, առաջններից մեկը լինելով, կոչված է լրացնելու այդ բացը։

Մյուս՝ «Խահատակ լուս» պոեմը նվիրված է Արցախի գոյամարտի հերոսներից մեկի՝ լեզենդար Ավոյի /Մոնթէ Մելքոնյան/, Վազգեն Սարգսյանի բնորոշմանը՝ ամենա-ամենազնիվ մարդու սիրալից, մաքառումներով լի կյանքի ու գործի լուսարանմանը՝ առնչված արցախյան ազգային-ազատագրական պայքարի հետ, որը հեղինակը իրավացիորեն հայ դատի անքակտելի մասն է համարում եւ որի իրականացման համար նահատակվեց Ավոն՝ ապրողներիս պատգամելով։ «Եթե կորցնենք Արցախը, նենք կշրջենք մեր ժողովորդի պատմության վերջին էջը»...

**Լեճա գրիգորՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
«Լուսարար», փետրվար, 2000թ.**

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

ԲՈՀ-Ի ԴԻՊԼՈՄԻ ՊԱՄՏԱՎՈՒԹՅՈՒՆԻԴ Է

Հարցապայման Ա. ԽԱՆՅԱՆԻ հետին

Օրեսու տեղի ունեցած ԱրՊՃ գիտական խորհրդի նիստի ժամանակ համալսարանի ռեկտոր Յամետ Գրիգորյանը գրականության եւ ժուռալիստիկայի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր Սոկրատ Խանյանին եւ հայոց լեզվի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու Օֆելյա Բաբայանին հանձնեց ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից հաստատված պրոֆեսորի եւ դոցենտի գիտական կոչումների դիպլոմներ: Այդ կապակցությամբ մեր թղթակցի հարցազրույցը Ս. Խանյանի հետ:

-Պարոն Խանյան, մեզ՝ ուսանողներիս հայտնի է, որ Դուք մինչեւ այդ պրոֆեսորի պաշտոնակատար եք, իսկ ընկ. Բարայանը՝ դոցենտի: Խնդրում եմ պարզաբանեք այս հաճելի երեւուրի նշանակությունն ու բովանդակությունը:

-Նախկին ԽՍՀՄ-ի օրոք գոյություն ուներ ընդհանուր միութենական ԲՈՀ (Բարձրագույն որակավորման հանձնաժողով), որը Միության կազմի մեջ մտնող հանրապետությունների գիտնականներին հանձնում էր թե՛ գիտական աստիճանների վկայականներ եւ թե՛ գիտական կոչումների դիպլոմներ: ԽՍՀՄ փլուզվելուց հետո հանրապետություններից յուրաքանչյուրն ստեղծել է Բարձրագույն որակավորման հանձնաժողով, որն իրավունք ուներ հանձել միայն գիտական աստիճանների վկայականներ: Գիտական կոչումները տրվում էին կոնկրետ այն բուհի կողմից, որտեղ աշխատում էր գիտությունների թեկնածուն կամ դոկտոր՝ գիտական կոչումների պաշտոնակատարի կարգով: Ընթացիկ տարվանից ՀՀ կառավարության որոշմամբ հանրապետության ԲՈՀ-ին իրավունք է վերապահվել գիտական աստիճաններ ունեցողներին հանձնել նաև գիտական կոչումների դիպլոմներ:

-Այդ որոշմամբ բոլոր գիտական աստիճաններ ունեցողներին՝

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Են տրվում գիտական կոչումների դիպլոմներ:

-Ոչ: Այս գործընթացը պահանջում է լուրջ աշխատանք եւ պատասխանատվության զգացում: Կոնկրետ պրոֆեսորի գիտական կոչում ստանալու համար գիտնականը պաշտպանելուց հետո պետք է ունենա ուսումնամեթոդական ձեռնարկ, դասագիրք՝ իր մասնագիտության գծով: Պետք է գիտնականն ունենա նաև գիտամանկավարժական համապատասխան ստաժ՝ տվյալ բուհում: Նույն պահանջը որոշ վերապահումներով վերաբերում է նաև դրույթներին:

-Պարոն Խանյան, կոնկրետ Դուք ինչո՞վ եք ներկայացել ԲՈՅ-ին:

-Գիտական կոչում ստանալու հարցը, նախ, քննարկվում է այն բուհում, որտեղ աշխատում է մասնագետը: ԱրՊՐ գիտական խորհուրդը 2004թ. մայիսի 27-ին քննարկել է պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու ինձ վերաբերող հարցը:

Դոկտորական ատենախոսությունը պաշտպանելուց հետո առանձին գրքերով եւ գիտական հանդեսներում լույս են տեսել իմ մոտ տասն աշխատությունները: Առանձնապես ընդգծվել է իմ ստեղծած «Հայ գրականության ուսուցումը բուհում» (մեթոդիկա, ծրագիր, մատենագիտություն) աշխատությունը, որն առաջին փորձն է բուհական մեթոդիկայի հրատարակման գործում: Ինձ համար հաճելի է, որ մեր ուսանողները, մագիստրանտները, ասպիրանտները, հայցորդներն ու դասախոսները օգտվում են այդ ձեռնարկից: ԼՂՅ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարության կոլեգիայի որոշմամբ տպագրվել է նաև իմ «Ազգային ճակատագիրը եւ հայ պոեզիան» դասագիրքը՝ մագիստրանտների, հայցորդների եւ ասպիրանտների համար: Այս աշխատանքը եւս մեր առաջին հաջող փորձն է: Նույն վերնագրով առարկան մտցված է մագիստրանտների ուսումնական պլանում: Բացի դրանից, տպագրել եմ առանձին մենագրություններ բանաստեղծներ Ն. Ավագյանի, Ա. Թովմասյանի, Յր. Բեգլարյանի մասին: Գիտական տեղեկագրերում հանդես եմ եկել նորագույն շրջանի գրականության հիմնախմնիրների շուրջ: Թող ամհամեստ չթվա, ԲՈՅ-ի հանձ-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Անաժողովը դրվատանքի խոսք է ասել իմ կատարած գիտահետազոտական աշխատանքների մասին եւ ս.թ. հուլիսի 14-ին թիվ 47 արձանագրությամբ ինձ շնորհել է պրոֆեսորի գիտական կոչում՝ գրականագիտության մասնագիտությամբ:

-Ի՞նչ զգացումներ ունեք այդ կապակցությամբ:

-Դեռևս մեր բուհի գիտական խորհրդի նիստում մայիսի 27-ին մեր գիտնականները նշել են. «Եթե նույնիսկ Խանյանի ստեղծած դասագիրքը չլիներ, նա արժանի է պրոֆեսորի կոչման: Սակայն հաճելի է ընդգծել, որ մեր երկարամյա փորձ ունեցող դասախոսը չի բավարպում ձեռք բերածով, ամեն տարի հրատարակում է գրականագիտական նոր ուսումնասիրություններ»: Ե'վ այս գնահատականը, եւ ԲՈՅ-ի հաստատած դիպլոմը ես դիտում եմ որպես պարտավորեցնող հանգամանքներ: Ուստի, ձգտում եմ հանդիս գալ նոր ուսումնասիրություններով եւ գիտական աշխատանքներով:

**Մյուզաննա ԳՐԻԳՈՐՅԱՆ ասպիրանտուիի
«Արցախի համալսարան», թիվ 7, 2004,**



**Մեր քաղաքի գեղեցիկ պատկերը հոգու մեջ
առած մեր Լիանա Աղամյանը՝ տաղանդավոր
լրագրող-քանասերը**

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

ԱՊԿՐԱՏ ԽԱՆՅԱՆ - 75

Լրացավ բանաստեղծ, թարգմանիչ, լրագրող ու հասարակական գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Արցախի պետական համալսարանի գրականության ու ժուռնալիստիկայի ամբիոնի վարչէ Սոկրատ Աղալարի Խանյանի ծննդյան 75-ամյակը: Արցախի գրական ընտանիքը դժվար է պատկերացնել առանց Սոկրատ Խանյանի՝ անհանգիստ սրտի տեր բանաստեղծի, բեղմնավոր ու վաստակաշատ գրականագետ-մանկավարժի, որին ճանաչում են ոչ միայն Լեռնային Ղարաբաղում, այլև Հայաստանում եւ Սփյուռքի գրական օջախներում:

Ս. Խանյանը ծնվել է 1930թ. հունվարի 22-ին, Լեռնային Ղարաբաղի Յաղորութիւնը շրջանի Աղբուլաղ (այժմ՝ Ակնաղբյուր) գյուղում: 1947-ին գերազանց գնահատականներով ավարտել է Եղիլու (Ուխտաձոր) գյուղի միջնակարգ դպրոցը, իսկ 1953 թ.՝ Բաքվի Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի եւ գրականության բաժնը: Բուհն ավարտելուց հետո աշխատել է Բաքվում հրատարակվող «Կոմունիստ» (հայերեն) թերթում որպես լրագրող: 1965-ին ավարտել է ասպիրանտուրան, ՀՀ ԳԱ Մ. Արեյյանի անվան գրականության ինստիտուտում պաշտպանել թեզ՝ «Ն. Զարյանի դրամատուրգիան» թեմայով, ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, աշխատել իր ավարտած բուհի հայոց լեզվի եւ գրականության ամբիոնում որպես դոցենտ: 1969-ին տեղափոխվել է Ստեփանակերտ եւ առ այսօր դասավանդում է հայ գրականություն Արցախի պետական համալսարանում: Նա ՀՀ ԳԱԱ Մ. Արեյյանի անվան գրականության ինստիտուտում «Դայրենիքի ճակատագիրը հայ պոեզիայում (1950-90-ական թթ.)» թեմայով պաշտպանել է թեզ, արժանացել բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի: Ս. Խանյանը 1984 թ. դեկավարում է ԱրՊՀ նախ հայոց լեզվի եւ գրականության, ապա գրականության եւ ժուռնալիստիկայի ամբիոնը:

Ս. Խանյանի բանաստեղծությունների առաջին ժողովածուն հրատարակվել է 1959թ. «Կարկաչ» խորագրով: Այնուհետեւ լույս են տեսել «Սիրոս ձեզ հետ է», «Արեւսար», «Լեռների երգը», «Քո անունից», «Կարոտի կրակներ», «Արցախյան դողանջներ», «Իմ ծիածանը», եւ այլ գրքեր: «Արցախի արծիվը» պոեմի համար ար-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Մանացել է ԼՂՀ Նախարարների խորհրդի Եղիշեի անվան մրցանակի: Ս. Խանյանը ԽՄՀՄ գրողների միության անդամ է 1958թ.: Այժմ ԼՂՀ եւ Հայաստանի գրողների միության անդամ է: Բանաստեղծի գրքերի նասին դրվատանքի խոսք են ասել և. Զարյանը, Ս. Արմենը, Ս. Կորյունը, Ս. Սողոմոնյանը, Ս. Արզումանյանը, Դ. Գասպարյանը, Յ. Սերոբյանը, Ս. Դանիելյանը, Գ. Գաբրիելյանը, Վ. Հակոբյանը եւ ուրիշներ: Դեռևս 1966թ. Խանյանի «Սիրտս ծեզ հետ է» գիրքը գրախոսել է Ս. Արմենը:

Որպես գիտնական-մանկավարժ, նա լուրջ ուշադրություն է դարձել հայ դասական պոեզիայի ուսումնասիրությանը, ինչպես նաև Արցախում ստեղծվող հայ գրականության գնահատմանը: Հայտնի են նրա «Պոեզիայի զարգացման միտումներն Արցախում (1950-2000թ.)», «Արցախյան պատերազմը եւ հայ պոեզիան» (արժանացել է ԼՂՀ գրողների միության Մուլացանի անվան մրցանակի) աշխատությունները, ինչպես նաև «Հայ գրականության ուսուցումը բուհում» ուսումնամեթոդական ծեռնարկը եւ «Ազգային ճակատագիրը եւ հայ պոեզիան» դասագիրքը մագիստրանտների համար:

Ստեղծագործական եւ գիտամանկավարժական բեղուն աշխատանքի համար պարգևնատրվել է ԽՄՀՄ Գերազույն խորհրդի «Աշխատանքային գերազանցություն» մեդալով, ԽՄՀՄ բարձրագույն դպրոցի պետական կոմիտեի «Աշխատանքային գերազանց հաջողությունների համար» կոմքանշանով: Արցախյան ազգային-ազատագրական պայքարին ակտիվութեն մասնակցելու համար արժանացել է ԼՂՀ «Վաշագան Բարեպաշտ» մեդալին:

Ս. Խանյանը ԼՂՀ Գրողների միության վարչության, Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի գեղարվեստական խորհրդի ակտիվ անդամներից է, ԱրՊՀ «Գիտական տեղեկագիր» հանդեսի գիտական քարտուղարը: Այսօր էլ նա շարունակում է Երիտասարդական ավյունով լի իր ստեղծագործական եւ գիտամանկավարժական գործունեությունը՝ ամենուրեք արժանանալով բազմահազար ընթերցողների եւ աշխատավորական կոլեկտիվների ջերմ հարգանքին:

Հայաստանի Գրողների Սիրտս վարչություն,
ԼՂՀ գրողների միության վարչություն
«Գրական թերթ», 21 հունվարի, 2005թ.

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

«ԽՄ ՀԽԳՈՒՄ ՀԱՎԱՍԱՐ ՏԱԴ ԱՆ ԳՃԵԼ
ՔՄԱՍԱՏԿԴԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ
ԳՐԱԱՄԱՍԳԻԾՈՒԹՅՈՒՆ»

ԱրՊՐ դասախոս, հայոց լեզվի եւ գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սոկրատ ԽԱՍՅԱԸԸ, որը 15 բանաստեղծական ժողովածուների, այդքան էլ գիտական ուսումնասիրությունների եւ հարյուրավոր հոդվածների հեղինակ է, արժանացել է ԼՂՀ գիտության վաստակավոր գործի կոչման: Ստորև ներկայացնում ենք նրա հետ մեր հաղցագրուսցը:

-**Ծնորհավորում ենք Ձեզ պատվավոր կոչման արժանանալու առթիվ: Ի դեպ՝ Դուք երից գնահատված մտավորական եք: Եվ առաջին հարցը՝ ինչպե՞ս ընդունեցիք այս նոր ու բարձր պարգևը:**

-Խորին շնորհակալություն՝ շնորհավորանքի համար: Նախ, նշեմ, որ մարդ, եթք ընտրում է իր նախասիրած մասնագիտությունը եւ լծվում աշխատանքի, չի էլ մտածում, որ երբեւ կպարգեւատրվի: Բայց կա մի ճշմարտություն, որ յուրաքանչյուր բարեխիղծ մասնագետ հաճելի զգացումներ է ապրում, եթք վաստակը գնահատվում է եւ կոլեկտիվի, եւ պետական մարմինների կողմից:

Ես շատ գոհ եմ, նախ՝ իմ ծնողներից:

Նրանք, դաստիարակելով իրենց իինգ որդիներին՝ առաջին հերթին մղել են աշխատասիրության: Եվ երախտագիտությամբ են հիշում ծնողներիս, առանձնապես՝ հորս, որ տիրապետում էր մի շարք արհեստների: Դնուտ հյուսն էր, ով իր արհեստը սովորեցրել է ինձ ու եղբայրներիս: Սակայն ընդգծեն, որ մեր ընտանիքում առանձնակի մի սեր է եղել ուսման նկատմամբ: Մենք եւ օգնում էինք մեր ծնողներին, եւ ջանասիրությամբ յուրացնում օրվա դասերը: Պաշտում էինք ուսուցչի մասնագիտությունը: Այդպես երեք եղբայր եւ երկու քույր ստացել ենք մանկավարժական կրթություն: Ավաղ, բանաստեղծ ավագ եղբայրս՝ Սուլեն Խանյանը, որ ինձ դասավանդել է 4-րդ դասարանում, զոհվել է Մեծ հայրենականուն:

Ահա, այսպես, դեպի աշխատանքն ունեցած մեր տոհմական սերն անցել է եւ ինձ:

Ճիշտ եք նկատել, ավելի քան 55-ամյա իմ աշխատանքային ճանապարհին պարգեւատրվել եմ տասնյակ պատվոգրերով ու մե-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Դալմերով՝ որպես լրագրող, մանկավարժ, հասարակական գործիչ: 1978-ին պարգևատրվել են ԽՍՀՄ Գերազույն խորհրդի «Աշխատանքային գերազանցության համար» մեդալով, 1990-ին՝ ԽՍՀՄ բարձրագույն դպրոցի «Աշխատանքային գերազանց հաջողությունների համար» կրօքանշանով, մեր ազգային-ազատագրական պայքարին ակտիվության մասնակցելու շնորհիվ 2002-ին արժանացել են «Կաչագան Բարեպաշտ», ապա՝ «Մայուսան Երախտագիտություն» մեդալների: Որպես գրող՝ 1992-ին դարձել են ԼՂՀ նախարարների խորհրդի Եղիշեի անվան մրցանակի դափնեկիր՝ «Արցախի արծիվը» պոեմի համար, 1998-ին արժանացել են ԼՂՀ գրողների միության Սուլրացանի անվան ամենամյա մրցանակի՝ «Արցախյան պատերազմը եւ հայ պոեզիան» աշխատության համար: Պարգևատրվել են ԱրՊՀ 30-ամյակի հուշամեդալով: Այս ամենը, իհարկե, բնականորեն ոգեւորել են ինձ եւ պահանջել ավելի լավ աշխատել: Եվ ահա, Մաշտոցյան գրերի գյուտի եւ Յայոց դպրոցի հիմնադրման 1600-ամյակի կապակցությամբ արժանացած ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ պատվավոր կոչման: Ի դեպ, դա մեր հանրապետությունում թիվ 1 պարգևն է:

Ես գտնում են, որ անհրաժեշտ է եւ միշտ էլ կոչ են անում ունենալ պետական մտածողություն: Պատմության ընթացքում բազում դարեր մեր ժողովուրդը հարեւան բռնապետությունների պատճառվ զրկված է եղել պետությունից: Այսօր մենք՝ մտավորականներս, պետք է շարունակենք մեր հայունանվեր նախնիների ավանդույթը եւ նորօրյա պահանջներին համապատասխան՝ մեր մասնագիտական կարողությունների սահմաններում ծառայենք մեր ժողովորդին, մեր պետությանը: Ահա այս լուսե մտորումներով են ընդունել այս բարձր պարգևը:

-Ինչպե՞ս եղավ Ձեր սկիզբը որպես գրականագետ եւ բանաստեղծ:

-Բանաստեղծ ծնվում են, գիտնական՝ դաշնում: Այս ծշմարիտ դիտարկումը մեզ է հասել Արիստոտելից: Գրողը, որ արարում է, հոգու աչքերով է տեսնում ստեղծագործական աշխատանքի բոլոր փուլերը: Ասել է թե՝ նա նաեւ գնահատող է: Կարող եմ ասել, որ բանաստեղծի եւ գրաքնադատի իմ ուղիները սկսվել են միաժամանակ: Ասենք, 1950թ. «Կոմունիստ» հանրապետական թերթում տպագր-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Վել է իմ առաջին բանաստեղծությունը, իսկ 1953-ին՝ իմ գրախոսականը Մ. Սարգարյանի «Սոր ձայնը» ժողովածովի մասին (համահեղինակ՝ Վլ. Աբրահամյան): 1953-ին ավարտելով Բաքվի Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի եւ գրականության բաժինը՝ աշխատանքի են անցել «Կոմունիստ» թերթի գրականության եւ արվեստի բաժնում: Պարզ է, որ պետք է հետեւեի գրականության ընթացքին եւ արծագանքեի նորություններին: Ապա 1962-1965թթ. սովորել են ասպիրանտուրայում՝ հայ գրականության գծով: 1965թ. գիտական թեզը պաշտպանելուց հետո աշխատել են որպես գրականության դասախոս: Ինչպես տեսնում եք, գրականագետ-մանկավարժի եւ բանաստեղծի իմ ուղին միաձույլ է: Յետաքրքիրն այն է, որ առայսօր հավասարապես տպագրվել են իմ 15 պետական գրքերը, այդքան էլ կազմում են իմ մենագրությունները: Ունեմ նաև 200-ից ավելի տպագրված գիտական հոդվածներ:

-Պարոն Խանյան, կցանկանայի, որ նշեք Ձեր անցած ճանապարհի հանգուցային կետերը:

-Յուրաքանչյուր մարդ, իիրավի, ունենում է իր կյանքի հանգուցային կետերը: Յինա, 75-ամյա իմ ճանապարհի բարձունքից հետ են նայում եւ առաջին հանգուցային, բայց առաջնորդիչ կետը համարում են 1947 թվականը, երբ զերազանց գնահատականներով ավարտեցի միջնակարգը: Յետեւյալ հանգուցային կետը համարում են բուհում ընդունվելս: 1965-ին պաշտպանեցի թեկնածուական թեզ՝ «Ն. Զարյանի դրամատուրգիան» թեմայով: 1958-ին ընդունվել են ԽՍՀՄ Գրողների միության շարերը: 1959-ին տպագրվել է բանաստեղծություններիս առաջին գիրքը «Կարկաչ» խորագրով:

Իմ ստեղծագործական ճակատագրի համար կարեւոր են համարում 1969-ին Բաքվից Ստեփանակերտ տեղափոխվելս: Ես, որ չեմ պատկերացրել կյանքն առանց ծննդավայրի, տեղափոխվելով մայր Աղցակի գիրկը, իրոք, զգացել եմ մայրական գորովանքի ու շոյանքի քաղցրություն: Բանաստեղծական իմ աշխարհում ծփաց մեր բնությունը, ծննդավայրի հանդեպ հեռավոր կարոտի զգացումը դարձավ ավելի ջերմ, ավելի անմիջական: Իմ յուրաքանչյուր տպագրված գիրքը՝ պոետական թե գրականագիտական, հանգու-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Պային մի կետ է: Նշանակալից հաջողություն եմ համարում դրկտորական ատենախոսության պաշտպանությունս՝ «Հայրենիքի ճակատագիրը հայ պոեզիայում (1950-1990-ական թթ.)» թեմայով: Խնդրում են ինձ ճիշտ հասկանաք: Օրվա 24 ժամից 14-ը աշխատում եմ: Դոկտորականը պաշտպանելուց հետո տպագրեցի «Ազգային ճակատագիրը եւ հայ պոեզիան» դասագիրքը՝ մագիստրանտների համար, վերջերս ԼՂՀ կառավարության հովանավորությամբ լույս տեսավ «Հայ պոեզիայի զարգացման միտումներն Արցախում (1950-90-ական թթ.)» ծավալուն աշխատությունը, չմոռանամ «Արցախյան ղողաճներ» եւ «Իմ ծիածանը» բանաստեղծական ընտրանիմերը: Լույս է տեսել «Հուշամատյան սխրանքի եւ երախտիքի» իմ գրքույկը՝ նվիրված մեր ազատագրական պայքարում զոհված իմ 30 համագույղացիների հիշատակին: Փոքրիկ մի գյուղ եւ 30 նահատակ: Ցավալի եւ արցունքաբեր է, բայց նրանց թեւավորող հիշատակը սերունդներին հանձնելը կարեւոր է: Արդ, այս գրքույկը եւս համարենք հանգուցային: Ցավ է, բայց աշեցնող է, սերնդապահ: Եթե ստեղծագործական բնագավառից քայլ քայլենք դեպի մեր առօրյա կենսադաշտը, խոսենք նաեւ մեր հարազատների մասին, որ կարեւոր է, ապա այստեղ եւս հանգուցակետեր ունեմ: Իմ սերը, զավակներն աստվածային պարզեւոր են: Ավագ որդիս՝ Համլետ Խանյանը, ականավոր ֆիզիկոս է: Ասեմ, որ առանց նրա մասնակցության ռուսական ոչ մի հրթիռ կամ ինքնաթիռ ո՛չ չարձրանա: Համլետիս աշխատությունները հայտնի են ԱՄՆ-ում, Չինաստանում, Եվրոպայում: Ցարարտությամբ կարող են նշել մյուս զավակներիս եւ տաղանդավոր թռոններիս մասին: Բոլոր թռոններս խելոք են: Չիեզմես, եթե ասեմ՝ ինձ են քաշել: Ահա այսքան եւ այսպիսի հանգուցային կետերից է բաղկացած իմ ճանապարհը:

-Զեզ համար ո՞ր է առաջնայինը՝ պոեզիան, թե՞ գրականագիտությունը: Ինչպե՞ս եք համատեղում այդ երկու կարեւոր եւ ծանրակշիռ բնագավառները:

-Վերը նշեցի, որ իմ հոգում համատեղ են ծիածանվել բանաստեղծությունն ու գրականագիտությունը: Գրում եմ երգը, կարոտում եմ գրախոսությանը եւ ընդհակառակը: Գրողը պետք է լինի նաեւ գրականագետ: ճշմարտությունը դա է: Առանց այդ երկու

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Բնագավառների ես չեմ պատկերացնում իմ կյանքը:

-Ընդհանրապես ժամանակակից գրականագիտության վերաբերյալ հակասական կարծիքներ են հնչում: Գրականագետի Զեր վերաբերմունքը:

-Ես գտնում եմ, որ հայ իրականության մեջ արդի գրականագիտության երեք գլխավոր բաժիններից զգալի նվաճումներ ունի գրականության պատմությունը: Մեր գրական քննադատությունը ինչ-որ չափով զիջում է: Երիտասարդ գրաքննադատներին մատների վրա կարելի է հաշվել: Սակայն, միեւնույն է, հետ են մնում գրական քննադատությունն ու տեսությունը: Բայց եկեք չիուսահատվենք: Գրականության եւ գրականագիտության զարգացման ընթացքում միշտ էլ լինում են զիգզագներ:

Տպագրության եմ պատրաստում բանաստեղծությունների եւ պոեմների իմ նոր ընտրամին: Զգտում եմ ավարտել «Դայ արձակի զարգացման միտումներն Արցախում (XX դարի երկրորդ կես)» աշխատությունը, որ լինելու է մեր գրական ընտանիքի ներկայացուցիչների երկերի գնահատման երկրորդ գիրքը: Կազմում եմ իմ նշանակալից հոդվածների ժողովածուն, որը պիտի լույս տեսնի Երեւանում:

Մտահղացումներ ստեղծագործողներին միշտ թելադրում է կյանքը: Երեւի, առաջիկայում կծնվեն նոր ծրագրեր: Երազում եմ, որ մեր ժողովուրդը խաղաղ ճանապարհով հասնի իր վերջնական հաղթանակին: Խաղաղություն եւ առողջություն երկիրը շենացնող ստեղծագործողներին, որ արարման մղող գրուններն են:

Դավատանք, հուսանք, ստեղծագործենք: Մեր ժողովրդի արարող ոգին այդ է պահանջում:

Կրկին շնորհակալություն՝ այս հաճելի հարցազրույցի համար:

Նվարդ ՍՈՂՈՍՈՆՅԱՆ
«Ազատ Արցախ», 19 հուլիսի, 2005թ.

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

«ԽՄ ՀՊԳԴՄ ՏՈՒԵԽՎ
ԾԱՎՈՒՄ ԵՆ ՑԱՎԻՑ»



Գրականագետ, բանաստեղծ, հրապարակախոս Սովորատ Խանյանի 75-ամյա հորելյանը Ստեփանակերտի մշակույթի եւ երիտասարդության պալատն է բերել հարյուրավոր մտավորականների, գրականության երկրպագուների, ուսանողների, եւ լեի-ցուն դահլիճը վկայում էր այն ծանաչման ու հեղինակության մասին, որ վայելում է հորելյարը: Երեկոյին մասնակցելու հիմ եկել ԼՂՅ Ազգային ժողովի նախագահ Օլեգ Եսայանը, պետական այրեր:

Երեկոն բացեց ԼՂՅ կառավարության մամլո ծառայության պետ Դավիթ Միքայելյանը՝ ընդգծելով վերջին տասնամյակում գրական հոգեւոր կյանքի աշխուժացումը հանրապետությունում եւ պետական հովանավորությունը գրական-մշակութային գործերին:

Երեկոն վարողը նշեց, որ Սովորատ Խանյանը 21 մենագրությունների հեղինակ է, որ նա առաջին անգամ ուսումնասիրություններ կատարեց եւ տվեց Արցախի գրական օջախի ընդհանրական բնութագիրը: Գրական ընտանիքի նահապետը նաեւ անուրանալի վաստակ ունի պոեզիայի անդաստանում: Բանաստեղծությունների առաջին ժողովածուն լույս է տեսել 1959-ին՝ «Կարկաչ» խորագրով, որին հետեւել են «Բարեկամություն», «Սիրտս ձեզ հետ է», «Սպասում ենք դեռ», «Լեռնային դղղանջներ», «Քո անունից», «Կարոտի կրակներ», «Արցախի արծիվը», «Ին ծիածանը» բանաստեղծությունների ժողովածուները:

ԼՂՅ կրթության, մշակույթի եւ սպորտի փոխնախարար Սլավա Ասրյանն իր ողջույնի խոսքում ընդգծեց հորեւարի ավանդը երիտասարդ սերնդի դաստիարակության գործում: Հմուտ մանկավարժ, գրականագետ, գրող եւ հասարակական գործիչ, այսպես բնութագրվեց Խանյանը: Քանի՛-քանի սերունդ է կրթել, եւ նրա սաները հասարակական կյանքում իրենց ծանրակշիռ տեղն ու դերն ունեն: Անձնավորություն, որն իր ամբողջ ստեղծագործական

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Կյանքը նվիրել է ժողովրդին, ապել ժողովրդի հոգսերով: Այնուհետեւ Ս. Ասրյանը կարդաց ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարար Աշոտ Ղուլյանի շնորհավորանքի ուղերձը:

Գրողի անցած ստեղծագործական ուղղու մասին խոսք ասաց ԱրՊՐ գրականության եւ ժուռնալիստիկայի ամբիոնի դասախոս, բանաստեղծ Յովիկ Մուսայեանը: Տող առ տող, գիրք առ գիրք խանյանը հասավ ներքին խտացումների: Դուզգիայի ավանդական ակունքներին հավատարիմ մնալը նրա ստեղծագործության հիմնական առանձնահատկությունն է: Նրա ստեղծագործություններում առկա է ցավը, տառապանքը, հետպատերազմյան սերնդի ողբերգությունը եւ լավատեսությունը: Գրողի ստեղծագործություններն ունեն նախապատճերություն, կենսագրություն. աշխարհի հետ իր փոխհարաբերություններն այդ ձեռվ է կառուցում գրողը: Խանյանի գրականագիտական հայացքները ես գալիս են դասական ակունքներից: Եվ նրա հոգում հաշտ ու համերաշխ ապրում են բանաստեղծն ու գրականագետը:

ԱրՊՐ ռեկտոր Յանլետ Գրիգորյանն իր ողջույնի խոսքում կանգ առավ խանյանի գիտամանկավարժական գործունեության վրա: «Բնությունը շառյ է գտնվել նրա հանդեպ,- ասաց բանախոսը, - շնորհալի՝ բոլոր ոլորտներում, որոնց ձեռք է զարկել»:

Դավիթ Միքայելյանը հորեւյարին համձնեց ՀՅ ԳՄ եւ ԼՂՀ ԳՄ շնորհավորանքի ուղերձները:

«Գրող, գրականագետ, դասախոս, լավ քաղաքացի եւ դարաբաղցի, միշտ անսայթաք՝ իր ժողովրդի հետ: Տարիները նա լցրել է ազնիվ ու արդար վաստակով», - իր ելույթում ասաց բանաստեղծ Յրազյա Բեգլարյանը:

ԼՂՀ պաշտպանության նախարար, գեներալ-լեյտենանտ Սեյրան Օհանյանի շնորհավորանքի խոսքը կարդաց նախարարության ռազմահայրենասիրական օծով ծառայության պետ Ռոբերտ Բաղրյանը՝ ընդգծելով հորեւյարի ստեղծագործությունների նշանակությունը երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության գործում:

«Խանյանը իր ձեռքը միշտ պահել է Արցախի գրական կյանքի զարկերակին», - իր ելույթում ասաց նկարիչ-քանդակագործ Լավուենս Ղալայանը եւ հորեւյարին նվիրեց իր նոր ստեղծագործությունը՝ նրա դիմաքանդակը: Դահլիճը երկար ծափերով ընդունեց Լ.

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Պալայանի՝ Զիվանու ոչ տարածված երգի հրաշալի կատարումը:

Ս. Խանյանը նաեւ երգերի տեքստերի հեղինակ է: Անուր թելերով կապված է հասարակական կազմակերպությունների հետ, հոբելյանին ողջույնի խոսք են ասում քաղաքապետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Կառլեն Մարգարյանը, ԼՂՀ ԱԿԱՐՄ նախագահ Վերա Գրիգորյանը, Վ. Փափազյանի անվան թատրոնի գեղարվեստական ղեկավար Լեռնիդ Յարությունյանը, ԱրՊՀ դասախոս Սիրուն Բաղդասարյանը, երգչուիկ Նահրուիկի Ալավերդյանը, դերասան Քաջիկ Յարությունյանը:

-Երեկոն ինձ համար ավելի շատ գնահատական է, քան` մեծարնք, -իր ելույթում ասաց հոբելյարը, - ես մտովի վերապրեցի անցածը, հիշեցի մեր գյուղը, որտեղ հայրս հյուսն էր, մայրս՝ կոլտնտեսուիկի, հինգ երեխաներ, ավագը՝ մեկնած ռազմաճակատ: Հայրս խրատ էր տալիս՝ եթե Աստված ծեզ շնորհը է տվել, ապա պիտի վերադարձնեք ժողովրդին: Այս ոգով ենք դաստիարակվել, եւ ես միշտ ծզտել եմ լինել ժողովրդի հետ: Մեր արածը խլել են, մեր ցանածը թշնամին տարել է, բայց այսօր մենք ուժեղ ենք, քանի որ ունենք պետություն, որ մեր ժողովրդի ամենամեծ նվաճումն է: Խորհելու ժամն է եկել: Ծառն արմատով է ծառ, եւ Արցախը, ինչպես կաղնի, հզոր արմատներով խրված է հողի մեջ: Իմ հոգում տողերը ծնվում են ժողովրդի ցավից: Քո ժամանակակիցը քեզ պիտի հասկանա եւ քո տողերից հուզվի: Մենք պիտի սնվենք դասական ակունքներից:

Այնուհետեւ հոբելյարը արտասանեց իր ստեղծագործություններից:

Երեկոյի գեղարվեստական մասում հնչեց Ս. Խանյանի եւ բանաստեղծություններից, եւ նրա տեքստերով գրված երգերից:

*Նվարդ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
«Ազատ Արցախ», 24 մարտ, 2005թ.*

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

ՄԻԾԾ ԻՉՈՒ ԶԳՑՈՒՄՆԵՐԻ
ՇԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ

Յոթելյանի նշումը յուղօրինակ գնահատական է վաստակին: Այս առումով Սոկրատ Խանյանի ծննդյան 75-ամյակին նվիրված երեկոն, որը կազմակերպել էին ԼՂՀ ԿՄՍ նախարարությունը, Գրողների միությունը եւ Արցախի պետհամալսարանը, հոբելյարի բազմամյա վաստակի մեծարում էր: Բանաստեղծ, գիտնական, դասախոս, արվեստագետ, հայրենասեր: Այս գնահատականը տվեցին հոբելյարին շնորհավորանքների ուղերձ հղողները եւ ելույթ ունեցողները: Ստեփանակերտի մշակույթի եւ երիտասարդության պալատի դահլիճը լեփ-լեցուն էր, ինչը մեր պարագայում կարելի է գնահատել որպես հարգանաց հավաստիք հասարակության մեջ անուն հանած անձին:

Առհասարակ ստեղծագործող մարդու համար դժվար է նույն հաջողությամբ դրսեւորվել նաեւ գրականագիտության ասպարեզում: Եթե ամփոփ գնահատենք Ս. Խանյանի վաստակը, ապա բանաստեղծական բազմաթիվ ժողովածուներից բացի, նա գրականագիտական հսկայական աշխատանք է ծավալել հայ գրականության արցախյան հատվածի գրական ներուժը ըստ արժանվույն ներկայացնելու ուղղությամբ: Տարբեր հետինակների նվիրված նրա մենագրությունները կարելի է հազվագյուտ աշխատանք համարել, որը հետագայում արցախյան գրողների կենսագրությամբ ու ստեղծագործական անցած ճանապարհով հետաքրքրվողների եւ ուսումնասիրողների համար մեծ նյութ է ծառայելու: Այս տեսակետից թե՝ չափածո եւ թե՝ արձակ գրողների գիտական լույսի տակ ներկայացնելն ինքնանպատակ համարել չի կարելի: Այսօր արդեն Ս. Խանյանի գրականագիտական ուսումնասիրությունները բանասիրական կրթօջախների ուսանողների համար ուսումնական նյութ են ծառայում:

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Ուրույն է նաեւ Ս. Խանյանի պոեզիան: Ինչպես ինքն է ասում նա միշտ գրիչը թաթախում է իր սրտից: Դրա համար էլ գրականագետներից ոմանք Ս. Խանյանին անվանում են հուզաթաթախ բանաստեղծ: Յոթելյանական երեկոյին արժենշվեց նաեւ նրա գիտամանկավարժական վաստակը: Տասնամյակներ շարունակ դասավանդելով Ստեփանակերտի ճախսկին մանկավարժական իմստիտուտում, որը հետագայում վերափոխվել է համալսարանի եւ դարձել Արցախի մայր բուհը, նա հազարավոր ուսանողների է դասվանդել՝ վերջիններիս մեջ զարգացնելով գեղարվեստի բարձր ընկալումները:

Ելույթ ունեցողները հատկանշեցին նաեւ Ս. Խանյանի երաժշտական տաղանդը: Ծվիի վրա նրա կատարումները միշտ էլ հաճելի պահեր են ներարկել ունկնդիրներին եւ գուցե թե բանաստեղծի երաժշտական հակումները, որոնք յուրօրինակ ձեռով ներազդել են բանաստեղծական ոգորումների վրա, դարձել են երգերի տեքստեր: Երեկոյի ընթացքում երաժշտական կատարողների մասուցմանք հնչեցին այդ երգերը: Արժանին մատուցենք՝ դրանք, իրոք, պարունակում էին այն բոլոր թրթիռները, որոնք ջերմացնում են մարդու հոգին: Նշենք նաեւ, որ այդ երգերի երաժշտության հեղինակը երաժշտագետ-երգահան նունե Սիմոնյանն է:

Յոթելյանական երեկոյին ելույթ ունեցողները հասարակության տարբեր խավերից էին՝ գրող ու մանկավարժ, գիտնական ու զորական, ուսանող ու պարզապես նրա գոյչի երկրպագուն: Բոլորի գնահատականը նույնն էր՝ Ս. Խանյանի ապրած կյանքը լիբն է վաստակով: Եվ նրանց բոլորի մաղթանքը դարձյալ նույնն էր՝ թող ստեղծագործական նոր վերելքներն ուղեկցեն բազմաշնորհ այրի ոգու ձգտումներին:

Մենք էլ միանանք այդ մաղթանքներին:

«Լուսարար»
թիվ 6, 2005թ.

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

ՔԱՂԱՔԻ ԳՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴՊԱԾՈՒ, ՊՈՒԺՆՈՒ,
ՔԱՂԱՔՆԵՐԸ ՄԱՐԱՏ ԽԱՆՅԱՆԻՆ

Յարգարժան Սոկրատ Աղալարի

Ի սրտե շնորհավորում եմ Ձեր ծննդյան 75-ամյակը:

Ուրախ եմ ժամանակակցի եւ ականատեսի, նաեւ անկեղծ բարեկամի իրավունքով հավաստել, որ Դուք ապրել եւ ապրում եք բավական հագեցած ու բեղմնավոր կյանք՝ որպես բանաստեղծ, գիտնական ու մանկավարժ, առավել եւս՝ որպես Արցախի զավակ ու քաղաքացի:

Ձեր կարծես թե հավերժ երիտասարդական ավյունն ու եռանդը, ստեղծագործելու անսպառ կարողությունը, ճակատագրի քնահաճույքներին, երբեմն նաեւ անագորույն հարվածներին դիմակայելու Ձեր կամքի ուժն ու կորովը, թույլ տվեք խոստովանել, պարզապես նախանձելի են:

Լինելով մեկն այն շատ-շատերից, ովքեր սիրով ու հպարտությամբ միայն կարող են իրենց համարել Ձեր պոեզիայի երկրպագում, ես անհամբերությամբ եմ սպասում Ձեր անլռելի Մուսայի նոր արարումներին, որոնք, արդեն իսկ կանխապես ընթոշինում եմ, դարձյալ ու դարձյալ ինմաստի եւ Զգտումների նոր, մինչ այդ անհայտ ակոսներ կբացեն մեր գիտակցության մեջ ու մեր սրտերում:

Եղեք միշտ այսպես կենսալի ու կենսատու, Ձեր հայրենի Արեւսարի պես բարձր ու վես:

Լավագույն բարեմաղթամբներով

**Ձեր Մուշեղ ՕՉԱՆՁԱՍՅԱՆ
ՀՂՅ Ած փոխնախագահ
22 հունվարի, 2005թ.**

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

ՀԵՂԱՎԱՆԱՆ ԻՆՔԱՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԵՑԻԿ ՁԵՎԻ ՄԵՋ

Բանաստեղծ, թարգմանիչ, մանկավարժ-գրականագետ Ս. Խանյանի ստեղծագործությունը արդի հայ պոեզիայի արցախյան հատվածի ինքնատիպ էջերից է: Ընթերցող հասարակությանը նա հայտնի է մեկ ու կես տասնյակ բանաստեղծական ժողովածուներով, որ պարբերաբար լույս են տեսել «Կարկաչ», «Սիրտս ձեզ հետ է», «Լեռների երգը», «Կարոտի կրակներ», «Արցախյան դողանշներ» եւ այլ խորագործողով: Բանաստեղծի համար արտակարգ բեղուն ու ընդգրկուն են եղել XX դարավերջի երկու տասնամյակները: Նա երգել է իր ժողովրդի հերոսական անցյալը եւ այդ անցյալից ճամբորդություն կատարել դեպի մարտնչող ներկան ու լուսավոր ապագան: Արցախի ազգային ազատագրական պայքարի տարիներին նա հավատ ու հույս է ներշնչել «հազար ու մի դավ եւ փորձանք» տեսած հայրենակիցներին, ոգեւորվել նրանց ձեռքբերումներով ու վերելքներով: Նա 1988-ին տառապել է ու դառնացել բնության կողմից մատուցված արհավիրքի համար, դրան հակադրել մայր ժողովրդի ապրելու եւ արարելու կամքը, հիացել փորձություններին դիմակայելու նրա անսպառ ուժով, հոգեկան կորովով, անընկճելի ոգով: Արցունքի միջից, հավատով տրովող սրտով բանաստեղծը դիմել է.

Իմ մայր ժողովուրդ,
Քո կամքի ուժով ապրել ես դարեր,
Կապրես եւ հիմա:

Ս. Խանյանը տարիների ընթացքում անընդհատ խորացրել է ստեղծագործական իր նախասիրությունները, հարստացրել ասելիքն ու կատարելագործել բանաստեղծական արվեստը: Նա հմտորեն օգտվել է մեր լեզվի արտահայտչական հնարավորություններից՝ խոսքին հաղորդելով մաքուր ու լուսավոր երանգներ: Այդ երեւույթը ժամանակին նկատել է արձակագիր Սկրտիչ Արմենը: Գրախոսելով Ս. Խանյանի «Սիրտս ձեզ հետ է» գրքույկը, ականավոր գրողը ընդգծել է. «Սոկրատի մոտ պայծառ են ոչ միայն տրամադրությունները, այլև բնության կողմներն ու երեւույթները, պայծառ են բառերը... Դաճելի է կարդալ Սոկրատին, որի մոտ այնքան

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Վարել կա եւ լավատեսություն՝ հակառակ մի քանի երիտասարդ եւ ոչ երիտասարդ բանաստեղծների, որոնց մոտ ոչ միայն մռայլ է ընդհանուր տրամադրությունը, այլև, դրա հետ սերտորեն համեմատություններն ու բառային մատերիալը» («Գրական Աղրբեջան» ամսագիր, 1966թ, №5):

Ս. Խանյանի պոեզիայի պատկերավորման համակարգում լայնորեն օգտագործվում են կրկնությունները, որոնցով արտահայտվում են հատկանիշի սաստկություն, բազմակիություն, հուզականություն, մտքերի իմաստային խորություն: Կրկնությունները ստեղծվում են տարբեր մակարդակներում ու տարբեր չափերով: Նրա բանաստեղծական խոսքին բնորոշ են բառերի, բառակապակցությունների կրկնությունները.

Երեք գլխարկ տեսանք այնտեղ,
Երեք սեւ թուղթ-երեք ցավ,
Երեք որդու կորուստն ահեղ
Մեր սրտերին ծանրացավ:

«Այրող հուշ»

Այս բանաստեղծությունը ձոնված է մեր բարի տատիկների հիշատակին, որոնք տեսել են Հայրենական Մեծ պատերազմի սարսափները, խորապես տառապել իրենց որդիների կորստի ցավից: Հեղինակը երեք հատկանշական թվականի կրկնությամբ ընդգծել է երեւոյի ծանրությունը եւ ստեղծել հոգեկան ապրումների, անսփոփ կսկիճների ու վշտահար տրամադրությունների ցնցող պատկեր:

Խանյանի բանաստեղծությունները հարուստ են տարբեր ձեւի ու կառուցվածքի կրկնություններով: Գործածության հաճախականությամբ գերազանցում են վերջակրկնությունները (անաֆորներ) ու սկզբնակրկնությունները (էպիֆորներ):

Աշխարհը լավ,
Աստղերը լավ,
Երգը լավ,
Ծիծաղը լավ,
Երթը լավ,
Լավի տենչով, լավի սիրով քեզ գտա,
Լավին փարված, կյանքի գիրկը ես մտա:

Բանաստեղծը կապակցությունը նույնությամբ չի կրկնում, փոփոխում է լավ՝ բառի առարկայական հատկանիշները՝ ուժեղացնե-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Ով բանաստեղծական խոհահմաստային երանգները, այն դարձնում լավ պատկերավորման ամբողջական հիմք:

Յեղինակային ոճի անհատականացման խոսուն չափանիշներից են կրկնավոր բառերի մի այլ փունչ, որոնք կազմում են կրկնավոր բարդություններ: Կրկնավորները վաղուց ի վեր հատուկ են բանավոր խոսակցական լեզվին, ուստի նման միջոցների առատությունը հավաստում է խանյանի խորը կապվածությունը ժողովրդական մտածողությանը:

Նրա պոեզիան հարուստ է կրկնավոր բարդությունների ամենաբազմազան ձևերով: Դրանք արտահայտված են տարբեր խոսքի մասերով եւ ունեն տարբեր շարահյուսական կիրառություններ: Թվարկենք որոշ կրկնավորներ՝ մասունք-մասունք, կուտակ-կուտակ, կամաց-կամաց, կաթիլ-կաթիլ, երամ-երամ, շերտ-շերտ, երանգ-երանգ, փունք-փունք, պես-պես, ուրախ-ուրախ եւ այլն:

Բանաստեղծը արտահայտչականությունը ուժեղացնելու նպատակով օգտագործել է բավականին հարադրություններ՝ անվանական եւ բայական, հակադրություններ, որոնք ավելի են ամբողջացնում երեւությունների իրական արտահայտությունը տեսնելու, զգալու, վերլուծելու գաղափարը: Նախադասության մեջ կատարում են միեւնույն պաշտոնները՝ դաշնում բազմակի անդամներ: Ահա մի քանի օրինակներ. երազ-սեր, աստղ-մարդ, մարդ-աստղած, արեւ-հրաշք, ցուրտ ու տապ, կոպիտ ու նուրբ, սեր-արեւ, ծառան ու զավակը եւ այլն:

Ս. Խանյանի պոեզիայի պատկերավորման համակարգում թարմ ու դիպուկ մակդիրները, գեղեցիկ, կյութեղ փոխարերություններն ու համեմատությունները միաձույլ ու անվերջ շրբա են կազմում, որոնք գործածության բազմազանությամբ արտացոլում են հեղինակի բանաստեղծական բառապաշտի ճիշտությունն ու շքերությունը: Նրա օգտագործած մակդիրները բանաստեղծական խոսքը դարձնում են պատկերավոր, ներգործուն, գեղեցիկ ու տարրողունակ, մտքերին հաղորդում են նոր լիցք, ստիպում ընթերցողին հրճվել ու հիանալ, խորիել ու մտածել: Այսպես՝ աստղոտ տամիք, կապույտ երազ, ուկեկամար երկինք, արեւային փառք, ժայռեղեն կուրքք, ծերմակ կանչեր, հավերժ բարախուն խարույկներ, ուկե ալիք եւ այլն:

Ս. Խանյանի պոեզիայում ուրույն տեղ ունեն համեմատությունները, որոնք իրենց հերթին հարստացնում են հեղինակի արտա-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Իհայտնան բանաստեղծական միջոցները, նոր լույսով բացահայտում նրա ինքնատիպությունը.

Քիրսա սարը հավերժական զանգի նման,
Ղողանջում էր պապիս հոգում...
(«Պապս»)

Կամ՝

Զրերիդ նման անվերջ հոսեցի
Քո սրտի միջով...
(«Զրույց Յայաստանի հետ»)

Կամ՝

Թող ցորենվեմ միայն ոսկե հաշանի տակ
Թե մոլորվեմ ինչպես սարում արեւն անմար:
(«Հմ սուրբ օջախ»)

Կամ՝

Արեւն ահա մայր է մտնում,
Ինքն իրենից գոհ է այնպես.
Փայփայել է հողագունդը
Օջախ ու տուն պահող մոր պես:
(«Արեւն ահա...»)

Ս. Խանյանի պոեզիան աչքի է ընկնում անձնավորում - փոխհարաբերություններով: Առարկաներին վերագրվում են այնպիսի գործողություններ, որոնք իրականում նրանց հաստուկ չեն: Նման դեպքերում բայ - ստորոգյալները գործածվում են ոչ թե սովորական, ուղղակի իմաստով, այլ փոխաբերաբար:

Անպերը հալչում են,
Զրերը կանչում են,
Լեռները ժպտում են,
Վագերը լացում են:

Ճեղինակը ստեղծել է գարնան անգուգական պատկեր՝ գարնանային շնչով ու բույրերով լի:

Բանաստեղծի լեզվամտածողության նախասիրած միջոց է համարվում երեւությների, առարկաների բնութագրությունը բառակապակցություններով արտահայտելու: Դրանք խոսքը դարձնում են դիպուկ, պատկերավոր եւ ավելի ներգործուն: «Իմ օրորոց» բանաստեղծությունը մի սրտառուց երգ է ձոնված մայրիկին, որի էռթյան ու գաղափարի բացահայտման առանցքը օրորոցն է: Վերջին բառատողը բանաստեղծի կողմից կարծես հարցադրում - բոլոր է

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Որորոցին, որը չի կարող շրջել կյանքի անհվը, հետ բերել բանաստեղծի մանկությունն ու մայր մտած - մահացած մայրիկին.

Դու չե՞ս կարող, օրորոց իմ,
Մանուկ դարձնել ինձ կրկին,
Ա՞յս չե՞ս կարող դու ետ բերել
Ին մայր մտած մայրիկին...

(«Օրորոց իմ»)

Ս. Խանյանի բանաստեղծություններից շատերն ավարտվում են ասացվածքային ընդհանրացումներով: Մ. Կորյունը այդ կապակցությամբ դեռևս 1963-ին գրել է. «Ս. Խանյանը բանաստեղծական մի լավ սովորության է հետեւում. աշխատում է իր բանաստեղծությունն ավարտել աֆորիստիկ տողերով, հակիրճ ու ավարտուն նորով» («Գրական Ալբրեժան» ամսագիր, 1963, №6):

Դրա հետաքրքիր վկայություններից են.

Թող ծովերը հար ծփան,
Մեր Մեւանն էլ նրանց մեջ:
(«Մեւան»)

կամ՝

Ով չի հասկացել, թող որ իմանա,
Որ գեղեցկուիի մայր ունեցողը
Միշտ էլ հերոսի պատիվ կունենա...
(«Արցախ»)

կամ՝

Այսունս կարող է քնել,
Արյունս չի քնում երբեք:
(«Կրծքիս տակ»)

Ես իմ աչքերի լույսը տվել եմ
Աշխարհի խղճին,
Աշխարհի խիղճը էլ չի կուրանա.
(«Աշխարհի խիղճ»)

կամ՝

Քանի դու կաս իմ կրծքի տակ,
Կյանքն ինձ համար աստղոտ գետ է:
(«Դու»)

Ս. Խանյանը, օժտված լինելով ժողովրդական մտածողությամբ, ուշադրություն է դարձրել ժողովրդական շեշտ ունեցող բա-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Թերի առատ գործածությանը: Դրանք նոր շուրջ ու թարմություն են տալիս հեղինակի բանաստեղծական մտածողությանն ու երեւակայությանը: Ահա մի քանի արտահայտություններ՝ հանդ ու չոլեր, օճոռք, կճախաշ, խաշամ, պատառ, տուտ, ճաք, օջախ, շամանդադ, կանուխ, շափաղ, ջրատված եւ այլն:

Ս. Խանյանի բանաստեղծությունները գերծ են պաճուճանքներից, գունագեղությունից, բայց բխում են սրտից, ջերմ ու քննուշ են, շաղախսված բարու, կարոտի, սիրո ու լույսի թրթիռներով: Տեղին է հիշել մեծանուն երգիծարան Յ. Պարոնյանի դիպուկ խոսքը. «Ամենեն գեղեցիկ զարդ անզարդությունն է»:

Ս. Խանյանի գեղագիտական կողմնորոշումը խոսքի սեփական բույրը, համը, գույնը պահելու մեջ է: Յեղինակը համոզված է, որ արարումներով անցած ճանապարհին գտել է ինքն իրեն.

Ես հաստատ գիտեմ, ամվանմ իմ բարի
Մոռացման փոշին երբեք չի չորի,
Երգիս տվեցի շունչը իմ դարի,
Յայրենի հողին՝ իմ սիրտն ու հոգին:

Կարինե ՀԱԿՈԲՅԱՆ
ԱրՊՅ հայոց լեզվի եւ նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի ավագ դասախոս



Վերջին կուրսի ուսանողների հետ՝
դասախոսության ժամին

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

ՊԳՆԻ ԿԵՆԱՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երեմն մեզ հարց ենք տալիս, թե ինչո՞ւ է մարդը հեռանում բնությունից: Որովհետեւ չունի ոգու կենսագրություն:

Սոկրատ Խանյանի բանաստեղծական աշխարհում ենթահողը Արցախ աշխարհն է ու մարդկայինի հիշողությունը: Նրա երգերի հիշողությունը խոր ու նորոգ ծալքերում ցավ ու կորուստներ է պահում: Նաեւ՝ ականատեսի մորմոք ու երազի արթմնի ճանապարհ դեպի ազատություն:

Ահա թե ինչո՞ւ՝ այսօր, երբ Սոկրատ Խանյանն էլ հասավ փորորկալի կյանքի 75-րդ համգովանին, ապրած կյանքի մեծագույն արժեքը համարում ենք բանաստեղծական արյան վազքը՝ «Կարոտի կրակները», «Արցախյան ղողանջները», «Արցախի արծիվը», որոնք կապեցին իր ծիածանը՝ ինչպես 2000-ին իմաստալից կոչեց հորեանական իր ժողովածուն:

Մեզ մնում է հաստատել, որ Սոկրատ Խանյանի գրական ճանաչողական ծիածանը անցնող տարիների մեջ դարձել է հազարագույն, իսկ երգը՝ հազարաթել: Մեզ մնում է շնորհավորել Սոկրատ Խանյանի թեղում գրիչը, մանկավարժի անդուլ ջիղը եւ գրականագետի թափանցող հայացքը, երեք նվիրական ոլորտներ, որտեղ ինքը իրեն տե՛ր է զգում:

Նա այսօր կանգուն է, որովհետեւ իր երկրում է, կանգուն է, որովհետեւ այնտեղ թեեւ տասնամյակներ շարունակ՝

Գետերը դուրս եկան ափերից,

Զրածածկ հույզերս եղան,

Անտառներ խարվեցին ծափերից,

Յողածածկ հույսերս եղան...

սակայն բանաստեղծի արդար վկայությամբ՝

Ավյունս կարող է քնել,


Արյունս չի քնում երբեք:

Սա է Ս. Խանյանի ոգու կենսագրությունը:


Սուրեն ՂԱՆԻԵԼՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
«Գրական թերթ», 2005, թիվ 2

ԱՆԱԶԱՐԱՆԻ ՓՈԽՎՐԱՆ


ԱԿԱԲԱ ԽԱՆՅԱՆԻ
ԳՈՒՇԵՆ ԳԱՐՄԻՔՅԱՆԻ
ԳՈՎԱՆԱՐՄԱՆԻՆԻ



1974




1980



1980




1983



1987

ԱՆԱԶԱՐԱՆԻ ՓՈԽՎՐԱՆ


ԳԻՏՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ



Բանասիրական գիտությունների թեկնածուի վկայագիրը



Դոցենտի վկայագիրը



Բանասիրական գիտությունների դոկտորի վկայագիրը

ԱՆԱԶՈՐԱՆԻ ՓՈԽՎՐԴԻՆ



Գրականագիտության գծով պրոֆեսորի դիպոլմը



Գիտության վաստակավոր գործչի մեղայո (№ №)



**ԽՍԴՅ Գերագույն Խորհրդի
«Աշխատանքային
գերազանցության համար»
մերար**



**ԽՍԴՅ բարձրագույն
դպրոցի «Աշխատանքային
գերազանց
հաջողությունների
համար» կրթանշանը**


ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ



ՀՂՅ «Վաչագան
Բարեպաշտ»
մեդալը

«Մայրական
երախտագիտություն
Արցախի
քաջորդիներին» մեդալը

«Սոցալիստական
մրցության հաղթող»
կրծքանշալը




«Աշխատանքի
վետերան» մեդալը

«Արցախի պետական
համալսարան - 30»
հուշամեդալը


«Արցախի պետական
համալսարան - 40»
հուշամեդալը

ԱՆԱԶԱՐԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ


ԱՏԵՂԾԱԳՈՒՇԱԿԱՆ ԱԾԽԱՄՀԱՆ



L77 ճախարաբների խորհրդի՝ հայ մեծ պատմիչ Եղիշեի անվան ամենամյա (1992) մրցանակի վկայագիրը «Արցախի արժիվ» պոեմի համար




L77 գրողների միության Մոլորացանի անվան մրցանակ «Արցախյան պատերազմը եւ հայ պոեզիան» աշխատության համար




Արհմիությունների Լեռնային Դարարադի մարզային խորհրդի մրցանակները 1975 եւ 1984 թվականներին աշխատանքային թեման պատկերող բանաստեղծական շարքերի համար

ԱՆԱԶԱՐԱԿԱՆ ԳՈԽԱՐԴԻՆ

ԿԱՍՏԱԿԱԾ ՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ




**ԽՍՀՄ ԶՈՒ 2062 գորամասի
հրամանատարություն,** 1963




**Աղրեջանի ժուռանական միություն
(«Կոմսոմոլ» (հայերեն) թերթի 50-
ամյակի առիվ),** 1972թ.



**«Կարպետ-դպրակիսու»,
Աղր. ԽՍՀ «Գիտելիք»
ըմկերության վարչություն,
1977թ.**




**Դասախոսական ակտիվի
գործունեության համար,
ԼՂԻՄ «Գիտելիք»
ըմկերության վարչություն,
1981թ.**



**Աղր. ԽՍՀ բարձրագույն եւ
միջնակարգ
մասնագիտական կրթության
նախարարության կողեզրա,**
1983թ.

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴԻՆ




**Ստեփանակերտի
մամկավորժական
ինստիտուտի
կոմիտեին**
1984թ.


ПОЧЕТНАЯ ГРАМОТА

*По итогам Социалистического соревнования 1984г.
Награждаются: члены коллектива администрации и
персоналу Филиала Оренбургского педагогического института им. 80-летия Собинского Медицинского
Университета Санджар Магжарович
Санджар Магжарович
Почетная грамота Агаджанян Г.Г. Документ*


**Ստեփանակերտի
մամկավորժական ինստիտուտի
արհմիության կոմիտե, 1984թ.**



**Մարգի Երիտասարդության
դասադարակության գործում
«Ազնակալուրուս»-ի ակտիվիտեն
մասնակիցների համար:**
Կոմիտեին ԼՂ նադային
կոմիտեի քարտուղար
Ա.Սուսանյան, 1987թ.



**Ծննդյան 60-ամյակի առիվն...
Գույամուրթյան գալուստյան եւ
մամկավորժական կայրերի
պատրաստման ուղղության
երկարամյա և ակտիվ
գործունեության համար:**
**ԼՂՄ հայուն կառավարման
կոմիտեի նախագահ Ա. Վոլոսկի,
1990թ.**




**Ծննդյան 60-ամյակի առիվն...
ԼՂՄ արհմիությունների
խորհրդին ակտիվ
գործունեության համար:**
**ԼՂ մարդարկի խորհրդի
նախագահ
Ա. Դավթյան, 1990թ.**


ԱՆԱԶԱՐԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ




**Ծուշի ռավական ուսումնարան
120-ամյակին նվիրված
Միապատճեն գիտաժողովին
մասնակի և «Հիմ հայկական
տաղապահական արվասորի
համբարեն մեկնարար» եւ Ծուշի
ռավականը» ցեղուցն համար:**
Գիտաժողովի կազմովին:
Արքաթիլու Ռ. Ս.
Մարտիրոսյան 1990թ.



**«Տարվա լավագույն
գիտական աշխատանք»
մրցույթում հաղթող
մասնակի համար:**
**ՀՂԴ ԿՄ Նախարար
Կ. Արայան, 2005 թ.**




**2006 թվականին
Պաշտպանության բանակի հետ
ակտիվ համագործակցության
համար**
**ՀՂԴ պաշտպանության նախարար,
գեներալ-լեյտենանտ Ս. Օհանյան,
2006 թ.**



**Կայենի կրօգախում հայոց լեզվի և
գրականության ուսուցչենորդ՝
արեւմտահայ համբակարական երեք
ասավանքերի գծով դաստիճանին,
Արցան-Սիկուլը կրթաշալության և
մասնակի համար:**
**Խ. Արույրամի ամփամ հայկական
պատական մամկանարդական
համալսարան օհնուոր, պարհեստը
Ա. Պոլիսիան 2008թ.**




**Կայենի կրօգախում հայոց լեզվի և
գրականության ուսուցչենորդ՝
արեւմտահայ համբակարական երեք
ասավանքերի գծով դաստիճանին,
Արցան-Սիկուլը կրթաշալության և
մասնակի համար:**
**Խ. Արույրամի ամփամ հայկական
պատական մամկանարդական
համալսարան օհնուոր, պարհեստը
Ա. Պոլիսիան 2008թ.**



**ՀՂԴ ՊԲ գիմնասիադաստիճանի
դաստիճանարարության գործում
ունեցած նշանակալի ավանդի
և գործասերում
դաստիճանարան բնակչությունը:
Հայոց պատական մամկանարդական
համալսարան օհնուոր, պարհեստը
Ա. Օհանյան**

ՀԱՐ ՄԻԱՍՆԱՔ (1988-2000)



Ով մայր Արցախ, քո փորձության այս ժամին,
Քո զինվորն ենք՝ հավերժ կոփած քո կամքով,
Անարասում դու դաս առար Մաշտոցից,
Քո գրկի մեջ պիտի սերտենք դասը քո:

ԴԱ ՄԻԱՍՆԻ

ԱՐՑԱԽԻ ԴԱՍԸ

ԿԱՇԱԿԱԲԵՐԴ

Երկինքը ծուլվել է ամպերին
Ու փարվել ուսերին անտառի,
Քաջության հեքիաթն է պատմում՝
Անցյալից հասած մեր դարին:
Զարմանք կա ամեն խոսքի մեջ,
Հիացմունք՝ ամեն մի բառում,
Արցախի կրակե ոգին
Ծփում է կանաչ անտառում:
Անտառին փարվել է երկինքը,
Անտառը ծփում է, կանաչում,
Արցախի ոգին է կանաչը,
Աշխարհն է նրան ճանաչում:

1988, գ. Վանք

ՄԻ ԲԱՐԵԿԱՍ, ԵՐԵՔ ՈՍՈՒ

Վեր ենք կացել բոլորից շուտ
Ու բռնել մեր վերծիգ ճամփան,
Միշտ ժխտել ենք կեղծիք ու սուտ
Եվ ձեռք բերել բարի համբավ:
Վաստակել ենք դրա դիմաց
Մի բարեկամ, երեք ոսոխ,
Բայց երկնել ենք գիր ու կամար,
Մեր հոգու մեջ երազ ու շող:
Խլել են մեր հողն ու ջուրը,
Կատաղությանք մի վայրենի,

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Նրանց գենքն էր հուրն ու սուրը,
Վահանը մեր՝ գիրն հայրենի:
Յիմա էլ մեր գիրքն է ուզում
Խլել մեզնից ավարառուն,
Մեր Դավթակը՝ դարձնում Դավուդ,
Խսկ Մովսեսը՝ Քալանքաթլու:
Բայց չի կարող չարը երբեք
Խլել գիրքը մեր աստղալից,
Նա մեր սիրտն է երանավետ,
Պատմությունը մեր դժվարին:
Նա ջահ դարձած դարերի դեմ
Կշողշողա մեր անունով,
Վկաներն էլ հար կլինեն.
Մի բարեկամ, երեք ոսոխ:

1988, Ստեփանակերտ

ԵՍ ԱՐՑԱԽՆ ԵՍ

Իմ հույսերի կրակին
Ոչ ծյուն կիշնի, ոչ անձրեւ,
Ես Արցախն եմ հրածին,
Յոգիս՝ վառող հրազեն:
Իմ հավատը իմ գենքն է,
Յողս՝ ամուր պատվանդան,
Թեկուզ խորն է իմ վերքը,
Չեմ տրտնջա, քանի կամ:
Ի հեճուկս չարերի,
Ազգիս հավատն եմ կռում,
Դաս եմ առել դարերից,
Դարերիս երգն եմ գրում:

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Աստղային է երազ,
Ասուա լինել չեմ կարող,
Իմն են արած-դրածս,
Ես Աստված եմ արարող:
Ես իմ մտքի թռիչքով
Յանձարին եմ հավասար,
Այդ են ասում իրար քով
Դադիվանք ու Գանձասար:
Դայեր են սեգ սարերս,
Խաչքարերս էլ հայեր են,
Իմ հայածին դարերը
Պիտի խոսեն հայերեն:

1989, Ստեփանակերտ

ԲԱԿՈՒՄ

Անտեր բակի թթենուն
Մի գորշ ուրուր տեսա ես,
ճնճղուկներին հալածում,
Կռնչում էր ցինի պես:
Իսկ ծտերը տագնապով,
Շարված բնի բերանին,
Նայում էին զարմանքով
Բակի փտող գերանին:
Ծլվլոցում նրանց խենք
Մի ծվարած, հին հարց էր.
«Ո՞ւր է բակի մեր տերը,
Պահապանը ո՞ւր է մեր:
Ո՞վ է տեսել ուրուրը
Մեր թթենուն մոտենա,

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Ո՞վ կիասցնի այս լուրը,
Որ մեր տերը իմանա»:
Այնպես էին ծռվողում,
Ասես զինվոր լինեին,
ճչում էին, խօռվում,
Կառչած իրենց տաք բնին:
Միրտս ճմլեց, զայրացավ,
Զեռքս տարա քարերին,
Ուրուրն իսկույն հեռացավ,
Բունը թողած տերերին:
ճնճղուկները ազատված,
Մի խրախճանք բաց արին,
Նայում էի ես նրանց
Փրկված բնին ու պարին:
Նայում էի ու խորհում.
«Բա՛վ է, ինչքան մոլորվենք,
Եկեք օջախ պաշտելը
ճնճղուկներից սովորենք»:

1989, գ. Ակնաղյուր

ՊԱՊԻՍ ՊԱՏԻՎԸ

Պապիս պատիվն է թառել ուսերիս,
իմ հոգում նրա զրնգուն ձայնն է,
Կրծքիս տակ՝ Քիրսն է ժպտում հույսերիս,
Արեւարն էլ իմ հաղորդարանն է:

Նահատակների հոգիները լույս
Վարդեր են ցանում ճամփին թեւանի,
Մեկը ճչում է.- Թեւան, թե լինես,
Թշնամին Տումու ինչքը կտանի՞:

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Իմ Աբգար քեռին՝ զոհված տասնութին,
Յրեշտակներին զենքի է կոչում,
Արեւն է իջնում մեր Կանաչ խութին,
Եվ կամաց-կամաց մշուշն է կորչում:

Նժդեհի ձին է խրխնջում Տողում,
Արձագանքում է նրան անտառը,
Թշնամիների հենց պարտված տեղում
Դրոշ է դառնում նրա հանճարը:

Տեսիլքի փոխված քայլում է պապս,
Ու մենք քայլում ենք նրան ունկնդիր,
Եվ նա սեղմելով Նժդեհի ափը,
Ասում է. «Գլխիս օրինված ձեռքդ դիր:

Թող ուժդ ինձնով թռռներիս անցնի,
Արյունդ եռա սրտերում անկեղծ,
Թող կամքդ նրանց քաջազուն դարձնի,
Որ փրկեն հողն ու պատիվը իրենց»:

Ու թեւածում է նժույգը քաջի,
Նրա հետեւից՝ կարմիր ձին պապիս...
Զորախմբվում ենք Քիրսի սեզ լանջին,
Ու ծածանվում է դրոշը ափիս:

1989, գ. Ակմաղյուլ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

1.

Մեզ օգնության կանչեցին,
Թիկունք դարձանք, հույս տվինք,
Մենք ազգովի նոր երթին
Արեւ դարձանք, լույս տվինք:

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Մեր անձնուրաց պայքարը
Ողջունեցին, ծափեցին,
Սակայն հույսի մեր ծովում
Մեզ չարաչար խաբեցին:

2.

Քար հղկեցինք, կերտեցինք,
Թեւեր տվինք դարերին,
Ու դարերը թեւավոր
Զուլվեցին մեր սարերին:

Եվ դար ու սար միացան,
Արեւահունց բերդ դարձան...
Մեր այդ բերդի վրայով
Ինչե՞ր ասես, որ չանցան:

3.

Մեր ցավը խորն է,
Մեր վիշտը՝ անհուն,
Ժախտը լույս է,
Թախսիծը՝ անքուն:
Սակայն մենք կուլ չենք
Գնացել ցավին,
Ցավը ի՞նչ է որ,
Հաղթել ենք դավին:

4.

Քիրսը ձայնեց Մօռվին.
- ժամանակն է, արթնացիր,
Նորից ելել է չարը՝
Ամբոխներով ցանուցիր:
Չուր արձակիր, մռնչա,

ՊԱ ՄԻԱՍՆԻԿ

Շանթ ու կրակ հեղեղիր,
Հաղթանակի կրակում
Մեր թրերը ջրդեղիր:
1990, Ստեփանակերտ

ԻՄ ԶԱՎԱԿԸ

(Մայր Յայաստանի խոսքը)

Արցախը ծնվել է ինձանից,
Արցախն իմ մինուճար որդին է,
Նա հեռու չի գնա իմ տանից,
Արցախն իմ անունն ու հոգին է:

Նա մի օր պոկվել է իմ սրտից,
Ես առանց իմ սրտի ո՞նց ապրեմ,
Աշխարհ է մտել իմ գրկից,
Ես առանց իմ գրկի ո՞նց ապրեմ:

Կոփվել եմ արյունոտ մարտերում,
Իմ արյան կանչն է Արցախը,
Մաճկալ ու հնձվոր եմ արտերում,
Իմ հույսի կանչն է Արցախը:

Նա ազնիվ զավակ ու զինվոր է,
Ես նրա թիկունքին մի հենակ,
Չարի դեմ անվախ ու հզոր է,
Չի լքի, չի բողնի ինձ մենակ:

Արցախն իմ կրծքի տակ, հոգումն է,
Ծիածան՝ ծնված իմ ցողից,
Որդի կա ծնողին լքում է,
Արցախը չի լքի ծնողին:

ԻԱ ՄԻԱՍՆԻ

Արցախն իմ քաջարի զավակն է,
Արցախը ծնվել է ինձանից,
Դարավոր իմ շունչն ու հավատն է,
Արցախը դուրս չի գա իմ տնից:

1990, Ստեփանակերտ

ԽԱԶԻ ՊԱՊՍ

Խաչի պապիս կարմիր ծին
Զուր կիսմեր Արաքսից,
Խաչի պապիս չուխան իին
Յյուսված էր նուրբ մետաքսից:
Ո՞վ կարող էր խոսք ասել
Խաչի պապիս՝ փահլեւան.
Նա մի ժամուն կհասներ
Գանձասարից Երեւան:
Խաչի պապիս մեծ թուրը
Յին պողպատից էր կռած,
Դեմք՝ բերնին փրփուրը,
Թշնամին էր միշտ փռված:
Խաչի պապս կարող էր
Ծնկի բերել գոռ Դեւին,
Նա դարձել էր աջ կուռը
Արդարամիտ Նժենիի:
Խաչի պապիս երդումը
Անունով էր Շախսկախի,
Նա իր ամբողջ ավյունը
Նվիրել էր Արցախին:
Խաչի պապս մեռնելիս,
Աչքերի մեջ հույսի շող,
Ասաց.- Հողից ծնվել ենք
Ու կդառնանք մի օր հող:

ՊԱ ԾԻԱՌԱՆԿ

Բարձին գլուխն ալեհեր
Նա շշնջաց խոր հույսով.
- Մեր Արցախը կպահեք
Չեր պապերի նամուսով:
1990, գ. Ակնաղբյուր

ՄԵՐ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԹՃՆԱՄԻՆԵՐԻՆ

Ես մի արմատն եմ Յայոց աշխարհի,
Ախր ի՞նչ ունեմ գրկում օտարի,
Իմ հողի լեզուն թողեք ես կարդամ,
Թողեք օջախիս ես իմ սիրտը տամ,
Ես ուխտի գնամ իմ Գանձասարին,
Ես ելնեմ գահը իմ Մռով սարի,
Իմ Ամարասի դրանը խաչվեմ,
Իմ կրակի մեջ թողեք ես խաշվեմ,
Իմ շունչը հաց է, իսկ հոգին իմ՝ երգ,
Եղել եմ կյանքը փայփայող մի ձեռք:
Արդարությունը ինչո՞ւ եք եղծում,
ճշմարտությունը ինչպե՞ս եք կեղծում,
ինչո՞ւ եք ճյուղը հատում արմատից,
Ո՞նց եք փրկվելու դուք արդար դատից:
Իմն է Մռովը, Թարթառը իմն է,
Գանձասար կերտող հանձարը իմն է,
Իմն է Արցախը, Նախիջեւանը,
Գերել եք դուք ինձ իմ կերտած տանը:
Դարձրել եք այսօր ինձ կալանավոր,
Չեք թողնում ճշամ, ասեմ խոսքս նոր,
Չեք թողնում անգամ իմ վիշտը լացեմ,
Իմ սփոփանքի դռները բացեմ,

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Չեք թողնում ճշամ սիրող որդու պես.
«Իմ մայր Յայաստան, միանում եմ քեզ»:
Ասում եք. «Լոիր, ծայրահեղական,
Ազգայնամոլ ես դարձել տեղական,
Գործադուլների հեղինակն ես դու,
Պիտի պատժվես, այն էլ ահարկու,
Գոռում ես անվերջ. «Իմն է Արցախը,
Կորցրել ես անզամ քո սրտի վախը,
Ապացույց չունես, որ հողը քոնն է,
Որ օջախների վառ պողը քոնն է,
Յո մենակ դու չես քո հոգին տանջում...
Վերակառուցման շահն է պահանջում՝
Ուժեղին հավերժ ենթարկվել անզոր,
Որ Միությունը ապրի միշտ հզոր»:
Ենինյան դարի նոր արշալույսին
Հզոր կառչեցի իմ խարված հույսին...
Քիմա դարձել եմ ես կալանավոր...
Սակայն ելել է սերունդը իմ նոր,
Գոչում է ուժգին ողջ աշխարհով մեկ,
Որ թագավորը մերկ է, մորեմերկ,
Գոչում է՝ սրտից դեն նետած վախը,
Որ վիհից փրկի իր մայր Արցախը:

26.04.1990.

Տնային կալանքի ժամին

ՊԱ ՄԻԱՍՆԻԿ

ԲՈՒԺԻՐ ԻՄ ՎԵՐՔԸ

Նվիրում եմ բժշկուիի
Գայանե Ասատուրովնային

Արցախի կանաչ լանջերին
Կիսատ է մնացել իմ հերկը,
Վառվում եմ նրա կանչերից,
Բժիշկ ջան, բուժիր իմ վերքը:

Ոստին է կատառել նորից,
Անտառում զինվել են տղերքը,
Հրացանս ինձ է սպասում,
Բժիշկ ջան, բուժիր իմ վերքը:

Դայաստան բառը շրթերին,
Տնքում է իմ անգին եզերքը,
Իմ տեղը թափուր է շարքերում,
Բժիշկ ջան, բուժիր իմ վերքը:

Սարերն են զորքի պես կանգնել,
Պատրաստ է ռազմի իմ երգը,
Շարքի մեջ ես պիտի եղանակ,
Բժիշկ ջան, բուժիր իմ վերքը:

Արցախը մի նոր Զեյթուն է,
Բռունցք է դարձել իմ ձեռքը,
Կարոտից իմ սիրտը անքուն է,
Բժիշկ ջան, բուժիր իմ վերքը:

12.02.1990 թ.
Երեւանի հանրապետական
հիվանդանոց

ԴԱ ՄԻԱՍՆԻ

ԵԿԱՆ ՈՒ ԽԱԲԵՑԻՆ

Եկան ու խաբեցին բոլորին,
Սակայն մեզ խաբեցին ավելի,
Եկան ու լափեցին բոլորին,
Սակայն մեզ լափեցին ավելի:

Եկան ու կիսեցին հողերը,
Սակայն մեզ զրկեցին մեր հողից,
Վառեցին լոկ հույսի շողերը,
Սակայն մեզ զրկեցին մեր շողից:

Սարերը ջաղացքար դարձրին,
Քարերի արանքում՝ մեզ աղուն,
Մեր հոգուն շղթաներ հազցրին,
Դառնության մաղով են մեզ մաղում:

Զարդեցին արմատը սրբության,
Զարիքը հասցրին կատարին,
Փակվել են ճանփեքը փրկության,
Թող Աստված բարին կատարի:

1991, Ստեփանակերտ

ԱՐԾԻՎԸ

Արծիվը անհաս կատարին ժայռի,
Կարծես բազմել է արեւի կողքին,
Նրա հայացքից, կռինչից վայրի,
Ճրավառվում է արեւի հոգին:

ՊԱ ԾԻԱՌԱՆՆ

Չագը դիտում է, վեր ու վար թռչում,
Խիզախություն է սովորում մորից,
Երկնի ցողի մեջ կտուցը թքում
Եվ ուզած որսն է թռցնում խոր ձորից:

Շանթ ու կայծակն են զիզզագվում ահեղ՝
Մայր արծվի դասն են ողջունում վերից,
Այնպես են հրճվում, որ թվում է, թե
Նոր թափ են առնում արծվի թեւերից...

...Պարզ է, թե ինչու քաջ պապերը մեր
Ուժի խորհուրդը արծիվն են ընտրել:

1991, Երևան

ԶԱՐԵԼԱՑՐԵՔ ԱՆՏԱՌԸ

Ին խաչատուր պապն իմաստուն
Ուներ սիրած իր «Ճառը»,
Ու կրկնում էր ամբողջ կյանքում.
- Զահելացրեք անտառը:

Գործի ժամին լիներ, հացի,
Քիչ տաքացած, քիչ սառը,
Խոսքն էր կրկնում նա առնացի.
- Զահելացրեք անտառը:

- Ինձ հասկացե՞ք,- ասում էր նա,-
Ժամանակներն են խառը,
Ապրուստից էլ մի վախենաք,
Զահելացրեք անտառը:

ԻՐ ԾՐԱՄԱՆ

Ուր նայում ես՝ ծերերն են շատ,
Կարծես ստերջ է դարը,
Փոքրերով է տունն արեւշատ,
Զահելացրեք անտառը:

Ինձ թվում եր՝ հայրս, քեռիս,
Պիտի գնան մեր սարը,
ճյուղահատեն ծառերը հին,
Զահելացնեն անտառը:

Կոիվ եղավ, տուն չդարձան
Ին քեռին ու եղբայրը,
Պապիս խոսքը նոր հասկացա.
- Զահելացրեք անտառը:

1991, Երևան

ԾԱՆՈԹ Է ՆԱ

Մեր հողի մեջ պատմությունն է մեր պապերի,
Ծլարձակված մեր պատիվն է ու մեր հոգին,
Մենք բացել ենք գաղտնիքները մեր դարերի,
Եվ ոչ մի զենք չի սասանի մեր լույս ոգին:

Մեր ճամփեքին չենք մուրացել հաց ու գինի,
Մենք Աստծոն հետ զրուցել ենք մեր եղածով,
Կպաշտպանենք մեր օջախը, ինչ էլ լինի,
Կպաշտպանենք թե՛ արյունով, թե՛ երազով:

Չենք ավերել, չենք ավարել ոչ մի դարում,
Ընձյուղվել ենք մեր արմատով ու մեր ճյուղով,
Յիմա մեր դեմ ելել է նոր ավարառուն,
Սուր է ճոճում հիխորտալով ու երկյուղով:

ՊԱ ՄԻԱՍՆԻԿ

Ծանոթ է նա իրաբուխին մեր կուռ կամքի,
Մեր չհոգմող բազուկներին ծանոթ է նա,
Ահա ինչու կատաղել է նա կրկնակի,
Նրա ոխը անփառունակ կվերջանա:

Ու կծնվի պատմագիրը մեր իմաստուն,
Ու կգոյի մեր մատյանի էջերը նոր,
Կսոսափի կյանքի ծառը մեր հաստատուն՝
Լեգենդ դարձած հաղթանակը մեր փառավոր:

1991, Ստեփանակերտ

ԴԱՐԵՐԴ Ի ՎԵՐ

Դարերդ ի վեր, դարերդ ի վար,
Մածի ճռինչ, հատու զենք,
Սարերդ ի վեր, սարերդ ի վար
Ծփուն արտեր, կալի երգ,
Յոգիդ լույսի մի շատրվան,
Սիրտդ՝ անհուն տիեզերք...
Քեզ նետեցին կառափնարան,
Մի նենգ ուղեղ, մի սեւ ձեռք:
Սակայն էլի ուղիդ անցար
Ե՛կ տքնանքով, ե՛ւ փառքով,
Ոտքերիդ տակ միշտ վար ու ցանք,
Տաշտում՝ արդար հացը քո:
Յույսի հասկեր դու ցանեցիր
Պապենական դաշտերում,
Քաջի նման մաքառեցիր
Աշխարհացունց մարտերում:

ԻԱ ՄԻԱՍՆԻԿ

Արդ, շղթայված դյուցազնի պես,
Հայացքդ դեա Հայաստան,
Ծառս ես եղել ու ճչում ես
Հանուն մեր հին ու նոր տան:
Քո պատիվն ես ուզում պահել,
Քո անունը, քո լեզուն,
Բայց քնած է խիղճն աշխարհի,
Հանցանքներով առլեցուն:
Քեզ խաչել են ուզում հավետ,
Քո աստղածին լեռներուն,
Բայց դու անհաշտ քո բախտի հետ,
Ոսոխներիդ չես ներում:
Պայքարում ես պատվիդ համար,
Չափակներով քո անվախ,
Դու իմ բախտի միակ կամար,
Հազարամյա իմ Արցախ:

1991, Ստեփանակերտ

ԽԱՉԵՆԱԶՈՐ

Այրուձի են սարերը սեզ՝
Սլացքի մեջ հավերժակուր,
Ամեն ծառը ծգված մի նետ,
Ամեն ժայռը՝ սրած մի թուր:

Խաչեն գետը շողում է հար,
Ոնց իմ պապի արծաթ գոտին,
Ակոսներին նա սիրահար,
Արարում է հաց ու ոգի:
Ոչ, նա ձոր չէ, թանգարան է,

ՊԱ ԾԻԱՌԱՆԿ

Որ խոսում է դարերի հետ,
Նա անթեղված մի կարան է,
Մի կոթող է անձեռակերտ:

Ափերն ի վեր անթիվ բերդեր,
Ափերն ի վար անտառի պար,
Ոսոխների ջնջված հետքեր,
Խոսող կածան եւ առապար:

Գանձասարի հայացքի տակ
Ծփում է նա աստղաշորում.
Մեր պապերի հուշերն են տաք
Մեր խաչենված խաչեն ձորում:
1991, գ. Վանք

ՏԱԳՍԱՊ ԵՎ ՀԱՎԱՏ

Գիշերն իջնում է սեւակնած ու թաց,
Այգը բացվում է լուռ, մոայլադեմ,
Դարերի աննինջ մոլուցքով հարբած,
Գազանն է ոռնում իմ Արցախի դեմ:

Զանգերն են ինչում սուրբ Գանձասարի,
Աղոթում են խենթ Թարթառ ու խաչեն.
Քիրսն ու Մօռվն են արշավում արի,
Ել ո՞վ կարող է Արցախս խաչել:

Թուրն է շողշողում Զալալ իշխանի,
Թեւեր է առել Եսայ քաջորդին,
Վրնջում է ձին ըմբռստ Թեւանի.
Ի զեն է կանչում Արցախի ոգին:

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Ի զեն է կանչում, կանչում է մարտի,
Յանուն իր հողի՝ պապերի փառքով,
Թշնամու կուրծքը նա ճեղքել գիտի,
Պատվով ապրել է եւ կապրի պատվով:
1991, Սուսանակերտ

ԶԱՐՄԱՆՔ

Յերն աշխարհի ո՞նց չանիձես,
Իրեն նայիր, բռնած գործին,
Մոռացել է աղոթք ու ծես,
Ընկերացել չարագործին:

Օրն անցնում է քեֆերի մեջ՝
Կոխկրտելով օրենքն Աստծո,
Անտեսում է կրիվ ու վեճ,
Չի նկատում թախիծը ծով:

Տեր է կանգնում ուժեղմերին,
Իսկ թույլերին շոյում խոսքով...
Ով չգիտե, թող ինձ ների
Եվ հաստատի հենց իմ փորձով,

Ինձնից խլված դաշտ ու արտով
Ու խարխլված իմ հավատով,
Գոյամարտող իմ Արցախի
Արդար դատով...
Նրան ո՞վ է լսում անկեղծ,

ՊԱ ԾԻԱՌԱՆԿ

Ո՞վ է բուժում խորունկ վերքը,
Տեր-տնօրեն աշխարհը մեծ
Գրայանում է դրել ձեռքը,
Նամակով է սաստում չարին,
Ո՞նց չանիթես հերն աշխարհի:

1991, Ստեփանակերտ

ԴԱՌԻՎԱՆՔ

Դադիվանքն իմ հրաշք՝
Խաչի պապիս հոգին,
Դարձել է մի երազ,
Թեկուզ իմ տան կողքին:

Գնամ, գրերը իին
Կարդամ իմ շրթերով,
Խաչքարերի փոշին
Մրբեմ իմ մատներով,

Որ նորից-նոր դառնա
Մեր սուրբ ուխտատեղին,
Մինչ ե՞րբ անտեր մնա,
Մոլուցքի մեջ դեղին:

Մեր արարող մտքի
Բացված թեւերն է նա,
Մեր դարավոր խղճի
Մետաքս թելերն է նա:

Մեր լեզվով է խոսում,
Աղոթում մեր լեզվով,

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Մեր սրտով է հոսում,
Խորհում մեր երազով:
Գնամ, փարվեմ նրա
Գերված քիվ ու նախշին,
Առնեմ սրտիս վրա
Խաչքարերի փոշին:
1991, Ստեփանակերտ

ԻՆՉՊԵ՞Ս ԶԳԱՍԱ

Ասում ես. «Նորից Արցախ չգնաս,
Եկել ես, այստեղ մոտս կմնաս»:
Ինձ հազար ծե՞ռք է կանչում այնտեղից,
Ինձ հազար հե՞րկ է կանչում այնտեղից,
Ինձ հազար վե՞ռք է կանչում այնտեղից,
Ինչպե՞ս չգնամ:

Իմ պապի խի՞նճն է կանչում այնտեղից,
Ռոան ճռի նչն է կանչում այնտեղից,
Իմ թռօան ճի՞չն է կանչում այնտեղից,
Ինչպե՞ս չգնամ:

Իմ կյա՞նքն ու բայխտն են կանչում այնտեղից,
Պատի՞վն ու թայխտն են կանչում այնտեղից,
Իմ սուրբ օջախն է կանչում այնտեղից,
Ինչպե՞ս չգնամ:
Արցախն է կանչում, ասա, ո՞նց մնամ,
Չե՞, պիտի գնամ...

1991, Երեւան

ԻԱ ՄԻԱՍՆԻԿ

ՀՈՒՅՍԸ

Մեր հույսը ձգվող մետաքսաթել էր,
Ճենված մեր հույսին, կորցրինք ամեն ինչ,
Չարը ափի մեջ մեզ փաթաթել էր,
Ինքն ամեն ինչ էր, մենք՝ լրիվ ոչինչ:

Հույսը մեր հացն էր, հացը՝ մեր հույսը,-
Օտարի փեշից կախված առհավետ,
Մեր հույսը հաճախ կորցնում էր հույսը,
Որոնում էր, բայց չէր գտնում մի ելք:

Երանի հույսը հանձնեինք թրին,
Հույսը երգի մեջ չի էլ փողփողա,
Քիչ է, երբ հույսը հանձնում ես գրին,
Հույսը թրի մեջ պիտի շողշողա:

Ամեն ինչի մեջ հույսը արթուն է,
Հողդ փրկելում նա անկարող է,
Երբ օջախ ունես, նա քեզ ժպտում է,
Երբ օջախտ տաս, դահիճ ու գող է:

1991, Երեւան

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Իմ իրածին արմատ...
Անուն իմ փառավոր,
Իմ լուսածիր հավատ,
Օջախ իմ դարավոր:
Խոսքաշեն իմ քանքար,
Իմ աստղաբեռ պատիվ,

ԻԱ ՄԻԱՍՆԻ

Յայկագեն իմ պայքար.
Իմ այբուբեն, իմ թիվ,
Դու իմաստուն իմ թոռ,
Իմ ծոռ թոթովախոս,
Դու իմ արթուն հորդոր,
Գարնանացող իմ խոսք:
Իմ կարկաչուն երգեր,
Դու իմ եւ ցավ, եւ դեղ,
Մեկտեղ մահն ենք հերքել,
Պիտի ապրենք մեկտեղ:

1991, Ստեփանակետ

ԱԶՈՒԽԻ ՔԱՐԱՆՉԱՎԸ

Պապերիս տումն է՝ անսվաղ, խոնավ,
Լույսը իջնում է անցքից մի նեղլիկ,
Քարանձավ չէ նա, այլ հսկա մի նավ,
Խարիսխ է ձգել՝ ճամփան չշեղի:

Այստեղ դարերը իրենց կորցրել են,
Խտացել, դարձել լուռ աղոթարան,
Ժայռե պատերը հանգած բոցեր են,
Հատակը շերտ-շերտ հուշերի դարան:

Ժամանակները մանել են հեքիաթ,
Յյուսել ապրելու առասպելը մեր,
Կյանքի ավիշը հոսել է կաթ-կաթ,
Եվ մոր պատկերով առել սուրբ թեւեր:

Եվ քանդակել են պատկերը նրա,
Մանկանը առած շոյող թեւերին,

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Այդ ասել է՝ մեր պապերի համար
Ստնտու մայրն էր Աստվածը Վերին:

Մոր պաշտամունքի աղոթքը շրթին,
Նա մեր օջախն էր, քարեղեն տունը,
Դրա համար էլ Արցախը մեր հին
Ծփուն է ինչպես մոր քնքշությունը:

1992, գ. Ազոյ

ՑԱՍՈՒՄ

Երեւանի 128-րդ դպրոցում հայոց եղեռնի
հիշատակին կազմակերպված երեկոյին
մասնակցելուց հետո

Դպրոցում զանգակը մղկտաց,
Կարծես թե լացում էր աղիողորմ,
Մի խավար սփռվեց աչքը թաց,
Խավարում թրթռաց մի խեղճ նոմ:
Բեմ ելան սաները տխրադեմ,
Մոմի հետ սրտերը վառելով,
Կյանքն իրենց եւ իրենք կյանքի դեմ
Կանգ առան՝ ծով Վշտից հառնելով:
Սեւակի մեծ ցավն էր բուրվառվում
Մորմոքով չլռող իր զանգի,
Մի խոցող սարսուռ էր մեզ փարվում,
Լեզվակն էր օրորվում տանջանքի:
Ու մտքով թեւեցի աշխարհով,
Դայացքս մեր ցավի սարերին,
Արցախյան հնամյա բարբառով
Կարդացի անեծքս չարերին,
Ատեցի սրտերը նրանց գորշ,
Արարքը եւ խիոճը մորեմերկ,
Պարզած կեռ յաթաղան, սեւ դրոշ,

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Երկիրը մեր դարձրին արմաներկ:
Վրեժի իմ խոսքը ծածանվեց,
Դիմեցի սերնդին մեր հայոց,
Չի փոխվել թշնամին արնախում,
Ելել է շարքերով նա իր հոծ,
Որ նորից արյունը մեր հեղի,
Սեւ սուգով մեր հողը հեղեղի:
Թող թուրը շառաչի Վարդանի,
Թող հնչի Նժդեհի անունը,
Մինչեւ որ թշնամին չսպանվի,
Կանգուն չի մնալու մեր տունը:

1992, Երևան

ԶՐՈՒՅՑ

Ես նայում եմ Արարատին,
Արարատը՝ ինձ խոռվ,
Ինչպես որդին իր մորն անգին,
Մայրն էլ որդուն՝ ջերմ սիրով:
«Քեզ գերել են,- ասում եմ ես,-
Խլել է քեզ թշնամին,
Սիրտս է մխում ճրագի պես,
Ասա, որդիդ ի՞նչ անի»:
«Իմ տերն ես դու,- ասում է նա,-
Ես՝ քո երգը՝ կրծքիդ տակ,
Քիչ էր ինձնով հիանալը,
Պաշտպանեիր արյանք տաք:
Ելի քո՞նն եմ, պատիվը քո,
Խղճիդ նժարն ու արփին,
Չխորթանաս ինձնից հոգով,
Պատվանդանն եմ քո փառքի»:

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Քո գիրկը գալ ես չեմ կարող,
Ինքդ պիտի մոտս գաս,
Յսկա՞ եմ ես, բայց անկարո՞ղ,
Յամբույրն ի՞նքդ պիտի տաս:
Սարը եմ՝ քեզնից խլված հրո՛վ,
Վերադարձրու ինձ սրո՛վ:

1992, Երևան

1992 - ԱՄԱՆՈՐ

Աշխարհին բացվեցիր այս անգամ՝
Թեւերիդ արյունն իմ Արցախի,
Ասա՞ ինձ, քեզ ողջույն ինչպե՞ս տամ,
Իմ հույսը դրներդ ո՞նց բախի:

Քո դիմաց իմ սիրտը ո՞նց բացեմ,
Ի՞նչ հոգով փայփայեմ փեշերդ,
Մարդակեր գազանն է արթնացել,
Սուգով է զարդարում գիշերդ:

Քերում է տառերն իմ բերդերից
Եվ հունից խլում է գետերս,
Զավթում է զարդերն իմ երգերից
Եվ ջանում շղթայել ձեռքերս:

Խլացած աշխարհը նորից
Չի լսում օգնության կանչերս,
Կուրացած աշխարհը նորից
Չի տեսնում անարդար տանջվելս:

Չեմ թեքում երեսս քեզանից,
Իմ հոգու ցասումն եմ փայփայում,

ՊԱ ԾԻԱՌԱՆՆ

Ոչ մի խոսք չսպասես ինձանից,
Գալուստդ սիրտս չի հմայում:

Աշխարհին բացվեցիր այս անգամ՝
Թեւերիդ արյունն իմ Արցախի,
Ասա՛ ինձ, քեզ ողջույն ինչպե՞ս տամ,
Իմ հույսը դռներդ ո՞նց բախի:

1992, Ստեփանակերտ

ՊԱՏԿԵՐ

Արեւի շողից ալ հազած ամպը
Փարվել է կրծքին սեզ Մռով սարի,
Ամպը բամբակ է, Մռովը՝ պապըս,
Խփում է քարին, որ կրակ վառի:

Կողքի լեռները թռոներն են նրա,
Կայծքարից ելնող կայծին են փչում,
Պապն ու թռոները թեւ-թեւի տված
Դին կրակով են ապրում ու շնչում...

1992, Ստեփանակերտ

ԵՐԿԻՐ ՀԱՅՈՑ

Ես՝ քո երգով բարուրվածս, օրորում եմ երգդ հիմա,
Ես՝ ափիդ մեջ հասակ առած, քեզ առել եմ իմ ափի մեջ,
Աշխարհ մտած քո ջերմ գրկից ու նրանով հոգեհմա,
Քեզ փայփայող ձեռք եմ դարձել, ճամփիդ լույս եմ
դարձել անշեջ:

Չեմ կասկածել, որ տեմչերդ ինձնից առած ինձ ես տալիս,
Աշխարհին արար ու մարդամեջ մտել եմ ես քո ամունով,

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Դեմ կասկածել, որ ծանրաբեռ միշտ դեպի իմ տունն
ես գալիս,
Եվ իմ քայլը հոսել է միշտ երազներիդ առատ հունով:
Իմ պատկերը քո հոգու մեջ, քո պատկերը միշտ իմ
սրտում,
Մենք միասին դուռն ենք բացել հավերժության եւ
անհունի,
Ու քանի դեռ միասին ենք, մեզ ահ չկա անգամ
ցրտում,
Թե բաժանվենք, դու մեղք չունես, իմ ապրելը իմաստ
չունի:
Դու իմ օջախ, դու իմ անուն, դու իմ մանկանց լույս
օրորոց,
Դու աշխարհում իմ մեծ աշխարհ, իմ նշխարված
երկիր Հայոց:
1992, Երևան

ԱՆՏԱՌԻ ՑԱՎԸ

Սարսռում է անտառը,
Ցնցվել է թեղին,
Քիչ է մնում թարթառը
Կիրճերից ելնի:
Գետը արյուն է թքում,-
Հատում են ծառեր,
Ցավից ժայռերն են տնքում,
Երկինքն է սառել:
Բարդին շրշում է տխուր,
Լացում է ուրին,
Մոշի կարմիր փրփուրը

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Խաօնվել է առվին:
Ճերմակել է աղբյուրը,
Ղողում է թխկին,
Շրթին ծաղկող համբույր՝
Սոսին է կողքին:
Տագնապել են սարերը,
Չորերի գրկում,
Բոխին կանաչ ծառերի
Ճույսերն է փրկում:
Արծիվը սեզ Մռովին,
Չի թողնում տաղն իր,
Պայքարի երգն անտառի
Գրում է կաղնին:

1992, Մարտակերտ

ԱՊՐԻԼԻ 24

Ճիշդ դառնացած հոգուս մեջ մտավ,
Մրմուռ էր, փոխվեց հավերժող ձայնի,
Ես քեզնով վշտին, վիշտը ինձ գտավ,
Եվ հետո դարձավ ցավը համայնի:

Դու ճանապարի չես, Գողգոթա ես մի,
Մեր ազգի արյան կանչն ես թախծալուր,
Զոհյալներիս ո՞նց հավաքեմ ի մի,
Ինչպե՞ս սփոփեն կարոտս հանուր:

Աշխարհի խղճին ծաղկած անեծք ես,
Գերված հողիս հետ անունս ես խլված,
Մեկուկես միլիոն կարկառված ձեռք ես,
Դառնության ծով ես, ես քո մեջ՝ խրված:

ԴԱ ԾԻԱՌԱՆ

Ո՞վ է մեղավոր, աշխա՞րհը, թե՞ մենք,
Ո՞ւմ սիրտն է ցավում ուրիշի համար,
Գոնե մեր ուժին պինդ ապավինենք,
Կրկնվելուդ դեմ մաքառենք համառ:

Համոզվենք, որ դու պարտությունն ես մեր,
Ոչ թե մեզ հատուկ վեհանձնությունը,
Լավ է վայրենի կոչեին մեզ էլ,
Քան տեսնեինք մեր հեղված արյունը:

1992, Ստեփանակերտ

ՄԱՇՏՈՑՆ ԱՐՑԱԽՈՒՄ

Եվ նա եկավ Արցախ,
Այբուբենի լույսով հոգին լեցուն,
Եկավ որդու նման, Աստծո նման եկավ,
Որ Արցախին բաշխի գրոց լեզուն:
Ու թրթրաց սիրտը արցախական հողի,
Ու ճառագեց հոգին արցախական,
Շրջեց ավան ու շեն քայլով արարողի
Ու մեռոնով օժեց անապական:
Եվ Արցախը դարձավ անմար լուսո խորան,
Հավատը կար, չկար սաղմոսն հայոց,
Բացվում էին խոսքից, խորհուրդներից նրա
Բազում հոգիների դռները գոց:
Նրա շնչից ծնվեց դպիրն Անարասի,
Պատմագիրը ծնվեց, երգիչը մեծ,
Հայոց երգերը իին նման մեղվապարսի
Շուրջպարի մեջ առան բարձունք ու քերծ:
Ու շքերթը ծզվեց մեսրոպանուն մանկանց,
Մեսրոպացան օջախ, սեր ու հարգանք,

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Անգամ բողբոջներին ու թերթերին ծաղկանց,
Յովը պար էր բռնում նրա անվամբ:
Եվ նա եկավ Արցախ՝ լույսը հոգու վրա,
Եվ դարերում դարձավ նրան սատար,
Նրա աղոթքներով, օրինանքներով նրա
Ողջ Արցախը դարձավ մեսրոպատառ:

1992, Ամարաս

ՄԱՂԹԱՆՔ

Կյանքը փոխվում է, փոխվում են մարդիկ,
Դժգունանում են պատիվ ու հարգանք,
Ապրուստը թաճկ է, հոգսերը՝ անթիվ,
Մի ծով ձգտում է, մի կաթիլ բերկրանք:

Յոթ տասնյակ տարի սնեցին ստով,
Շետո վերջակետ դրին մեր հույսին,
Մեր ճամփան կրկին անցնում ենք ոտով,
Ելի նույն բեռն է ընկած մեր ուսին:

Բարին ու չարը խառնվել են իրար,
Ինչքից զրկվածն է դարձել գթասիրտ,
Ի՞նչ է կատարվում, չգիտենք իրավ,
Օրենքները՝ շատ, սակայն մարդը՝ բիրտ:

Ընտրյալները վիճում են անվերջ,
Բորբոքվել է մի աթոռակօիվ,
Ուր ոտք ես դնում՝ զրույց սնամեջ,
Ում բարեւում ես՝ մտքերը խռիվ:

Մի բուռ ժողովուրդ, բզկտված մի հոդ,
Մի գերված Մասիս, կիսված մի Արաքս,

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Մի մոլոր բանվոր, բայց հազար ճառող,
Մի քրտնած հողվոր ու բազում երազ:

Ամեն անկյունում մի խնբակցություն,
Մեկ շնչին մի թերթ եւ մի ամսագիր,
Ամեն գործատան մի կուսակցություն,
Մի թաղամասին մի սահմանադիր:

Համբերություն քեզ, իմ հայ ժողովուրդ,
Գրագետներիդ՝ փոխադարձ մի սեր,
Թող երթդ ձգվի լեռներում քո լուրթ,
Եվ ինքդ դառնաս թագավոր ու տեր:

Իսկ զավակներդ՝ սնված քո կաթով,
Հանճարիդ ուժով քեզ լինեն ծառա,
Որ դարերի մեջ գոչես անվրդով.

- Գերված էի ես, ինքնիշխան դառա:
1992, Երևան

1993

Տարին այնպես եկավ, տարին այնպես գնաց,
Կարուտ էի նրան, աչքս վրան մնաց,
Արտս թողեց թոշնած, ծառս թողեց անբար,
Զինվորյալի նման մարտնչում էր անբառ:

Տարին այնպես եկավ, տարին այնպես գնաց,
Որ տենչերս թողեց արցունքներով իմ թաց,
Ասես ամտես ձեռքով աղ էր լցվում վերքիս,
Չար աշխարհին էր խփում իրեն մեկնած ձեռքիս:

Չգիտեմ՝ մեր խելքից, թե անճարակ ելքից,
Գյուղ ու ավաններս ավերվեցին մեկից,

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Գերված հարսնացու է Զրաբերդս իիմա,
Գյուլիստանա բերդիս գորշ մշուշ է ու մառ:

Մռովս մի Առան՝ խոժոռվել է ցավից,
Թարթառս մի մառան՝ փոշոտվել է դավից,
Կնճռոտ դեմքի նման փոքրացել է հողս,
Եկել, սիրտս է շոյում Արցախս հին շողս:

ճչում է նա հոգուս բոլոր շերտերի մեջ
Եվ ամիջում անվերջ ոստիմերին խենեց:

- Բռունցքվեցեք, ելեք,- ասում է մեզ պես:
- Արցախից ենք հողով,- դատում է նա հոր պես:

Տարին այնպես եկավ, տարին այնպես գնաց,
Որ զոհյալս անգամ հեռվում անթաղ մնաց,
Բայց Դիսուսը ես եմ՝ ապավինած բարուն,
Երազներիս պիտի հասնեմ այս նոր տարում:

01.01.1993, Ստեփանակերտ
կեսգիշեր

ԸՆԴՄԻՇՈՒՄ

Թշնամական արկերը կարկուտի պես տեղացին,
Խոռոչվեցին բյուրավոր նորաշեն դուռ, լուսամուտ,
Ծուխը առավ երկինքը, որ դարձել է դեղնածին,
Իսկ քաղաքի չորս բոլոր թեւածում է մահն անգութ:
Փլուզվում են շենքերը ու քանդվում են պալատներ,
Ներքնահարկում ամեն ոք հարազատին է հիշում,
Ասես այդժամ մեզանից խռովել է բախտը մեր,
Եվ հալածում է անվերջ չարությունը անզիջում:
Արցախի շուրջ՝ մեր տան շուրջ, արդարության
դեմ-դիմաց

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Պատմեշվել է թշնամու խրախճանը արնածին,
իսկ աշխարհը անտարբեր, իր կոչերով անհմաստ,
խրախուսանք է կարդում սելջուկ-թուրքին դրացի:
Այս անգամ էլ մեր կամքը ամրությունն իր ջրդեղեց,
Մի քանի ժամ ընդմիջուն տվեց դաժան թշնամին,
Երեւի թե Վերինը հոգիները մեր պեղեց՝
Ինանալու, թե ինչպե՞ս պիտի վարվենք այդ ժամին:
Ընդմիջմանը ՆԱ լսեց պատարագի երգը մեր,
Ընդմիջմանը ՆԱ լսեց խաղականը մեր մանկանց,
Ընդմիջմանը ՆԱ տեսավ նորից հառնող տունը մեր,
Լուր կարկամեց ու վառվեց երազներով մի անանց:
«Կամքն Արցախա իմ կամքն է, նա մի գանձ է գտածո»:

04.01.1993, Ստեփանակերտ

ԲԱՐԻ ԼՈՒՅՍ, ՎԱՐԱՐԱԿՆ (երգ)

Բարի լույս, Վարարակն,
Յինավուրց իմ մայր քաղաք,
Յավերժի անթարթ ակն,
Սիրտդ բաց, հոգիդ խաղաղ:

Թշնամիդ դարեր անվերջ
Չի թողել ապրես խաղաղ,
Տենչերդ վառիր անշեջ,
Բարի լույս, իմ մայր քաղաք:

Կտրիճներ ունես արի,
Աղջիկներ՝ նուրբ ու բարի,
Արարքդ հուսաշաղախ,
Բարի լույս, իմ մայր քաղաք:

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Վերքդի խոր, երազդ վառ,
Միտքդ լույս, գործդ արդար,
Յավատիս վարար ակն,
Բարի լույս, Վարարակն,
Դու իմ սիրտ, ես՝ քո ակն,
Բարի լույս, Վարարակն:

06.01.1993, Ստեփանակերտ

ԱՇԽԱՐԴ, ՏԵՍՆՈՒՄ ԵՍ

ճամփան տնքում է ծանրացող ցավից,
Ալեկոծվում է երկինքն արցունքոտ,
Սարը դողում է կորստյան ահից,
Սարսուռ է ապրում հողը բարձունքոտ:

Սերը՝ սեւաշոր, մայրը՝ սեւաբախտ,
Քույրը՝ մոլորված, եղբայրը՝ խոնարի,
Խորհում եմ անվերջ, այս ինչպես եղավ.
Փամփուշտ ու ծնունդ ո՞նց գտան իրար:

Ու քայլում եմ լուռ մեծ թափորի հետ,
Ու թիրտում է միտքս սգահար,
Մեզ փաթաթեցին պատերազմն այս խենթ,
Սելջուկ-թուրքերի ժառանգները չար:

Այս քանիերորդ թաղումն է այսօր,
Քանի՝ թափոր է գլխիկոր քայլում,
Աշխարի, տեսնո՞ւմ ես հանցանքները քո՝
Չարիքով օծված խղճիդ հայելում:

26.02.1993, Ստեփանակերտ

ԴԱ ՄԻԱՍՆԻ

ԿՈՐՈՒՏ

Յորեղբորս կինը՝ 80-ամյա Փառանձեմ Խանյանը,
զոհվեց իր տան առջև, թշնամու ինքնաթիրից նետված
ռումբից, հորեղբայրս չդիմացավ ցավին... միացավ մրան:

Ես գնում եմ դեպի այգին,
Այգին դեպի ինձ է գալիս,
Յորեղբայրս չկա անգին,
Թթենին է մահը լալիս:
Ես գնում եմ դեպի բակը,
Բակը դեպի ինձ է գալիս,
Ցավ է կարդում ծիծեռնակը,
Խնձորենին վիշտ է լալիս:
Վիրավոր է կեռասենին,
Բալենին են թրահատել,
Թշնամական ռումբերից
Յորեղբորս կինն է մարել:
Բարդին ցավից լուռ կորացած
Տերերին է հիշում բարի,
Մեկի սիրտը չդիմացավ,
Մեկին խոցեց ռումբը չարի:
Յող ու պարտեզ կրակ սրտով
Նրանց հուշն են պահում հիմա,
Տեսեք ո՞ւմ են զոհում գենքով,
Ի՞նչ է խորհում աշխարհն հիմար:
Իմ հոր ու մոր կարոտները
Ես նրանցից էի առնում,
Սիրտ իմ, ասա, անվերադարձ
Այս կորուստը ո՞նց ես տանում:

23.04.1993, գ. Ակնաղբյուր

ՊԱ ԾԻԱՌԱՆ

ԾՈՒՇԻ

1.

Այնպես էիր նստած շերտերի մեջ հոգու,
Գեղեցկությամբ հանդերձ՝ ողբերգություն
դարձած,
Որ քո անունի մեջ, ինչպես այրող կորուստ,
Տեսնում էի մեր ողջ կորուստները անցած:
Երբ ես տեսնում էի Աստծոն տունդ անտեր,
Սիրոս ճմլվում էր ու թփրտում անթել:
Յիմա արմատներիդ վերընճյուղվող շիվն եմ,
Յիմա քեզնից ծնվող արեգնափայլ տիվն եմ,
Կորուստներիս ծայնն եմ լսում քո պատերից,
Ու վերծանվող բառն եմ լսում սուրբ պապերիս,
Արյամբ խլված, կրկին մեր արյունով փրկված,
Մորից գրկված, նորից քո մոր կողմից գրկված,
Իմ հոյակերտ Շուշի...

Նորից օրոր ասա մանչուկներիդ հայկյան,
Ի լուր հողագնդի հայությանը համայն,
Յնչեցրու երգդ՝ զավակներիդ կանչող,
Գրի օջախ դարձիր, խարույկ մի չհանգչող,
Մեր ավյունով կերտված,
Մեր արյունով հերկված,
Օտարի սեւ լուծը կրած մեր հին Շուշի...
Եվ անցյալիդ փառքը,
Եվ նորօրյա Ասքըդ
Գալիք սերունդներին մոր հավատով հուշիր...

05.01.1993, Շուշի

2.

Շուշի՝ պապիս կերտած քաղաք,
Շուշի՝ հորս երգած քաղաք,

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Դու իմ տատի նախշուն պատկեր,
Իմ անուշ մոր հույսի պատեր:
Քեզ խլել էր թուրքը մեզնից,
Քեզ խլել էր բուրքը մեզնից,
Բայց չեր մարել վառ հույսը մեր,
Որ կդառնաս վառ լույսը մեր:
Եվ սուրբ անվանք մեր պապերի,
Եվ սուրբ արյանք մեր հայրերի,
Դիմա կրկին մերն ես դարձել,
Ու մեր առջեւ գիրկդ բացել:
Եվ զնգում են զանգերդ զիլ,
Եվ ժպտում են աչքերդ բիլ,
Մենք՝ քեզ պաշտող բալիկներդ,
Մենք՝ քո բուրող ծաղիկներդ,
Մենք՝ հավատի ալիքը քո,
Պիտի կերտենք գալիքը քո:
Ել ոչ մի օր, ոչ մի ժամի,
Քեզ չի գերի չար թշնամին,
Հայի ձեռքով կերտված Շուշի,
Հայի արյանք փրկված Շուշի:

1993, Շուշի

ՎՃԻՌ

Լավ է տեսնեմ կործանվելը աշխարհի,
Քան թե կրկին իմ Արցախը ճորտ դառած,
Արարիշը թե արդար է ու բարի,
Թող լավ տեսնի ձեռքերս իրեն կարկառած,
Թող լավ տեսնի ճառագայթված նատները՝
Ամեն մեկը իրեն ուղղած մի կանթեղ,

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Չար ուժերը երազել են հատնելըս,
Բայց ապրել եմ, արարել եմ ամեն տեղ:
Հառնել եմ ես իմ Մռովի նման սեզ
Ու թարթառից առել ջուրը կարոտիս,
Մռով սարը իմ հասակն է բարձր ու մեծ,
Իսկ թարթառը ադամանդն է նարոտիս:
Մռով սարը ես եմ՝ պապիս անունով,
Թարթառը իմ սիրո թասն է փրփրալից,
Իմ ճամփեքը անց են կենուն անհունով,
Ես անհունն եմ, տիեզերքն եմ աստղալից:
Արարիչը թե արդար է ու բարի,
Թող լավ տեսնի ծեռքերս իրեն կարկառած,
Լավ է տեսնեմ կործանվելը աշխարհի,
Քան թե կրկին իմ Արցախը՝ ճորտ դառած:

1993, Ստեփանակերտ

ՎԱՐԴԵՐ

Արցախի նահատակների սուրբ հիշատակին

Երազների նուրբ թեւերով, գարնանային վարդեր առած,
Տղան գնաց տեսակցության սպասումի կրակ դառած,
Զրուցում էր վարդերի հետ սիրակարոտ ու սիրատենչ,
Վարդերի մեջ սիրտն էր դրել, սրտում՝ սիրո հուրը անշեց:
Հանդիպեցին երեկոյի թեւերի տակ սիրով վառնան,
Ու վարդերը նա նվիրեց իր սիրածին վարդանման:
Վարդ ու աղջիկ արեւ դարձան, ջերմացրին սիրտը նրա,
Դեռ իր կյանքում վարդերն այնպես չէին բուրել երկրի
վրա:

ՊԱ ԾԻԱԾԱՆ

Կանգնել էր նա երջանկության արշալուսված
հայացքի դեմ,
իր նվիրած վարդերն ասես ժպտում էին ինչպես եղեմ:
Գարնանային վարդերի մեջ վարդ աղջիկը վարդաժպիտ,
Ճրեշտակ էր մի վարդահյուս, վարդե համբույր ու
վարդե գիրկ:

Վարդերն այդօր այնքան էին սիրատոչոր ու սիրավետ,
Որ թվում էր նրանք էին խոսում սիրած աղջկա հետ:
Ու խոսք տվին ու խոսք առան հրապույրով ալ վարդերի,
Ու երդվեցին իրար սիրել միշտ վարդաբույր ու անթերի:
Սակայն հաջորդ տեսակցության վարդափունջը
աղջիկն առավ

Ու ֆիդայի իր սիրածին հրաժեշտի նվեր տարավ,
Ասաց. «Կզաս մարտադաշտից մեր սրբազն հողը փրկած,
Այդ օրվանից ես ինքս քեզ ողջույն կտամ վարդեր գրկած»:
Սակայն, ավա՞ղ, տղան չեկավ, այլ բերեցին արյունաքան,
Փրկել էր հողն իր հարազատ կյանքի գնով նա ինքնակամ:
Լայն ճակատին հետքերն արյան ասես գարնան
վարդի թերթեր,
Շրթունքներին մարած մի խոսք. «Պաշտում էի ես քեզ,
իմ Սեր»:

Նահատակված Սիրո վիշտը արցունքախառ հոգում վառած,
Վարդ աղջիկը վարդափունջն է դնում նրա կրծքին սառած:
Ճուշ են դառնում օրերն հերթով, նկարից է ժպտում տղան,
Նրա արյան գույներն առած փայլվլում է կյանքի ծնծղան,
Այն աղջիկը, վարդ աղջիկը վարդափունջը առած
տրտում,
Իր սիրածի հայացքի դեմ խոնարհվում է ցավը սրտում,
Տեսակցության ժամն է հիշում, վարդափունջն է
հիշում նրա,

ՊԱ ԾԻԱՌԱՆԿ

Երազ դարձած սիրո վարդն է դաջվում խոցված սրտի
վրա,
Նա խորհում է եւ անիծում ոսղխներին մեր դրուժան,
Որ առաջին սիրո վարդը կյանքում դարձրեց սգո նշան:
1993, Ստեփանակերն

ԱՎԵ ՄԱՐԻԱ-

Ավե Մարիա~...
Երեկ քո Որդու անունը շրթիս,
Սրբացած բակում հին Ամարասի,
Քո լույս պատկերով տեսա մի աղջիկ,
Սեւ շորերի մեջ, ինքնածիզն ուսին:

Ավե Մարիա~...

Նրա անունը
Քո անունից է, քեզ պես երկնային,
Մի ակնթարթում փլվել է տունը՝
Կորցրել է հավետ Սերը երկրային:
Դեռ ամուսնական մեղրամիսի մեջ
Նրա կտրիճը նետվել է մարտի,
Յիսուսիդ նման՝ երազը անշեջ,
Յիսուսիդ նման՝ բարության մարտիկ:

Ավե Մարիա~...

Յիմա Մարիան որբեւայրի է,
Սեւեր է հագել ու թախծում է լուռ,
Մայր մեր, Արցախում քանի՛ տարի է,
Ինչ թեւածում է տառապանքն անլուր:

Ավե Մարիա~...

Մարիան հիմա
Ընկերացել է ամուսնու գենքին,
Դու մի սուրբ մայր ես նկարչի համար,

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Մարիան՝ զինվոր ինքնաձիգ ձեռքին:
Աղաչում եմ քեզ, Ավե Մարիա՝,
Մի՛ թող Մարիան ծնկի զա քո դեմ,
Ինքդ մայրաբար աղոթիր նրան,
Նրան փայփայիր եւ կոչիր ի զե՞ն,
Քանզի նա այսօր իր կյանքի գնով
Ոչ միայն հողն է փրկում հայրենի,
Այլ նաեւ Փրկիչ Որդուդ անունը
Եվ քո պատիվը, Ավե Մարիա...

1993, Ամարաս

ՕՐԸ

Օրը բացվեց, որոնեց սրտիս ճամփան եւ՝ գտավ,
Ծաղկավորվեց իմ սրտով եւ իր հունի մեջ մտավ,
Մի տեղ սրտիս պես ցավեց, մի տեղ ժպտաց սրտիս պես,
Մտերմացել էինք մենք՝ սիրտս գտած օրն ու ես:

Օրվա վառվող ջահի տակ սերս եկավ ինձ այցի,
Անձկության մեջ, տխրության սիրո համար ես լացի,
Բայց իմ սիրո արցունքը ծավալվեց ու ծով դարձավ,
Երբ թիթեռը գեթ մի օր թեւին տվեց ու անցավ:

Օրը մտավ իմ սիրտը, ճյուղավորվեց ծառի պես,
Օրն իմ սրտում թիթսաց երգ չմտած բառի պես,
Ընկերացավ իմ սրտում օրն առեղծված անհունին,
Օրն իմ սրտում ծավալվեց ինչպես հայոց անտունին...

Օրն իմ սրտում Արցախս ցավը դարձավ ու մխաց,
Օրը դարձավ կտրոնով տունս եկած մի չոր հաց,
Օրը դարձավ մի երազ ու երազված ինձ փարվեց,
Օրը հազար իոլձերով սիրտս ճմլեց ու վառեց:

ՊԱ ՄԻԱՍՆԻԿ

Որը կանչեր բերավ ինձ, կանչեր տարավ ինձանից,
Օրը շոյեց իմ սիրտը, օրը խոտնեց իմ ձայնից,
Օրից պահանջեցի ես իմ Արցախա ծիրանին,
Հաղթանակի ծիրանին բերող օրվան երանի...
1993, Ստեփանակերտ

ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԶԿԱ

Իմ սիրտը ծառին տվի, ծառը բողբոջեց,
Իմ սիրտը առվին տվի, կարկաչեց առուն,
Իմ սիրտը հրին տվի, հուրը բորբոքվեց,
Իմ սրտով ծլարձակվեց մի հրաշք գարուն:
Իմ սիրտը տվի ճամփին, ճամփան թրթռաց,
Իմ սրտով ձգվեց անվերջ, ձուլվեց գալիքին,
Իմ սիրտը երգին տվի, երգը խլրտաց,
Թեւելով գնաց-ձուլվեց հույսի ալիքին:
Վիրավոր իմ Արցախին իմ սիրտը տվի,
Արցախիս հոգին շիկնեց, թեւավոր դարձավ,
Արցախիս Հաղթանակի երգը երբ գրվի,
Իմ սրտում էլ չեն մնա ոչ տրտունջ, ոչ ցավ:
Չին տարվա իմ երազով փարվեցի նորին,
Չին տարվա իմ երազին գումարվեց նորը,
Արցախիս ձուլված սիրտս հաստատեց նորեն.
«Նոր տարում պիտի տեսնենք Հաղթության օրը»:
Եվ սիրտս աստղ դարձավ ու թռավ երկինք,
Միացավ մեր նահատակ քաջերի հոգուն,
Արցախ իմ, դու հասարակ հող չես ու երկիր,
Սրտերի բաբախյուն ես՝ երազով հորդուն:
Քեզ ձուլված բյուր սրտերի ծփանքը վկա,
Քո պայծառ երազներին պարտություն չկա:

01.01.1994, Ստեփանակերտ

ՄԵՐ ԹԹԵՆԻՆ

Վեր է կացել մեր թթենին դարավոր
Ու քայլում է պապիս նման սլացիկ,
Ոտքերի տակ բակն է փռվել փառավոր,
Դրոշի պես օրորվում է ակացին:
Մեր թթենին, մեծ թթենին շուքառատ,
Զորավար է դարձել կանաչ մեր բակում,
Քայլքը խրոխտ, ծայնը քաղցր, անարատ,
Ինչքան ծառ կա շուրջ բոլորն է հավաքում:
Շարք են կանգնում զինվորների նման քաջ,
ճյուղերի մեջ շանթ-կրակն է շառաչում,
Ճորդորում է մեծ թթենին ձախ ու աջ,
Շրթին խոսքը. «Սայր անտառն է մեզ կանչում:
Նրան պիտի փրկենք վառող խորշակից,
Պիտի առնենք դեմք դաժան հողմերի,
Չարացել է սաքսառուլը մեր դրկից,
Մեզ դավ ու ցավ բերելով չորս կողմերից»:
Ու ձգվում են ծառերն ինչպես մարտիկներ,
Ու պապիս պես մեծ թթենին է ծայնում,
Սլանում են Արեւարի լանջն ի վեր,
Իսկ աստղերը հեռվից ծեռքով են անում,
Նահանջում է սաքսառուլը նրանց դեմ,
Ճողմ ու խորշակ թափալվում են ծորերում,
Խաղաղվում է մայր անտառը ոնց եղեմ
Ու պար բռնում կանաչ-կարմիր շորերում:
Պարն է վարում մեր թթենին դարավոր,
Պապիս նման հաղթահասակ, սլացիկ,
Մայր անտառի հավերժական ծփանքով
Դրոշի պես օրորվում է ակացին:

13.02.1994, գ. Ակնաղբյուր

ՊԱ ԾԻԱՌԱՆՆ

Ո՞ՒՐ ԵՍ ԳՆՈՒՄ

Յարեւանիս աղջիկը՝ Արեւ ամունով,
խռոված ասաց. «Շուտով կգնամ Արցախից»:

Ո՞ւր ես գնում, Արեւ, ո՞ւր ես գնում,
Այդ ի՞նչ ամպ է իջել քո շողերին,
Այդ ի՞նչ ձյուն է իջել քո ցողերին,
Ո՞ւր ես գնում, Արեւ, ո՞ւր ես գնում:

Ո՞ւր ես գնում, Արեւ, ո՞ւր ես գնում,
Այդ ի՞նչ ժայռ է փակել քո մեծ ուղին,
Այդ ի՞նչ ցին է նստել ծառիդ ճյուղին,
Ո՞ւր ես գնում, Արեւ, ո՞ւր ես գնում:

Մնա, Արեւ, մնա մեր սարերում,
Մեր սարերի շողբն է քո բառերում,
Քո բառերի կանչն է մեր դարերում,
Մնա, Արեւ, մնա մեր սարերում:

Թե վերք ունես, բուժիր մեր ջրերով,
Ոսոխ ունես, ջարդիր մեր թրերով,
Աշխարհին խոսք ասա մեր գրերով,
Մնա, Արեւ, մնա մեր սարերում:

Ողջ Արցախն է խոսում իմ բառերում,
Մնա՝, Արեւ, մնա՝ մեր սարերում:

1995, Ստեփանակերտ

ԻԱ ՀԱՐԱՋԱՏՆԵՐ, ԻԱ ԿՅԱՆՔ

ԱՆԱՐԻՏ

Միլվա ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻՆ, այդ ժամո
օրերին Արցախ այցելելու առթիվ

Եվ ժողովրդի հիշողության մեջ,
Եվ սերունդների սրտերի խորքում
Անահիտն ապրեց,
Անահիտն՝ անբիծ,
Անհաս ու մաքուր,
Եվ խնամակալ,
Եվ հոգատար քույր...
Եվ որովհետեւ իր ժողովուրդը
Լեռների մեջ էր աչքերը բացել,
Բարդ ու դժվարին մի ճանապարհ էր
Վերուստ ստացել:
Տափաստանների, խաղաղ գետերի
Ափերին ծնված քոչվոր ցեղերին
Ի՞նչ խնամակալ,
Երկերեսանի ուժի ցանկությամբ
Նրանց հեշտ հացը, առատ ջուրը կար:
Իսկ ԱՆԱՐԻՏԸ
Աչքերից պիտի ջինջ առու հաներ,
Ճանդերը ջրեր,
Պիտի վշտանար,
Որ սարերից վեր
Ցողաբեր ամայը մի քիչ խտանար,
Պիտի եւ ուժը, եւ շանթը հարզեր,
Որ կարողանար ոսդիմների դեմ
Դառնալ շանթարգել:
Պետք է կարենար մոլք ու մուժի մեջ

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Իր սրտի հրով բորբոքեր ջահեր,
Որ չար աշխարհում, դաժան աշխարհում
Իր ժողովրդին դարերում պահեր:
Անահիտն այդպես
Ապրեց ու դարձավ
Մեր դժվարության,
Մեր տառապանքի,
Մեր սփոփանքի
Աստվածն ու հույսը,
Մեր երանության,
Մեր հպարտության,
Մեր հավերժության
Մարմնացած հույսը:

28.07.1988, Ստեփանակերտ

ԽՈՍՔ ԵՐԱԽՏԻքԻ

Նվիրում եմ Ա. Դուդիմին, Սումգայիթ քաղաքից
քրնազարթածներին այցելելուց հետո:
Կարդացվել է Երիտասարդական պալատում,
նրա հետ հանդիպման ժամանակ:

Երգը ժողովրդի սիրտն է,
Նրա երազն է, նրա հոգին,
Թե ազնիվ սրտի պես ազնիվ է երգը,
Այդ երգը դարեր կհորդի:

Ժողովրդի անցյալն է երգը,
Անցյալը՝ կապույտ ու արդար,
Թե խորն է արմատը երգի,
Այդ երգը կապրի դարեդար:

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Ժողովրդի ներկան է երգը,
Ներկան՝ քրտնաթոր ու լուսեն,
Թե երգը քրտինքի բույր ունի,
Այդ երգը կծփա ինչպես սեր:

Ժողովրդի գալիքն է երգը,
Նրա երթն է, անխափան հոսքը,
Չեմ թաքցնում, իմ այս երգի մեջ,
Ռուս երգի մասին է խոսքը:

Սիրելի բարեկամ Դուդին,
Դու Գորկու, Բրյուսովի ժառանգ,
Նրանք 15-ին ելան,
Դեղ դրին մեր բացված վերքին,
88-ի մեր ցավն ես դու կիսում,
Փառք քեզ ու փառք քո երգին:

28.04.1988, Ստեփանակերտ

ԿԱՆՉ

Անձոռանայի Լ. Հովունցի
հիշատակին

Հովունց որդի, Ղարաբաղը
Հարցնում է քեզ, ո՞ւր ես դու,
Ղարաբաղի սիրով վառված,
Աստվածային հուր ես դու:
Վարանդայի ծաղիկները
Ժպտում են քո աչքերով,
Աղամանդյա շաղիկները
Շողում են քո ասքերով:
Ո՞ւր ես, արի, գնանք շրջենք
Քիրսա սարի լանջերով,
Գնանք, նորից թեւաբախիր

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Մօռվ սարի կանչերով:
Գնանք, նստենք խենթ Թարթառի
Կանաչ հազած քարափին,
Կրկին հոգիդ լծորդ դարձրու
Նրա երգին ու ծափին:
Գնանք, հետո ելիր Մօռվ,
Զուլվիր նրա կատարին,
Նրա անվամբ դարերի մեջ
Պիտի փարվես աշխարհին:

1984-1988, Ստեփանակերտ

ԹԱԽԻԾ

Քրոջս՝ Օյային, որ
բռնագաղթվել է Բաքվից

Քույրս թախծոտ, քույրս խեղճ՝
Փախած Բաքվի կրակից,
Շշնջում է այգու մեջ,
Շիծառներին ցավակից.
- Չե՞ն թեւածում վեր ու վար,
Առաջվա պես չե՞ն երգում,
Չե՞ն ծլվլում սիրավառ
Ու երկինքը չե՞ն հերկում:
Գուցե նրանց կողերին
Նե՞տ է խրել չար Բաքուն,
Տեսնես նրանց զոհերին
Ինչ հանգի են հավաքում:
Նրանց է՞լ են հալածում
Մեւ անգղերը մեր դարի...
Վախվորած են թեւածում
Շիծեռնակներն այս տարի:

1990, Ստեփանակերտ

ԿՅԱՆՔԻՆ ԻՆՉ

Ո՞վ է գալիս, ո՞վ է գնում,
Աշխարհին ի՞նչ, կյանքին ի՞նչ,
Այսօր լինի, թե հնում,
Պակասում են սիրտ ու խիղճ:
Աշխարհը կա, կյանքը կա,
Մարդն է եկող-գնացող,
Բայց աշխարհում արեւկա
Մարդն է մարդուն հալածող:
Կհասկանա^o, արոյոք, նա,
Որ ինքն է տերն աշխարհի,
Մինչեւ հյուր գա ու գնա,
Ինքն է հուր-սերն աշխարհի:
Ինքն է արեւ, ինքն է լույս,
Իրենով է կյանքը կյանք,
Իրենով է ծնվում հույս,
Իրենով էլ՝ տառապանք:
Ո՞վ է գալիս, ո՞վ գնում,
Աշխարհին ի՞նչ, կյանքին ի՞նչ,
Այսօր լինի, թե հնում,
Պակասում են սիրտ ու խիղճ:

1991, Ստեփանակերտ

ԴԱ ՄԻԱՍՆԻԿ

ԿՅԱՆՔՆ ՈՒ ՓԱՌՔԸ

- Ի՞նչ է կյանքը:
- Միշտ պայքար:
- Ի՞նչ է ջանքը:
- Մի խաչքառ:
- Ի՞նչ է փառքը:
- Մի խաչքար:

1991, Երեւան

ԱՅՍ ԽԱՉՔԱՐԸ

Ճարտարապետ Ռ. Խորայելյանի
հիշատակին

Այս խաչքարը պապիս սիրտն է՝
Մեր քերթության ակոսում,
Այս խաչքարը պապիս գիրքն է՝
Նա մեր լեզվով է խոսում:

Պապիս խոհն ու երազն է սուրբ
Այս խաչքարը նրբահյուս,
Որի ամեն նախշ ու գծում
Իր հոգին է՝ դարձած լույս:

Աստծո սիրով օրինում է մեզ
Այս խաչքարը մեր կյանքում,
Այդ օրինանքով ասում եմ ես.
«Բյուր ողորմի քո հոգուն»:

1991, Երեւան

ԴԱ ՄԻԱՍՆԻ

ԱՍԱ, ՊՈԵՏ

Ազ ես նայում, նայում ես ձախ.
Ճացի, հոգու խենթ առ ու ծախ,
Մերթ հոգոց ես հանում, մերթ՝ աշխ,
Ի՞նչ կարող ես անել, պոետ:

Ճետ ես նայում՝ գերված դարեր,
Շուրջդ ես նայում՝ գերված սարեր,
Օտարին բերք տվող ծառեր,
Ի՞նչ կարող ես անել, պոետ:

Թուփն ու լեռն են իրար խառնվել,
Թույնն ու սերն են իրար խառնվել,
Շունն ու տերն են իրար խառնվել,
Ի՞նչ կարող ես անել, պոետ:

Մեկ էլ ե՞րբ ես աշխարհ գալու,
Բարու համար ե՞րբ ես լալու,
Երկրիդ ե՞րբ ես պարտքդ տալու,
Ասա, պոետ...

1991, Երևան

ԿԱՐՈՏՍ

Կարոտս չիոզմող ճամփորդ է,
Թոչում է լույսից էլ արագ,
Զեր ցավին ու վշտին հաղորդ է,
Կարոտս՝ Սիփան ու Վարագ:

Կարոտս Աստղիկի մեծ սերն է,
Տիգրանի համբավն է կարոտս,
Կարոտս Մաշտոցի գրերն են,
Վարդանի արշավն է կարոտս:

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Կարոտս թեւերն է Արցախի,
Սասունի կորուստն է կարոտս,
Չեր սրտի դռները կրախի,
Չեզանով հարուստ է կարոտս:

Քանի կաք, կապրի եւ կարոտս,
Կարոտս՝ անմարուն աստղի պես,
Առանց ձեզ անթեւ է կարոտս,
Կարոտս մեռած է առանց ձեզ:

1991, Երեւան

ԱՍՏՎԱԾՆ Է, ԵԼԻ՝

Աստվածն է, էլի՝,
Մի տեղից կտրում, մի տեղ է դնում,
Մեկի համար միշտ արեւ է մնում,
Մեկին կարոտ է թողնում ու գնում,
Աստվածն է, էլի՝...

Մեկին մեծ Սեր է տալիս ու առնում,
Մեկի խոհերը իրար է խառնում,
Մեկին մինչեւ վերջ նեցուկ է դառնում,
Աստվածն է, էլի՝...

Պարտվես թե հաղթես, նա իր գահի՞ն է,
Իր ճամփան հարթես, նա իր գահի՞ն է,
Կերտածը ջարդես, նա իր գահի՞ն է,
Աստվածն է, էլի՝...

Ուզում ես ոտքը համբուրիր, զնա,
Ուզում ես փեշին փարվիր ու մնա,
Իր օրինանքների հաստատ տերն է նա,
Աստվածն է, էլի՝...

1991, Երեւան

ՆԱ ՊԻՏԻ ԳԱ

Արցախյան շարժման օրերին
նահատակված քանդակագործ
Արմեն Դակուրյանի հիշատակին

Ով չէր տեսել ղարաբաղցու,
նա Արմենով կճանաչեր,
Կճանաչեր նրա խոսքից,
նրա քայլից ու ծիծաղից,
Մեր Արմենի ծով սրտի մեջ
խենթ թարթառի խենթ շառաչն էր,
Յոզին աստղոտ մի երկինք էր՝
միշտ շիկացած երգ ու տաղից:
Նա ժեռ քարին շունչ էր տալիս,
թեւ էր տալիս նա մարմարին,
Նրա կերտած քանդակի մեջ
նուրբ ծաղկում էր մեր ցավն
անգամ,
Քանդակի մեջ նա փնջում էր
մեր երազն ու տենչը քարի,
Նա քացում էր քանդակի մեջ
մեր թռիչքը արցախական:
Մեր Արմենը չկա հիմա,
կրակեցին նրա կրծքին,
Նրա խղճին կրակեցին
գինվորները խորհրդային,
Մեր Արմենի խոսքը հուր էր,
կրակոտ էր նրա հոգին,
Մեր Արմենը՝ խիզախ գինվոր,
Մեր Արմենը քաջ ֆիդայի:
Գնացել է ու չի գալիս,

ՊԱ ԾԻԱՌԱՆԿ

Վերքը խորն է մեր Արմենի,
Մուրճ ու բրիչ սպասում են
կիսատ թողած քանդակի մոտ,
Մայր Արցախը կարոտել է
իր զավակի քաղցր ձենին
Եվ հուսավառ հավատում է,
որ պիտի գա մի առավոտ:
Նա պիտի գա՝ ժպիտները
խառնած խաղաղ արշալույսին,
Նա պիտի գա՝ ճահատակված
ընկերների շքերթի մեջ,
Նա պիտի գա հուշարձանված,
եռագույնը պահած ուսին,
Նա պիտի գա, որ հավերժվի
սերունդների երգերի մեջ:
1991, Ստեփանակերտ

ԵՍ ԷԼ ԱՅՍՊԵՍ ԹՈՂ ԱՊՐԵՍ

Ես էլ այսպես թող ապրեմ, միշտ ինքս ինձ մոռացած,
Կորած սիրո կարոտից հալումաշ ու կորացած,
Սիրտս թողած իմ հոգու հար մխացող վերքերում,
Սփոփանքը իմ գտած լուսապարար երգերում:
Ես էլ այսպես թող ապրեմ՝ ամիանգրվան եւ անտուն,
Տենչերիս հետ կոխ բռնած, գիշերները միշտ անքուն,
Աղջամուղջի քողի տակ տրտունջները իմ լալով,
Առավոտի ոտքի տակ երազներս շաղ տալով:
Ես էլ այսպես թող ապրեմ՝ տանելով ցավն աշխարհի,
Կյանքի դժվար հերկերից վանելով դավն աշխարհի,
Կրակս տամ բոլորին, ցավիս բեռն իմ ուսերին,

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Հեքիաթներն իմ լուսավոր խառնած ձեր ծով հույսերին:
Ես էլ այսպես թող ապրեմ՝ աղոթելով ձեզ համար,
Ծիածանվեմ ձեր ճամփին, գարուն լինի, թե ամառ,
Թող վերջինը լինեմ ես ցաված սիրո վշտի մեջ,
Միայն բախտի աստղերը ձեր հուրիրան լուսառէջ:
Ուխտավորս ձեր հոգում մոմի նման թող հալվեմ,
Ես էլ այսպես թող ապրեմ...

1991, Երևան

ԼՈՐԻՍ ՇԳՆԱՎՈՐՅԱՆԻՆ

«Դայը» թերթում (1991, թիվ 44)
մանստրոյի դեմ տպագրված
հոդվածը կարդալուց հետո

Յայլյան ավիշն էր քո երակներում,
Շրթերիդ հայոց երգն էր անարատ,
Երազանքներիդ բյուր երանզներուն
Մի մայր Արաքս էր ու մի Արարատ:

Ոտքիդ տակ տալով ճամփեքն աշխարհի,
Զեռքիդ նախրյան արեւի ծնծղան,
Շեփորում էիր մեր կարոտը հին,
Ինչպես հեքիաթի մայրապաշտ տղան:

Օտար ափերից եկել ես հիմա,
Հոգուդ կրակն ես նվիրում երկրիդ,
Սասմա մի ծուռ ես դու հոգեհմա,
Զգոտում ես հողդ երգերով բերկրի:

Անշահախնդիր եւ ազնվասիրտ,
Կյանքդ տվել ես մեր երգին, վերքին,
Սակայն ելել են նախանձները բիրտ
Եվ պղտորում են քո մաքուր հոգին:

ՊԱ ՄԻԱՍՆԻԿ

Չընկճվես երբեք, եղբայր իմ, Լորիս,
Դու ոգի առած մեր սրբերից ես,
Մեծ ուխտավոր ես ծնվել դու մորից,
Եվ թեւավոր ես մեր երգերի պես:

Տգիտությունը չի քնել, Լորիս.
Չարամիտ ու նենգ մի մահկանացու
Այդպես էր ձգտում խլել բոլորից
Մեր Պատմահորը՝ մեծ խորենացուն:

Որտե՞՞ղ ապրեցին Արամն ու Առնոն,
Յայց Սալերին թող պատասխանի,
Քո արվեստի դեմ իզուր են ոռնում,
Զրկվե՞լ են խղճից, սատանա՞ն տանի:

Դու երազում ես տաճարն արվեստի,
Որ ժողովուրդն իր վիշտը մոռանա,
Քեզ զրպարտողը կարող է հեշտին
Իր ծնողին էլ թողնել-հեռանալ:

Թեւերդ պարզած խիզախիր, Լորիս,
Քեզ նմաններն են հայրենիք պահում,
Իսկ զրպարտիչը իր ծնված օրից
Լոկ չարագործի անուն է շահում:

1991, Երեւան

ՀԱՄՈ ՍԱՐՅԱՆ

Յամո Սահյան, թասդ բեր,
Տաղ ու ասքի ուժ ես դու,
Մեծ արվեստի դասդ բեր,
Քեզ ո՞վ կասի.- Յուշ ես դու:

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Խիղճը կորցրած աշխարհում
Մաքուր խղճի հերկ ես դու,
Ինքդ սիրո մի գարուն,
Մերժված սիրո բերդ ես դու:

Սարերի մեջ երկնահաս
Մի աստղամերձ սար ես դու,
Փառքդ հասել է Պառնաս,
Մի խոսքաշեն դար ես դու:

Ժողովրդիդ սերը սուրբ,
Սրտիդ միջով է հոսում,
Յամն Սահյան, էլ ինչո՞ւ
Պարտքի մասին ես խոսում:

1991, Երեւան

ՄԵՐ ՑԱՎԸ

Երեւանի Ս. Սարյանի անվան զրոսայգում

Նստած-խորհում է վարպետը վրձնի,
Ղեմը Մասիսն է՝ աստղերին մերված,
Կարծես ուզում է վրձինը վերցնի,
Նորից նկարի սեզ սարը՝ գերված:
Շուկա են բացել նկարիչները,
Շրջանակներում Մասիսն է շնչում,
Նկարների դեմ հայկյան ճիշերը՝
Կարոտից ծնված ծփում են, հնչում:
Մայր սարի ննան գահը միզամած,
Սիրտս է տրոփում՝ մեր ցավը լալով,
Սահմանում գերված Մասիսի դիմաց
Թեւավորվում ենք նրա նկարով:

1992, Երեւան

ԴԱ ԾԻԱՌԱՆ

ՍԻՐՏՍ

Սիրտս գերվեց աշխարհով,
Սիրտս՝ Ե՛ւ խենթ, Ե՛ւ բարի,
Սիրտս իր տաք նժարով
Չափեց զանգվածն աշխարհի:
Սիրտս որպես մանանա,
Դարձավ կյանքի սուրբ վկան,
Չհասկացավ սակայն նա
Աշխարհի կան ու չկան:

1992, Երեւան

ՀԱՎԱՏ

Հիսուս Քրիստոսին

Ինքնակամ ընտրեցինք Նրան,
Որդի էր, մենք դարձրինք Աստված,
Պատկերը մեր սրտի վրա,
Քայլեցինք իր ճամփով հաստված:
Վառեցին մեր տունն ու հոգին
Վայրենի ցեղերը դաժան,
Դարձյալ մեր Աստվածն էր Որդին,
Չապրեցինք նրանից բաժան:
Թշնամուն նա պիտի զրկեր
Մեզ լափող վրեժից իրե...
Փոխանակ ի՞նքը մեզ փրկեր,
Մե՞նք արյամբ փրկեցինք իրեն:

1992, Երեւան

ՊԱ ԾԻԱՌԱՆԿ

ԵՐԱԽՏԻՔ

Նվիրում եմ բժշկուհի-սրտաբան
Ենթա Աղաքայանին

Վերքիս վրա բալասան են քո մատները,
Քո ժպիտը հույս է դառնում իմ վերքերին,
Մեր դարավոր քնքշանքների արմատները
Նորից ծաղկում, լույս են դառնում քո ձեռքերին:
Երանության աստղաժամ է գալուստը քո,
Հույսի շող է քո խորհուրդը իմաստնալից,
Դու եւ քույր ես, դու եւ մայր ես արեւաթով,
Մեծ Յերացու նժարով ես մեզ կյանք տալիս:
Օրինյալ լինի մեր հայկածին երկիրը մայր,
Որ քեզ ննան արեւներ է աշխարհի բերում,
Մեր հոգսը շատ, մեր ցավը ծո՛վ, ուղին դժվա՛ր,
Սրտիդ հուրը թող ուժ դառնա մեր թեւերում:
Քեզ՝ հողեղեն իրեշտակիդ մի նոր կորով,
Թող ծովանա աստվածային լույսը քո տան,
Մեր դիցուհի Աստոիկն ես դու սիրագորով,
Հրամայիր մեր սրտերին, որ խելքի գան:

13.01.1992

Երեւանի սրտաբանական հիվանդանոց

ՆՎԻՐՈՒՄ

Հայաստանի գրողների միության
Արցախի ազատամարտիկներին օգնող
համձնաժողովի նախագահ,
բանաստեղծութիւն ՄԵՏԱՔՍԵՒԻՆ

Նուրբ մատները թրթռացին եւ թելերը գտան իրար,
Ծիածանի գույների մեջ ձեւավորվեց բրդե գուլպան,
Կարծես տատս էր՝ Աստվածուհի-արեգակը շրթի վրա,
Շունչը խառնած նուրբ թելերին պատնեշում էր
Ճնուան ճամփան:

ՊԱ ԾԻԱՌԱՆԿ

Նուրբ մատները թրթռացին, եւ տողերը գտան իրար,
Պայքարի թեժ երգը ծնվեց՝ հյուսված սիրով սեզ Արցախի,
Ասես Յայոց թագուիին էր, ձեռքը դրած կրծքի վրա,
Պատգամում էր զինվորներին, որ մարտնչեն առանց
վախի:

Իմ տենչերի լույս թեւերով երգն ու գուլպան Արցախ
տարա,
Զինջ աստղերից մաղած ծյունը դեռ խորհում էր
Քիրսա սարին,
Ազատաբաղձ մարտիկը երբ երգն ու գուլպան իր
ձեռքն առավ,
Մի պատմածին խորհուրդ իջավ մրրկաշունչ հին
անտառին:
Քրոջ տաքուկ ափերի պես գուլպան փարվեց քաջի
ոտքին,
Թեւավորող կանչի նման երգը թառավ շրթունքներին,
Մեր մայրերի անբիծ սերն էր ջերմացնում նրա հոգին,
Մեր պապերի սուրբ պատիվն էր վերադառնում
ակունքներին:

Երախտիքի անուշ խոսքեր բերի այսօր ես Արցախից,
Թող մայրերը մեր սիրասուն մարտիկների լինեն վստահ,
Զենքն ու երգը երբ մեկտեղ են արդարության
ճամապարհին,
Մեզ չի լինի ո՞չ պարտություն, ո՞չ սեւ նահանջ եւ ո՞չ
էլ մահ:

1992, Երևան

ԴԱ ՄԻԱՍՆԻ

ԳԵՏԸ

Գետը հոսել է եւ հոսում է լուռ,
իր հին հեքիաթն է պատմում աշխարհին,
Գետը բնության ձայնն է քաղցրալուր,
իր հունն է բացում նա գետավարի:
Ես սիրահարված մի խենթ պատանի,
Զբոսնում էի կանաչ ափերին,
Երազից հյուսված երգն իմ ցնծալից
Փարվուն էր գետի անուշ ծափերին:
Յրաժեշտ էի տալիս ես գետին,
Կարծես նա գնում, իսկ ես՝ մնո՞ւմ եմ,
Սերս թռչում էր՝ իմ սիրտը ծեռքին,
Եվ համբույրներից վառվում, շիկնո՞ւմ էր:
Իմ տարիները անցնում են անհետ,
Երազիս սարը անվերջ ձյունում է,
Զրույց եմ բացել իհմա գետի հետ,
Որ ես գնո՞ւմ եմ, ինքը մնո՞ւմ է...

1992, Երեւան

ՀԱՐՑ

Այսքան կեղծիքն ու դավը
Մենք ինչպե՞ս տարանք,
Հազարամյա մեր ցավը
Հանուն ինչի՞ առանք:
Մեր ո՞ր մեղքի համար է
Այս տառապանքը,
Աստվածն է խորթ ու համառ,
Թե՞ մեզ խարել է կյանքը:

1992, Երեւան

ԴԱ ՄԻԱՍՆԻ

ՄԵՆՈՒԹՅՈՒՆ

Յեքիաթներս ո՞ւր գմացին,
Յեքիաթներս՝ թռվացող,
Երազներս ո՞ւր մնացին,
Երազներս՝ լույսերի ծով:

Կյանքս մի՞թե ակնթարթ էր,
Ինչպե՞ս անցավ, ես չինացա,
Մերթ հորդում էր, մերթ հանդարտ էր,
Ես նրանով միշտ հիացած:

Չինա խորհող իմ հոգու հետ
Դարձել եմ մի մենավոր ժայռ.
Յեքիաթներս՝ կորած անհետ,
Երազներս՝ խեղճ որբեւայր:

1992, Երևան

ԵՂԱԾԸ ԵՂԱՎ

Եղածը՝ Եղավ, ի՞նչ պիտի անես,
Անցած օրերը հետ չես բերելու,
Զնորան ցրտերին ինչ էլ որ ցանես,
Ոչ հնձելու ես, ոչ էլ գերվելու:

Ինչ որ եղել է, պետք է որ լիներ,
Կորցրածի համար երբեք չեն լալիս,
Ճնի տեղ նորը կերտելու համար
Նոր բողբոջներին ավիշ են տալիս:

1992, Երևան

ԱՅՍ ճԱՄՓԱՆ

Ո՞վ է եկել, ո՞վ է անցել այս ճամփով,
Ո՞ւմ է լացել, ո՞ւմ ժպտացել այս ճամփան,
Ո՞ւմ է պահել երազի մեջ տագնապով,
Ո՞ւմ է բերել երջանկություն ու համբավ:
Ո՞վ է քարը քարին դրել այս ճամփին,
Ո՞ւմ ձեռքով է վարդեր հագել այս ճամփան,
Ո՞վ է ջանքով հասել լուսե իր փառքին,
Ո՞վ՝ ալարկոտ դարձել տկլոր մի արքա:
Մարդաղացի ալրափոշին է դնուն,
Ել չհարցնեք ի՞նչ է անում այս ճամփան,
ճամփորդները հար գալիս են ու գնում,
Հավերժության երգն է մանում այս ճամփան:

1992, Երեւան

ԲԵԿՈՐ

«Մարտական խաչ» առաջին
աստիճանի շքամշանակիր
Աշոտ Դուլյանի հիշատակին

Աստոերը խոր հետացին,
Տիեզերքը թպրտաց,
Բյուր ասուպներ տեղացին
Երկինքն ի վար, թեւաբաց:
Սրտերի մեջ վշտակեզ
Փորագրվեց մի անուն,
Հողմը պարեց խենթի պես,
Շոյելով ցավն իր անհուն:
Լացեց երկինքն Արցախա,
Շեկ ժայռերը փուլ եկան,

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Վիշտը ծխի պես մխաց,
Անդունդները շուր եկան:
Ընկերները փոսի մեջ
Հողը լցոին մատներով,
Հողն էր խորհում բազմատեն՝
Աշնանային վարոերով:
Սալյուտ տվին շիրմի մոտ,
Հրեշտակներ իջան ցած,
Վերից օրինում էր Տերը՝
Շուրթը՝ դողդոջ, աչքը՝ թաց:
Նա իր գիրկը բացել էր
Բեկորի դեմ գլխիկոր...
Ողջ Արցախը դարձել էր
Թշնամու դեմ մի բեկոր:

1992, Ստեփանակերտ

ԱՎՈՆ (Երգ)

Ավոն՝ հեռվում ծնված լաճ,
Սասնա կաթով սնված ծուռ,
Թուր Կայծակին բոնող աջ,
Արցախական բախտի դուռ:

Ավոն՝ հայոց ցավի ճիչ,
Ավոն՝ հուսոն ճառագայթ,
Ավոն՝ Արցախ պահող խիղճ,
Ավոն՝ լուսոն նահատակ:

Ավոն՝ Վանա ծովի ջուր-
Մռով սարում կարկաչող,
Ամարասում վառվող հուր,-
Դարերի մեջ չհանգչող:

ԴԱ ԾԻԱՌԱՆ

Ավոն՝ հայոց ցավի ճիչ,
Ավոն՝ հուսոն ճառագայթ,
Ավոն՝ Արցախ պահող խիղճ,
Ավոն՝ լուսոն նահատակ:

Ավոն՝ քաջն զորավար,-
Կյանքը փոխված նոր Ասքի,
Ավոն կապրի դարեդար,
Սրտի խորքում հայ ազգի:

Ավոն՝ հայոց ցավի ճիչ,
Ավոն՝ հուսոն ճառագայթ,
Ավոն՝ Արցախ պահող խիղճ,
Ավոն՝ լուսոն նահատակ:

1993, Մարտունի

ԴԱՐԸ

Արցախի նահատակ
ազատամարտիկմերին

Դարը վերքով բացվեց,
Կվերջանա երգով,
Հերկը լացով թացվեց,
Կզարդարվի բերքով,
Հաղթանակը կգա
Զեր արյունի գնով,
Կյանքը ծփանք կտա,
Զեր ավյունի հունով,
Կապրեք դարերում թեժ,
Խղճով մաքրամաքուր,
Ու կքայլեք հավերժ,
Միշտ առաջին շարքում:

1993, Ստեփանակերտ

ԴԱ ՄԻԱՍՆԻ

ՑԱՎԸ ՆՈՐ

Զահելներ են իհմա զոհվում ամեն օր,
Մեր մի վերքին գումարվում են վերքեր նոր,
Երկնայինը տեսնես ինչպէ՞ս է տանում
Արդարամիտ արցախեցու ցավը նոր:

17.02.1993, Ստեփանակերտ

ՄԻԱՅՆ ՀԵՔԻԱԹՈՒՄ

Անվանի բժիշկ Էղվարդ Ղուկասյանին՝
ծննդյան 60-ամյակի առթիվ

Այդպես լինում է միայն հեքիաթում,
Երբ մեռնող մարդուն պարզեւում են կյանք,
Քանի՛ գիշեր ես մնացել անքուն,
Եվ օջախներին ընծայել բերկրանք:

Այդպես լինում է միայն հեքիաթում,
Երբ մանուկներին բերում են արեւ,
Քանի՛ մանկանց ես փրկել դու կյանքում,
Մայրական հույսի խարույկներ վառել:

Այդպես լինում է միայն հեքիաթում,
Երբ անմար հուր են բերում սիրողին,
Քանի՛ անգամ ես մարտնչել արթուն,
Որ շնչի սիրտը սեր պարզեւողի:

Սիրտդ՝ մաս առ մաս, հոգիդ՝ շող առ շող
Սիրով բաշխում ես արարող մարդուն,
Բժիշկը քիչ է, դարձել ես զինվոր,
Այդպես լինում է միայն հեքիաթում:

24.04.1994, Ստեփանակերտ

ԴԱ ՄԻԱՍՆԻ

ԵՐԿՈՒ ԱՍՏԴ

Միրով՝ ամուսիններ՝ ԼՂՅ գինանշանի
հեղինակ, արվեստի վաստակավոր գործիչ,
պրոֆեսոր Լավրենտ Ղալայանին եւ
հոգեբան-պրոֆեսոր Արգիկ Միսիքարյանին

Երկու աստդ՝ իրար գտած,
Աստղերի լույս ծովը մտած,
Մեկն արվեստի զուլալ մի գետ,
Մեկը՝ հոգու արվեստագետ,
Մեկը՝ շրթին քաղցր տաղիկ,
Մեկը՝ սարի բուրող ծաղիկ,
Դայրենաշունչ չորս լաճի տեր,
Հողը փրկող չորս քաջի տեր...
Երկու աստդ՝ շող ծածանող,
Լուսաժպիտ ծիածանվող,
Ոտքից-գլուխ սիրտ ու հոգի,
Թեւավորող երգի ոգի...
Երկու աստդ՝ իրար գտած,
Ժողովրդի սիրտը մտած...

06.05.1994, Ստեփանակերտ

ՀԱՅՐԱԿԱՆ

Արցախյան պատերազմում անհայտ կորած սիրելի
Նարեկ Ղանիեյանի ժմնոյան 21-ամյակի առթիվ

Գարունը բացվել է, վարդերը թացվել են,
Սոխակը իր երգն է երգում,
Երկինքը հարբել է ու շիկացել է,
Ամեն սիրտ իր սերն է հերկում:
Տարիքդ հասել է գենիթին իր խենթ,
Սեր ունես՝ կարոտի հրում,
Մայրիկդ դարձել է քեզ տուն կանչող ձեռք,

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Յայրիկդ քո Ասքն է գրում:
Ուզում ես՝ նոր բացվող գարնան հետ տուն արի,
Ուզում ես՝ տուն արի աշնան հետ,
Դու մեր սան, մեր զավակ, մեր զինվոր քաջարի,
Միայն եկ, միայն եկ, միայն եկ...

24.03.1994, Ստեփանակերտ

ԽՈՍՔ ԵՐԱԽՏԻՔԻ

Վալերի Բրյուսովի սուրբ հիշատակին

Յայկ նահապետի նիզակակիրն ես,
Արտաշես Մեծի դեսպանն իմաստուն,
Տիգրան Արքայի քաջ պատմագիրն ես,
Վռամշապուհի լուրջ խորհրդատուն:
Մաշտոցի գրի խնկարկուն ես դու
Եվ նուրբ օրիներգուն Վարդանա թրի,
Եղիշեի հետ եղել ես մարտուն՝
Օրինել շառաչը մեր թուր ու գրի:
Նարեկյան Ողբի մեկնիչն ես հմուտ,
Սայաթ-Նովայի երգի ղողանջը,
Տան թամադան ես Մեծն Լոռեցու,
Աբու-Լալայի զանգերի կանչը:
Վահագնից մինչեւ կարոտի Կռունկ,
Բացել ես դուռը մեր հոգու երգի,
Սիրտդ դարձել ես էջմիածնի խունկ,
Ամոքել ցավը մեր խորունկ վերքի:
Սարդարապատված Արցախի որդին
Այսօր իր երգն է դարձնում քեզ պսակ,
Դու՝ մեր քերթության խոսնակ ու ոգի,
Դու՝ հավերժության չքեկվող հասակ:

10.10.1996, Երեւան

ՊԱ ԾԻԱՌԱՆԿ

ԿԱՐՈՏԻ ԿԱՆՉ

Եղբորս՝ Արտաշեսի սուրբ հիշատակին

Արեւադրին լուսինն իջավ,
Արի գնանք նրան հյուր,
ԱՇԽ, մայրիկն է նա մեր բարի,
Մեզ տալու է ջերմ համբույր:

Ուխտաձորը կանաչել է,
Ցուրտ աղբյուրն է կարկաչում,
Այնտեղ դարսած մեր չոր փայտի
Խարույկն է դեռ ճարճատում:

Ճունձն արել են, հասկ կա հողին,
Փունջ են անում, շուրտ գնանք,
Սակայն ծգտենք, որ մութն ընկնի՝
Արտում մենակ չմնանք:

Ուլեր, գառներ հանդից եկել,
Ո՞նց են մայում երազկոտ,
Նրանք զնգուն ու մեղմ ծայնով
Մեզ կանչում են իրենց մոտ:

Մութն իջել է անպի լույսով,
Տանը մեզ են սպասում,
Գնանք տեսնենք անգիր դասը
Մեզնից ո՞վ է լավ ասում:

Կյանքի փեշերն իրար բերել,
Նրա կանչերն եմ փնջում,
Եղբայր, մանկութ մեր օրերը
Կարոտով են մեզ կանչում...

1997 , 9-ը մայիսի, Ստեփանակերտ

ԶՐՈՒՅՑ ԱՆՏԱՌԻ ՀԵՏ

1

Այսօր նստած քեզնից հեռու,
Ին օրերի երթն եմ հիշում,
Խոհերիս մեջ լուր դեզերում,
Խոյանում եմ, զահավիժում:
Մերթ ամպի պես սփռվում եմ,
Մերթ արեւի ննան շողում,
Մերթ առվի պես փրփրում եմ,
Մերթ ուռենու ննան դողում:
Դազար ձեւով, հազար խոհով,
Թեւածում եմ կարոտով կեզ,
Մերթ վախսվորած, մերթ գրոհով,
Քեզ եմ փարվում անձրեւի պես
Եվ հառաչում արար-վարար,
Սակայն մնում միշտ քեզ ծարավ:
Ծարավ, քանզի ին օրորն ես,
Ին թիկունքը, թեւերը ին,
Ին ծիծառը եւ ին լորն ես,
Ին երազը, թեւելը ին:

2

Դու՝ հավերժող, ես՝ գնացող,
Դու՝ տիեզերք, ես՝ դուր մի բաց,
Ես՝ մի ճամփորդ, դու՝ մնացող,
Քո կարոտից սիրսս միշտ բաց:
Ե՞րբ էր, երբ քեզ եկա այցի,
Ին կածանը ինքս բացի,
Ցախսդ առա ին շալակին
Ու խնդրեցի քեզ լալազին,

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Որ այդ հուշը պահես կանաչ,
Արձակեցիր մի խոր հառաջ
Ու լռեցիր... չհասկացա՝
Ինչո՞ւ այնպես շառաչեցիր
Ու մոր ննան հառաչեցիր...
Ճիմա, երբ ես ծերմակել եմ,
Բացել դուռը իմաստության,
Ճաշիվներս երբ փակել եմ
Օրերի հետ իմ խենթության,
Ճասկանում եմ հառաջը քո,
Քո ժպիտը, շառաջը քո:
Դու ո՞ր մեկին հիշես, անտառ,
Մարդը անցվոր, դու հավերժող,
Մարդը սիրո մի քաղցր բառ,
Դու սիրո գետ՝ մահը մերժող:

3

Բայց ի՞նչ արած, պարտական եմ ես քեզ, անտառ,
Ո՞ր զավակն է իր սուրբ մորը մոռանում հար...
Այն ո՞ր մայրն է որդու ցավը սրտից վաճում,
Այն ո՞ր մայրն է որդու վիշտը թեթեւ տաճում:
Ուստի քեզ եմ դիմում, անտառ,
Իմ առաջին սոսափ ու բառ,
Քո կրակով ինձ տաքացնող,
Իմ սիրո գիրկ, իմ սիրո ցող:
Ե՞րբ էր, գարնան մի առավոտ,
Ժպտում էիր դու ծաղկահոտ,
Իմ Սիրո հետ ծոցդ եկա,
Եվ դու դարձար իմ համբույրի միակ վկան:

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Մոռացե՞լ ես միլիոնների շքերթի մեջ
Իմ առաջին համբույրն անշեց:
Հիմա պիտի մեղմ շշնչաս.
- Միայն դու չես գիրկս եկել,
Միայն դու չես համբույր տվել,
Միայն դու չես համբույր առնում,
Համբույրն էլ է, ա՝խ, մահանում:

4

Ե՞րբ էր, անտառ, որ ես հոգնած քնով անցա,
Լույսը բացվեց, մայրս հալվող նի մոմ դարձավ,
Օրինեց կյանքոր, որ փրկել ես ինձ մայրաբար,
Քիչ էր մնում՝ սիրտը հաներ, քեզ նվեր տար:
Հիմա պիտի մեղմ շշնչաս.
- Ո՞վ չի քնել իմ փեշի տակ,
Ո՞ւմ չեմ տվել իմ սիրտը տաք,
Իմ ծննդյան հին օրվանից
Ո՞ւմ չեմ փրկել չար գազանից:

5

Ե՞րբ էր, անտառ, հարսանիքիս թեժ պարեցիր,
Նվազի տակ քո հովերով ինձ փարվեցիր,
Օրինեցիր իմ քաղցր սերը,
Ծփում էին քո փեշերը,
Որ ծնվում է նոր ընտանիք,
Դարձել էիր բակ ու տանիք,
Խորովածի փայտը տվիր,
Ցախը տվիր թարմ լավաշի,
Ուրախացար, երբ նստեցինք
Առավոտյան համով խաչի...
Մոռացե՞լ ես, ե՞րբ էր, անտառ,

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Իմ մտերիմ, դու իմ քնար...
Հիմա պիտի մեղմ շշնջաս.
- Ո՞ւմ չեմ տվել ե՛ւ փայտ, ե՛ւ ցախ,
Հարսանիքին պարել ուրախ:
Ո՞ւմ չեմ բաշխել սյուն ու գերան,
Սովոր փրկել քանի՛ բերան:

6

Հիմա, անտառ, ես ճերմակ եմ, իսկ դու՝ կանաչ,
Ես՝ զավակդ, քո շնչին ու կյանքին ճանաչ,
Գիտեմ, պիտի ճամփես եր ինձ,
Թաց կլինի օրը, թե՝ ջինջ...
Հիմա պիտի մեղմ շշնջաս.
- Ո՞վ չի գալիս, ո՞վ չի գնում,
Ո՞վ է, արդյոք, հավերժ մնում...
Ես էլ ունեմ անկում ու գահ,
Ես էլ ունեմ ծնունդ ու մահ...
Բայց հավերժ ենք մեր հունդերով՝
Մահը հերքող ծնունդներով...

1997, գ. Ակնաղյուր



Աջից՝ Ս. Խանյան, Դ. Բեգլարյան,
Վ. Արրահամյան, Վ. Ջակորյան

ԴԱ ՄԻԱՍՆԻ

ՔՈ ԿՅԱՆՔԸ ՍԽՐԱՆՔ ԷՌ

Արցախի առաջին նահատակներից՝ քաջասիրու
Յուրի Զհանգիրյանի սուլք հիշատակին...

Թշնամին հոշոտեց սիրտը քո,
Երազդ հոշոտել չէր կարող,
ճախրում ես արծվային քո հոգով
Ու փարվում Արցախիդ լուսաշող:

Դու կապրես հայացքում Մռովի,
Դու կապրես ամենքի կրծքի տակ,
Որպես նոր մորմոքը մեր ցավի,
Որպես մի քաջասիրտ նահատակ:

Դու կապրես Թարթառի երգի մեջ,
Դու կապրես մեր մանկանց շրթերին,
Կքայլես՝ հրասիրտ, բազմատենչ
Շարքերում ապագա երթերի:

Դու կապրես քո կերտած գյուղի հետ,
Կծուլվես նրա ծուխս-ծխանուն,
Կծոնեն քո մասին տաղ ու երգ,
Կղառնաս հավերժող սրբանուն:

Քո կյանքը սխրանք էր ու պայքար,
Պայքարդ սկիզբ էր լուս կյանքի,
Քո ճամկան ձգվել է դարեդար
Ու դարձել լուսաստղը քո փառքի:

Օ՛, փառք քեզ, մեր ընկեր, մեր եղբայր,
Քո խոցված մեծ սրտին հազար փառք,
Նոր գյուղդ դարձել է սրբավայր,
Քո անվանք կկերտի մի նոր կյանք:

13.05.1997, գ. Նովսեփիավան

ԴԱ ՄԻԱՍՆԻ

ՄԱՅԱՊԱՐՏՆԵՐԸ

Նվիրում եմ Դայոց բանակի սպարապետ,
Արցախի հերոս, հավերժ մահապարտ
Վազգեն Սարգսյանին

Մահապարտները նահատակների
Հոգուց են հաշնում,
Մահապարտները քաջ-հպարտների
Ոգին են դառնում:
Մահապարտները հաշիվ են մաքրում
ՂՃնի մահվան հետ,
Մահապարտները չարի ակունքը
Զնջում են անհետ:
Մահապարտների պայծառ տենչերից
Աստղեր են ծնվում,
Մահապարտների երազներով ջինջ
Ազգեր են սնվում:
Մահապարտների ոտնահետքերով
Պատիվն է քայլում,
Մահապարտներին հյուսված երգերով
Գալիքն է փայլում:
Մահապարտները վերջակետում են
Ազգի ողբերը,
Մահապարտների մահով փրկվում են
Ազգի որբերը:
Մահապարտները ասքեր են բերում
Մատյան-Գրքերին,
Մահապարտները սրբագրում են
Անգամ սրբերին:
Մահապարտները դրոշ են դառնում
Նոր-անպարտներին...
Դազար երանի մահապարտներին:

05.08.1998, Գանձասար

ՊԱ ԾԻԱՌԱՆԿ

ԿՅԱՆՔԸ ԼԵԳԵՆԴ

«Սասնա ծռեր» ջոկատի ոգի,
«Մարտական խաչ» ասպետ
Սամվել Գետրդյանի սուրբ հիշատակին

Երբ ծնվեց, մանկանը այն
Աստղերը բարուրեցին,
Վշտերով ողջ հայության
Բարուրը պարուրեցին:
Նահապետ Յայկի նետով
Ու թրով Սասնա Դավթի,
Ղարիպի կարոտ երգով,
Նժդեհյան ուժով բազկի,
Օծվեց ու հասակ առավ,
Նորօրյա կանթեղ դառավ:
Մեծ սրտի լույսը ցանեց՝
Մոռվից մինչ Արարատ,
Թշնամուն հեռու վանեց
Դաշտերից մեր ծաղկառատ:
Նա դարձավ երգ ու լեզենդ,
Առասպել դարձավ լույսի,
Գալիքն էլ երախտագետ,
Յեքիաթը իր կիյուսի:

1998, Ստեփանակերտ

ՊԱՊԴ ՄԱՏԱԴ ՔՈ ՆՎԱԳԻՆ

Խվիրում եմ թռոնիկիս՝ Արամ Խաչատրյանի անվան,
միջազգային մրցանակմերի դահնենիր,
դաշնակահար Յայկ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ

Դու հողեղեն, բայց ոգեղեն
Երկինքներ ես բացում ճամփիդ,
ճառագայթող քո մատներով

ԻԱ ՄԻԱՍՆԻԿ

Յնայվել է պոետ պապիդ:
Կոմիտասյան հրով վառված
Յնչյուններն ես բերում ի մի,
Մեղեդածուփ օվկիան դառած
Յոգիդ բորբոք աշխարհ է մի:
Ես տեսնում եմ քո ներկայից
Ծնունդ առնող գալիքը քո,
Գիշեր ու զօր տքնությամբ ես
Ուսկեթրում տալիքը քո:
Աստվածային շռայլաշող
Մի շնորհք կա քո արյան մեջ,
Մեղեդացված նուրբ սրտի դող
Ու ցնորք կա քո արյան մեջ:
Նոր շունչ առած քո երազով՝
Դաշնամուրն է քեզ հետ խոսում,
Մատներիդ լույս թրթռոցով
Յոգիներ ես դու ակոսում:
Քո հայրական արմատները
Խրված են սեգ Սասնա սրտում,
Իսկ մայրական արմատները՝
Արցախական հողի գրկում:
Քո նվագի ծիածանով
Միացրու Արցախ-Սասուն,
Երկրիդ փառքը քո տաղանդով,
Որդիս, դու էլ տար Աստծուն:
Երաժիշտի քո վաստակով
Դու էլ ազգիդ դարձիր սատար,
Յնչեցրու նվագը քո,
Քո նվագին պապդ մատադ:

25 նոյեմբերի, 1998 , Երևանսս

ԼԻՆՈՒՄ Է ԵՎ ԱՅՍՊԵՍ

Առավոտի նման, պայծառ առավոտի,
Զո կրօքի տակ նա իր ջերմ շողերն է լինում,
Կարծես հարյուր տարի եղել է քո կողքին,-
Առեղծված է կյանքը, այդպես էլ է լինում:

Միջօրեի նման, հասուն միջօրեի,
Նա քո սիրտը սիրո կրակով է զինում,
Կարծես ՆԱ է իմաստ տվել քո օրերին,
Առեղծված է կյանքը, այդպես էլ է լինում:

Երեկոյի նման, քնքույշ երեկոյի,
Որպես երազ-հեքիաթ, ՆԱ քո մոտ է լինում,
Զո հայացքն է շոյում՝ նման գարնան հովի,
Առեղծված է կյանքը, այդպես էլ է լինում:

ՆԱ դառնում է տենչանք, տարիների կարոտ,
Եվ հոգուդ մեջ մեկեն փոխվում սիրո գինու,
Տեսիլք դարձած ժպտում՝ գանգուրներին նարոտ,
Առեղծված է կյանքը, այդպես էլ է լինում:

Լինում է եւ այսպես. դու երազի փեշով
Ինքնամոռաց ու խենթ փայփայում ես ՆՐԱՆ,
Անգամ, եթե ճանփադ պարսպում են փշով,
ՆՐԱ ժպիտներն են թեւավորում միշտ քեզ,
Առեղծված է կյանքը, լինում է եւ այսպես:

10.08.1998, Զերմուկ

ԴԱ ՄԻԱՍՆԻ

ԵՐԳԻ ԱՇԽԱՐՀԸ

Վարդան Չակոբյանին՝
ծննդյան 40-ամյակի առթիվ

Երգի աշխարհը
Ծալ-ծալ ու բարդ է,
Նրա մեծ ուղին
Ժայռոտ, անհարթ է...
Ունի բարձունքներ՝
Արեւոտ, անհաս,
Որ երազելով
Կոչում ենք Պառնաս:
Մեկին թվում է՝
Ճասել է նրան,
Նորը գալիս է
Գույներով իրա,
Որդիաբար ժպտում,
Դառնում շանթ, շառաչ,
Ճաստատում, ժխտում
Եվ անցնում առաջ:
Աստիճաններ են
Ճները դառնում,
Նոր բարձունքներ են
Անդադար հառնում:
Մեծ ուղին նորից
Փռվում է անհարթ...
Երգի աշխարհը
Ծալ-ծալ է ու բարդ:

21.05.1988, Ստեփանակերտ

ԸՆԾԱ

Վաստակաշատ հայրենակցիս,
ակադեմիկոս Սերգեյ Աբրահամյանին՝
ծննդյան 75-ամյակի առթիվ

Իմ «Թթու ջուր» աղբյուրից
Սկիզբ առած մի առու,
Քանի գնում՝ կարոտի
Արցունքով է վարարում.
Այդ արցունքի մեջ էլ նա
Հրաշքներ է արարում:

Իմ Դիզափայտ սուրբ սարում
Սեկը կանթեղ է վառում
Եվ կանթեղի շողերով
Խոսքի հերկերն իր վարում.
Ամեն խոսքում բառը չէ,
Նրա սիրտն է բարբառում:

Իմ Քիրսա սեգ սարն ի վեր
Մի Մշակ է բարձրանում,
Կյանքից առած լույս թեւեր,
Մաքառում է, զորանում,
Սիրտը տված տառերին
Ու բառերին բյուրանուն,
Հայոց լեզվի պսակը
Աստծուն ընծա է տանում:

14.02.2000, գ. Տումի

ՊԱ ԾԻԱՄԱՆԿ

ՄԻ ԴԱՐ ԷԼ ԲՈՒԺԻՐ

Ի խորոց սրտի բժիշկ Եղիշե Արայանին՝
նրա ծմնոյան 80-ամյակի առթիվ

Աստղերից իջած ով սուրբ Եղիշե,
Կյանքի լեռնային ջրի պես հռսեց,
Քո բույր գործերից ո՞ր մեկը հիշենք,
Քո մասին սիրով էլ ո՞վ չխոսեց:
Սիրտդ դու հիմա սարերում փնտրիր,
Երազանքներդ՝ սրտերում անթիվ,
Սիրանքիդ Ասքը ինքդ գրեցիր՝
Միշտ էլ անհանգիստ ե՛ւ գիշեր, ե՛ւ տիվ:
Աստված արարեց աշխարհը, մարդկանց,
Իսկ դու փրկեցիր զավակաց Աստծոն,
Բյուր երախտիքի սիրով ես օծված,
Քո հանդեպ սերը ծիկում է ոնց ծով:
Ութսուն գարունըդ առել ես հիմա,
Ինաստությունն է քո դուռը բախում,
Եվ խորհուրդներըդ ջերմ, հոգեհմա,
Քո իմաստության խորքից է բխում:
Քո հանդեպ եղած սերը սրտերի
Թե ի մի բերենք, կդառնա օվկիան,
Ոնց քայլող Աստված՝ գործերով բարի,
Մի դար էլ բուժիր սրտերը մարդկանց:

30.09.1999, Ստեփանակերտ

ԿԵՆԱՑ ԵՐԱԽՏԻՔԻ

Արցախյան ազգային-ազատագրական
պայքարի նահատակների հիշատակին

Թե հարսանիք լինի, տղերք,
Թե տրտմություն, թե ծես,
Դպարտությամբ ու սրտաբեկ

ԴԱ ԾԻԱՌԱՆ

Չենք մոռանում ծեզ:
Ամենաթեժ պահին անգամ
Չեք մոռացել մեզ,
Կմոռանանք ծեզ այն պահին,
Երբ մոռանանք մեզ:
Գայլաբարո թշնամու դեմ
Մեր անվամբ եք կռվել,
Գալիքը մեր արեւադեմ
Չեր արյամբ եք կռւել:
Սանչուկներին մեր նորածին
Կոչում ենք ծեր անվամբ,
Վերելքներում մեր հրածին
Երդվում ենք ծեր արյամբ:
Քայլում ենք ծեր բացած հումով,
Չեր տենչերը ցանում,
Բռունցքվում ենք ծեր անունով
Ու ծեր ցավը տանում:
Վայրէջք լինի ու թե վերելք,
Թե ցնծություն, թե ծես,
Չեր կենացն ենք խմում, տղերք,
Չենք մոռանում ծեզ:

23.09.1999, Ստեփանակերտ

ԲԱՄԲԱՍՈՂՆԵՐԻՆ

Կեղտաջուր են մաղում
Կեղտոտները անդուլ,
Բորբոսներ են աղում
Ու շաղ տալիս բուռ-բուռ:
Սակայն աստված վերից՝
Դարձած լուսի շողեր,

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Անրիծ իր թեւերից
Առաքում է ցողեր,
Որ այդ կեղտուտներին
Գոնե մաքրի մի քիչ...
Մաքուրներին փրկիր,
Աստված մեր ամոքիչ:

06.05.1999, Ստեփանակերտ

ԿԱՐՈՏՈՒՄ ԵՆՔ ՔԵԶ

ժողովրդական երգչուիի
Նախուակի Ալավերդյանին

Երբ դու չես երգում, կարոտում ենք քեզ,
Երբ դու երգում ես, մեզ ենք կարոտում,
Քեզ ժողովուրդն է մեծարում մոր պես,
Չուլվել եք իրար՝ Արցախը եւ դու:
Սոխակ ես եղել, սոխակ էլ մնա՝
Հոգուդ մեջ առած երգդ մանանա:

1999, Ստեփանակերտ

ԿՈՉ

Արեւսարված իմ արեւներ,
Դուրս եկեք նորից,
Իմ Դավիթված նոր Դավիթներ,
Վեր ելեք հորից:
Շապուհված նոր շապուհներ են
Գալիս կրկին մեր դեմ,
Սսրա նոր-նոր մելիքներ են
Ունում՝ անկուշտ, անդեմ:
Հրոսակները ազերական՝
Դին մոլուցքով ցանցառ,
Աչք են տնկել արցախական

ՊԱ ԾԻԱՌԱՆԿ

Մեր օջախին պայծառ:
Իմ Զալալված Զալալյաններ,
Զարկենք նենգ թշնամուն,
Պապենական օրենքն է մեր՝
Պահել օջախ ու տուն:
Մեկի դիմաց տասն է գալիս,
Տասին էլ զարկենք,
Օրենքները մեր պապերի
Պայքարում հարգենք:
Անդրանիկված Անդրանիկներ
Ու Սերոբված քաջեր,
Արյունի դեմ արյուն հեղենք,
Որ թեւածենք դարեր:

1999, Ստեփանակերտ

ՊԻՏ ՄԱՍԻՒՍՎԵՍ ՀԱՎԵՐԺ

Ուխտավորված Ուխտաձորիս
Երանգներին հանգույն,
Աբովյանված իմ տողերում
Բառ չեք գտնի անգույն:
Իմ խոհերը Կոմիտասված
Կարոտից են ծնվուն,
Խորհուրդներս՝ Թումանյանված
Նարոտից են սնվուն:
Իմ Արցախը՝ Խաչենգետված
Ու Թարթառված այգի,
Նահապետված հույս է՝ ծնված
Զիգ աղեղից Յայկի:
Պիտի հասնեմ իմ երազին՝

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Միշտ Սասունված ու թեժ,
Յոգիս ձուլված Մռով-Քիրսին,
Պիտ Սասիսվեմ հավերժ:
Յաղթանակս պիտի շահեմ
Անդրանիկված մարտում,
Մոլախոտված հողս մաքրեմ
Իմ հայրենի արտում:
Իմ Չարենցված տաղարանում
Բառս սիրտ է, երդում,
Երազներն իմ որոնեցեք
Իմ Սեւակված երգում:

1999, Երևան

ՍԱՐԵՐՍ ԵՎ ԵՍ

Սարերիս վրա տունս կերտեցի,
Շերկս հերկեցի սարերիս վրա,
Սարերիս վրա չարը հերքեցի,
Երգս գրեցի սարերիս վրա:

Արտեր վարեցի սարերիս վրա,
Սարերիս վրա լույս անթեղվեց,
Օջախ վառեցի սարերիս վրա,
Սարերիս վրա հույս կանթեղվեց:

Ես եւ սարերս ձուլված ենք իրար,
Ու մեզ բաժանել ոչ ոք չի կարող,
Սարերիս տերն են սարերիս վրա,
Սարերիս նման ամենակարող:

16.02.2000, Ստեփանակերտ

ՍԻՐՈ ԿՐԱԿՆԵՐ

ՀՐՃՎԱՆՔ

Երկինքը կապույտ լեղակ է մաղում,
Պարզաջրում է հայացքը երկրի,
Գետը հրճվանքից քաղցր ծիծաղում,
Յորդորում է, որ անտառը բերկրի:
Արեւի ոսկե ջրվեժն է փայլում,
Սարերն օծվում են շղարշով դեղին,
Թեւերը պարզած կաղնին է քայլում,
Լեռան պշնկին պարում է թեղին:
Օծանելիք է դառնում աղբյուրը,
Սոսին փոխվում է քնքուշ դայակի,
Աշխարհն առել է վարդերի բույրը,
Նոր երգն է զլում այգին դեռատի:
Զարմանքից սիրտս խփում է արագ.
Մի հարց իմ հոգուն խուտուտ է տալիս,
Նայեմ, ինչ տեսմեմ, ո՞վ, վերին Արդար,
Մի հրաշք աղջիկ դեպ ինձ է գալիս:

1988, Ստեփանակերտ

* * *

Առաջին իմ բույրն էիր,
Իմ քաղցր համբույրն էիր,
Ծարավս առա քեզնից,
Իմ կյանքի աղբյուրն էիր:
Երբ չկաս, չեմ ծարավում,
Յոգիս կա, չեմ արարում,
Իմ երգի ակունքն էիր,
Առանց քեզ չեմ վարարում:

20.10.1990, Ստեփանակերտ

ԴԱ ՄԻԱՍՆԻ

* * *

Արեւի շողով եկա,
Աստղերի ցողով եկա,
Քո սրտի թեւերի տակ
Իմ սրտի դողով եկա:

Դու չկաս, շողը չկա,
Դու չկաս, ցողը չկա,
Առանց քո սիրող սրտի,
Իմ սրտի դողը չկա:

1990, գ. Ակնաղյուր

* * *

Քո նվիրած մի ժախտը
Աշխարհի հետ ես չեմ փոխի,
Իմ թխահեր արեւ...
Իմ հոգու մեջ, իմ կրծքի տակ
Հար չխամրող արեւը բարկ
Այդ դու ես վառել:
Քո նվիրած հուր ժախտին
Իմ երգն է գրված,
Քո ժախտը իմ տառապյալ
Սրտից է ծնված:

1990, գ. Ակնաղյուր

* * *

Նստիր իմ դիմաց,
Դիանամ քեզնով,
Կյանքը մոռանամ,
Լիանամ քեզնով,
Սիրո զոհերին
Սիանամ քեզնով...

1990, Ստեփանակերտ

ԴԱ ՄԻԱՍՆԻ

* * *

Դավատում եմ, հեքիաթները
Հորինել են սիրող մարդիկ,
Սերը կյանքում թե չլիներ,
Աստղերն ինչպե՞ս կշողային
Մարդու ճամփին-հեքիաթներում,
Բարին ինչպե՞ս միշտ կհաղթեր,
Չարը ինչպե՞ս կխորտակվեր...
Սերը կյանքում թե չլիներ,
Բանաստեղծը մինչ արշալույս
Ո՞նց կմնար ծարավ - անքուն,
Դավերժական սիրո հուրը
Ո՞վ կբերեր, կհասցներ տուն...
Դավատում եմ, հեքիաթները
Հորինել են սիրող մարդիկ,
Թե չէ սերը չէր ունենա
Դեքիաթներում անհաղթ թեւեր,
Թե չէ կտրիճ սիրողները
Ոչ փարվանա կդառնային,
Ոչ էլ կարող էին թեւել...

1990, Ստեփանակերտ

* * *

Թվում է, թե ետ կգաս,
Առուների հետ կգաս,
Գոնե ծաղկի փոխարկված
Գարունների հետ կգաս:

ԴԱ ՄԻԱՍՆԻ

* * *

Երջանկության դու իմ կաթիլ,
Դու օվկիանոս իմ տխրության,
Երանության դու իմ փաթիլ,
Դու հնձանը իմ փխրության:
Սերդ եկավ ալիք-ալիք,
Երազներս քնքուշ սանրեց,
Դու իմ սիրո պայծառ գալիք,
Ինչո՞ւ կյանքդ շտապ խամրեց:
Ճանդիպումի մի ակնթարթ,
Ճավերժություն՝ բաժանումի,
Զեռքիցս բաց ընկած մի հավք,
Իմ ցաված սիրտ, իմ անտունի:

1991, Ստեփանակերտ

* * *

Արեւն ասաց.
- Քույրս ո՞ւր է,
- Ի՞նչ ես հարցմում,-
Ասի,- զո՞ւր է:
Քույրդ իր հետ
Սիրտս տարավ,
Պիտի մարեմ
Նրան ծարավ:

* * *

Քաղցր հուշերի մի շարան մնաց,
Մի շարան մնաց իմ սրտի խորքում,
Շարանի տերը անցկացավ զնաց,
Պատկերը թողած իմ վառված հոգում:

ԴԱ ՄԻԱՍՆԻ

* * *

Ին բախտի կամարն ես ինձ համար,
Ին կյանքի ամառն ես ինձ համար,
Եվ թեկուզ ինձ հետ չես, սիրելիս,
Աշխարհի աշխարհն ես ինձ համար:

Ոչ սիրում են նորից, ոչ սիրում են կրկին,
Սերը մի անգամ է տրվում մարդուն,
Սերը գարնան վարդ չէ, սերը սիրտ է, մարդիկ,
Չեր սրտի պես պահեք սերը կյանքում:

1991, Ստեփանակերտ

ՔԵԶ ՍԻՐԵԼՈՎ

Արի նստիր մոտս, անգին,
Արի, բացեմ սիրտս քո դեմ,
Արի, պատմեմ հեքիաթն իմ իհն՝
Սիրո հեքիաթն իմ հրաթել:
Մի վախեցիր, արի, անգին,
Չեմ վշտացնի քեզ իմ ցավով,
Իմ կարոտից քամած գինին
Քեզ կընծայեմ սիրո գավով:
Կշոյեմ քո մազերը սեւ,
Թրթռացող իմ մատներով,
Կնվիրեմ քնքշանք ու սեր,
Իմ իին ցավը չմատնելով:
Սիրտը վշտից նրբանում է,
Նա ուրիշին ցավ չի ուզում,
Սիրո գրկում սրբանում է,
Նա ուրիշին դավ չի ուզում:
Չեմ հեռանա քո դրախտից,

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Կխեղիեմ ցավս՝ ինձ տիրելով,
Արի, անգին, թող չար բախտից
Վրեժ լուծեմ քեզ սիրելով:

1991, Ստեփանակերտ

ԱՌԱՋԻՆ ՀԱՅԱՑՔԻՑ

Ն-ԻՆ

Այնպե՞ս բարի ժպտացիր
Եվ այնպիսի՞ հավատով,
Կարծես ջուր ես տվել ինձ
Չո երազի գավաթով:

Զրուցեցիր այնպե՞ս ջերմ
Եվ այնպիսի՞ եռանդով,
Կարծես իմ բախտն ես հյուսել
Չո երազի երանգով:

Այնպե՞ս մտար իմ սիրտը
Եվ այնպիսի՞ նազանքով,
Կարծես սիրո իմ գիրքը
Դու ես գրել քննչանքով:

Սիրտս այնպե՞ս թիրտաց,
Այնպե՞ս դողաց քո հանդեա,
Ասես երազն իմ գտա
Չո ծաղկաբույր անվան հետ:

1991, Ստեփանակերտ

ԴԱ ԾԻԱՌԱՆ

ԴՐԺՈՒՄ

Յոգուս աստղերն առար, տարար,
Ինձ քողմելով ցրտերում,
Քեզ ջերմացնող հուրը մարած
Թափառեցիր սրտերում:
Թափառեցիր անհանգրվան,
Առանց սիրո, առանց տուն,
Յիմա եկել կրծքիս վրա
Որոնում ես խաղաղ քուն:
Մարել են ու մոխիր դարձել
Խոհերս խենթ ու խոհվ,
Աշխ, իզուր ես վերադարձել,
Սպառվել եմ ես լրիվ:
Խաչքարերի պես փոշեծածկ
Իմ հուշերն էլ աղոտ են,
Թող քո մեղքով կրակն ընկած
Յոգուս համար աղոթեն:

1991, Ստեփանակերտ

ՍԵՐ-ԱՍՏՎԱԾ

Մարդ կունենա մի Աստված,
Իմ Աստվածը դու եղար,
Սիրտս քեզ էր լոկ տրված,
Սակայն, ավա՞ղ, դու մեռար:
Որոնեցի մի նոր Սեր,
Նա ինձ Աստված չդառավ,
Մնացի որբ ու անտեր,
Օրինանքներիդ միշտ ծարավ:

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Յավատափոխ ո՞նց լինեմ,
Ո՞նց աղոթեմ ուրիշի,
Ուրիշ Աստված ինձ երեք
Չի՝ ընդունի, չի՝ հիշի:
Թող Աստվածներն ինձ ներեն,
Որ չեմ ընտրում նոր Աստված,
Յավատափոխ ո՞նց լինեմ,
Կապրեմ բախտիս հետ հաշտված:

1991, Ստեփանակերտ

ԶԱՐՄԱՆՔ

Այնպես հեշտ ես սիրում
Եվ այնպես թեթև,
Որ ինձ թվում է, թե
Քեզ զրկել են ցավից...
Այնպես հեշտ ես սիրում
Եվ այնպես թեթև,
Որ թվում է Սերը
Դարձել է մի թիթեռ...
Տե՛ր իմ, այս ի՞նչ արիր,
Զահել նորից վառիր,
Ո՞վ է տեսել Սերը
Անկրակ ու անթեւ...

1991, Ստեփանակերտ

ՍԵՐԵ ԵՐԳՈՂ ԶԿԱ

Երեկ մեր իին Երեւանում
Տեսա մի աղջկա,
Ծվաքի տակ եղրեւանո:
Մի հրաշք էր, որ կար,
Խորհուն էի, տեսնես ո՞վ է,
Ո՞ր դարից է եկել,
Ունքերն աղեղ, աչքերը ծով,
Դայացքը՝ եթեր:
Նարեկացու թաքուն մե՞ղքն է
Աստվածամոր տեսքով,
Թե՞ քուչակի սիրո երգն է
Աղջկա հյուսքով:
Սայաթ-Նովի փերի՞ն է հուր,
Որ կզավթ գեմի,
Դրաշք աղջի՞ն է տերյանալուր,
Թե՞ տեսիլք է մի...
Ծովինա՞րն է մեր ոսկեծան,
Թե՞ խանդուքն է խաթուն...
Իսկ այն ո՞վ էր ասում չկա
Դուրի-փերի կյանքում:
Փերիները ծնվում են դեռ,
Այն աղջիկը վկա,
Փերիներ կան, կա՛ նաեւ սեր,
Սերը երգող չկա:

1991, Երեւան

ԴԱ ՄԻԱՍՆԻ

ՊԱՐԾ

Երիտասարդ բժշկուհի
Գոհար Մկրտչյանին

Զյունը մաղում է վերից,
Վարից դաղում է ցուրտը,
Նա բռնել է իմ թեւից,
Որ չհոգնի իմ սիրտը:

Մշուշների մեջ ձմռան,
Կարծես արեւն է կողքին,
Ասես հուշն է իմ գարնան,
Շողով լցնում է հոգիս:

Վերանում եմ ու թեւում
Իմ երազի կատարին,
Կյանքս մնաց հետեւում,
Գոնե պահն այս երկարի:

25.01.1992

Երեւանի սրտաբանական
հիվանդանոց

ԵՐԱԶԱՆՔ

Մայրամուտի հովի թեւով
Փարվեի ձեր կեռասենում,
Ինձ թաքցներ մութն իր շորով՝
Հույսս վառած կեռասներում:

Ցայգալուսին գայիր թեթեւ,
Հեքիաթային փերու նման, -
Շրթունքներդ՝ վարդի թերթեր,
Աչիկներդ՝ աստղեր վառնան:

ԻԱ ՄԻԱՍՆԻ

Յավաքեիր ու դարձնեիր
Զույգ կեռասներն ականջօղեր,
Խոպոաներիդ տակ թաքցնեիր
Կեռասի մեջ հույսս շողեր:

Ալ օղերիդ՝ մատներդ նուրբ,
Վազվազեիր ծեր այգու մեջ,
Ու քեզ ժպտար կեռասաշուրթ
Հույսս՝ փարված քեզ լուսառէց:

Երկար տեւեր պահն այդ երազ,
Ես հույսի մեջ, դու՝ ժպիտի...
Երազն էլ է անցնում վռազ,
Եվ գաղտնիքը աստված գիտի:

1992, Ստեփանակերտ

ՍՊԱՍՈՒՄ

Աչքերի մեջ քո ծավի,
Կորած աստղերս եմ փնտրում,
Գութ չեմ հայցում քեզանից,
Քեզնից իմ սերն եմ խնդրում,
Իմ այն սերը, որ տվի
Հոժարական ու գժված,
Ո՞նց թողեցիր, որ չվի
Թեւավորը իմ դրժված:
Իսկ ես, իսկ ես՝ խարվածս,
Միամիտ ու աներկբա,
Չո հայացքում խեղդվածս,
Սպասում եմ, որ կգա
Այն պահը խենթ ու խելառ,

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Որ քեզ խելքի կրերի,
Գուցե լցնի ու ծփա
Սիրո բաժակն իմ թերի:
1992, Ստեփանակերտ

ՍԻՐՈ ԿՈՐՈՒՍԸ

Սիրո կորուստն ահավոր է,
Երկրաշարժ է նա հոգու մեջ...
Թեկուզ կյանքը թեւավոր է,
Թեկուզ սիրո հուրն է անշեց,
Մեկ է, սիրո կորուստը քեզ
Գիրկն է առնում մի ցավի պես,
Որ դեղ չունի, չունի հանգիստ,
Չո աչքերին նայում է խիստ,
Քեզ ուղեկցում ճանապարհիդ
Եվ հալածում ամեն պահի:
Ո՞վ դու Վերին, բարությունդ
Մի՛ մոռացիր սիրո ճամփին,
Մահը ժխտիր, լավությունդ
Նրա համար դարձրու արփի,
Խռովելը սիրուց վանիր,
Լույսդ հույսի նման ցանիր,
Մի՛ թող, որ նա շուտ թառամի,
Մի՛ թող մահը նրան տանի...
Մարդուն պահիր միշտ սիրո տեր,
Իմ աղոթքը դա՞ է, ո՞վ Տեր...

1992, Ստեփանակերտ

ԴԱ ԾԻԱՌԱՆ

Մի ԹՈՒԽ ԱՂՋԻԿ (Եղա)

Մի թուխ աղջիկ թխածամ,
Արեւուն է թուխ շորուն,
Ես այդպիսի ծիածան
Դեռ չեմ տեսել իմ օրուն:
Քայլերի մեջ հեզանազ,
Խոսքերի մեջ հնայուն,
Քեզ անուն է մասեմաս,
Երբ աչքերիդ է նայուն:
Մի հրաշք է, մի տեսիլք,
Տիեզերքից իջած ցած,
Աստղաժայտ մի երկինք,
Երազներով ջերմացած:
Ում նա սեր տա, սեր առնի,
Նրան հազար երանի,
Ով կտրիճ է, թող նրան
Սրտի թեւով տուն տանի:

1993, Ստեփանակերտ

ԱՐԵՎԻՐ

Մութի պես երազ բերող,
Լույսի պես ջերմ ու գերող,
Վարդի պես գարնանաբույր,
Ցույսի պես հավերժահուր,
Դու այնպես մեղմ ես ժպտում,
Դու՝ սիրո սիրտն իմ սրտում:

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Դու ինձ մոտ, դու իմ կողքին,
Բորբոքուն դու իմ հոգին,
Բայց ինձնից հավերժ հեռու,
Արեւի նման եռուն,
Դու այնպես մեղմ ես ժպտում,
Դու՝ սիրո սիրտն իմ սրտում:

Ես՝ սիրո համար ծնված,
Ես՝ սիրո իրով սնված,
Ես՝ սիրո Աստված ու Տեր,
Բայց սիրո ծովում անտեր,
Ճարբել եմ քո լուռ սիրով,
Աչքերիդ Կաթնձիրով:

Իմ երազ՝ գարնամահոտ,
Դու բացվող իմ առավոտ,
Իմ սրտի հուրն ես եռուն,
Բայց ինձնից հավերժ հեռու,
Աշխ, գոնե ինձ բարեւիր,
Իմ ջարդված սիրտն արեւիր:

02.01.1994, Ստեփանակերտ

* * *

Երեկ գյուղիս ճամփին տեսա
Մի թուխ աղջկա,
Ասես մի թուխ արեւ տեսա,
Արեւս վկա:
Սիրտս լցվեց երազներով,
Տենչերով հրե,
Թվաց, թե նա իր նազերով

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Ինձ կյանք է բերել:
Սակայն անցավ նա իմ մոտով
Ու չնայեց անգամ,
Ես մնացի ինչպես մոլոր
Գահազրկված արքա:

03.01.1994, Ստեփանակերտ

* * *

Կապրեմ անվերջ սեր տեսչալով,
Սեր երգելով կապրեմ,
Սիրո ծաղկուն պարտեզի մեջ
Սեր հերկելով կապրեմ,
Սեր ցանելով, սեր հնձելով,
Սեր բերքերով կապրեմ,
Սիրո ծառը ջարդողներին
Միշտ հերքելով կապրեմ:

03.01.1994, գ. Ակնաղբյուր

* * *

Լեռնալանջի մի նեղ կածան,
Ինչպես գարնան մի ծիածան,
Ինձ թեւերին առներ,
Իմ առաջին Սերը նորից
Շալն ուսերին փախչեր մորից
Ու ճամփաս պահեր:

Ես խաղայի մազերի հետ,
Ընկերացած նազերի հետ,
Շիկնած բառերի,
Ինչ խոսք էլ որ կիսատ մնար,

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Իմ սրտից ու շրթից գնար,
Զուլվեր տառերին:

Դառնար նամակ ու երգ դառնար,
Գարնան բույրով, բույրով գարնան
Երազս պատմեր,
Կրկին փախչեր, փախչեր մորից,
Խոսքս կիսատ մնար նորից,
Սակայն չհատմեր:

03.01.1994, Ստեփանակերտ

* * *

Ես վառվելով, դու վառելով,
Կարծես հուր ենք մնում, սեր իմ,
Ես սիրելով, դու տիրելով,
Այսպես ո՞ւր ենք գնում, սեր իմ,
Ես արբելով, դու խաբելով,
Այսպես զուր ենք գնում, սեր իմ:

24.01.1994, Ստեփանակերտ

ՊԱ ԾԻԱՌԱՆ

ՄԵՆԱԿ ՄԻ ԹՈՂԻՐ

ԿԱՊՉԱ՝ ՄԱՐԳՈՒՀԱ

1.

Խնդրում եմ, դու ինձ մենակ մի թողիր,
Մենակությանը էլ չեմ դիմանում,
Մենակ փոխվում եմ ձմեռվա շողի,
Ու չեմ հասկանում, թե ինչ եմ անում:
Մենակության մեջ խոհերս են ցրվում,
Ու թիրտում է սիրտս դրանց մեջ,
Մենակ՝ կարոտի ծովի մեջ խրվում
Դառնում եմ վշուր թախծի ելեւէջ:
Ոչ գիրքն է օգնում, ոչ երազելը,
Ոչ հուշերը իմ, ոչ տենչերս նոր,
Ինձ պակասում են քո նուրբ նազերը,
Մենակ մի թողիր դու ինձ ոչ մի օր:
Երբ դու ինձ մոտ ես, թեթև եմ շնչում,
Ինձ ջերմացնում են խոհերս անթիվ,
Կյանքի զանգերը քնքուշ են հնչում,
Սիրո երազը շոյում է հոգիս:
Խնդրում եմ, խնդրում, մենակ մի թողիր,
Դողում է սիրտս մենակությունից,
Թեկուզ երգը ուժ ունի փրկողի,
Առանց քեզ անգամ երգն է լքում ինձ:

23.01.1994, Ստեփանակերտ

2.

Դու աստղերից իջած իմ շող,
Ճուրդ թողած տիեզերքում,
Դու վարդաբույր վերջին իմ ցող,
Իջած սիրո իմ եզերքում:

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Կանաչներդ հովին տված,
Աշնան գույնդ ընծայած ինձ,
Դու իմ երգը դեռ չգրված,
Իմ ցավ՝ ծնված իմ իսկ ցավից:
Իմ երազի վերջին վառ էջ,
Ինձ ջերմացնող վերջին արեւ,
Իմ հառաչի նոր ելեւէջ,
Ինձ փայփայող աստծո նվեր:
Տուր ինձ սրտիդ թրիոները,
Սիրտս քոնն է ամբողջովին,
Իմ գունաթափ պարտեզի մեջ
Թող երազս տան քո հովին:
Թող մեր կյանքը սիրո գրքի
Ավարտի պես լինի գերող,
Սերունդների երազներին
Նոր դաս ու նոր բաղձանք բերող:

11.01.1994, Ստեփանակերտ

3.

Այս անհանգիստ օրերում,
Այս տագնապի, ցավի մեջ,
Քո զմրուխտյա շորերուն
Դու ես լույսը իմ անշեջ:
Սփոփում ես իմ սիրտը
Քնքշանքներով քո ջերմին,
Մի աշխարհ է քո գիրկը,
Սիրո աշխարհ՝ նոր ու հին:
Աղոթում եմ ամեն օր
Ես լուսածին քո մորը,
Սուրբ են նրա փայփայած

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Օրորոցն ու օրորը:
Ինչ կորցրել եմ իմ ճամփին,
Գտնում եմ քո բառերում,
Դու իմ տենչն ես, իմ արփին,
Մեր աստղալից սարերում:
Բախտին ու բախտ գրողին
Երախտիքն եմ իմ հայտնում,
Որ իմ սրտի նուրբ դողին
Շողդ է տվել անհատնում:
Այս անհանգիստ օրերում,
Այս տագնապի, ցավի մեջ,
Քո զմրուխտյա շորերում
Դու ես լույսը իմ անշեջ:

16.02.1994, Ստեփանակերտ

* * *

Լուսե հայացք՝ խորքում թախիծ,
Թախծոտ հայացք՝ լույսը խորքում,
Վաղուց-վաղուց գերում ես ինձ,
Դարձած սիրո հույսն իմ հոգու:
Ճուշ դարձնելու հնար չկա,
Ճնար չկա հեռանալու,
Տառապանքիս շունչը վկա,
Ճնար չկա մոռանալու:
Կարուտներիս մոմք վառած
Թախծոտ հայացք՝ խորքում արեւ,
Ա՞ն, մեղքերս արած-չարած,
Այս, իմն են, քոնն են նաեւ:
Սիրո հրին պետք չէ ցանել
Ոչ դառն խոսք ու ոչ կատակ,

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Սիրո ճամփից պետք է վանել
Կարկտաբեր մշուշ ու ամպ:
Լուսե հայացք՝ ինձ միշտ կանչող,
Թախծոտ հայացք՝ ինձ միշտ տանջող:

16.03.1994, Ստեփանակերտ

* * *

Ցողաթաց ամպի հետեւ
Լուսինն է սահում թեթեւ,
Յուշ դարձած Սերս է ասես
Խոհեմիս անհուն ծովում,
Նա այնպես լուսերես էր
Եվ այնպես աղավնաթեւ,
Որ լուսնի շափաղ տալուց
Ին ցաված սիրտն էր դողում:
Ի՞նչ ասեմ ես բնության
Անարդար օրենքներին,
Ա՞յս, սերը լիներ անմահ,
Լուսինը մահկանացու:
Կարոտով միշտ նայեի
Նրա լույս աչք-ունքներին,
Ասեի՝ սերն ապրում է,
Լուսինն է միայն անցնում:
Ցողաթաց ամպի հետեւ
Լուսինն է ժպտում թեթեւ,
Այս, ինչո՞ւ լուսնի տեղակ
Սերս չէ աղավնաթեւ:

18.03.1994, գ. Ակնաղբյուր

ՊԱ ԾԻԱՌԱՆԿ

Ո՞Վ ԿԾՈՅԻ

Նորից եկել, կանգ եմ առել
Մեր լեռնային առվի ափին,
Նա հուշերն իմ գիրկը առել
Ու խառնել է երգ ու ծափին:
Որոնում եմ իմ Առաջին
Սիրո հեւքն ու ձայնը զնգուն,
Բայց արձագանք չկա կանչիս,
Շոյանք չկա վառված հոգուս:
Ոտնահետքերն անգամ չկա,
Դեռուներն է տարել առուն,
Լոկ իմ հուշն ու ափն են վկա,
Մեկ էլ սիրտը իմ գալարուն:
Ու նայում եմ, անթարթ նայում,
Դեռուն թռչող առվի մովին,
Ինձ կանչում է նա հմայուն՝
Տանում իր հետ, մերվում ծովին:
Ու վառվում եմ՝ այս աշխարհի
Ինձ պարզեւած երազ սիրով,
Եթե մի օր ձուլվեմ առվին,
Ո՞վ կշոյի հուշն իմ սիրո:

17.02.1994, գ. Ակնաղբյուր

ՄԵԿԸ ԶԵՂԱՎ

Աստղածախտ Աստղիկին

1.

Ապաշխարում եմ եւ խորհում լոին,
Թե այս Աստղիկը ո՞նց իջավ երկնից,
Այնաևս է կաել գորին ու գրին,
Որ քիչ է մնում սիրտս տամ հրին:

ՊԱ ԾԻԱԾԱՆ

Երանի նրան,ով Աստղիկ ունի,
Ով Աստղիկ ունի, նա Արեւ ունի:

2.

Մեկը չեղավ խելքի բերեր ինձ կյանքում,
Ասեր՝ սիրո օվկիանոսը մի մտիր,
Սիրո ծովում պիտի լինես միշտ արթուն,
Սիրո ճամփին պիտի դառնաս միշտ ջրկիր:
Ես մեղք չունեմ, մեղավորը Վերինն է,
Որ ինձ մանկուց բարուրել է սիրո մեջ,
Ա՛խ, ի՞նչ անեմ, գեղեցկության գերին եմ,
Սերը սրտիս ատրուշանն է հրաշեց:
Աստղ եմ տեսնում, կորած սերս եմ որոնում,
Աստղալույսում սիրուս շողն է փարվում ինձ,
Աստղալույսով սիրո երգս եմ հորինում
Ու սիրո մեջ խենթանում եմ ես նորից:
Մարդիկ, երբ էլ Աստղ տեսնեք, օրինեցեք,
Աստղի շողը խենթացրել է ինձ նորից,
Լույս Աստղիկը սրտիս դռներն է բացել,
Ես մեղք չունեմ, սերն Աստվածն է տվել ինձ...

3.

Կարոտում եմ աստղալույսիդ,
Իմ աստղահեր, սրտիս ժպտա,
Քո ժպիտը, նման ցողի,
Ինձ բերկանքի ավիշ կտա:
Այս մշուշի, խավարի մեջ,
Դու իմ բախտի աստղը դարձիր,
Քո հրայրքով աստղաառէջ,
Երազներիս դուռը բացիր:
Չար աշխարհի թոհ ու բոհում

ՊԱ ԾԻԱՌԱՆՆ

Դարձիր վառվող հոգուս հենակ,
Իմ սիրո դեմ, չար գրոհում,
Ինձ մի թողիր տխուր, մենակ:

Դարձիր հույսը իմ աստղալուս,
Գոնե հեռվից սիրտս շոյիր,
Թող քո անվաճք իմ աստղահյուս
Երգը սիրող սրտեր թովի:

20-22.06.1995, Ստեփանակերտ

ԵՐԱՆԻ
Ն-ՀԱ

Աշխարհ անցա, Արցախի պես երկիր ու հող չտեսա,
Արցախական երկրում փայլող արեւի շող չտեսա,
Աստղածպիտ աղջիկների շարքերի մեջ լուսափայլ,
Քո հայացքի նման երազ ու սրտի դող չտեսա:

Աստվածային ծաղիկ ես դու, հոգեհմա բույրերով,
Ճոգեպարար տաղիկ ես դու, իրեշտակի թեւերով,
Ուր էլ լինես, քեզ տեսնողը պիտի վառված շշնջա,
Գարնանային շաղիկ ես դու, ծիածանի թույրերով:

Քեզ նմանը աշխարհ բերող նուրբ մայրերին երանի,
Ժախտներդ կրծքին կրող սուրբ վայրերին երանի,
Բանաստեղծը նայեց-վառվեց, վառվեց-նայեց
քո տեսքին,
Ասաց՝ սրտիս վրա թողած քո քայլերին երանի:

04.04.1995, Ստեփանակերտ

ԴԱ ՄԻԱՍՆԻ

ԷՔՍՊՐՈՍ

Մարգարիտային

Մարգարիտա, սիրելիս,
Այնպես մեղմ ես դու ժպտում,
Քո այդ ջերմին ժպիտից
Մի շող առնեմ իմ սրտում,
Տանեմ Արցախ իմ աշխարհ,
Որպես մասունք ու նշխար՝

30.07.1997, Զերմուկ

ՄԵՂՅԱ ՆԵՐԵՒՐ

Ծովիկին

Ծովիկ, ծովաչ Ծովինար,
Ունենայի մի հնար,
Ուկի ձկնիկ բերեի
Եվ քո սիրտը գերեի,
Համբուրեի քեզ հանկարծ...
Եվ դու մեղքս ներեիր...

20.10.1997, Գորիս

ԿԱՊՈՒՅՑ ԱՉՔԵՐ

Արմիմեին

Կապույտ երկինք, կապույտ աչքեր,
Կապույտ ծով,
Կապույտ երազ, կապույտ մուրազ
Հրացոլք:
Կապույտ ծաղիկ, կապույտ ծիծաղ
Ու նարոտ,
Ին կապուտաչ... կապին հեռվում

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Քեզ կարոտ:
Կապույտիդ մեջ օրորվել եմ,
Ծարավել,
Կապույտիդ մեջ մոլորվել եմ
Առավել:
Թուխ երազս օծել ես դու
Կապույտով:
Երանի այն օր ու ժամին
Ես կասեմ,
Երբ քո կապույտ համբույրներին
Սպասեմ...

28.07.1997, Զերմուկ

* * *

Յոգուս երկնքում առաջին անգամ
Մի աստղ վառվեց,
Արյունս եռաց, սիրտս ինքնակամ
Այդ աստղին փարվեց:
Սիրո մի աղբյուր երգեց կրծքիս տակ՝
Շողոտ, աստղածին,
Բայց հազար ափսոս, նաեւ այս անգամ
Ծարավ մնացի:

1998, Ստեփանակերտ

ԽՈՍՀԻՐ

Խոսիր, խոսիր, ձայնդ լսեմ,
Զերմացնեմ քեզնով հոգիս,
Երբ խոսում ես, թվում է, թե
Տիրամայրն է կանգնած կողքիս:

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Ժպտա, ժպտա արեւի պես,
Քո շողերով լցրու գիրկս,
Այդ դու վաղուց, վաղուց գիտես,
Քո ժպտով է ծաղկում սիրտս:

Ին վառ երազ, բայց ուրիշի
Ծիածանում մի օր վառված,
Դու կրակը իմ բորբ հուշի,
Բայց ուրիշի հոգուն վարված:

Այս, ի՞նչ ասեմ բութ աշխարհին՝
Տառապանքը միշտ համբերող,
Մեկի սրտում սերն է վառում,
Մեկին տալիս բախտը բերող:

22.09.1999, Ստեփանակերտ

ԱՐԵՎԱՐԻ ճԱՄՓԻՆ

Ա.

Շաղիկը դու ես,
Քարափը ես եմ,
Շաղիկը դու ես,
Շովափը ես եմ,
Հյուսիսը դու ես,
Հարավը ես եմ,
Անձրեւը դու ես,
Շարավը ես եմ...

Բ.

Երբ էլ, ուր էլ ինձ կանչես,
Վազելով կգամ,
Բայց չասես. «Խենթ է»:
Եթե ճամփան փակ լինի,

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Սարերով կգամ,
Բայց չասես, «ԽԵՆՔ Է»:
Սիրտս քնար դարձրած,
Երգերով կգամ,
Բայց չասես. «ԽԵՆՔ Է»,
Շռայլ ցանած տենչերիս
Հերկերով կգամ,
Բայց չասես. «ԽԵՆՔ Է»,
Շուշիս երգը դեպի քեզ
Երկնելով կգամ,
Բայց չասես. «ԽԵՆՔ Է»...

Գ.

Դու իմ խոհերի
Թեւավոր թռչուն,
Կապույտ ծովերի
Շառաչ ու հնչուն,
Իմ երազների
Անմարում տաղիկ,
Իմ նուրբ հրաժեշտ,
Իմ սիրո ծաղիկ...
Թվուն է, թե միշտ
Քեզնով եմ թեւել,
Իմ փլատակված
Սիրո նոր թեւեր...

Դ.

Սարին ամպ է իջել,
Փույթ չէ, ինձ հետ ես,
ճամփին զամպ է իջել,

ԴԱ ՄԻԱՍՆԻԿ

Փույթ չէ, ինձ հետ ես:
Աստղը չի փայլիլում,
Փույթ չէ, ինձ հետ ես,
Կյանքը սիրտս է քրքրում,
Փույթ չէ, ինձ հետ ես...

1987-1999, Դադրութ

ՄԵՂԱՌ-ՄԵՂԱՌ

N-ին

Պատաշօ-պատաշօ եղավ սիրտս,
Փշուր-փշուր՝ սիրտս եղավ,
Նա գերել է ուշքս ու միտքս,
Մեղքիս համար մեղաՌ-մեղաՌ:

Գիրք եմ կարդում՝ նա ինձ հետ է,
Քուն եմ մտնում՝ նա ինձ հետ է,
Կարծես կյանքս մեղքի գետ է,
Մեղքերիս մեջ նա մահնանա:

Մեղքը քոնն է, միակ՝ Վերին,
Դու ես հոգիս դարձրել հնոց,
Սեր ընծայել իմ թեւերին,
Սիրտս դարձրել կրակ ու բոց:

Ու վառվում եմ, վառվում իիմա,
Նրա սիրով, նրա համար,
Պաղատում եմ, տուր ինձ, Տե՛ր իմ,
Փրկության մի ճար ու հնար:

ԴԱ ՄԻԱՍՆԻ

Պատահապատահ եղավ սիրտս,
Փշուր-փշուր՝ սիրտս եղավ,
Թե սիրելը մեղք է, Աստված,
Սեղք ներիր՝ մեղա-մեղա:

18.11.1999, Ստեփանակերտ

ՍԻՐԱՅԱՐ ԵՄ

Սիրահար եմ սիրո քաղցր հանդիպումի,
Սիրո անվերջ տառապանքի սիրահար եմ,
Սերս կյանքի առասպելված իմաստն ունի,
Թեկուզ նրա դաժանությամբ սիրահար եմ:


Սիրահար եմ ժախտներին աղջիկների,
Իր շողերը նրանցից է արեւն առել,
Ժախտներն այդ անտեսողին ես չեմ ների,
Սիրո բարի օրինանքով եմ Աստված դառել:

Սիրահար եմ աղջիկների խանդերին տաք,
Այդ խանդերի թեժությամբ եմ դարձել պոետ,
Խանդն աղջկա՝ ե՛ւ սատանա, ե՛ւ հրեշտակ,
Գիշեր ու տիկ խաղ է խաղում իմ սրտի հետ:

Սիրահար եմ խենթացնող հանդիպումի,
Խանդաժպիտ սիրո պահի սիրահար եմ,
Սերս խանդոտ սիրով օծված լեգենդ է մի,
Խանդից վառվող սիրո ջահի սիրահար եմ:

28.02.2000, Ստեփանակերտ

ԹԵՂԱՎԱՐԻ ԴԱՄ ԿՑԱՆՔ (1970-2006)



Գինու կուժը ես առա ու նստեցի այգու մեջ,
Ասես կյանքի հուշն առա ու նստեցի այգու մեջ,
Կուժն ինձ ասաց. «Խայամի երգող սիրտն եմ,
բանաստեղծ»:
Ես խայամի ուժն առա ու նստեցի այգու մեջ:

ԽՈՐԵՐԻ ԱՇԽԱՐՉՈՒՄ

Գինու կուժը ես առա ու նստեցի այգու մեջ,
Ասես կյանքի հուշն առա ու նստեցի այգու մեջ,
Կուժն ինձ ասաց. «Խայամի երգող սիրտն եմ, բանատեղձ»:
Ես Խայամի ուժն առա ու նստեցի այգու մեջ:

* * *

Մեծ Լոռեցի, ասացիր. «Ո՞վ իմանա, ո՞ւր ընկանք,
Սերն ու սիրտն էլ երբ չկա՝ կըրա՞կ ընկանք, զո՞ւր ընկանք»:
Կյանքը շեն է ու առատ, ե՛ւ սերը կա, ե՛ւ սիրտը,
Ելի քեզ պես հարցնում ենք. «Քանի՞ օրվա հյուր ընկանք»:

* * *

Ի՞նչ են հուշում ճամփաները,
Քնած մուժում ճամփաները,
Ա՞խ, անողոք ժամանակներ,
Ինձ չեն հիշում ճամփաները:

* * *

Կյանք, այս ի՞նչ է, ինձ թվում է օր՝ տարին,
Բարով բերիր մեր աչքի լույս նոր տարին,
Բայց մեր բոլոր երազներին չհասած,
Ինչո՞ւ թռավ, գնաց մեր հին՝ լոր տարին:

ԹՇԱՎԱՊՐ ԴԱՌ ԿՑԱՆՔ

* * *

Այս նոր տարում թող կարկաչեն կարոտներս,
Ծլարձակվեն ու կանաչեն արոտներս,
Հողագնդի սիրողներին որպես պսակ,
Շռայլասիրտ թող բաժանեմ կարոտներս:

* * *

Թող հավիտյան խաղաղ ծփան ալիքները աշխարհի,
Հունդերի պես առողջ ծլեն գալիքները աշխարհի,
Կոիվ ու վեճ թող վերանան, չարը կորչի առհավես,
Հորով-մորով հասակ առնեն բալիկները աշխարհի:

* * *

Մի հունդ եմ ես, հազար դառնամ ու մնամ,
Զուլվեմ կյանքին, մի զառ դառնամ ու մնամ,
Իմ վաստակով ժողովրդի սրտի մեջ
Մռովի պես մի սար դառնամ ու մնամ:

* * *

Մարդու հանդեա սուրը մարդն է,
Մարդու հանդեա ջուրը մարդն է,
Ինչքան էլ չար, նախանձ լինի,
Էլի կյանքի հուրը մարդն է:

* * *

Ուղիղ գնամ սլացքի պես,
Թեւեր առնեմ ասքի պես,
Թե մայր հողին խոնարհվել կա,
Թող խոնարհվեմ հասկի պես:

ԹՇԱՎԱՊՐ ԴԱ ԿՑԱՆՔ

* * *

Կյանքը գետ է, հոսուն է հար,
Նա չի կանգնում, հոսում է հար,
Լավ անունից ու լավ գործից
Ժողովուրդը խոսում է հար:

* * *

Յայրենական դաշտերին կյանք պարգետող հերկ եմ ես,
Սեղանները զարդարող անուշահամ բերք եմ ես,
Բյուր սրտերից եմ փնջել երազներն իմ լուսավառ,
Սերունդների շուրթերին դարեր ապրող երգ եմ ես:

* * *

Երգիչ եմ՝ երգին փարված,
Մշակ եմ՝ հերկին փարված,
Երգ ու հող մեկ են իմ մեջ,
Գալիքի հերքին փարված:

* * *

Կեղծ սիրո տեր չեմ դառնա,
Անծաղիկ լեռ չեմ դառնա,
Ինչքան էլ կյանքն ինձ ժպտա,
Աշխարհին բեռ չեմ դառնա:

* * *

Առանց ջրի փխրուն հողն էլ ճաք կտա,
Մի հավատա դու թշնամուն, խափ կտա,
Բարեկամով, ընկերով է մարդը մարդ,
Ո՞վ է ասել, թե մի ձեռքը ծափ կտա:

ԹԱՎԱՎՈՐ ԴԱՌ ԿՑԱՆՔ

* * *

Ամեն քայլիդ նախանձում է, ի՞նչ ընկեր,
Նախանձելուց նա խանձվում է, ի՞նչ ընկեր,
Երբ մեկը քեզ մի ծաղիկ է նվիրում,
Ժպտալու տեղ նա տանջվում է, ի՞նչ ընկեր:

* * *

Բարի էի, ես վատություն չիմացա,
Դատարկաձեռ հպարտություն չիմացա,
Ոստիմներս իմ դեմ ժանիք սրեցին,
Արդար էի, ես պարտություն չիմացա:

* * *

Մարդիկ, ասեք, ո՞ւր գնացին գարուններս,
Սեր չգտա, լուր գնացին գարուններս,
Բա՞խտն էր անգութ, թե՞ ես կյանքը չհասկացա,
Թեւին տվին, զուր գնացին գարուններս:

* * *

Աղբյուր դառնամ, ջուրս մնա աշխարհին,
Նահատակվեմ, սուրս մնա աշխարհին,
Վառվեմ անվերջ, հալվեմ գիշեր ու ցերեկ,
Կյանքից գնամ, հուրս մնա աշխարհին:

* * *

Ով մոլախոտ, ե՞րբ ես դու վարդ դառնալու,
Տատասկ, ասա, ե՞րբ ես դու զարդ դառնալու,
Փոխվեց կյանքը, տիեզերքն էլ հերկեցինք,
Ով չարամիտ, ե՞րբ ես դու Մարդ դառնալու:

ԹԵՂԱՎԱԴՐ ԴԱ ԿՑԱՆՔ

* * *

Սեղանս՝ հացով, աղով,
Տիրեցի՝ թեկուզ տաղով,
Ընկերներս ներս մտան,
Տունս լցվեց ծիծաղով:

* * *

Մայր հողագունդ, դարձած նավ՝ սիրտս է լողում քեզ համար,
Շատ են չարերն աշխարհի, սիրտս է դողում քեզ համար,
Յայրենիքը իմ հզոր քեզ պաշտում է որդու պես
Ու քո խաղաղ շնչի հետ հույսս է շողում քեզ համար:

* * *

Հոր համբավը չի հարգում,
Մոր վիշտ-ցավը չի հարգում,
Նա այնքան է վայրենի՝
Իր անցյալը չի հարգում:

* * *

Սառած սրտին հուրն ի՞նչ անի,
Առանց բազկի սուրն ի՞նչ անի,
Երբ քնած են ծաղիկները,
Մի ձնծաղկի բույրն ի՞նչ անի:

* * *

Քո երազած երթն էլ կգա, մի շտապիր,
Գրավելուդ բերդն էլ կգա, մի շտապիր,
Դեռ քեզ կանչող քանի՛ երազ առջեւում,
Հրաժեշտիդ հերթն էլ կգա, մի շտապիր:

194

ԹԱՎԱՎՈՐ ԻՄ ԿՑԱՆՔ

* * *

Ծառ ու ծաղկի այգի դարձած ձորերն իմն են,
Թուխ աչք-ունքով, երջանկացած նորերն իմն են,
Կյանք են առել երազները մեր քաջ պապերի,
Դեպի գալիք թեւին տվող օրերն իմն են:

* * *

Մարդիկ, ելեք ծովը նետեք բոլոր գենքերն աշխարհի,
Թող խորտակվեն կռվի օջախս բոլոր բերդերն աշխարհի,
Երջանկության բաժակներում աստղերից հյութ կքամեն,
Թե բուռնցքվեն չարերի դեմ բոլոր ձեռքերն աշխարհի:

* * *

Սայաթ-Նովի տառապանքում սիրահարը ես տեսա,
Իր փայփայած այգեստանի բերքն ու բարը ես տեսա,
Նա հանճար էր՝ ինաստնացած ժողովողի մեծ փորձով,
Նրա անմահ երգերի մեջ ամբողջ դարը ես տեսա:

* * *

Գրիչ, ընկեր դու իմ իին,
Իմ սրտակից, իմ ուշիմ,
Յոգուս գանձը ես քեզ տամ,
Իսկ դու հանճնիր ուրիշին:

* * *

Մայր եմ կանչում, ծայն չկա,
Դայր եմ կանչում, ծայն չկա,
Դին, ավերված օջախում
Վայ եմ կանչում, ծայն չկա:

ԹԱՎԱՎՈՐ ԻՄ ԿՑԱՆՔ

* * *

ճամփաները չեն հնանում,
Անտառները չեն հնանում,
Հերոսներն են գալիս, գնում,
Համբավները չեն հնանում:

* * *

Կպայքարեմ գույժի դեմ,
Մշուշի դեմ, մուժի դեմ,
Թշնամիս է՝ ով ելնի
Ժողովրդիս ուժի դեմ:

* * *

Ինձ իմ դարն է օրոր ասել, խղճտանքի ընկերն եմ ես,
Մրրիկներն են թրծել հոգիս, համառ ջանքի ընկերն եմ ես,
Ոտքերիս տակ հողն հայրենի, սրտիս խորքում՝ հավատ վառ,
Ինձ չեն գետնել ու չեն գետնի, աշխատանքի ընկերն եմ ես:

* * *

Այս մեծ դարում մանրանալը ինչի՝ է պետք,
Դատարկ հոգով «ծանրանալը» ինչի՝ է պետք,
Երբ աշխարհի բախտն է կախված հզոր ծայմից,
Զարերի դեմ համրանալը ինչի՝ է պետք:

* * *

Եվ չարի դավը կտանի,
Եվ բարու լավը կտանի,
Բոլորի համար է նա ծնվել,
Բոլորի ցավը կտանի:

196

ԹԱՎԱՎՈՐ ԻՄ ԿՑԱՆՔ

* * *

Կյանքս ուրախ քեֆում կանցնի, ո՞վ եմ ես,
Ամեն մեկն ինձ ուշք կղարծնի, ո՞վ եմ ես,
Իսկ երբ տեսնեն ծաղիկները իմ ցանած,
Հավատում եմ, կճանաչեն՝ ո՞վ եմ ես:

* * *

Սիրողների ճամփաներում ցող ու արեւ ես եմ, ես,
Նրանց ջերմին համբույրներում դող ու արեւ ես եմ, ես,
Հազարամյա լեգենդներում դարձած հուշ ու հիշատակ,
Սերունդների սերը սնող հող ու արեւ ես եմ, ես:

* * *

Հազար տարվա մուսան եկել ու թառել է իմ հոգուն,
Սրտիս անմար կրակներով նա վառվել է իմ հոգուն,
Ինչքան էլ որ ճիգ եմ թափում, չի հեռանում ինձանից,
Իմ առաջին սիրո նման նա փարվել է իմ հոգուն:

* * *

Գիշերային ուշ պահին մտքիս թեւերն եմ պարզում,
Հաղթանակող մեր դարին խղճիս թեւերն եմ պարզում,
Բոլոր չարերն ատելով, բարին դարձրած դրոշակ,
Արարատված իմ երկրին սրտիս թեւերն եմ պարզում:

* * *

Այս իին աշխարհը մեզնից առաջ եղել է, գիտենք,
Մարդկային միտքը այս իին աշխարհը պեղել է, գիտենք,
Սակայն այն մի՛տքը ուժ կհամարվի, երբ սերունդները
Ասեն՝ չարերին հանուն արդարի նեղել է, գիտենք:

ԹԱՎԱՎՈՐ ԻՄ ԿՑԱՆՔ

* * *

Լույսից ծնված անուրջն է լավ,
Անուրջ սնող մեծ ուժն է լավ,
Միլիոն սրտերն իրար կապող
Եղբայրության կամուրջն է լավ:

* * *

Կյանք մտնելու օրվանից մարդն աշխարհը ծուռ տեսավ,
Մեկին դաժան տիրակալ, մեկին խեղճ ու լուռ տեսավ,
Եկան բազում հանճարներ, մտքի ջահեր վառեցին,
Եվ մարդը իր հոգու մեջ ազատության հուր տեսավ:

* * *

Կռունկների երամից մի մայր կռունկ ընկավ ցած,
Կարծես երկնի վզնոցից ճերմակ ուլունք ընկավ ցած,
Նրա վերքը ես տեսա, մորս մահը հիշեցի,
Արցունքներս այրվելով ուլունք-ուլունք ընկան ցած:

* * *

Ով դու մարդուկ, նորի դեմ ցասումդ խորն է,
Դարի հաղթարշավի դեմ նվալդ ո՞րն է,
Սուր ես առել գարնան դեմ, ճոճում ես անվերջ,
Ինչի էլ որ ձեռք մեկնես, հաղթողը նորն է:

* * *

Մեր հին ու նոր երգերի հունչով եմ հարուստ,
Հայրենական արտերի հունձով եմ հարուստ,
Թե մի երգ էլ ես գրեմ, փայփայեմ մի հասկ,
Սերունդներին կավետեմ. «Ինձնով եմ հարուստ»:

ԹԱՎԱԿՈՒՐ ԴՄ ԿՑԱՆՔ

* * *

Բոլոր-բոլոր արբունքներում հողի, կյանքի արբունքն արժե,
Առատ բերքի ճամփան բացող խաղողենու արցունքն արժե,
Լուսի համար ու հավատի, ժողովրդի բախտի համար,
Անգամ արյան գնով լինի, քո գրաված բարձունքն արժե:

* * *

Երբեք անհոգ ես չապրեցի, կյանքս անցավ հոգսերի մեջ,
Մաքառեցի, տիսրությունս բերկրանք դարձավ հոգսերի մեջ,
Տենչեր եղան հոգսերը ինձ, թեւաբախման ակունք եղան,
Սիրտս իր բյուր երազներին միշտ էլ հասավ հոգսերի մեջ:

* * *

Պապիդ տնկած այգու մեջ դու քայլիր հպարտ,
Քեզ համար է նա թողել, վայելիր հպարտ,
Բայց մի ծառ էլ դու տնկիր ու շոյիր սրտով,
Համտես արա դու պտուղը ու փայլիր հպարտ:

* * *

Հավերժահոս այս գետը ես էլ մտնեմ ու անցնեմ,
Իմ երազը, իմ տենչը ես էլ գտնեմ ու անցնեմ,
Գտած-թողած իմ գանձին նոր եկողը չի նայի,
Նա էլ ինձ պես կերազի. «Մտնեմ, գտնեմ ու անցնեմ»:

* * *

Դու օրերի եռքի մեջ կյանքի իմաստն հասկացիր,
Առատության երգի մեջ ջանքի իմաստն հասկացիր,
Պետք չէ թեւել եթերում, կապվիր հողին հայրենի,
Քո իսկ ցանած հերկի մեջ փառքի իմաստն հասկացիր:

ԹԱՎԱՎՈՐ ԻՄ ԿՑԱՆՔ

* * *

Գարունը չեկած՝ ամառ չլիներ,
Մարդու ձմեռը համառ չլիներ,
Սոր սիրով կյանքը այսպես քաղցրացավ,
Սահը մայրերի համար չլիներ:

* * *

Մի ծառ տնկիր, տաշիր մի քար, հերոսությունն այդ է որ կա,
Եղիր բարձր, եղիր արդար, հերոսությունն այդ է որ կա,
Ու թե հանկարծ հողմեր շաչեն, երկիրը քեզ մարտի կանչի,
Նրա ցավը քաշիր ու տար, հերոսությունն այդ է որ կա:

* * *

Թեկուզ հավերժ լույսի ծով, Արեւն Արեւ չեր լինի,
Արեւային իր ծոցով Արեւն Արեւ չեր լինի,
Եթե կյանքը չլիներ ու չլիներ Մարդը մեծ,
Իր ջերմությամբ, իր լույսով Արեւն Արեւ չեր լինի:

* * *

Մի թույլ մժեղ եմ անհող,
Ճիվանդ, անդեղ եմ անհող,
Ոչ-ոք երբեք թող չասի՝
Ինքը ուժեղ է անհող:

* * *

Ծնող դառնաս, որ քաղցրանա գիրկը ծնողի,
Չհավատաս, որ կյանքում կա բիրտը ծնողի,
Ինչքան էլ ես վառվեմ ճամփիդ, չես հասկանա ինձ,
Ծնող դառնաս, որ հասկանաս սիրտը ծնողի:

ԹԱՎԱՎՈՐ ԴՄ ԿՑԱՆՔ

* * *

Քնած լինես, թե արթուն,- անցնում է օրը,
Ինչ որ ունես, կյանքին տուր,- անցնում է օրը,
Պիտի շունչը քո խառնես օրերի հրին,
Մի վարանիր, իմաստուն,- անցնում է օրը:

* * *

Այս աշխարհում ամեն ինչ սնունդով է հարատել,
Ծիլ ու ծաղիկ, ծառ ու թուփ՝ իրենց հունդով հարատել...
Մի զարմանա անտառի հավերժական ծփանքով,
Անտառն էլ է իր մահով ու ծնունդով հարատել:

* * *

Արեւը դուրս է գալիս,
Աշխարհին լույս է տալիս,
Աշխարհը իր զարթոնքով
Մրտերին հույս է տալիս:

* * *

Ծիծաղով ծփալ գիտես,
Մի ծառով ծփալ գիտես,
Երջանիկ երգիչ ես դու,
Մի բառով ծփալ գիտես:

* * *

Այս հունդը, որ կա իմ ափում, կնետեմ հողի մեջ ես մի օր,
Մահը եւ ծնունդը նրա կդիտեմ հողի մեջ ես մի օր,
Մահվան եւ ծնունդի մասին այս երգը թողած իմ որդուն,
Հավերժի չխամրող գաղտնիքը կգրկեմ հողի մեջ ես մի օր:

ԹԱՎԱՎՈՐ ԻՄ ԿՑԱՆՔ

* * *

Գետը չորանում է, նրա հունն է մնում,
Կյանքը ինչքան ժխտես, կերտած տունն է մնում,
Թե պատահի՝ չարը հաղթի ինչ-որ մի տեղ,
Սիեւնույն է, էլի լավ անունն է մնում:

* * *

Ինչ էլ լինի՝ աշխարհի մեջ սիրո ցավը կմնա,
Խմողները կանցնեն հերթով, գինու գավը կմնա,
Նոր սերունդներ աշխարհ կգան, կյանքի գիրքը կկարդան,
Խաչ կհանվեն չարն ու վատը, միայն լավը կմնա:

* * *

Անթիվ հերկեր եմ տեսել,
Անթիվ վերքեր եմ տեսել,
Սերք չարի դեմ, մերթ բարու,
Անթիվ ծեռքեր եմ տեսել:

* * *

Գրեցին. «Երեկ մի աստղ մարեց, եւ հիմա չկա,
Տիեզերքի մեջ նա հրավառվեց, եւ հիմա չկա»:
Երբ նրա մահով ծնվել է նորը աստղերի շարքում,
Ել ինչպե՞ս ասենք, որ նա խավարեց, եւ հիմա չկա:

* * *

Ես ինչ ասեմ աշխարհին, անգութ աշխարհին,
Աստղ ու արեւ արարող այս նութ աշխարհին,
Աստծոն սիրտը գողացել, չարին են տվել,
Չարն էլ հոգին է առնում այս բութ աշխարհի:

ԹԱՎԱԿՈՒՐ ԻՄ ԿՑԱՆՔ

* * *

Հույսը երազ, հույսն առավոտ, հույսը երգ,
Հույսը մուրազ, հույսը նարոտ, հույսը հերկ,
Հույսն անհույսի թեւից բռնած է քայլում,
Հույսը վռազ, հույսը կարոտ, հույսը վերք:

* * *

Ծաղիկները եւ տրտմում են, եւ բացվում,
Ծաղիկները եւ մքնում են, եւ բացվում,
Ծաղիկները նուրբ սրտերն են մայրերի,
Ծաղիկները եւ ժպտում են, եւ լացում:

* * *

Երբեք աթոռ մի պաշտիր, խղճիդ գահը լուրթ պահիր,
Թե աթոռ էլ ունենաս, խղճիդ գահը նուրբ պահիր,
Փուչ են բոլոր գանձերը Մարդ կոչվելու ճամփեքին,
Թե գանձեր էլ ունենաս՝ խղճիդ գահը սուրբ պահիր:

* * *

Մարդը մի տեղ արեգակ է, մի տեղ խավար՝ չարաղետ,
Մի տեղ հաց է արարում, մի տեղ ավար՝ ցավի հետ,
Առեղջվա՞ծ է գործն Անհունի, թե՝ երկմիտ էր Վերինը,
Մարդը մի տեղ սիրտ է շոյում, մի տեղ խաղում դավի հետ:

* * *

Արեւի հետ ջերմ ժպտացող դու իմ բարի առավոտ,
Թոհջբների ճամփա բացող դու իմ արի առավոտ,
Աստղագնա մեր սարերից, մեր հուսավառ սրտերից
Բուռ-բուռ առած բարությունդ տուր աշխարհին, առավոտ:

ԹԱՎԱՎՈՐ ԻՄ ԿՑԱՆՔ

* * *

Ժողովուրդն է ասում. «Աշխարհը այսպես եկել, այսպես էլ գնում է...»

Մեկը թագ է կրել, մեկը հող է հերկել, այսպես էլ գնում է»:
Թագակիր ու հողվոր իրար ձեռ առնելով քայլել են դարեր,
Ասեք՝ ի՞նչ է փոխվել... Աշխարհն այսպես եկել այսպես էլ գնում է...»

* * *

Երգ իմ, ծնվիր սրտիս ջերմին թրթիռներով,
Օծվիր երկրի աշխարհաշեն գրգիռներով,
Լավ իմացիր՝ երկրից, սրտից ծնված երգն է,
Որ ապրում է դարերից-դար հրթիռվելով:

* * *

Աստված սիրեք, իմ թոռնիկներ, միշտ էլ սիրեք մայրերին,
Թե մայրերը մեղավոր են, դարձի բերեք մայրերին,
Ո՞վ է ասել, թե հանցավոր մայր չի լինում աշխարհում,
Չանուն մոլոր ձեր մայրերի, մի կերեք ձեր հայրերին:

* * *

Չայրեր, կապույտ երկնի պես հոր անունը լուրթ պահեք,
Մանկան հանդեպ ողջ կյանքում հոր անունը նուրբ պահեք,
Թե մոռանաք սերը ձեր, մի օր թողնեք, հեռանաք,
Սի մոռացեք ձեր որդոց, հոր անունը սուրբ պահեք:

ԹԱՎԱՎՈՐ ԻՄ ԿՑԱՆՔ

* * *

Իմ հոգսավառ երգերի մեջ ես իմ բառն եմ բերում,
Իմ վշտահար երգերի մեջ սիրտիս լարն եմ բերում,
Որ երգերս թեւեր առնեն գալիքներին ի տես,
Իմ բառաշար հերկերի մեջ ես իմ դարն եմ բերում:

* * *

Կյանքիս դժվար ճամփեքին անթիվ փշեր ես տեսա,
Աշխարհ տեսած բյուր նարդկանց անթիվ հուշեր ես տեսա,
Մեկին թիկունք կանգնեցի, մեկի ցավը տարա ես,
Ու բարության իմ այգում դալար փեշեր ես տեսա:

* * *

Այս սոսենին՝ ուշբն արեւին, դեպի երկինք է հառնում,
Անցորդներին շուք անելով՝ ինքն էլ երկինք է դառնում,
Յողմերի դեմ թեւատարած մաքառում է անդադար
Ու կրակված ծուխս-ամպի հետ դեպի երկինք համբառնում:

* * *

Այսօր դու ես, վաղը ես եմ,- մի թախծիր,
Քո ժառանգն եմ ու քեզ պես եմ,- մի թախծիր,
Մեր թոռներն էլ սերտած կյանքի դասերը,
Մի օր կասեն՝ «ես էլ ես եմ»,- մի թախծիր:

ԹԱՎԱԿՈՒՐ ԻՄ ԿՑԱՆՔ

* * *

Մի օր տեսա կաղնի մի ծառ՝ թեք ընկած,
Անտարի մեջ հսկա, անբառ՝ թեք ընկած,
Ասի՝ «Կաղնի, այդ ի՞նչ օրի ես հասել»,
Ասաց. «Մի օր դու էլ կապրես՝ թեք ընկած»:

* * *

Աշխարհը մեծ, աշխարհն արեւ՝ սրտացավ,
Աշխարհն անկեղծ, սեր ու թեւեր, նաեւ ցավ,
Ազգերի եւ հավատների կոչի մեջ
Չե՞ք վախենում, որ այն դառնա քարանձավ:

* * *

Մարդն աշխարհի ամեն օրը զարդարող,
Մարդն աշխարհի սարն ու ձորը հարդարող,
Բայց ինչո՞ւ է կենաց ծառը ճյուղատում
Մարդն իմաստում, մարդը խենթ ու արարող:

* * *

Մարդն աշխարհի գլուխ-գործոց, դա է ճիշտ,
Դա վճիռն է Տեր-Աստծո, դա է ճիշտ,
Բայց ինչո՞ւ է իմաստնացած մարդն այսօր
Կյանքը դարձնում մահվան գզոց, դա՞ է ճիշտ:

ՅԱՅՐԵՆԻՔԻ ԴԵՏ

* * *

Սարվոր եմ՝ սարի զավակ,
Յողվոր եմ՝ բարի զավակ,
Երկրիս դեմ, թե հողմ շաշի,
Զինվոր եմ՝ դարի զավակ:

* * *

Իմ օջախստունը դու ես,
Իմ խաղաղ քունը դու ես,
Երկիր իմ, ուր էլ լինեմ,
Իմ երգի հունը դու ես:

* * *

Քո ճամփին արտ կդառնամ,
Մանուշակ, վարդ կդառնամ,
Թշնամին թե քեզ դիպչի,
Կրակ ու շանթ կդառնամ:

* * *

Սերս ինձ հուշ է բերում,
Քաղցրություն, նուշ է բերում,
Խնդության, վշտի պահին
Երկիրս ուժ է բերում:

ԹՆԱՎԱԿՈՒՐ ԻՄ ԿՑԱՆՔ

* * *

Մոր կանչը սիրտս վառեց,
Յառաջը սիրտս վառեց,
Զոհվածի շիրմին բուսած
Կակաչը սիրտս վառեց:

* * *

Սար էիր, որ դիմացար,
Քար էիր, որ դիմացար,
Սիրածդ, որդիդ չեկան,
Մայր էիր, որ դիմացար:

* * *

Կոհվ էր, սերը գնաց,
Սրտի վառ սերը գնաց,
Իր զոհված յարի համար
Մազերի սեւը գնաց:

* * *

Յուշաղբյուրի հեւքը իմն է,
Յավերժական երգը իմն է,
Զոհված կտրիճների համար
Նրա մրմունջ-վերքը իմն է:

* * *

Որդիդ եմ, միշտ վառքի մեջ,
Երգիչ եմ, իրայրքի մեջ,
Երկիր իմ, քեզնով արբած,
Արծիվ եմ, սլացքի մեջ:

ԹԱՎԱՎՈՐ ԻՄ ԿՑԱՆՔ

* * *

Պատերազմ էր ահեղ, սերս անքուն մնաց,
Անքուն մնալը ի՞նչ՝ սերս անտուն մնաց,
Զահել կյանքս դարձավ անմարելի ցասում,
Կրակներից խանձված խրամատում մնաց:

* * *

Հեռվում անտեր զգացի,
Անուժ, անթեւ զգացի,
Հենց որ եկա քո գիրկը,
Ես ինձ Անթեյ զգացի:

* * *

Ծառեր տնկեմ, շյուղս լինի,
Ծենքեր կերտեմ, հյուղս լինի,
Իմ անունով անուն հանած
Հավերժ ծաղկուն գյուղս լինի:

* * *

Այգեստանում տնկած ծառս ունենամ,
Օճորքիս տակ երգ-ծիծառս ունենամ,
Կյանքս ծուլեմ ժողովրդիս մեծ կյանքին
Ու նրա հետ ծափ-ծիծաղս ունենամ:

* * *

Բարի՛ ապրիր քո երկրում,
Արի՛ ապրիր քո երկրում,
Գնա շրջիր աշխարհը,
Արի՛, ապրի՛ր քո երկրում:

209

ԹԱՎԱՎՈՐ ԻՄ ԿՑԱՆՔ

* * *

Չեզ միշտ ծարավ մնացի,
Թեւեր առա, մնացի,
Երկիր, դու ինձ թագ տվիր,
Ես քեզ ծառա մնացի:

* * *

Հերկին ձուլվեց ու մնաց,
Բերքին ձուլվեց ու մնաց,
Սրտիս տեղը մի հարցրու,
Երկրին ձուլվեց ու մնաց:

* * *

Յովիվ էի, տարա հոտս սարերին,
Ժպտացի, երբ առավ ոտս սարերին,
Յայրենիքս իմ ճակատը համբուրեց,
Ուկեզօծեց առավոտս սարերին:

* * *

ճանապարհն այս նրանք բացին ու անցան,
Մեկը մեկի մահը լացին ու անցան,
Վարդանի պես ջերմ սրտերը ձուլեցին
Մեր սարերի լուսաբացին ու անցան:

* * *

Աստղերի մեջ սիրողների գիրկն եմ տեսնում,
Արտերի մեջ հնձվորների գիրքն եմ տեսնում,
Ազատության ճամփաներուն ուր էլ լինեն,
Կակաչներում՝ զոհվածների սիրտն եմ տեսնում:

ԹԱՎԱՎՈՐ ԻՄ ԿՑԱՆՔ

* * *

Մանկությունս սարում մնաց,
Կյանքս թեժ պայքարում մնաց,
Սիրտս տվի ժողովրդին,
Անունս մեր դարում մնաց:

* * *

Մրրիկների միջով անցա,
Ղմվար էր, շուտ ահելացա,
Ծաղկունք հագավ հայրենիքս,
Սիրտս նորից ջահելացավ:

* * *

Կյանքի դուռը երբ բացի, իմացա, որ մահը կա,
Սիրտս լույսի փոխեցի, իմացա, որ ջահը կա,
Հոգուս թրթիռները ողջ ժողովրդին իմ տվի,
Նրա սրտում ինձ համար հավերժության գահը կա:

* * *

Մանկուց կյանքի սիրահար եմ,
Անրջանքի սիրահար եմ,
Հայրենիքս շենացնող
Աշխատանքի սիրահար եմ:

* * *

Այս ծառերը մեզ են հասել մեր պապերից,
Այս սարերը մեզ են հասել մեր պապերից,
Մեր սրտի հետ, մեր հոգու հետ հավերժ խոսող
Այս դարերը մեզ են հասել մեր պապերից:

ԹԱՎԱՎՈՐ ԻՄ ԿՑԱՆՔ

* * *

Ինչ էլ եղավ իմ կյանքում շողին փարվեցի,
Սիրո ծովում սրտի ջերմ դողին փարվեցի,
Ողջ աշխարհը շրջեցի, հիացա հոգով,
Վերադարձա կարոտած եւ իմ գյուղին փարվեցի:

* * *

Ինչ ունեի՝ տվի քեզ, էլի կտամ քեզ, իմ հող,
Երգ էր սիրտս՝ տվի քեզ, էլի կտամ քեզ, իմ հող,
Քո ծիծաղով, քո սիրով կապրեմ միշտ քեզ կարոտած,
Ու քե հանկարծ պետք լինի՝ կյանքս էլ կտամ քեզ, իմ հող:

* * *

Արեւի պես ջինջ են դառնում, չեն մոռացվում,
Կարոտները լիճ են դառնում, չեն մոռացվում,
Ապրողների երախտապարտ սրտերի մեջ
Զոհվածները խիղճ են դառնում, չեն մոռացվում:

* * *

Մեր հայրերը քեզ գրկեցին, եւ կոչվեցիր Յայրենիք,
Քար ու հողիդ շունչ տվեցին, եւ կոչվեցիր Յայրենիք,
Թեժ հողմերի, խորշակների ու շանթերի երախից
Կյանքի գնով քեզ փրկեցին, եւ կոչվեցիր Յայրենիք:

* * *

Յայրենի երկրի ջինջ լուսաբացից ոչ մի տեղ չկա,
Նրա բերկրանքից, կարոտի լացից ոչ մի տեղ չկա,
Շրջիր աշխարհը, եղիր ամենքից շքեղ ծայրերում,
Յայրենի երկրի ջրից ու հացից ոչ մի տեղ չկա:

ԹԱՎԱՎՈՐ ԻՄ ԿՑԱՆՔ

* * *

Մեծացել եմ կանաչ ափիդ,
Ունկնդրել ճանաչ ծափիդ,
Իմ հոգու մեջ կյանքի փոխված
Միշտ ժպտում է հրաչ արփիդ:

* * *

Շանթերին հաղթող սարեր,
Ամպերը շանթող սարեր,
Գերել եք դուք իմ սիրտը,
Բնության կոթող սարեր:

* * *

Քանի՝ գազան շուրջդ ոռնաց, եւ դու անմահ մնացիր,
Քանի՝ ոսխ անթաղ մնաց, եւ դու անմահ մնացիր,
Այս անգամ էլ իին թշնամուդ թոռը մոխիր կդառնա,
Ելի կասեն. «Չարը գնաց, եւ դու անմահ մնացիր»:

* * *

Ուր գմում եմ, կրակներդ հույս են դառնում, պահում ինձ,
Հույսը քիչ է, կրակներդ լույս են դառնում, պահում ինձ,
Հույսն ու լույսն էլ կարծես քիչ են, կրակներդ անմարում
Իմ սրտի եւ իմ հոգու մեջ հույզ են դառնում, պահում ինձ:

* * *

Այս ի՞նչ հրաշք աղբյուր ես դու, իմ անսպառ հայոց լեզու,
Հայկի անվամբ մեզ հայ պահող իմ գիր ու բառ, հայոց լեզու,
Ոստիսները մեր հողն առան, մեզ ցրեցին աշխարհով մեկ,
Ելի դու ես մեզ հայ պահում, մեսրոպատառ հայոց լեզու:

ԹԱՎԱՎՈՐ ԻՄ ԿՑԱՆՔ

* * *

Չանի՝ երգեր հորինեցի՝ վար ու ցանիդ արժանի,
Սիրտս դրի երգերիս մեջ՝ դար ու ժամիդ արժանի,
Բայց դեռ հոգիս տոշորվում է մի երազով, իմ Արցախ,
Թե ե՞րբ պիտի երգս գրեմ ծիածանիդ արժանի:

* * *

Ամեն գիշեր իմաստության հուրն եմ առնում,
Քաջակորով մեր պապերի լուրն եմ առնում,
Իմ մայր Արցախ, չար թշնամու ոռնոցի դեմ
Ավոների, Բեկորների թուրն եմ առնում:

* * *

Իմ մայր Արցախ, պայքարիդ մեջ արդար ես դու,
Զավակներիդ երազանքին սատար ես դու,
Արյամբ փրկված քո օջախի տերն ես հզոր,
Հերոսության, ազնվության կատար ես դու:

* * *

Նոյն էլ գիտեր՝ պապիս բորբոք օջախն ես դու,
Իմ օջախի ցավամորմոք օջախն ես դու,
Սելջուկների թոռները բիրտ թող իմանան,
Որ իմ թոռան մշտանորոգ օջախն ես դու:

* * *

Թե մարտի մեջ փառքս ուզեն՝ կնվիրեմ,
Մաքառման մեջ ջանքս ուզեն՝ կնվիրեմ,
Հանուն Հայոց պատվի զավակ իմ Արցախի,
Ուր էլ լինեն, կյանքս ուզեն՝ կնվիրեմ:

ԹԱՎԱՎՈՐ ԻՄ ԿՑԱՆՔ

* * *

Իմ պապերի երազներով փայլող համբույր, հայրենի հող,
Զրակարոտ իմ պապերի բացած աղբյուր, հայրենի հող,
Իմ անունը բարձր պահող հուշ-պատկերն եք իմ պապերի,
Պապի պատիվ, թոռան օջախ, կայծակե թուր, հայրենի հող:

* * *

Հայրենիքիս պատկերի դեմ լուր եմ ես,
Լուր հոսանքով արտեր սնող ջուր եմ ես,
Իսկ թշնամին երբ ելնում է երկրիս դեմ,
Շանթի նման հուր արձակող թուր եմ ես:

* * *

Ասի՝ Թարթառ, բարեւս առ ու երգիր,
Սրտիս արցունք ցավերս առ ու երգիր,
Իմ մորմոքով ու երազով տառապող
Մռովն ասաց՝ արեւս առ ու երգիր:

* * *

Քո գրկում հառնած քո ծառն եմ կաղնի,
Ուժս ավիշն իր քեզանից կառնի,
Չար հողմերն ինչքան շաշեն չորս կողմից,
Մի տերեւ անգամ մեզնից չեն առնի:

* * *

Այս սարերում տուն ենք կերտել ու ապրել,
Մի ափաչափ արտ ենք հերկել ու ապրել,
Զոհեր տալով, վերք առնելով դարեդար,
Մեր սարերում սեր ենք երգել ու ապրել:

* * *

Վաստակով, Երազով լուսե՝ աստղերի հետ է արցախցին,
Դարերի շքերթից առած խոհերի գետ է արցախցին,
Քարերի իմաստն ու հոգին դարերին պսակ է դարձրել,
Վկան Երկիրը մեր խոսող, րաբբի-վարպետ է արցախցին:

ԹԱՎԱՎՈՐ ԻՄ ԿՑԱՆՔ

ՍԻՐՈ ԾԱՍՓՈ

Արեւի պես ջինջ եմ ես,
Սիրուց ծնված խիղճ եմ ես,
Բայց առանց քեզ, իմ անգին,
Մի ցանաքած լիճ եմ ես:

Սիրով բացված աչք եմ դարձել,
Աշխարհի հետ հաշտ եմ դարձել,
Սիրողների ճամփաներում
Ծաղկածիծաղ դաշտ եմ դարձել:

Ճրածին եմ, իրակ եմ,
Սրտեր սնող երակ եմ,
Եկեք ինձ մոտ, տաքացեք,
Սիրո հավերժ կրակ եմ:

Լուսաբացիս շողը դու ես,
Սրտիս քաղցր դողը դու ես,
Իմ փայփայած պարտեզների
Գարնանային ցողը դու ես:

Երթում՝ հողի տերն է միայն,
Երգում՝ սիրո շերն է միայն,
Ինչ էլ ասեն, դառն կյանքի
Քաղցրությունը սերն է միայն:

ԹԱՎԱՎՈՐ ԻՄ ԿՑԱՆՔ

* * *

Իմ առած ծաղկուն բարձունքը քոնն է,
Քեզնով ժատացող աչք-ունքը քոնն է,
Վշտիս ակունքը զուր ես որոնում,
Սրտիցս քամվող արցունքը քոնն է:

* * *

Հոգմած սիրտս քուն չունի,
Թոշուն է, բայց քուն չունի,
Սերս մենակ, որբ մնաց,
Ո՞ւր գիշերի, տուն չունի:

* * *

Սիրտս մի տաղ՝ կտամ քեզ,
Հոգիս շափաղ՝ կտամ քեզ,
Թե մի անգամ ինձ ժպտաս,
Կյանքս մատաղ կտամ քեզ:

* * *

Աշխարհին ջանքս տվի,
Երգ ու բերկրանքս տվի,
Սիրածս՝ ինձ մի համբույր,
Ես ամբողջ կյանքս տվի:

* * *

Իմ սերը ես է հոսել,
Նա սրտիս հետ է հոսել,
Զորն ինչքան ցանաք լինի,
Իմացիր՝ գետ է հոսել:

217

ԹԱՎԱՎՈՐ ԻՄ ԿՑԱՆՔ

* * *

Նկարիդ հետ միշտ խոսում եմ, շուտ արի,
Զուր եմ դարձել ու հոսում եմ, շուտ արի,
Զահելության մեր օրերն են անց կենում,
Վայրկյանն անգամ ափսոսում եմ, շուտ արի:

* * *

Ամենաթանկ գինը՝ հողի գինն է էլի,
Մի երկմտի, բարեկամի հինն է էլի,
Տղամարդը ինչքան էլ որ ուժեղ լինի,
Կյանքի զարդը ու հմայքը կինն է էլի:

* * *

Սիրո անուշ երգն եմ ասում, դու չկաս,
Աղջիկներն են շուրջս նազում, դու չկաս,
Բար նետեցի անբիծ սիրո քո լճին,
Էլ իզուր եմ ես երազում, դու չկաս:

* * *

Ծանր գիշեր, ո՞նց անցար,
Սերս եմ հիշել, ո՞նց անցար,
Նա իմ սիրտը թողեց փակ,
Ասաց՝ ո՞ւշ է... ո՞նց անցար:

* * *

Մի ափսեից հաց կերանք,
Ուրախ, սրտաբաց կերանք,
Ասա, ո՞վ է մեղավոր,
Բաժանվեցինք, լաց կերանք:

ԹԱՎԱՎՈՐ ԻՄ ԿՑԱՆՔ

* * *

Իմ սիրտը քեզ եմ տալիս,
Մեջնունի պես եմ տալիս,
Սիրելիս, մի վարանիր,
Ուրիշ չէ՝ ես եմ տալիս:

* * *

Իմ սիրո գիրքը քոնն է,
Իմ հրո գիրկը քոնն է,
Առանց քեզ կյանք չունեմ ես,
Իմ սիրող սիրտը քոնն է:

* * *

Առանց սիրո պատվաբեր ջանքի թովչանքն ի՞նչ անեմ,
Գարնանային պարտեզում վարդի թովչանքն ի՞նչ անեմ,
Թե սիրածիս բույրերով չեմ հարթելու սրտաբուխ,
Բարեկամներ, ասացեք, կյանքի թովչանքն ի՞նչ անեմ:

* * *

Գարնան հով եմ քեզ համար
Ամռան զով եմ քեզ համար,
Յովն ու զովը քի՛չ են, քի՛չ,
Սիրո ծով եմ քեզ համար:

* * *

Կյանքի հեւքը սերն է, որ կա,
Հատու գենքը սերն է, որ կա,
Ինչ էլ ասեն, երջանկության
Ամուր հենքը սերն է, որ կա:

ԹԱՎԱՎՈՐ ԻՄ ԿՑԱՆՔ

* * *

Դարձ դարի հետքին փարվեց ու շողաց,
Քարձ պատի քարին փարվեց ու շողաց,
Որ աշխարհը սիրո լույսով ողողվի,
Յարձ յարի սրտին փարվեց ու շողաց:

* * *

Սիրո մեջ ես ավիշ եմ,
Սերս թեժ՝ այսի հիշեմ,
Կարոտած ինձ շոյեցիր,
Կարծելով, թե ուրիշ եմ:

* * *

Սիրո մեջ ջահեր են պետք,
ճախրելու թեւեր են պետք,
Անոթ է թռչկոտելը,
Ճամարձակ թեւել է պետք:

* * *

Թշնամու դեմ բերդ լինեմ,
Անապատում գետ լինեմ,
Երազներիս մեջ անգամ,
Իմ սիրածի հետ լինեմ:

* * *

Աշուն է, թռո ու թաց է,
Իմ հոգում թռն ու լաց է,
Առանց քեզ մրսում եմ ես,
Շուտ արի, դուռս թաց է:

ԹԱՎԱՎՈՐ ԻՄ ԿՑԱՆՔ

* * *

Երբ ժպտում եմ, խայթում ես,
Երբ տիսրում եմ, դատում ես,
ԱՇԽ, սիրելիս, չգիտեմ,
Սիրո՞ւմ ես, թե՝ ատում ես:

* * *

Ծարավ էիր, ջուր տվի,
Մրսում էիր, հուր տվի,
Արեւածին սիրտս քեզ
Առանց խոսքի, լուր տվի:

* * *

Աշունն անցավ, մուժը մնաց,
Վարդը անցավ, փուշը մնաց,
Գանգուրմերս ճերմակեցին,
Իմ մեծ սիրո հուշը մնաց:

* * *

Սայաթ-Նովի երգերի մեջ մարմին առած հուրին ես դու,
Նրա մրմունջ երգերի մեջ երազ դառած նուրին ես դու,
Ո՞ր երգիչը կղինանա քո նազերին, քո հայացքին,
Դու լավ լսիր սրտիս կանչը,- հոգուս փարված փերին ես դու:

* * *

Գինու նման թունդ է սերս,
Ծլարձակող հունդ է սերս,
Դարի շունչն է ոգին նրա,
Ամբողջ երկրագունդն է սերս:

ԹԱՎԱՎՈՐ ԻՄ ԿՑԱՆՔ

* * *

Ո՞նց մոռանամ իրածին
Ժպիտները կանացի,
Նրանցով են շաղախսվել
Սիրտս ու հոգիս առնացի:

* * *

Երազիս մեջ գալիս ես ու երազիս մեջ գնում,
Այդպես անվերջ սիրելով միշտ ծարավ եմ քեզ մնում,
Ու երազիս մեջ անգամ քո կարոտի համբույրը
Սրտիս վրա ամեն օր ճերմակ մի հետք է դնում:

* * *

Բարեւ տվիր ու անցար,
Թեւիդ տվիր ու անցար,
Բայց ինացա՞ր, որ սրտիս
Արեւ տվիր ու անցար:

* * *

Ճով պիտի, որ դիմանա,
Չով պիտի, որ դիմանա,
Կրակի դեմ իմ սիրո՝
Ծով պիտի, որ դիմանա:

* * *

Սիրտս դաշտի է նման, սիրո ցանած հերկ ունի,
Իր հույզերի հերկերից աշխարհ հանած բերք ունի,
Երջանկության դռները իմ դեմ բաց են հավիտյան,
Սիրածս ինձ սիրել է սրտով, առանց երդումի:

ԹԱՎԱՎՈՐ ԻՄ ԿՑԱՆՔ

* * *

Սիրածիս փարվելը ինձ գերեց,
Ինձանով տարվելը ինձ գերեց,
Իմ սիրո բորբոքուն հնոցում
Նրա լուռ վառվելը ինձ գերեց:

* * *

Ուր էլ լինեմ, իմ արեգակ, քեզ եմ հիշում,
Արթուր լինեմ, աչքերս փակ, քեզ եմ հիշում,
Այս հ՞նչ հուր ես վառել իմ մեջ,
Որ ամենուր կարոտով բարկ քեզ եմ հիշում:

* * *

Ո՞վ է ասում, թե սիրում են ատելով,
Ո՞վ է ասում, թե տխրում են դատելով,
Թե սեր չտաս, սերը շահել չես կարող,
Չէ՛, չեն սիրում սիրո ծառը հատելով:

* * *

Պապս ասաց.- Իմ Աստվածը Միակ Տերն է,
Յայրս էլ ասաց.- Իմ Աստվածը Յրակ-Տերն է,
Ես մեղք չունեմ, սիրո մեջ են ինձ բարուրել,
Պիտի գոչեմ.- Իմ Աստվածը կրակ-սերն է:

* * *

Սերը սուրբ է, իր գույնն ունի, նրան ուրիշ գույն չխառնեք,
Ամեն մի սեր իր բույնն ունի, նրան ուրիշ բույն չխառնեք,
Սեր եմ ասում, կյանք հասկացեք, երջանկության միակ աղբյուր,
Թե ուզում եք ջահել մնալ, սիրո գինուն թույն չխառնեք:

ԹԱՎԱՎՈՐ ԻՄ ԿՑԱՆՔ

* * *

Կյանքում անթիվ աղբյուրներ կան, Սիրո սուրբ ակա իմն է էլի,
Բյուր ճամփաներ-երակներ կան, Սիրո կրակն իմն է էլի,
Կյանքը լի է արեւներով, խարույկներով, ճրագներով,
Կրակ էլ տան, էլի կասեմ՝ Սիրո կրակն իմն է էլի:

* * *

Այս սիրազուրկ աշխարհում քո երազած Սերն եմ ես,
Քո փայփայած երգերում ամենացերմ շերն եմ ես,
Ինձ թեւեր ես պարզեւում, երբ ասում ես. «Տերն ես իմ»,
Հավատում եմ, սիրելիս, քո ճորտ դառած Տերն եմ ես:

* * *

Սիրողները Աստծո լուսին ու փառքին են ընկերանում,
Սիրողները ջանքի հույսին ու կյանքին են ընկերանում,
Դժբախտության դուրս են բացում սիրողները աշխարհի մեջ,
Երբ արարող սերը թողած արծաթին են ընկերանում:

* * *

Կյանքի անթիվ գետերի մեջ ես օծվեցի սիրո շողով,
Նրա անթիվ շերտերի մեջ ես խոցվեցի սիրո շողով,
Քեզ տեսնելուց ես մոռացա սիրուց առած հարված ու վերք,
Ժախտներով քո բուժվեցի ու բոցվեցի սիրո շողով:

* * *

Այս ի՞նչ վարդ ես, այս ի՞նչ իրաշք, քեզ արարող լույսին մատաղ,
Աշխարհի մեջ սիրո կարկաչ քո վարարող հույզին մատաղ,
Կյանքի քարոտ ճամփաներում քո քայլերը ցողեր են ջինջ,
Դու Աստծո պարզեւմ ես թամկ, քո դալարող հույսին մատաղ:

ԹԱՎԱՎՈՐ ԻՄ ԿՑԱՆՔ

* * *

Մեր լեռներում կարկաչող աղբյուրի ծայն ունես դու,
Բացվող վարդի հրաշող թերթերի ծամ ունես դու,
Փառք քեզ նման դիցուհի աշխարհ թերող մայրերին,
Սիրողներին տուն կանչող համբույրի համ ունես դու:

* * *

Ա՞յս, ի՞նչ լավ է, ի՞նչ լավ է, իմ որոնած լավն ես դու,
Երջանկության իմ աղբյուր, իմ սիրո մեծ ցավն ես դու,
Ինչքան էլ որ կարոտի ծփանքներում ինձ տանջես,
Էլի պիտի բարբառեմ՝ սիրուս գինու գավն ես դու:

* * *

Մեր իմ, Աստծո սուրբ կամքով իմ զով-սերը դու ես, դու,
Մշուշ լինի, ամպ ու զամպ, իմ ծով-սերը դու ես, դու,
Կյանքի շենշող աստղերը ինչքան էլ որ ինձ գերեն,
Այս առեղջված աշխարհում հզոր-Տերըս դու ես, դու:

* * *

Մերը կյանք է, սերը՝ հետք,
Մերը ջանք է, սերը՝ երգ,
Սակայն ինչո՞ւ հաճախ նա
Դառնում է սեւ չարի ծեռք:

* * *

Կյանքի-մահվան թերանում
Մեր ենք տալիս, սեր առնում,
Երբ աշխարհում սերը կա
Մարդն ինչո՞ւ է ծերանում:

ԹԱՎԱՎՈՐ ԴՄ ԿՑԱՆՔ

* * *

Արեւն այսօր ուշ է բացվում, ո՞վ է նրա ուղին փակել,
Որպես սիրո հուշ է բացվում, ո՞վ է նրա ուղին փակել,
Արեգակը ամեն անգամ իմ հայրենի Արեւսարից
Ինչպես յարիս թուշն է բացվում, ո՞վ է նրա ուղին փակել:

* * *

Իմ թեւ ու թիկունք օրեր,
Բերկրանքի ակունք օրեր,
Ինչո՞ւ եք թռչում արագ,
Իմ սիրո արցունք օրեր:

* * *

Քո աչքերն իմ անրջանքն են, ժպտա աշխարհին,
Իմ երազը, իմ տենչանքն են, ժպտա աշխարհին,
Արեգակի փայլ ունես դու եւ ծաղկի թռվչանք,
Բանաստեղծի աղաչանքն է՝ ժպտա աշխարհին:



Դու վեր Ելար՝ դարձած Մհեր ու Դավիթ,
Ու վերջ դրիր սրտակեղեք մեր ցավին,
Զոհյալներիդ կենաց-զավաթ, իմ Արցախ,
Ապրողներիդ կենաց-հավատ, իմ Արցախ:

ԽՈՇՎՔ

ԻՄ ԱՐՑԱԽ

Իմ մայր Արցախ, քեզ նոր երգեր ձոնելիս
Թոթովախոս մի մանուկ եմ դառնում ես,
Բայց քո կաթով սնված այրս, սիրելիս,
Երգերիս մեջ քո հանգույն եմ հառնում ես:
Դու նահապետ Յայկի գինվոր ու զավակ,
Արա դիցին Արեւ պահող քաջ հողվոր,
Սիրտդ արեւ, հոգիդ նուրբ խաս, իմ Արցախ,
Յայսատանի դուռ ու դարպաս, իմ Արցախ:
Քո դարավոր ուղին ծաղկեց քո երգից,
Ոստիսներդ ծնկի եկան քո երթից,
Յեթանոսված Առանի կուռ, իմ Արցախ,
Քրիստոսված բարության գուռ, իմ Արցախ:
Կամքով ամուր, սրտով նրբին, հույսով վառ,
Դու ապրել ես միայն քեզ պես՝ միշտ համառ,
Երթերիդ մեջ հար անպատիր, իմ Արցախ,
Ժողովրդիդ փրկված պատիվ, իմ Արցախ:
Ինքդ կրակ, երազդ հուր, խոսքդ գանձ,
Առասպել ես՝ կարոտներով քո անանց,
Սրտիս միջով հոսող թարթառ, իմ Արցախ,
Աշխարհի հետ խոսող բարթառ, իմ Արցախ:
Հորովելդ արտի ծփանք, հացի բույր,
Օրորներդ երազների խոսքաբույլ,
Չարերի դեմ ըմբոստ-խոռով, իմ Արցախ,
Արարատված Քիրս ու Մօռվ, իմ Արցախ:
Զեռք չի քաշում նենգ թշնամին քո հողից,
Քո գանձերից, քո աստղերից, քո շողից,
Ոստիսներիդ ձեռքը հատող, իմ Արցախ,

ԱԹՐՈ ԶԱՄՓԱՆ

Չար աշխարհում արդար դատող, իմ Արցախ:
Դու վեր ելար՝ դարձած Մհեր ու Դավիթ,
Ու վերջ դրիր սրտակեղեք մեր ցավին,
Զոհյալներիդ կենաց-գավաթ, իմ Արցախ,
Ապրողներիդ կենաց-հավատ, իմ Արցախ:
2005թ., Ստեփանակերտ

ԱՐՑԱԽՍ ՀԱՅԱՍՏԱՆ Է

Ծառ ու ծառաստան է,
Աղբյուր է ու գետ,
Արցախ Հայաստան է,
Խոսում է ինձ հետ:

Աստղառաք գահ է,
Հեքիաթ է ու տեսչ,
Հուսավառ ջահ է,
Շողում է իմ մեջ:

Խաղողի որթ է՝
Արմատն իմ հոգում,
Երազը հորդ է՝
Դարերի խորքում:

Նոր է ու իին է՝
Արեւով իր տաք,
Այդ արեւն իմն է՝
Վառվող կրծքիս տակ:

Իմ Առան պապն է,
Իմ արյան եռքը,
Իմ մեծ տագնապն է,
Իմ վերքն ու հեւքը:

ԱԹՐՈ ԶԱՄՓԱՆ

Չարի դեմ կռվող
Յայկի հաղթ ձեռքն է,
Իմ բախտը կռող
Անառիկ բերդն է:

Նա իմ հավատի
Մեռոն-շաղախն է,
Վճիռն է դատիս՝
Յայց Արցախն է:

2005թ., Ստեփանակերտ

ՄԵՐ ՀԱՎԱՏԸ

Մեր հավատին ցեխ են նետում
Աղանդավոր հայերը մեր,
Էլ ինչո՞ւ ենք ցավով ասում.
«Թշնամին է վայերը մեր»:
Երբ քո դեմն է չար թշնամին,
Պայքարելը, իրավ, հեշտ է,
Ներսի ցեցը ամեն ժամի
Ղարանակալ մի հրեշ է:
Մենք մի բուռ ենք՝ կարծր մի բուռ,
Ժայռերի մեջ ծլած արմատ,
Թե չդառնանք կրակ ու հուր,
Պիտի մի օր մեզ անեն մատ:
Իսկ մատի մեջ ջնջում են հար
Ե՛վ արքային, Ե՛ւ զինվորին,
Մեր հավատը պահենք միշտ վառ,
Ու խելքի գանք օրը-օրի,
Որ ինքներս մեզ չժամենք

ԱԴՐԻ ԶԱՄՓՈՍ

Ու չդառնանք ճորտ ու գերի...

Թե չէ՝ հետո ինչ էլ անենք,

Մեր հավատը մեզ չի ների:

2005թ., Ստեփանակերտ

ՏԱԳՆԱՊ

Եթե այսպես գնանք, պիտի մի օր հալվենք,
Հալվենք մոնի նման, մարենք՝ ինչպես ծրագ,
Եթե այսպես գնանք, պիտի մի օր ծալվենք,
Ծալվենք երեր մեջքով, մարենք, թեկուզ կրակ:
Պիտի հալվենք մի օր մեր մեծ սիրո առջեւ,
Աստծո տված սիրուց իրի մեջ ենք անվերջ,
Սակայն կյանքի գրկում սերն է դաշնում անթեւ,
Եվ աշխարհն է մխում լափող կրակի մեջ:
Եվ աշխարհը քիչ է, տիեզերքն է քանդվում,
Տիեզերքի աչքը՝ արեգակն է գժվում,
Չորանում է կաղնին, ծիլն է թոշնում հանդում,
Բարությունն իր հունից անապատ է քշվում:
Խարույկներ են վառում գորշ գայլերը կրկին,
Թալիաթներ են ծնվում արյունախում ու չար,
Բավ է մնանք այսպես՝ բարության հեզ գրկին,
Եթե այսպես մնանք, կվերանանք իսպան:

10. 11. 2005թ., Ստեփանակերտ

ԱԴՐԻ ԶԱՄՓՈՍ

ԱՅՍ ՄԵԴԱԼԸ

«Սայրական երախտագիտություն
Արցախի քաջորդիներին»
մեդալով պարգևատրվելուս առթիվ

Այս մեդալը մոր համբույր է,
Սոր կարոտ է, մոր պատճամ,
Սոր սրբազն կաթի բույր է,
Սոր խորհուրդ է ու մոր կամք:

Այս մեդալը սուրբ մասունք է,
Խղճի ձայն է, սրտի դող,
Ե՛վ բարձունք է, Ե՛ւ արցունք է,
Եվ հավատ է լուսաշող:

Այս մեդալը կուռ գենքից է,
Լուռ պատկերն է մոր պատվի,
Երբ մեդալը մոր ձեռքից է,
Չինվորյալը չի պարտվի:

02. 09. 2003թ., Ստեփանակերտ

ՓԵՏՐՎԱՐԻ 20, 1988

Նա մեր պապերի սրտերի կանչն է,
Նրանց երազած թռչունը կապույտ,
Նա մեր շիկացած հոգու ղողանջն է,
Որ հնչել է միշտ լեռներում մեր լուրթ:

Նա մեր հայրերի բաղծամքն է լազուր,
Որ շղթայվել էր յոթ տասնյակ տարի,
Մեր ոգորումն է եւ ընդվզումը,
Մեր հաղթանակած հերիաթի բարին:

ԱԴՐԻ ԶԱՄՓՈՍ

Նա մեր կամքն է կուր եւ հավատը սուրբ,
Մեր Թուր Կայծակին՝ չարերի դիմաց,
Առասպելական մեր օրիներգն է նուրբ,
Միասնությունն է մարտերում կոփված:

Մեր արցունքներից հառնած բարդին է,
Ազատությունն է՝ մեր արյամբ օծված,
Նա ծիածանված մեր Ծիր Կաթինն է,
Թշնամու հանդեա մեր դուռն է՝ գոցված:

Նա մեր անունն է, ճանապարհը մեր,
Նա օրորոցն է մեր սերունդների,
Ով էլ հանդգնի ելմել նրա դեմ,
Երբեք ու երբեք նրան չենք ների:

Նա մեր տենչերից ծնված թռչունն է,
Մեր հաղթ թեւերն է, երազը հուրիեր,
Նա հավերժածուի մեր փրկությունն է,
Մեր պատիվն է նա ու գալիքը մեր:

2003թ., Ստեփանակերտ

ՆՈՐ ՏԱՐՎԱ ԽՈՇԵՐ

Այնպես եղավ, որ չինացա՝
Տարին ինչպես եկավ-անցավ,
Նրա շնչից մեկ լիացա,
Մեկ սրտաբեկ ճամփորդ դարձա,
Մեկ ինձ ժայտաց արեւի պես,
Մեկ լուսնի պես սառը շոյեց,
Մեկ փայփայեց երգը իմ կեզ,

ԱԴՐԻ ԶԱՄՓՈՍ

Մեկ՝ իմ երգը կիսատ թողեց:
ճամփաս անցա խնդուն ու հեզ,
թեկուզ եղավ՝ վերք ստացա,
Աստվածավախ հողվորի պես
Տասնապատիկ բերք ստացա:
Բայց պարտքերս չմարեցի,
Պարտք մնացի այս նոր տարուն,
Սիրտս լրիվ չվառեցի՝
Ու չրարձա հրաշք-գարուն...
Դիմա կանգնել նորի շեմին՝
Պարտապանի պես եմ ժպտում,
Ամանորն էլ ներուն է ինձ՝
Իմ տենչերը առած սրտում...
Ու նետվում եմ գիրկը նրա՝
Երազներով արեւատենչ,
Ժպիտներս շրթիս վրա,
Պարտքիս դողը իմ սրտի մեջ,
- Բարի գալուստ,- ասում եմ ես,-
Որդու նման գիրկով կգամ,
Իմ դեմ երբեք չմեղանչես,
Եթե հայ եմ, պարտքս կտամ:

2004թ., Ստեփանակերտ

ԿԱՐԱՍ ԱՂԲՅՈՒՐ

«Կարաս աղբյուր»-ս անտառի մեջ է,
Նա լոկ աղբյուր չէ, կարոտ ու տենչ է,
Ամեն ալիքը մի ելեւէջ է,
Նա իմ հայրիկն է:
Զուրը ժայռերի խորքից է գալիս,
Ծարավներին միշտ համբույր է տալիս,

ԱԿՐՈ ԶԱՄՓԱՆ

Տարին չորս բոլոր խնդում է, լալիս,
Նա իմ մայրիկն է:

Դաշտ ու արտերին շաղիկ է տանում,
Սարգ ու հանդերին ծաղիկ է տանում,
Սիրող սրտերին տաղիկ է տանում,
Նա իմ սրտիկն է:

Արեգակներ է վառում նա իր մեջ,
Աստղաբույլեր է արարում իր մեջ,
Իմ երազներն է բուրվառում իր մեջ,
Նա իմ թոռնիկն է:

2002թ., գ. Ակնաղբյուր

ԵՐԱԶ

(Պատկեր)

Այնպես լիներ, լիներ այնպես,
Որ կրկնվեր կյանքս նորից,
Իմ անցյալը արեւի պես
Ելներ մեր սուրբ Ռիստաձորից,
Մորս համար, որպես նվեր,
Տուն բերեի արեւը բորբ,
Նրա հոգնած ոտքերի տակ
Փռեի՝ ոնց Արցախա գորգ:
Եվ Արեւը մորս նման
Մեզ համբուրեր մեկիկ-մեկիկ,
Մայրս Արեւին ասեր օրոր,
Ինչպես իր թանկ առաջնեկին:
Ու մայրիկիս սիրով օծված՝
Չհեռանար արեւը բորբ,

ԱԴՐԻ ԱՍԱՓՈԱ

Գուցե նրա թեւերի տակ
Յորս տունը չմնար որբ:
2001թ., գ. Ակնաղբյուր

ԵՐԳԵՐԻՍ ՄԵԶ

Երգերիս մեջ սիրտս է դրված,
Ինչ էլ լինի՝ պիտի թեւեն,
Իմ պապերի ձայնն է գրված,
Նրանց շնչով առած թեւեր:

Երգերիս մեջ խորունկ ցավ կա,
Ցավը երբեք չի մոռացվում,
Այդ ցավի մեջ երազներ կան,
Երազով են դռներ բացվում:

Երգերիս մեջ հույսն է կյանքի,
Հույսն այդ սուրբ է՝ ինչպես մեռոն,
Ժողովրդիս դժվար ճամփին
Երգս լույս է, վառվող կերոն...

2001թ., գ. Ակնաղբյուր

ԿԱՐՈՏԻ ՊԱՏՐԱՍԹ

Սարտիկ-բանաստեղծ Կոմիտաս
Յակոբյանի սուրբ հիշատակին

Յույսի աստղերով բարուրված որդի,
Արեւով սնված արեւի պատրանք,
Սիրո սուրբ լեգենդ, մարտնչող ոգի,
Կյանքի ծարավով հրկիզված հեքիաթ:
Տոհմածառի երթ, օջախի կրակ,
Յայրական պատիվ, թոնրահացի բույր,
Մոր ծաղկուն երազ, քաջության երակ,

ԱԴՐԻ ԶԱՄՓԱՆ

Անմահությունը զարդարող համբույր,
Քրոջ ծիածան, եղբոր թեւ-թիկունք,
Թեւող առասպել, երկրի վեմ ու սյուն,
Արտերի օրոր, աստղածին արցունք,
Արցունքածին հույս, կենսառաք արյուն:
Աստծոն օրինանքի սրբազն պատգամ,
Հավերժված զինվոր, Աստծոն վարքագիր,
Ազատության կանչ, հայաստանված կամք,
Անարասված լույս ու մաշտոցված գիր:
Կյանքիդ ավարտը՝ այգաբացի շող,
Սխրանքիդ փառքով ճախրում ես ու կաս,
Ապրողների հետ հավիտյան ապրող,
Երգողների հետ երգող կոմիտաս:

2001թ., գ. Թեղթ

ԽՈՆԱՐՃՈՒՄ

Անմոռանալի մանկաբույժ Ասյա
Մելքոնյանի պայծառ հիշատակին

Կարոտներով հարազատի
Այցելել ենք գերեզմանիդ...
Աստված ինչո՞ւ աճապարեց,
Իր մոտ տարավ քեզ նմանին...
Գուցե-գուցե նրա համար,
Որ հիանա սրտով քո կեզ,
Որ այնտեղ էլ սիրով անմար
Վիատներին հույս առաքես,
Որ այնտեղ էլ նոր քնքությանը
Հիվանդ մանկանց կյանք պարգեւես,
Որ նրանց հետ ամենուրեք
Հրեշտակի նման թեւես;

ԱԴՐԻ ԶԱՄՓՈՍ

Չենք մոռանում, իիշում ենք քեզ,
Արարքներդ նվիրական...
Չավակնեղդ արեւատես
Քո անվամբ են երդվում իհմա:
Դու՝ ամուսնուդ սրտի կրակ,
Որդուդ, հարսիդ՝ բախտի կամար,
Աղջիկներիդ՝ հույսի ծրագ,
Փեսաներիդ՝ Աստվածամայր:
Դու մեր Աստղիկ, դու լավ մայրիկ,
Դու լավ տատիկ, լավ հարեւան,
Ով իր կյանքում քեզ նմանվի,
Ճազար անգամ երմեկ նրան:
Խոնարհվում ենք շիրմաքարիդ,
Խոնահրվում ենք քո անվան դեմ,
Թող քո ճամփան Անհունի մեջ
Լույսի փոխսվի, դառնա եդեմ...
Ու կդառնա, քանի որ ԴՈՒ
Լույս ես ցանել ամբողջ կյանքում:

2006թ., Ստեփանակերտ

ՍԵՐՍ ԻՄ ԱՆՇԵԶ Է

Տխուր օրերը Աստծոն պարզեւ չեն,
Աստծոն մեծ սրտից լույսն է միշտ հորդում,
Աստծոն տենչերը երբեք անթեւ չեն,
Աստծոն տենչերն են մեր սրտի խորքում:

Տխուր օրերը չարերի գործն են,
Չարերն են անվերջ ոստայններ իինում,
Բարու երազը խնդության գորգն է,
Բարության ծովը աղտոտ չի լինում:

ԱԴՐԻ ԶԱՄՓՈՍ

Բարին՝ հավիտյան թիրախն է չարի,
Չարի արարքը մերժումն է, ցավն է,
Բարին՝ արարող լույսն է աշխարհի,
Չարի աշխարհը նենգության դավն է:

Բայց աստվածային առեղջվածն է խոր,
Աստծոն մատյանը լույսի հեղեղ է,
Չարք քայլում է պարտված ու մոլոր,
Բարին իրաշք է եւ ամեն տեղ է:

Կյանքս հյուսել են բարության սիրով,
Բարության հունդը իմ սրտի մեջ է,
Չարին վառում են բարության իրով,
Ահա թե ինչու սերն իմ անշեց է:

2001թ., Ստեփանակերտ

ԻՄ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Քար են նետել ամեն կողմից,
Ճողդ դարձրել մի Քարաստան,
Տառապել ես դավից, հողմից,
Քարդ դարձրել բերդ-ապաստան:

Ճողմի բերնից հող ես խլել
Ու զարդարել քարդ հողով,
Քարերիդ մեջ երգդ գրել,
Չարդարվել ես աստղաշողով:

Քաջ դիցերը քո ջրածին
Մնացել են ջրիդ ծարավ,
Արյանդ մեջ Յայկն առնացի,
Յիսուսին ես ասել՝ հարյավ:

ԱԹՐՈ ԶԱՄՓԱՆ

Սակայն էլի քարաստանիդ
Քար են նետում ամեն կողմից,
Ու դառնացած խորհում եմ ես՝
Պրծում չկա ցավ ու հողմից:

Բայց էլի դու, իմ ժողովուրդ,
Կառչած ծլող քո քարերին,
Չավակներիդ ձեռքից բռնած,
Ողջունում ես քո դարերին:

Ողջունում ես սիրով անանց,
Ձեռքդ քո սուրբ խաչ ու թրին,
Մայր իմ, փառք է ապրել՝ փարված
Քո անվանը, քո սուրբ գրին:
2003թ., Երևան

ԺԱՄԴ

Ժամըդ ոչ թիթեռ, ոչ էլ ճպուռ է,
Ժամըդ քո սրտի տրոփին է հրաշք,
Ժամըդ մերթ ժպիտ, մերթ էլ մրմուռ է,
Վերելք է ժամըդ եւ Անհունի աչք:

Ժամըդ Աստծոն պարգեւն է անգին՝
Տիեզերական լույսի շաղախով,
Նա քո օջախն է, քո ծաղկուն այգին,
Որ պիտի պահես միշտ շախ ու շուխով:

Ժամըդ քո Սերն է, մանուկդ կայտառ,
Ժամըդ՝ ծնողաց հարգանք ու պատիվ,
Հողվոր ես, պոետ, գիտուն թե պայտառ,
Ժամըդ ժամանց չէ՝ խոստումով պատիր:

ԱԹՐՈ ԶԱՄՓԱՆ

Ամեն մի ժամըդ կյանքիդ մասունքն է,
Դասդ՝ առօրյա, խոսքդ՝ գալիքին,
Ժամըդ անցյալի դաժան հարցմունքն է,
Պատվանդանն է քո հասուն տարիքի:

Ժամըդ արարման օրինանքն է վերուստ,
Թող այն չդառնա մեղանչումի ցավ,
Տերը չունեցավ ժամերի կորուստ,
Ահա թե ինչու նա Կստվածացավ:

2003թ., Երեւան

ՊԱՊՆ ՈՒ ԹՈՌԸ

Պապը Մասիս՝ սեզ ու կանգուն,
Թոռան համար հույսերի դուռ,-
Պապը՝ Սեւան, թոռը՝ Զանգու,
Պապի համար հավատի գուռ:

Պապը՝ կաղնի, թոռնիկը՝ շիվ,
Թոռան համար պապը՝ հեքիաթ,
Պապը անքուն գիշեր ու տիվ,
Անքուն պապին՝ թոռը բերկրանք:

Պապը մի ժայռ, թոռնիկն առու,
Թոռնիկը երգ՝ պապի համար,
Պապը՝ երկինք, թոռը՝ գարուն,
Թոռը՝ պապի բախտի կամար:

Պապը՝ օջախ, թոռնիկը՝ ջահ,
Թոռը՝ պապի լուսե համբավ,
Թոռան համար պապը՝ աշխարհ,
Պապի համար թոռը՝ ճամփա:

ԱԴՐԻ ԶԱՄՓՈՍ

Իմ այս երգը ծնվեց մի օր,
Երբ ես դարձա խոհում պապիկ...
Պապը՝ թռոան արմատն է խոր,
Թոռը՝ պապին փառք ու պատիվ:
2001թ., Ստեփանակերտ

ԵՐԳԵՐ ՄՈՐՍ ՅԻՇԱՏԱԿԻՆ

1. ՏԱՐԻՆԵՐԻ ԲԱՐՁՈՒՏՔԻՑ

Տարիների բարձունքից, բարձունքներից իմ կյանքի,
Ճետ եմ նայում կարոտով, քեզ եմ տեսնում իմ ճամփին,
Մրմունջները աղոթքիդ ծովանում են իմ հոգում,
Ու քո ձեռքի հացն եմ ես կրկին շոյում իմ ափին:

Տարիների բարձունքին, բարձունքներին իմ կյանքի,
Դարձյալ սրտիդ աստղերով շոյում ես ինձ քնքշորեն,
Մերթ դիմում ես Աստծուն, մերթ էլ Որդու հրաշքին,
Որ Սուրբ Յոգու օրինանքով ինձ նվիրեն լույս օրեր:

Տարիների բարձունքից, բարձունքներից իմ կյանքի,
Երբ սարն ի վար մի կածան ինձ տանում է դեպի ձոր,
Դու ես բռնում իմ փեշից՝ աղաչանքով տագնապի,
Որ չթողնեն Արեւը, որ չշտապեմ՝ վիհը խոր:

Գիտեմ, մի օր անդունդից, երբ համբառնա իմ հոգին,
Դու ինձ գիրկդ ես առնելու խորաններում միշտ բանուկ,
Քո օրորի երգերով պահելու ես քո կողքին,
Որ քո գրկում միշտ ապրեմ ոնց նորածին մի մանուկ:

2005թ., գ. Ակնաղբյուր

ԱԴՐԻ ԶԱՄՓՈՍ

2. ՄԱՅՐ ԻՄ

Օ՛, մայր իմ, ամունդ տալիս,
Աշխարհը խոսում է ինձ հետ,
Քո տված լուսաբեր խրատի
Նշխարը խոսում է ինձ հետ:
Օրերիս շարանի հյուսվածքում
Ժպիտդ ուլունք է դառնում,
Քո ձեռքով փայփայած ամեն վարդ
Ինձ շոյող բուրմունք է դառնում:
Պապիկ եմ - թռոների տեր եմ,
Աստղեր եմ ճառագում իմ ուժով,
Ամենուր նորերին թեւեր եմ,
Բայց էլի ապրում եմ քո հուշով:
Շքերթս հասնում է ավարտին,
Սարերն ինձ օրինանք են առաքում,
Բայց էլի հուշերիս ծովի մեջ
Այդ դու ես ինձ համար տագնապում:

2005թ., գ. Ակնաղբյուր

ԻՄ ԱՐԱՅԻԿ, ԻՄ ԱՐՁԱ

2004թ. հուլիսի 29-ին Վայք քաղաքի մոտ ավտովրարի պատճառով զոհվեցին հարսս՝ Նարինեն, 14-ամյա թռոնիկս՝ Արան, հարսիս ավագ քույրը՝ Ռիտան, Եղբայրը՝ Ռոման: Տավն այս խորն է, սրտակեղեք:

Իմ Արայիկ, իմ Արա,
Իմ հույսերի վառ ճրագ,
Երեկ վառվող մի Արեւ,
Այսօր մարած մի կրակ:
Իմ Արայիկ, իմ Արա,

ԱԴՐԻ ՃԱՄՓՈՍ

Իմ ժառանգորդ - իմ Արքա,
Դու այդ խավար աշխարհում
Ո՞նց ես ապրում արնաքամ:
Աստվածադեմ իմ Արա,
Կյանքս գարուն դարձնող թոռ,
Դրեշտակնե՞՞րը քեզ տարան,
Թե՞ ուժերը սեւ ու գոռ:
Դու իմ խելոք - իմ համեստ,
Առասպելի իմ Արա,
Քո Սրբուհի տատիկը
Անհուն ցավդ ո՞նց տարավ:
Քո Սրբուհի տատիկը
Ինչպե՞ս շոյեց մայրիկիդ,
Չասա՞ց՝ ինչո՞ւ ես բերել
Մեր աստղաթեւ բալիկին:
Չասա՞ց՝ ինչո՞ւ եք եկել՝
Թողած կյանքը գեղեցիկ,
Չասա՞ց՝ վերքս խորն է շատ,
Վերքիս նոր վերք բերեցիք:
Իմ թագավոր, իմ Արա,
Մատադ լինեն քո վերքին,
Այդ ո՞ւմ զոհը դու դառար,
Աղ ցանեցիր մեր վերքին:
Քո անունը շրթերիս
Ժպտում էի հայերեն,
Վայոց ձորի չարքերը
Երգս դարձրին վայերեն:
Չարի զոհը դարձար դու,
Քո մոր գրկում - մորդ հետ,
Քեզ հետ՝ նրբին մորքույրդ

ԱԴՐՈՒ ԶԱՄՓՈՍ

Ու քո քեռին թիկնավետ:
Իմ Արայիկ, իմ Արքա,
Գիրքդ բաց է սեղանին,
Վերքոտ երգերն իմ անգամ
Չեն դառնալու սպեղանի:
Յրաշըներ են լինում միշտ,
Չոհյալն առնում է թեւեր,
Յրաշըների թեւերով
Վեր կաց-արի գիրկը մեր:
Ա-իս, իմ Արա, արեւդ
Ինչո՞ւ այդպես մայր մտավ,
Ո՞ր հեքիաթի հրեշը
Երախը բաց քեզ գտավ:
Աստված Վերից ի՞նչ կասի,
Ո՞ւմ կդատի, ո՞ր կարգավ,
Դու իմ խոցված սրտի ցավ,
Իմ Արայիկ, իմ Արքա:

01. 08. 2004թ., գ. Մեծ Թաղեր

ԶՆԾԱՂԻԿՆԵՐԸ

Զնծաղիկները բացվել են արդեն,
Գարնան ծիլերն են ձնծաղիկները,
Զնծաղիկները ճամփա են հարթել,
Որ ծնունդ առնեն նուրբ ծաղիկները:

Զնծաղիկները բացվել են արդեն,
Թերթերի վրա ջինջ շաղիկները,
Ասես նորածին մանկան աչքեր են,
Կյանք են ավետում ձնծաղիկները:

ԱՄՐԴ ԶԱՄՓԱՆ

Չնծաղիկները բացվել են արդեն,
Յրձվում են ինչպես հրեշտակները,
Չնծաղիկները ճամփա են հարթել,
Ժպտում են, ինչպես նահատակները:
2001թ., Ստեփանակերտ

ՇԱԲԱԹՈՐՅԱ ԶՄԵՌԱՅԻՆ ԳԻՇԵՐ

Չմեռ է... ձյունը մաղում է բուռ-բուռ,
Ճերմակ սավանն է փարվում սարերին,
Մի կարոտ սիրտս բզկտում է լուռ,
Թախիծն է իջնում հոգուս լարերին՝
Մեր գյուղն եմ հիշում, մեր օջախը իին,
Շաբաթ օրերի գիշերներն անգին,
Որ կրկնվում էր ձմեռվա ծոցում
Ու երգի փոխվում հոգուս հնոցում՝
Որպես տատիկի գրպանի խնձոր,
Պապի հորինած գունավոր հեքիաթ,
Շայրական հորդոր,
Մայրական քնքշանք,
Քրոջ նուրբ երգեր,
Եղբոր հաղթ ձեռքեր,
Դասընկերուիհու կախարդող նազանք,
Սիրո երազանք,
Պատուհանները շոյող ցայգալույս,
Զյուներից ծնվող կիրակնօրյա հույս,
Գառների մայում, հորթերի տրտինգ,
Կովերի բառաչ, ծիերի խրխինց,
Ածան հավերի հպարտ կչկչոց,
Տեղրակինների թաքուն քչփչոց,

ԱԹՐՈ ԶԱՄՓԱՆ

Յարեւանների կարոտած կանչեր,
Խռոված կանանց մատնարձակ չանչեր,
Ցորնահամ կուրկուտ՝ եփած թոնրի մեջ,
Չուռնա-դիոլի ծգվող ելեւէջ,
Որ մեզ է հասել Աղամի օրից...
Այս, ինչ կլիներ՝ կրկնվեր նորից:

2002թ., Ստեփանակերտ

ԾՆՈՐՅԱԿԱԼ ԵՄ

Ծնորհակալ եմ քեզնից, Աստված,
Ինձ նվիրած ոգու համար,
Նվիրումիդ հրով հաստված
Սիրտս նուրբ է, հոգիս՝ համար:
Ծնորհակալ եմ՝ քո պարզեւած
Արեւահունց հելքիս համար,
Կյանքի ծովից թեւեր առած
Գարնանածուի երգիս համար:
Զանքիս համար ու եռանդիս,
Հողից քամած քերքիս համար,
Սիրո հրիս, սիրո խանդիս,
Աստղեր շոյող ծեռքիս համար:

Դու կենսառաք իմ բարեկամ,
Ծնորհակալ եմ, ինչպես որ կամ:
2002թ., Ստեփանակերտ

ՀՈԳՈՒՄ ԳՈՒՅՆԵՐԸ

Հոգուս գույնները առատ են ու խիս,
Ես արեւից եմ գույններն այդ առել,
Լուսնից եմ առել, հեռու աստղերից.
Ծիածաններից՝ արքայավայել,

ԱԹՐՈ ԶԱՄՓԱՍ

Սեզ լեռներից եմ առել հայաշունչ,
Սեր անտառներից դալար, մեղմօրոր,
Սեր աղբյուրներից՝ ժայռածին ու պաղ,
Տատիս քնքշանքից, տագնապից իմ մոր,
Դորս ձեռքերից հողոտ, հացաբույր,
Քույրերիս թախծից, եղբորս ցավից,
Իմ մանուկների երազից հուռթի.
Առաջին սիրուց իմ հեզահամբույր:
Դոգուս գույները ազգիս ցավերն են,
Ընդվզումներն են՝ չար աշխարհի դեմ,
Դայոց մեծերի հուսավառ երգն են.
Մտքի թռիչքն են՝ դարձած սյուն ու վեմ:
Դոգուս գույները երգիս մեջ փնտրեք,
Երգիս մեջ՝ ցավի եւ հույսի ծփանք,
Ցավի եւ հույսի ճամփան ենք անցել,
Ցավը մեզ բաժին, իսկ հույսը՝ բերկրանք:

2003թ., Ստեփանակերտ

ԵՐԳՍ

Երգս ծնվեց իմ լեռներում,
Արաքսի պես հավերժախոս,
Չարի հանդեպ միշտ աններում,
Բարու ճամփին՝ լույսերի հոսք:
Նա ժայռաբուխ մի աղբյուր է,
Դավատարիմ՝ ակունքներին.
Երազային մի համբույր է
Ժողովրդիս շրթունքներին,
Դարերից է թեւեր առել՝
Մեր դարերի պես իմաստուն,
Սարերից է թեւեր առել՝

ԱԴՐԻ ԶԱՄՓՈՍ

Մեր սարերի պես՝ աստղատուն:
Հայկի նետի շառաչն է նա,
Թրի ուժը քաջ Վարդանի,
Մեր պատմության հումկու ձայնն է,
Բախտը նրան ուր էլ տանի:
Վեհ է՝ ինչպես յառն Մասիս,
Շառաչուն է՝ ինչպես Արաքս,
Ըմբռութ ինչպես Մռով ու Քիրս,-
Հայի կամք է, հայի երազ:
Վանում է նա օտար նախշեր
Եվ չի փարվում ծիչ-կանչերին,
Նա հայրեն է, տաղ է ու շեր,
Հավատարիմ մեր տենչերին:
Իմ երգերը հողեղեն են,
Ժայռեղեն են՝ միշտ ամրակուռ,
Իմ երգերը ոգեղեն են,
Հայի հույս են, հայի մրմուռ:

2003թ., Ստեփանակերտ

ԹԵԹԵՎ ԿՅԱՆՔՈՎ ՉԱՊՐԵՑԻ

Աստվածային կամքով հզոր
Կյանքս երգին կապեցի,
Ու ոչ մի ժամ ու ոչ մի օր
Թեթեւ կյանքով չապրեցի:
Արարումի դժվար պահին
Հոգիս դարձավ ծիածան,
Բայց տեսնելով ցավը երկրիս,
Սիրտս դարձավ ցիր ու ցան:
Երազներս փունջ արեցի
Սրտիս ցրված մասերով,

ԱԹՐՈ ԶԱՄՓԱՆ

Յոգիս կրկին մունջ վառեցի
Ապաշխարման ծեսերով:
Իմ ճակատի գիրը դժվար,
Ազգիս բախտն էր հար տանում,
Եվ այդ ծանր բախտի ճանփին
Յույսեր էի ես ցանում:
Իմ լույս երգը կրծքիս տակ էր,
Կյանքս նրան կապեցի,
Երգիս ճանփան հուր-կրակ է,
Թեթեւ կյանքով չապեցի:

24. 03. 2005թ., Ստեփանակերտ

ԶՐՈՒՅՑ ՀԻՍՈՒՄԻ ՀԵՏ

Քսան դար է,
Ինչ քո անվանք
Մաքառում է ժողովուրդս,
Մաքառում է՝
Սերմանելով
Չո բարության լուսե հունդը,
Մաքառում է եւ սպասում
Չո գալուստին,
Ապավինած քո վառ հույսին...

Քսան դար է՝
Սերունդներ են գալիս-գնում,
Օջախ կերտում, բացում ճանփա,
Երազելով փառք ու համբավ,
Ապավինած քո վառ լույսին...

Քսան դար է՝
Չո հավատով զինված մարդիկ,

ԱԴՐԻ ԶԱՄՓՈՍ

Պատվիդ համար դարձած մարտիկ,
Մանուկներ են աշխարհ բերում,
Քո անունով սրտեր գերում,
Ապավինած քո մեծ ուժին...

Քսան դար է՝
Քո անվանը քար են նետում,
Սրտեր ճեղքում, վարսեր փետտում,
Բարձրացնում սեւ կախաղան,
Խաչդ դարձնում կեռ յաթաղան,
Լույսդ փոխած մութ ու մուժի...

Քսան դար է՝
Ժողովրդիս Աստվածն ես Դու,
Նա իր ամեն սարի վրա
Արարել է մի սրբատուն,
Քո պատկերը առած սրտում...

Քսան դար է՝
Արյունախում, չար ուժերից
Քո հավատն է փրկում սիրով,
Թեկուզ սիրտն էլ խոցեն սրով,
Քսան դար է՝ ապրում է նա,
Ապավինած քո մեծ դատին...

Ինչպես երեկ, նաեւ այսօր,
Քո անվան դեն սուր են ճոճում,
Դաժան մարդիկ խենթ ու խելառ
Գոտիներում ռումբ ու գենք,
Պայթեցնում են պալատ ու շենք,
Ու ցեխն նետում քո հավատին...

ԱԴՐԻ ԶԱՄՓՈՍ

Քսան դար է,
Համբերության դաս ենք կարդում,
Չո անունով Սրբատանը աղոթելիս
Աչք չենք թարթում,
Սպասելով վերադարձիդ...

Ո՞վ սրբասուրբ,
Պահատում եմ ես ծնկաչոք,
Չո բարձունքից չարին դատիր,
Մարդակերի ծեռքը հատիր,
Խավարի մեջ լույսդ ցանիր,
Ցավերի մեջ մեզ պահպանիր,
Չո սուրբ սիրով անապական,
Կոչիր անվերջ՝ «Ակն ընդ ական»,
Թե չէ՝ մինչեւ վերադառնաս,
Մենք ինչքան էլ մնանք արթուն,
Էլ չի մնա քո անունով
Ոչ սուրբ մատուռ, ոչ սրբատուն...
2003թ., Ստեփանակերտ

ԱՌԵԴՎԱԾ

Մի տողիս մեջ ձայնն է պապիս,
Մի տողիս մեջ՝ հորըս,
Մի տողիս մեջ երգն է տատիս,
Մի տողիս մեջ՝ մորըս:
Մեկում շունչն է ին քաջ եղբոր՝
Բեռլինի մոտ զոհված,
Մեկում շունչն է խիզախն որդուս՝
Նոր մարտերում կոփված:

ԱԴՐԻ ԶԱՄՓՈՍ

Մռովի հետ զրուցելիս,
Պապիս ուժն եմ առնում,
Պապիս փառքը գովերգելիս,
Սարն է դեմս հառնում:
Թարթառի հետ խոսք բացելիս
Տատս է քնքուշ ժպտում,
Տատիս հուշը երգ դարձնելիս
Թարթառն է իմ սրտում:
Մեզ երգելիս՝ իմ սրտի մեջ
Մեր գետերն են խոսում,
Մեր սարերին երգ ձոնելիս
Մեր պապերն են խոսում...
Այդպես, ահա, Երկիրն իմ սուրբ,
Չուլված կրակ-հելքիս,
Փայփայում է սիրտը իմ նուրբ,
Թեւեր տալիս երգիս:

2005թ., Ստեփանակերտ

ԽՈՌՎՔ

Մութը լույսի գիրկն է խուժում,
Այս ի՞նչ օրի հասանք,
Երգը սրտի վերք չի բուժում,
Ի՞նչ օրորի հասանք:
Ողորմի քեզ, Խորենացի,
Խոսքդ չի հնանում,
«Ողբդ» գիտենք բերանացի,
Ցավդ չի խունանում:
Երկիր ունենք մի ափաչափ,
Ցրված մի ժողովուրդ,
Չենք էլ փոխվում մի մազաչափ,

ԱԿՐՈ ԶԱՄՓԱՆ

Լեռների մեջ մեր լուրթ:
Պատգամավոր ունենք կծի,
Անմիտ ու սնամեջ,
Նոր քահանա՝ աստվածամերժ,
Խիղճը գրպանի մեջ:
Ուսուցիչը ինքնահավան,
Տրված դարի կրթին,
Աշակերտը ամբարտավան,
Խեթ է նայում գրքին:
Թաղապետը թեժ, ճառախոս,
Իր ընտրողին ատող,
Դատավորը՝ արդարախոս,
Արդարներին դատող:
Ընդդիմադիր ուժեր ունենք՝
Գողակիցներ՝ գողին,
Վիզ են ծառում ստրկահաճ
Աթոռ պարգևելողին:
Ինչքատերը անհագուրդ է,
Բիրտ ու անամոթ,
Ճողին կառչած ժողովուրդն է
Ղոփում դեռ անամոք:
Վերանում են խիղճ ու հարգանք,
Նյութն է տիրում հոգուն,
Սերությունն է դառնում խարկանք,
Սովոն է թեւում ոգու:
Քերթողահայր, հորդորիր մեզ,
Ապրենք ձույլ ու արդար,
Որ էլ չասենք. «Ողբամ զքեզ,
Ով մեր Յայոց աշխարհ»:

10. 11. 2005թ., Երեւան

ԱԴՐԻ ԶԱՄՓՈՍ

ԿԱՐՈՏԻ ԿԱՆՉ

(Իմ Յաշա ախաղորը)

Տարիների հետ ասես մանկանում
Եվ իիշում եմ մեր օրերը երազ,
Կարոտներս ինձ անցյալն են տանում,
Որ թեւեր առավ եւ անցավ վրազ:
Սուրբն եմ կանչում, նա հեռվում մնաց,
Վանյա եմ կանչում, օտար հողում է,
Սուրբիկ եմ կանչում, Սիրուշ եմ կանչում,
Օյա եմ կանչում, սիրտս դողում է,
Արտյուշ եմ կանչում, Լյովա, Արայիկ,
Ապրես եւ Պավլուշ, չեն խոսում, լուռ են,
Յաշա ախաղերս հեռու է ինձնից,
Ու մեր կարոտը կրակ-մրմնու է:
Ի՞նչ ասեմ, ախաղեր, փառք տանք աստծուն,
Որ ունենք խելոք ու լավ զավակներ,
Որ դեռ դալար է մեր տոհմի ածուն,
Ունենք մեր ծառը զարդարող թռոներ:
Իմ անգին ախաղեր, իմ աստղ հեռու,
Սիրտս քո հանդեա մի լուսաբաց է,
Սակայն կարոտի մեր այս օրերուն
Մի աչքս ժպիտ, մի աչքս լաց է:

07. 05. 2005թ., Ստեփանակերտ

ԻՄ ԳԱՐՈՒՆՆԵՐԸ

Իմ զարունները չեն թոշնել իմ մեջ,
Իմ զարունները բողբոջում են դեռ,
Իմ զարունները կոկոն են, առէջ,
Ամառվա բերք են եւ աշնան մրգեր:

ԱԹՐՈ ԶԱՄՓԱՆ

Ին գարունները երազներ են ջինջ,
Պապիս խորհուրդն է, խրատը իմ հոր,
Մորս օրորն է մեղմ ու ամոքիչ,
Քաջության երգն է զոհված իմ եղբոր:

Ին գարունները որդիս է, թռողս,
Ին այբուբենված Ալարասն է սուրբ,
Ին Գանձասարն է՝ Աստծոն աթոռը,
Աստծուն օրիներգող տատիս սիրտն է նուրբ:

Ին գարունները Մռավն ու Ջիրսն են,
Խաչենագետն է ու խենթ Թարթառը,
Ին հոգում հառնած Սիսն ու Մասիսն են,
Առանված հողիս կանչն ու բարբառը:

Ին գարունները իմ նոր երգերն են,
Ին օջախալուս սիրո աշխարհը,
Փրկված Շուշիս գալիք հերկերն են,
Ին Ղազանչեցոց զանգն ու նշխարը:

Ին գարունները Արցախիս երգն է,
Արցախիս երգը իմ տիեզերքն է:

06. 01. 2007թ., Ստեփանակերտ

ԱՄԱՆՈՐԻ ՄԱՂԹԱՆՁՆԵՐ

1

Ամանորի հույսերով վառ
Շնորհավոր ասենք իրար
Ու երազենք խաղաղ օրեր,
Հաղթանակի ճախրող թեւեր,
Որ ծփանքով Եռագույնի,
Մեր լուսայգը շառագունի,

ԱԴՐԻ ԶԱՄՓՈՍ

Բարգավաճեն գյուղ ու ավան,
Լույսի փոխվեն Թարթառ, Սեւան,
Մեր երազի ճամփան բացվի,
Բերկրանքից մեր աչքը թացվի,
Քիրս ու Մասիս իրար գրկեն,
Մեր պատվաբեր հույսը փրկեն,
Աչքալուսանք բերենք իրար,
Ասենք՝ խիղճը հաղթեց, իրավ,
Շինարարի խինորվ խորին
Ասենք՝ Աստված, մեր երթն օրհնիր,
Օգնիր՝ չարի լուծը վանենք...
Եվ Աստվածն էլ
Ասի՝ Ամեն...

2

Մեր հայրենի հողին հենված,
Քրիստոսի հույսով զինված,
Սուլը «Հայր մեր»-ը երգենք մեկտեղ,
Մեր Հավատը դարձրած մեզ դեղ,
Խաչի ուժն էլ մեզ հովանի,
Մեր երազի ճամփով տանի,
Գանձասարի զանգերը զիլ
Ծիածանվեն Ամարասում,
Էջմիածինը Հավատով հին՝
Նոր մոմ վառի Դադիվանքում,

Աստվածամոր սուլը անունով
Մեր դուստրերին կոչենք հավետ,
Միածինի շունչը զգանք
Պապենականչ ծեսերի հետ,

ԱԴՐԻ ՃԱՄՓՈՍ

Զահելմերի պսակն օժենք
Մեր հայրերի կուռ օրենքով,
Ոսղխների ճամփան գոցենք
Ձենքով հատու ու Սուրբ գրքով,
Սուր ու խաչի ուժին հենված
Ղիմենք արդար Քրիստոսին,
Որ օրինի մեր մանուկներին,
Որ իր սիրով թեւեր առնեն,
Հայրենիքի ուժով հառնեն,
Քրիստոսն էլ
Ասի՝ Ամեն...

3

Այս Նոր տարում թող թեւածեն
Երազները մեր բոլորի,
Մաշտոցագիր գրքեր բացենք
Եվ ամրանանք օրը-օրի,
Սեղան նստենք ուրախ երգով,
ճամփա զնանք երգով ուրախ,
Յերկենք հողը, փնջենք ծաղիկ,
Գինի քամենք, երգենք տաղիկ,
Վարդեր փնջենք սիրո ճամփին,
Սիրով հասմենք մեր լույս ափին,
Մեկտեղ ցրենք մշուշ ու թոն,
Նշենք ծնունդ, հարսանյաց տոն,
Բաժակ խփենք զրնգոցով
Եվ չտեսնենք էլ ոգու սով,
Ոգի առած, դառած ոգի,
Ասենք՝ օրինիր մեզ, Սուրբ Յոգի,

ԱԹՐՈ ԶԱՄՓԱՆ

Զոհյալներին մեր անբասիր
Հրեշտակների շարքը դասիր,

Մեզնից վանիր չարիքն ամեն,
Եվ Սուլրը Հոգին
Ասի՝ Ամեն...

4

Մեր պայքարն ու խոհերն ամեն
Այնքա՞ն սուրբ են, այնքա՞ն մաքուր,
Որ Աստծոն սիրով օծված
Հրեշտակներն էլ կասեն՝ Ամեն...

5

Եվ վերջապես... եւ վերջապես
Ավարտում եմ մաղթանքս այսպես.
- Այս նոր տարում թող Վերինը
Հոր ջերմությամբ մեզ օրորի,
Հուշ դարձնելով ցավոտ հինը,
Նոր հույս բերի մեզ՝ բոլորիս:
Ամենազորն իր զորությամբ
Թող վերացնի ցավն ու լացը,
Որ նոր տարվա վերջում խմենք
Նաեւ Աստծոն սուրբ կենացը:

2005թ., Ստեփանակերտ

ԱԴՐԻ ԶԱՄՓՈՍ

ՍԵՐՍ ԼԵԳԵՆԴ

ՍԻՐՈ ԽՈՐՃՈՒՐԴԸ

Սիրո խորհուրդը խորհուրդն է կյանքի,
Քանզի սերը կյանք ու կյանքը սերն է,
Դոսքը հածույքի եւ տառապանքի
Սիրո եւ կյանքի անփոփոխ տերն է:
Սիրո այրումից դեպի լուսե կյանք
ճանփան սրտերի միջով է անցնում,
Իսկ ի՞նչ է սերը՝ թե ոչ տառապանք,
Սերն ո՞ւմ սրտից է իր կամքը հարցնում:
Սիրո լեգենդը ապրել է ու կա,-
Ռոմեո-Ջուլիետ, Մեծնուն ու Լեյլի,
Սայաթ Նովայի մեժ սիրտն է վկա՝
Սիրո լեգենդի կրակներով լի:
Սերս էլ լեգենդ է՝ տառապանքի փունջ,
Կյանքի եւ սիրո առեղծվածի մեջ,
Սիրո խորհուրդը՝ առեղծված, անուրջ,
Աստծո նման՝ անսկիզբ, անվերջ...

15. 01. 2003թ., Ստեփանակերտ

ԵՐԱԶՆԵՐՍ

Երազներս՝ սկիզբ առած
Ժայիտներից քո իրական,
Իմ վերքերին արյունաքան
Թող որ դառնան նուրբ վիրակապ:
Մեղք է ցավիս Ծիր-Կաթինը,
Որ սրտիս մեջ դու քաշեցիր,
Արի, աստղ դարձիր վառող,
Բավ է, ինչքան ինձ մաշեցիր:

ԱԴՐԻ ԶԱՄՓՈՍ

Դու իմ արեւ՝ սիրով վառված,
Դու իմ դաժան՝ բարի՝-բարի՝,
Դու իմ հույսը՝ հույսիս փարված,
Սպասում եմ՝ արի՝-արի՝:

19. 04. 2000թ., Ստեփանակերտ

ՔԱՆԻՇ ՏԱՐԻ Է

ՔանիՇ տարի է՝ որոնում եմ ես
Պատկերը Սիրո իմ Աստվածուհու,
Նա մերթ ժպտում է Արեւի հրում,
Մերթ Լուսնի նման փայլում լուսերես:
Մերթ վարդի տեսքով այցելում է ինձ,
Մերթ մանուշակի հայացքով ժպտում,
Այդպես որոնման ծարավը անվերջ
Ծփանք է տալիս իմ վառված սրտում:
Ու եկավ այսօր, եկավ Դիցուհիս,
Եկավ՝ հայուհու թուխ աչք ու ունքով,
Ու երբ ամոթխած նստեց իմ կողքին,
Իմ հոգին հարբեց նրա բուրմունքով:
Այս, իմ որոնած, երազ Դիցուհի,
Թող կարոտալից փայփայեմ ես քեզ,
Ախ, նոր հասկացա, որ թուխս հայուհին
Դիցուհիներ է միշտ պարգեւում մեզ:
Թող օրինյալ լինի այս ժամը հավետ,
Որ Աստծո տեսքով այցելել է նա,
Երազս հիմա շնչում է ինձ հետ՝
Դարձած մի աղջիկ՝ թուխս, հոգեհմա:

10. 07. 2003թ., Ստեփանակերտ

ԱԴՐԻ ԱՍԱՓՈԱ

ԱՍՈՒՄ ԵՆ

Ասում եմ՝ Աստված կնոջն ստեղծեց
իր նմանությամբ, գեղեցկությամբ իր՝
Յենց այդ էր, այո, Աստծոն գանձը մեծ,
Աստծուն Աստված դարձնող ուժը իին:
Քանի դարեր են եկել ու անցել,
Դմայքն Արարչի նորոգվում է դեռ,
Այս նուրբ աղջկա ժպիտը վկա,
Այդ Դու ես նրան պարզեւել մեզ, Տեր...
Արեւ ես դրել նրա կրօքի տակ,
Որ բանաստեղծին ընծայի թեւեր...

2003թ., Ստեփանակերտ

ՃՐԱՇՔ ԱՂՋԻԿ

Մի հրաշք աղջիկ՝ կոկոնված մի վարդ,
Ասես իջել էր արեւի գահից,
Ափի մեջ դրի սիրող սիրտս տաք,
Ասաց. «Վախեցիր տարիքիդ ահից»:
Խորտակեց սիրուս շենքը սյունազարդ,
Մի հրաշք աղջիկ՝ կոկոնված մի վարդ:

17. 05. 2003թ., Ստեփանակերտ

ԵՐԲ ՏԵՍՆՈՒՄ ԵՄ ՔԵԶ

Երբ տեսնում եմ քեզ՝
Տակն ու վրա է լինում իմ հոգին,
Ինչպես խենթացած հեղեղը գարնան,
Բայց դու անտարբեր
Կանգնած իմ կողքին,

ԱԴՐԻ ԶԱՄՓՈՍ

Ժպտում ես սառը լուսնյակի նման:
Երբ շշնջում եմ,
Որ սիրում եմ քեզ,
Սիրտս բացվում է նուրբ կոկոնի պես,
Բայց դու լռում ես,
Այնպէս անտարբեր,
Այս, ջուր ես ցանում սրտիս անհամբեր:
Մի՞թե չես զգում, որ հույսն ես կյանքիս,
Աղբյուրն ես՝ երգեր արարող ջանքիս...
Այդպես, ոչ միայն հոգիս ես հանում,
Այլև իմ սիրո երգն ես սպանում:

17. 12. 2002թ., Ստեփանակերտ

ԵՐԳԻ ՀԱՄԱՐ

Կիսատ թողած իմ երգին
Պիտի նորը գումարեմ,
Սառ մի նայիր իմ հելքին,
Սիրտս երգի համար է:
Սիրտս է խոսում իմ երգում,
Իմ սիրտը չէ, քո սիրտն է,
Քո ցավը կա իմ վերքում,
Իմ վերքը չէ, քո վերքն է:
Իմ երազն է իմ երգում,
Քո երազն է, իմը չէ,
Իմ մուրազն է իմ հելքում,
Քո մուրազն է, իմը չէ:
Արարում եմ ու ապրում,
Իմ կյանքի մեջ այդ դու ես,
Այո, ես կամ աշխարհում,

ԱԴՐԻ ԶԱՄՓՈՍ

Սակայն իմ մեջ այդ դու ես:
Երգս կիսատ չեմ թողնի,
Երգի ճամփին համառ եմ,
Երգս սերդ է, իմ անգին,
Ես քո սիրո համար եմ...

03. 12. 2005թ., Ստեփանակերտ

ԻՄ ԿՅԱՆՔԸ ԴՈՒ ԵՍ

Ասում եմ՝ երգը ծնվում է կյանքից,
Իմ կյանքը դու ես, դու ես իմ հոգին,
Շնորհակալ եմ Աստծուց եւ կյանքից,
Որ դու ամենուր միշտ կաս իմ կողքին:
Աչքերիդ նայում՝ աստղերն եմ կարդում,
Արեւի հրում՝ ժախտները քո,
Ժախտներիդ մեջ արեւն է արթուն,
Որ ջերմացնում է ինձ սրտով, հոգով:
Բնությունը քո գեղեցկության մեջ

Կրկնել է իրեն, նվիրել կյանքին,
Երեւի Աստված հասկացել է ինձ,
Որ աղբյուրն ես իմ զուլալ բերկրանքի:
Քո սիրով ասես աշխարհի տերն եմ,
Քո կյանք պարգևելող ժախտին մեռնեմ:

25. 02. 2006թ., Ստեփանակերտ

ԻՄ ԼՈՐԵՆԻ, ԻՄ ԼՈՐ

Իմ Լորենի, իմ Լոր,
Իմ երազանք, իմ երգ,
Իմ այգաբաց, իմ օր,
Դու արարող իմ հերք:

ԱԴՐԻ ԶԱՄՓՈՍ

Իմ սպասում-կարոտ,
Հեռվից շոյող նուրբ ձեռք,
Աստղապսակ նարոտ,
Դու երգառաք իմ հերկ:
Դու ինձ գարուն բերող
Գարնան նուրբ ձնծաղիկ,
Իմ սրտի մեջ թեւող
Երազաբեր-տաղիկ:
Սիրտս սիրո տենչ է,
Եվ քո ափի մեջ է:

2006թ., Ստեփանակերտ

ԼԻԱԼՈՒՏՆԻ ՆՄԱՆ

Լիալուսնի նման, շողոտ լիալուսնի,
Ոգու նման թեւող, աստվածային, մաքուր,
Ռաբունապետիս համար փոխված պայծառ լույսի,
Արարչության հուր ես անվերջ ինձ պարզեւում:
Յասաման ես գարնան, աստղաշողիկ, բուրող,
Իմ կարոտի հուրն ես, սիրտս նվեր է քեզ...
Նվիրումս երգ է՝ հեռվից քեզ համբուրող:

20. 10. 2006թ., Ստեփանակերտ

ՉՄԵՌՎԱ ՊԱՐԻՆ

Չմեռ է... երկնքից փաթիլներ են մաղում,
Եվ հալվում են մեղմիվ իմ շրթերի վրա,
Փաթիլների թեւին քո տաք շունչն է ասես,
Որ շոյանքով նրբին ինձ չի թողնում մրսեմ:
Ու քայլում եմ, քայլում փաթիլների միջով,

ԱԴՐԻ ԶԱՄՓՈՍ

Որ հուշում են անվերջ քաղցր անունը քո,
Տիեզերքի դուռն է բացվում գիլ-ճռինչով,
Եվ անունդ գրում սրտիս վրա կարոտ:
ԱՇԽ, այս ի՞նչ է, ասա, պատրա՞նք է, թե երազ,
Որ փաթիլներն անգամ քո անունն են հուշում,
Չեմ թարցնում, անգին, որ քո ժայիտներում
Իմ առաջին սիրո թրթիռներն են հիշում...
Հիշում եմ ես բույրը, շոյանքները սիրո,
Անգամ փաթիլներում ջերմանում քո հրով...

2005թ., գ. Ակնաղբյուր

ՆԱՅԻՐ ԱՅԴՊԵՍ

Նայիր այդպես, քնքույշ նայիր,
Կարոտել եմ քո հայացքին,
Քո հայացքով ինձ հմայիր,
Կարոտել եմ քո հմայքին:
Քո հրայրքին կարոտել եմ,
Կարոտել եմ քո շշունջին,
Քո հրաշքին կարոտել եմ,
Կարոտել եմ քո տաք շնչին:
Հաճախ ինքս հարցնում եմ ինձ,-
Ինչո՞ւ այդպես դու խենթացար,
Ինչո՞ւ ես դու վառվում նորից
Սիրո հրում՝ միահեծան:
ԱՇԽ, ի՞նչ անեմ,- ասում եմ ինձ,
Նա մի աստղ է նոր ու հրե,
Որ իջել է տիեզերքից
Եվ անունը սրտիս գրել:
Իմ տխրության օվկիանի մեջ
Նա մի շող է՝ ինձ ափ հանող,

ԱԴՐԻ ԶԱՄՓՈՍ

Այս չարացած աշխարհի մեջ
Նա մի հույս է՝ վերելք տանող:
Հմայվել եմ, չեմ թաքցնում,
Նա իմ տենչն է, երազը ծով,
Որ այսօր նա կա աշխարհում,
Համբուրում եմ աշն Աստծո:

26. 01. 2006թ., Ստեփանակերտ

ԵԹԵ ՎԱՌՎԵՍ

Եթե վառվեմ՝ միայն սիրուդ կրակներում,
Եթե մարեմ՝ միայն սիրուդ ճանապարհին,
Թե շող դառնամ՝ քո նուրբ սրտի հրակներում,
Իմ կրակված սիրտ ու հոգի, դու իմ բարի:
Թե կարոտեմ՝ կարոտներիս աղբյուրն ես դու,
Թե մոլորվեմ՝ ինձ լույս տվող ջահն ես անմար,
Թե ծարավեմ՝ ինձ հագեցնող համբույրն ես դու,
Տերը, սեր իմ, ստեղծել է քեզ ինձ համար:
Քո լինելը իմ լինելու խորհուրդն է խոր,
Իմ լինելը՝ սրտիդ համար սերն է Աստծո,
Ել խոսք չունեմ, ինչ էլ ասեմ հին է, ոչ նոր,
Իսկ սիրո մեջ նորը՝ հինն է արեւազօծ:

02. 02. 2006թ., Ստեփանակերտ

ԴԱՐՁՅԱԼ ԿԱՍԵՍ

Եթե անգամ ինձ կրակի մեջ նետեն,
Դարձյալ կասեմ՝ գեղեցիկս դու ես, դու,
Եթե անգամ թեժ զնդակով ինձ գետնեն,
Դարձյալ կասեմ՝ կարոտ-սիրտս դու ես, դու:
Կասեմ՝ երազ-ծիածանիս գույները

ԱԴՐԻ ԶԱՄՓՈՍ

Իմ հոգու մեջ միայն դու ես կամարում,
Կասեմ կյանքում իմ երգերի հուները
Դու ես բացում քո հրդեհով անմարում:
Կասեմ եթե երջանկության հուրը կա,
Դրախտային սիրո հուրը լոկ դու ես,
Կասեմ՝ եթե սիրո մաքուր ջուրը կա,
Ծարավ սրտիս սառն աղբյուրը լոկ դու ես:
Օրվա երթում քանի՛-քանի՛ անգամ ես
Փառք եմ տալիս Ե՛ւ քո մորը, Ե՛ւ Աստծուն,
Թեկուզ կյանքում չհասմեն Է՛լ երբեք քեզ,
Թեկուզ ճամփիդ դաշնամ տոչոր մի ածու:
Իմ երազին գարուն բերող լորն ես դու,
Տառապանքով, երազով լի օրն ես դու:

02. 03. 2006թ., Ստեփանակերտ

ԿՐԱԿ ԵԼ ՏԱՆ

Կրակ էլ տան, սիրող սրտիս ահ չկա,
Սիրուդ համար իմ սրտի պես գահ չկա,
Քանի դու կաս երազներիս աշխարհում,
Ճավատա ինձ, որ իմ սրտին մահ չկա:

Երբ չեմ տեսնում, վառվում եմ հուր-կարոտից,
Իմ կարոտը ծփում է քո նարոտից,
Ինձ հասկացիր, առանց խոսքի ու երդման,
Ես առանց քեզ գուրկ եմ ձեռքից ու ոտից:

Ճանդիպելիս՝ թեկուզ թաքուն՝ ինձ ժպտա,
Մի ժպիտդ ողջ աշխարհը ինձ կտա,
Տիեզերքն էլ մի մազիդ հետ չեմ փոխի,
Ուր էլ լինես, քո հետեւից ես կգամ:

ԱԹՐՈ ԶԱՄՓԱՆ

Սիրո ճամփիս կանչող դուռը դու ես, դու,
Թե ծարավ եմ՝ ջրիս գուռը դու ես, դու,
Ես առանց քեզ անթեւ-մենակ եմ կյանքում,
Չար աշխարհում իմ հաղթ կուռը դու ես, դու:
Սայաթ-Նովան ցավը պատմեց Բլբուլին,
Նրա գեմին խլեց անհաս իր հուրին,
Այնպես արա՝ որբ չթողնես ինձ կյանքում,
Աղաչում եմ՝ սրտանց սիրիք քո դուլին:

03. 03. 2006թ., տեղանակերտ

ՊԱՏԱՍԽԱՆԻՐ՝ ԻՆՉՈ՞Ւ

Դու կարո՞ղ ես, արդյոք, պատասխանել հարցիս,
Պատասխանել սրտիս, հոգուս ինչուներին,
Ինչո՞ւ աստղակոհակ տիեզերքում անծիր,
Դու ես թեւեր տալիս իմ նուրբ երազներին:
Պատասխանել՝ ինչո՞ւ երկնի մովերի մեջ,
Անհանգիստ ու շաչող, կապույտ ծովերի մեջ,
Սեզ սարերից փչող մետաքս-հովերի մեջ,
Ինձ հեռուներ տանող ժպիտներդ եմ տեսնում:
Պատասխանիր՝ ինչո՞ւ վարդերի մեջ բուրող,
Աղբյուրների երգում քնքուշ ու գուրգուրող,
Դայլայլներում հավքի անրջանքներ բերող,
Քո բուրմունքն եմ զգում, լսում շշունջը քո:
Պատասխանիր՝ ինչո՞ւ գարնան շողերի մեջ,
Ծաղիկներին իջած անբիծ ցողերի մեջ,
Կյանքը իր մեջ առած սրտիս դողերի մեջ
Ինձ սարեսար զցող քո անունն է ինչում,
Պատասխանիր՝ ինչո՞ւ...
Ինչո՞ւ ինձ տեսնելիս քնքանքներ ես առնում,

ԱԿՐՈ ԶԱՄՓԱՆ

Դալար նոճու նման շրջում ես ու հառնում,
Սակայն ինչո՞ւ սիրտս խոցող փուշ ես դառնում,
Պատասխանիր՝ ինչո՞ւ...
Պատասխանիր՝ ինչո՞ւ...
20. 03. 2006թ., Ստեփանակերտ

ՔՈ ԱՆՈՒՆԸ

Եթե բացես սիրտս մի օր,
Պիտի կարդաս անունը քո,
Որ գրել եմ որպես օրոր,
Կարոտներիս տառապանքով:
Սիրող սրտիս կոպերի տակ
Պիտի տեսնես պատկերը քո,
Պիտի տեսնես արցունքով տաք,
Դեռ չպայթած արկերը քո,
Որ նետել ես այրող խանդից
Եվ սպասել՝ մի օր պայթեն,
Որ զրկելով ինձ իմ կյանքից,
Քո քարքարոտ ճամփան հարթեն:
Բայց, սիրելիս, պաղատում եմ,
Սակրավորներ այսօր կանչիր,
Կյանքս փրկիր այրող խանդից
Ու ջերմացիր իմ տաք շնչից,
Եվ իմացիր, որ կույր խանդը
Միշտ քանդում է տունը սիրո,
Արի, Սեր իմ, առաջվա պես
Երջանկանանք սիրո հրով:

2006թ., Ստեփանակերտ

ԱԴՐԻ ԱՍԱՓՈԱ

ԵԹԵ ՄԻ ՕՐ

Եթե մի օր ինձ խորովեն
Թեժ, անմարում պողի վրա,
Դարձյալ պիտի ինձ օրորեմ
Սիրող սրտիս դողի վրա:
Եթե մի օր անդունդ նետեն՝
Կարիճների, օձերի մեջ,
Դարձյալ պիտի սիրտս վառեմ
Իմ սուրբ սիրո բոցերի մեջ:
Եթե մի օր գան ինձ տանեն
Սոլորակներ՝ հեռո՛ւ-հեռո՛ւ,
Սրտիս վրա կքանդակեմ՝
Որ քո սերն է ինձ կյանք բերում:
Իսկ թե մի օր դատաստանի
Հրդեհի մեջ տանջեն-վառեն,
Հարցնեն խստիվ՝ ինչո՞ւ ես դու
Նրա սիրով գերեվարվել,
Ես չեմ ասի եւ ոչ մի խոսք,
Կմնամ խենք ու անբասիր,
Կասեմ կուրծքս պատռեք, մարդիկ,
Սիրուս մասին սիրտս կասի:

15. 03. 2006թ., Ստեփանակերտ

ԱՅԳԱԲԱՑԻՆ

Այդպես, ահա, դու գալիս ես
Այգաբացին՝ ամեն օր,
Ու քայլերիդ ծայներն անուշ
Երգ են դառնում մեղմօրոր:

ԱԴՐԻ ԶԱՄՓՈՍ

Արեգակն է ժպտում ասես
Չո թխադեմ աչք-ունքում,
Ժափտները քո սրտաբուխ
Իմ վերքերն են ամոքում:

Ու թող անցնող մեր կյանքի մեջ
Միշտ կարոտենք իրարու,
Եվ ամեն օր, ամեն պահի
Սերը պահենք անմարում:

Իրար համար դարձած Աստված,
Սեր խոհերը հար կիսենք,
Ժափտների լույսով հաստված
Սեր սրտերը հրկիզենք:

29. 04. 2003թ., Ստեփանակերտ

ԻՂՋ

Շերմակս խառնեմ քո սեւին,
Թող ծնվի արծաթը նորից,
Իմացիր, սարերի արեւը
Ծնվում է ամպամած ձորից:

Գարունը ձյունից է ծնվում,
Վարդերով զարդարում հողը,
Թող հոգուդ ծաղկունքին իջնի
Զյուներից ծնված իմ ցողը:

2003թ., Ստեփանակերտ

ԱԴՐԻ ԶԱՄՓՈՍ

ԱՍՏՂԵՐԸ

Աստղերը թեւեր են առել,
Լեզու են առել աստղերը,
Աստղերը սրտերը վառել՝
Գրում են իմ սիրո տաղերը:
Աստղերը իմ սիրտն են թարգմանում,
Աստղերն իմ սիրուց են թարմանում,
Աստղերը լուսե երազով
Իրենց ջերմ գիրկն են ինձ տանում:

Տանում են, որ քեզ հանդիպեմ,
Աստղերի աղջիկն ես սիրուն,
Իմ սիրտն էլ հյուսված է աստղերից,
Ահա թե ինչու եմ քեզ սիրում:

2004թ., Ստեփանակերտ

ԻՆՉ ՀԱՍԿԱՑԻՐ

Ինձ հասկացիր առանց խոսքի,
Ին աչքերում կարդա երգս,
Ին խոհերի հորիզոնում
Տես քո սիրուց ցավող վերքս:
Սրտիս դուռը բաց է, մտիր,
Քո անունը կարդա այնտեղ,
Ճոգուս խորանները գտիր,
Այն քեզ համար լույս է ու դեղ:
Դու ոչ թե իմ գտած-սերն ես,
Այլ իմ կյանքի աստված-տերն ես:
Քո անունը քնար դառած
Իմ երգերին շունչ է բերում,
Սիրո հուրը՝ քեզնով վառված,

ԱԴՐԻ ԶԱՄՓՈՍ

Խորովում է սիրտս, գերում:
Ինձ հասկացիր առանց խոսքի,
Լեզուս կապ է ընկնում քեզ մոտ,
Փոթորկվում է իմ ջերմ հոգին,
Դու իմ սրտում, ես՝ քեզ կարող:

2004թ., Ստեփանակերտ

ԶԱՐՄԱՆՔ

Քեզ ասացի՝ լավն ես դու,
Լավըս ինչպե՞ս մոռացար,
Ասի՝ ցավիս դեղն ես դու,
Ցավըս ինչպե՞ս մոռացար:
Սիրտս դրի քո ափին,
Արեւ դարձա քո սրտում,
Պիտ շողայիր իմ ճամփին,
Չքողնեիր ինձ տրտում:
Քեզ քնքշորեն սիրեցի,
Քեզ սիրեցի Աստծոն պես,
Ինձնով բախտիդ տիրեցիր,
Առած հոգիս հրակեզ:
Բայց դու սիրտս խոցեցիր,
Բախտիս դուռը գոցեցիր,
Իմ դառնության գավն ես դու,
Ինչպե՞ս ասեմ՝ լավն ես դու:

2005թ., Ստեփանակերտ

ԱՍՏԾՈ ՄԱՏԸ

Աստծոն մատը խառն է, իրավ,
Որ սիրում եմ քեզ այսքան վառ.
Սիրտս է դողում քեզ տեսմելուց,

ԱԴՐԻ ԶԱՄՓՈՍ

Գիրկս է շողում քեզ տեսնելուց,
Կապ են ընկնում իմ բառերը,
Զնգում՝ հոգուս նուրբ լարերը,
Ծառ ու ծաղիկ քեզ են նայում,
Սիրահարված ու հնայուն.
Նախանձում են ինձ այդ պահին,
Իմ հոգու այն ոսկե գահին,
Որին դու ես հիմա բազմած,
Մի աստղահյուս պսակ կազմած:
Մեռնեմ սիրո քո պսակին,
Քո երազին, քո հասակին,
Քո խոսքերին՝ հրավառված,
Քո հայացքին՝ սրտիս փարված...
Աստծո մատը խառն է, իրավ,
Որ սիրում եմ քեզ այսքան վառ:

2005թ., Ստեփանակերտ

ԱՐԵՎԻ ՀԵՏ

Արեւի հետ արթնանում ես իմ սրտում,
Արեւի պես ջերմացնում իմ հոգին,
Այս, առանց քեզ կյանքս անցնում է տրտում,
Երազում եմ, որ միշտ լինես իմ կողքին:

Քո ձայնի մեջ Աստծո ձայնն եմ ես լսում.
Բառերիդ հետ եռ է գալիս արյունս,
Քո շուրթերով Սիրո Աստվածն է խոսում,
Քեզ լսելուց՝ երգ է դառնում ավյունս:

Թախծի միջից ես ելնում եմ թեւ առած,
Արցունքոտված սիրտս շնչում է մեկեն,

ԱԴՐՈՒ ԶԱՄՓԱՍ

Սիրո ծովում ծիածանը իմ վառած,
Շափաղում է՝ ընծայելով նոր հերկեր:

Տիեզերքը լի է սիրո աստղերով,
Աստղերի մեջ միայն քեզ եմ ես կարոտ,
Կորուստներից ցաված սիրտս սփոփող
Ամեն բառդ մի պսակ է, մի նարոտ:

Ով ցավ ունի, նա դառնում է շատախոս,
Իմ խոսքերը ունեն քնքշանք խոր ցավի,
Քո սիրո դեմ ծնկի կգամ ես անխոս,
Միայն սերըդ սիրող սիրտը իմ վառի:

2006թ., Ստեփանակերտ

ՍՊԱՍՈՒՄ

Սպասեցի, ուշացար,
Ամաեր իջան իմ հոգուն,
Սրտիս վրա ծանրացավ
Կասկածանքը բորբոքուն:
Տեսնես ցավող տե՞ղ ունի,
Թե՝ չլուծված խրթին հարց,
Խոհերի մեջ անքո՞ւն է,
Կարո՞ւ ունի մի անանց:
Սի՞րտն են խոցել անտեղի-
Մարդիկ չար ու անողոք,
Կյանքին խառնել են լեղի՝
Բամբասանքով՝ միշտ ողորկ:
Սպասեցի, ուշացար,
Ամաեր իջան իմ հոգուն,

ԱԹՐՈ ԶԱՄՓԱՆ

Սրտիս վրա ծանրացավ
Կասկածանքը բորբոքում:
Համակել է ինձ մի ցավ,
Ասա, ինչո՞ւ ուշացար:
2006թ., Ստեփանակերտ

ԿԱՐՈՏՈՒՄ ԵՄ ՔԵԶ

Իմ խոհերի մեջ մի վարդ է բուրում,
Սի աստղ է ժպտում հուշերիս ձորում,
Սի տենչ է վառվում արեգակի պես-
Կարոտում եմ քեզ...

Սի նուրբ անուն է շրբերիս թառում՝
Սիրո մի լեգենդ ամեն մի տառում,
Սիրտս լսում է եւ արտասվում հեզ-
Կարոտում եմ քեզ...

Սի հուր հայացք է շափաղում իմ դեմ,
Աչքերի ծովում ծաղկավոր եղեմ,
Եղեմի ծոցում աստղեր հրակեզ-
Կարոտում եմ քեզ...

Համբույրներիս տակ մի ձեռք է դողում,
Հուլյսիս մեջ դեռ մի նշույլ է շողում,
Սի ծով է շաշում խենթ ու փրփրադեզ-
Կարոտում եմ քեզ...

2006թ., Ստեփանակերտ

ԱԴՐԻ ԶԱՄՓՈՍ

ՄՈՌԱՑԵԼ ԷՒ

Մոռացել էի կարոտ ու համբույր,
Կարոտի հուրը վառեցիր իմ մեջ,
Իմ ճամփին դարձար կարոտի աղբյուր,
Դարձար հույսերիս փառոսը անշեջ:
Լույսը բացվում է, իմ հոգու մեջ ես,
Վարդը բացվում է, մեջն ես իմ հոգու,
Իրիկմամուտին իմ լույսն ու տենչն ես,
Իմ երգերի մեջ տերն ես իմ ոգու:
Սրտիս դռները բացվել են կրկին,
Մխում են սիրո վերքերը իմ հին,
Ստիր իմ սիրտը, դարձիր երգ ու տաղ,
Վերքերս բուժող խոսքերիդ մատաղ:

2006թ., Ստեփանակերտ

ՔԵԶ ՔԵՏ ՔԱՅԼԵԼԻՍ

Քեզ հետ քայլելիս՝
Սիրտս խոսում է, իսկ լեզուս լռում,
Թվում է, թե ես արեւի մոտ եմ,
Կրակ եմ դառնում աստղերի հրում:

Քեզ հետ քայլելիս՝
Ասես խոսում եմ ծաղիկների հետ,
Թվում է՝ շուրջս ծով-ծաղկահոտ է,
Կյանքը դրախտ է մի երանավետ:
Քեզ հետ քայլելիս՝
Աչքերիս նայիր, որ արեւում են,
Շրթերիս նայիր, որ դողում են լուր,

ԱԿՐՈ ԶԱՄՓԱՄ

Չեռքերիս նայիր, որ թեւածում են,
Եթե կարող ես՝ իմ սրտին նայիր,
Որ քո հայացքից շիկնում, ցնծում է:
Ես, որ աշխարհին իմ սիրտն եմ տալիս,
Ինձ մոռանում եմ քեզ հետ քայլելիս:
2006թ., Ստեփանակերտ

ՍՐՏԻՍ ՄԻԶՈՎ ՔԱՅԼԻՐ

Յոգուս կրակն առած
սրտիս միջով քայլիր,
Առանց այն էլ աստղ ես,
արեւի պես փայլիր:
Երգ ես տեղովդ մեկ,
Ժպիտներդ երգ են,
Այնպես արա՝ չասեմ
ժպիտներդ վերք են:
Աստծուց գոհ եմ, Սեր իմ,
Ժամանակին հասար,
Սրտիս վերքը խորն է,
Եղիր ինձ բալասան,
Անսեր այս աշխարհում
դու իմ անքիծ սերն ես,
Տերը թող ինձ ների,
դու իմ միակ Տերն ես...

23. 03. 2006թ., Ստեփանակերտ

ԱԹՐՈ ԶԱՄՓԱՆ

ԻՍ ԴԻՑՈՒՅԻՆ

Քո աչքերին նայելիս, քո աչքերին նայելիս,
Ծող ու շափաղ է առնում իմ երազի հայելին,
Հոգիս ծփանք է տալիս, փարվում հոգուդ եթերին,
Ու դառնում ես ու դառնում ես իմ հեքիաթի լույս փերին:

Քեզ հետ ճամփա գնալիս, քեզ հետ ճամփա գնալիս,
Հորիզոնից-հորիզոն արեւը հյուր է գալիս,
Հյուր է գալիս ու խնդրում ժպիտներից քո մի փունջ,
Ու դառնում ես ու դառնում ես արեւահյուս մի անուրջ:

Քեզ քնքշորեն գրկելիս, քեզ քնքշորեն գրկելիս,
Ասես գարնան հեղեղից սերս լինեմ փրկելիս,
Աստված այցի է գալիս՝ օրինանքներով նոր ու հին,
Ու դառնում ես ու դառնում ես իմ մեծ սիրո դիցուիհն:

2005թ., Ստեփանակերտ

ՔԵԶ

Եթե հարցնի Աստվածն՝ ինքը,
Չեմ մեղանչի Նրա հանդեպ,
Կասեմ՝ վկա Տիեզերքը,
Նա իմ հոգում դարձել է երգ:
Ժպիտներդ աստղեր են լույս,
Նազանքներդ՝ գարնան ծփանք,
Փայփայում եմ պայծառ մի հույս,
Որ կոչվում է Սիրո բերկրանք:
Պաղատում եմ՝ լավ իմացիր,
Որ երազն ես իմ լուսածիր:

07. 11. 2005թ., Ստեփանակերտ

ԱԴՐԻ ԶԱՄՓՈՍ

ԴՈՒ

Արեւի պես ժպտում ես,
Ամպի նման մշուշվում,
Մերթ ինձ նայում, տխրում ես,
Մերթ երազը քո հուշում:
Մերթ բացվում ես վարդի պես,
Մերթ կոկոնվում քնքշանքով,
Մերթ լացում ես ցավիս պես,
Մերթ ճառագում խենթ հոգով:

Մերթ խոցում ես իմ հոգին,
Մերթ բուժում ես իմ վերքը,
Մերթ կանգնում ես իմ կողքին,
Մերթ ոլորում իմ ձեռքը:
Առեղծված ես ինձ համար,
Դու իմ թախիծ, դու իմ դեղ,
Իմ քնքշասիրտ, իմ համար,
Իմ աղավնի, իմ ահեղ:

2006թ., Ստեփանակերտ

ԱՂՋԿԱ ՀԱՄԲՈՒՅՐԸ

Լավ երգը ծնվում է համբույրից,
Համբույրից աստղածին աղջկա,
Այս խոհը վաղուց է վառում ինձ,
Այս երգի ծնունդը վկա:
Աղջիկը թեւերն է արարման,
Աղջկա համբույրը ավիշ է,
Ցավի մեջ վերքերին բալասան,

ԱԹՐՈՆ ԾԱՄՓՈՍ

Թախտի մեջ մոռացման հաշիշ է:
Վաղ գարնան մի օր էր արեւոտ,
Կարոտը վառում էր ին սիրտը,
Նա եկավ՝ ժպտադեմ, ծաղկահոտ,
Նա եկավ զարդարեց ին գիրկը:
Աստղոտ է համբույրը աղջկա,
Այս երգի ծնունդը վկա:

2006թ., Ստեփանակերտ

ՆՎԵՐ

Դու եկար՝ ժպիտը դեմքիդ,
Մի գրիչ, մի տեսոր՝ ձեռքիդ,
Ժպիտդ դարձավ ծիածան
Եվ շոյեց խոհերս ցիրուցան:

Յույզերս իրի փոխվեցին՝
Ամոքիչ ու ջերմ՝ սիրո պես,
Յոգուս մեջ օրերս խոսեցին,
Ալիքվեց երազս իրկեզ:

Տետրիդ մեջ կվառեմ ին հոգին,
Ամենուր քեզ կզգամ ին կողքին,
Կիհշեմ, կերազեմ, կխնդամ,
Եվ անգամ լացիս մեջ կժպտամ:

2006թ., Ստեփանակերտ

ԱԴՐԻ ԶԱՄՓՈՍ

ՍԻՐՈ ԵՐԳ՝ ԾՆՎԱԾ ԼՈՒՌ ԿԱՐՈՏԻՑ

Աստված ինձ օգնի՝
սիրտդ գողանամ,
Զո թուխս մազերի
հյուսքում լողանամ,
Մրտիս անմարուն
իրի մեջ բոցվեմ,
Թարթիչներիդ սուր
սայրերով խոցվեմ,
Փեշերդ շոյեն
ներումի հույսով,
Հավատս օժեն
շոյանքիդ լույսով,
Հոգուրդ փեշերին
երազս ցանեմ,
Ու թեւերիդ տակ
քո ցավը տանեմ...
07. 12. 2006թ., Ստեփանակերտ

ԻՄ ՍԵՐԸ

Իմ սերը լեռան աղբյուր է,
Աստղերի քույրն է իմ սերը,
Իմ սերը Արեւի համբույր է,
Վարդերի բույրն է իմ սերը:

Իմ սերը իմ պապի երազն է,
Իմ տատի պատիվն է իմ սերը,
Իմ սերը հոր ու մոր մոլազ է,
Իմ գիշերն ու տիվն է իմ սերը:

ԱԹՐՈ ԶԱՄՓԱՆ

Իմ սերը իմ սիրտն է, իմ ձեռքը,
Երգերիս հուշողն է իմ սերը,
Իմ սերը իմ ցավն է, իմ հեւքը,
Վերքերիս բուժողն է իմ սերը:

Իմ սերը իմ կյանքի թեւերն է,
Օջախսի ճրագն է իմ սերը,
Իմ սերը Աստծոն նվերն է,
Իմ հոգու կրակն է իմ սերը:

26. 12. 2006թ., Ստեփանակերտ

ՅԻՍԱ ՉԵՍ ՍԻՐՈՒՄ

Դու սիրել ես ինձ՝ հիմա չես սիրում,
Դիմա չես սիրում, չգիտեմ՝ ինչու,
Դու ինձ վառել ես կարոտի հրում,
Վառվող սրտիս մեջ անունդ է ինչում:
Շշունջներ սիրո, սիրո ջերմ խոսքեր,
Ծաղկաբույլի պես ընծայեցիր ինձ,
Իմ երակներում արյունի հոսք էր,
Որ բխում էր քո երազող սրտից:
Ապաշխարել եմ Աստծոն առջեւ
Ու քեզ սիրելը համարել եմ մեղք,
Առանց քո սիրո թռչուն եմ անթեւ,
Եվ կյանքում չունեմ սփոփվելու ելք:
Չի լինում, Սեր իմ, քեզ չեմ մոռանում,
Ինչպե՞ս մոռանամ իմ սիրտն ու հոգին,
Ապաշխարելիս իմ դեմն ես հառնում,
Տեսիլքի փոխված կանգնում իմ կողքին:
Դու սիրել ես ինձ, հիմա չես սիրում,

ԱԴՐԻ ԶԱՄՓՈՍ

Աստված թե լսի, պիտի զարմանա,
Բայց ես վառվում եմ կարոտի հրում,
Սիրո ծովի մեջ դու իմ մանանա:

2006թ., Ստեփանակերտ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԻՄ ԵՐԳԸ ԴՈՒ ԵՍ

Մարգոյին

Ասում ես՝ երգ գրիր իմ մասին...
Իմ հոգու նուրբ երգը այդ դու ես,
Մեր ճամփան անցնում ենք միասին,
Քեզանով իմ սիրտը խնդուն է:
Քեզանով լույսերս պայծառ են,
Ճույսերս շողում են ջահի պես,
Խոնհերս թեւածող ծիծառ են,
Բառերս նորին են, հրակեզ:
Աշխարհը ծնվել է ջերմ սիրուց,
Սիրո խենթ ընթացք է ողջ կյանքը,
Եվ սերը լեզենդ է հինավուրց,
Քո սերն է իմ անհուն բերկրանքը:
Երազիս թեւերը քո սրտում,
Քո սրտի թրթիռը հոգուս մեջ,
Միասին բախծում ենք ու ժպտում,
Միասին երազում՝ սիրատենչ:
Մեր բախտը մեզ ծովեց իրարու,-
Տառապած մեր սիրո շողերով,
Իմաստուն մեր սերն է մեզ վառում,
Լույս դառնում մեր սրտի դողերով:
Ասում ես՝ երգ գրիր իմ մասին...

ԱՊՐԻ ԶԱՄՓՈՍ


Իմ հոգու նուրբ երգը այդ դու ես,
Մեր ճամփան անցնում ենք միասին,
Քո սիրով իմ սիրտը խնդում է:
2006թ.

2. ՔՈ ԱՆՈՒՆԸ

Քո անունը միշտ հնչում է
իմ շրթերին,
Մերս քո դեմ արեգակ է՝
ջերմ, անթերի,
Իմ առաջին սերը թոշնեց,
կյանքն էր դաժան,
Իմ անվան հետ քո անունն է՝
միշտ անբաժան:
Սիրո խոստում դու ինձանից
չես լսելու,
Թե խինդ, թե՝ վիշտ, միշտ քեզ հետ եմ
ես կիսելու:
Մերս հավերժ տառապանք է եղել,
գիտես,
Իմ տառապած սիրտն եմ բերել,
ընծայել քեզ...
Քեզ հետ կյանքս հորիզոն է՝
լույսով անծիր,
Սիրո՞ւն եմ քեզ, թե չեմ սիրում,
Դու իմացիր:

13. 03. 2006թ., Ստեփանակերտ

ԴԱՐ ՆԱԿԱՐՔ (1970-2008)



Ամպը գետի վրա չոքեց,
Մի կուշտ խմեց ու թարձրացավ.
Երկինքն ամպին առավ գիրկը,
Ամպը շիկնեց ու թանձրացավ,
Ամպը ճչաց, գոռաց ամպը,
Բարակ-բարակ անձրեւ տեղաց,
Ամպը զնաց անձրեւի հետ՝
Ծիածանն գոտին թողած:

ԵՆԹԱՐԿՎՈՂ ՀՍԿԱՆ....

Ի՞նչ երկաթէ
Աժդահա...
Ունի դռներ,
Պատուհան,
Ունի շերեփի
Ու կմճիթ,
Ունի ձեռքեր,
Ունի քիթ:
Ամեն մի փոս
Մտնում է,
ճանապարհն իր
Գտնում է,
Քար է քամոյում,
Հող փորում,
Սարում լինի,
Թե ծորում:
Նա ուժ ունի
Ահագին:
Ունի...
Սակայն, դուք գիտե՞ք,
Ենթարկվում է
Հայրիկին:

ԻՄ ԱՎԵՐՋ

ԱՄԱՌԸ ԳԱ

Ամառը գա,
Հասնի թութը
Մեղրածոր,
Մայրիկի հետ
Գնամ այգի՝
Ուխտաձոր:
Ինքն աշխատի,
Ես թութ ուտեմ,
Քաղցրանամ
Եվ ամեն օր
Մի մատնաչափ
Բարձրանամ:

ԿԱՐԵՆԻ ՆԿԱՐՆԵՐԸ

Մեր Կարենը
Նկարներ է
Նկարել.
Իր քողջը՝
Երգելիս,
Հորը՝ հանդը
Հերկելիս,
Մորը՝ կովեր
Կթելիս,
Սեթին՝ դասը
Սերտելիս:

ԻՄ ԱՎԵՐՔ

ԱԲԻԿԻ ճԱՇԸ

Երբ ճաշում է
Մեր Արիկը,
Կեղտոտում է
Իր շապիկը,
Կեղտոտում է
Եվ ծնոտը,
Կեղտոտում է
Շուրթն ու ոտը:
Մերն ասում է.
- Ամոթ, Արիկ,
Կեղտոտելու
Համա՞ր չեն հո
Շոր ու շապիկ:

ԼՈՒՅՍԸ ԲԱՑՎԵՑ

Լույսը բացվեց,
Այ Արթուր,
Վեր կաց պապին
Բարեւ տուր,
Զրի ծորակը
Բացիր,
Սառը ջրով
Լվացվիր,
Ու հետո էլ
Ասա.- պապ,
Արի ճաշենք,
Գնանք բակ:

ԱՐԹՈՒՐԻ ԽՐԱՏԸ

Գերազանցիկ
Արթուրը
Իր մոտ կանչեց Արտակին,
Ասաց,- Չարն ես մեր բակի,
Տրորում ես պարտեզը,
Պատռոտում ես քարտեզը,
Սիրում ես սուտ ասելը,
Չես սովորում դասերդ:
Որոշել ենք այսուհետ:
Որ չխաղանք էլ քեզ հետ:
Արտակը լուր մոտեցավ
Եվ Արթուրին խոստացավ.
- Չեմ տրորի պարտեզը,
Չեմ պատռոտի քարտեզը,
Կթողնեմ սուտ ասելը,
Կսովորեմ դասերս:

ՓՈՔՐԻԿ ԵՄ

Գիտե՞ս,
Կարեն,
Փոքրիկ եմ,
Գրել, կարդալ
Չգիտեմ:
Եկ ինձ ցույց տուր
Տառերը,
Ես կկարդամ
Բառերը:

ԽՈՌՎԵԼ ԵՄ ՄԱՅՐԻԿԻՑ

Խօռվել եմ
Մայրիկից,
Նա միշտ փոքր է
Կոչում ինձ,
Թել ու ասեղ
Չի տալիս,
Ես խնդրում եմ
Ու լալիս:
Բայց կրկնում է.
- Փոքր ես, տե՛ս,
Ճանկարծ մատդ
Կծակես:
Խօռվել եմ
Մայրիկից,
Ինչո՞ւ փոքր է
Կոչում ինձ,
Թե որ թել ու
Ասեղ տա,
Վատ չեմ կարի,
Ճավատա:

ԻՄ ԻԱՊԸ

Յայրս կոնֆետ է
Բերել,
Մայրս գրքեր
Ու տետրեր,
Քույրս՝ սիրուն
Մի տիկնիկ,
Իսկ եղբայրս՝
Մի շնիկ:
Յազգնեմ սիրուն
Տիկնիկիս,
Պահ տամ խելոք
Շնիկիս,
Կոնֆետն ուտեմ,
Լիանամ,
Գրքերն առնեմ,
Յիանամ,
Տետրերի մեջ
Նկարեմ,
Յետո երգեմ
Ու պարեմ:

ՈՐ ԾԱՌՆ Աճի

Պապը հարցրեց.
Ի՞նչ ես ամուսն:
Կարենն ասաց.
- Զուր եմ տանում:
- Զուր ես տանում,
Որ ի՞նչ անես:
- Որ մեր բակում
Ծառ ջրեմ ես,
Որ ծառն աճի
Եվ դալարի,
Ու մեր բակը
Միշտ զարդարի:

ՈՒՐԻՇ ԾՈՎԱՓ ԻՆՉ ՏԱՐԵՔ

Հայրիկն ասաց.
- Իմ պուճուր,
Դու սիրում ես
Ծով ու ջուր.
Որոշել ենք
Պապն ու ես
Սեւ ծովի ափ
Տանել քեզ:
- Ուրիշ ծովափ
Ինձ տարեք,-
Պատասխանեց
Պուճուրը,-
Ես չեմ ուզում
Սեւ ջուրը:

ԻԱՅ ՆԱՇԽՋ

ԾԻՏԸ ՈՒ ԱՐԱՆ

Դրսում սառույցն է
Շողում,
Ծիտը մրսում է,
Դողում,
Արան կուտ է
Տանում բակ,
Ցանում թթի
Ծառի տակ:
Ծիտն ուտում է
Կշտանում...
Այլեւս չի
Վշտանում:

ՄԻԱՍԻՆ

Բակում խաղանք
Միասին,
Ուրախանանք
Միասին,
Խարույկ վառենք
Միասին,
Շուրջը պարենք
Միասին,
Ճետո ասենք
Մինասին,
Որ միշտ լավ է
Միասին:

ԻՄ ԱՎԵՐՔ

ԴԱՅԱ- ԻՆՔԸ

(Նմանություն)

Ինքը մենակ
Գնաց անտառ,

Ինքը մենակ
Ելավ մի ծառ,

Ինքը կախվեց
Ծառի ճյուղից,

Ինքը ընկավ
Իր երկյուղից,

Ու ծառի տակ
Ինքը լացեց,

Արցունքներով
Այտը թացեց,

Իրար բերեց
Խիտ ունքերը,

Ինքը սրբեց
Արցունքները,

Ոչ ոք գաղտնիքն
Այդ չտեսավ,

Միայն քամին
Վրա հասավ,

Ծիծաղելով
Մոտով սահեց,

Բայց գաղտնիքը
Մրտում պահեց:

ԹԵ ԴՈՒ ԼԻՆԵՍ

Չեղքիս կարմիր գնդակը
Ընկավ Բարկենենց բակը,
Մինչեւ հասա ես նրան,
Վազեց Բարկենն ու առավ,
Տարավ թաքցրեց թիհ տակ,
Ու դեռ կանգնեց նա շիտակ,
Թե չեմ տեսել գնդակը,
Այն չի ընկել մեր բակը:
Ասի.- Անոթ քեզ, Բարկեն,
Ի՞նչ ես ընկել դես ու դեն,
Թե հանձն առնես,
Եղբոր պես
Ին գնդակը
Կտամ քեզ:
Բայց չեր ուզում ինձ լսել,
Պնդում էր, որ չի տեսել,
Դե ինձ ասա, Յովիաննես,
Թե դու լինես ի՞նչ կանես:

ՄԵՐ ԱՍՈՒՇԸ

- Լավ աղջիկ է Անուշը,-
Ճիացած է Վանուշը,
Նա լսում է տատիկին,
Փայփայում է Սաթիկին,
Միշտ մայրիկին օգնում է.
Լինի բակում, թե տանը,
Ինքը փոքրիկ մի աղջիկ,
Ո՞նց է անում այդքանը:

ԻՄ ՆԱՇԻՌ

ԱՇԽԱՏՈՒՄ Է ԱՇՈՏԸ

Մայրը կանչեց Աշոտին.

- Աշոտ, արի՛, ճաշում ենք:

Աշոտն ասաց.- Չեմ կարող,

Աշխատանքս մնում է:

Քույրը կանչեց Աշոտին.

- Աշոտ, արի՛, ճաշում ենք:

Աշոտն ասաց.- Չեմ կարող,

Աշխատանքս մնում է:

Պապն էլ կանչեց,

Չգնաց,

Տատն էլ կանչեց,

Չգնաց,

Ու մոտեցավ հայրիկը.

- Աշոտ, այդ ի՞նչ ես անում:

- Աշխատում եմ, հայրիկ ջան,
ինձ ինչո՞ւ եք խանգարում:

ԹՈՌՆԻԿԻ ՆԱՍԱԿԸ

Քո նկարը,

Այ տատի,

Կպցրել եմ

Մեր պատին:

Քեզ չեմ տեսել

Մի տարի...

Սպասում եմ,

Շուտ արի:

ՄԱՅՐԻԿՆ ՈՒ ԲԱԼԻԿԸ

Մի բույն տեսավ
Հանեսն այգում,
ճտերն ուզեց
Հանել թաքուն:
Մայրը տեսավ,
Ասաց.- Հանես,
Այդպիսի բան
Երբեք չանես,
Տեսա՞՞ր նրանք
Ինչպես տխուր
Ծլվլացին,
Նրանց մայրը
Հեռվից կգա
Ու կլացի:

ԻՆՉՈ՞Ւ ԱՆՈՒԾ ԵՆ

-Մայրի՞կ, ինչո՞ւ
Մեր ճաշերը
Միշտ էլ լավն են
Ու անուշ...
-Որովհետեւ
ճաշ եփելիս
Օգնում ես ինձ,
ի՞ն Անուշ:

ԻԱ ՆԱՇԻՔ

ԽԱՂԱԼԻՔՆԵՐԻ ԱՇԽԱՐՉՈՒՄ

Սաթիկն առավ տիկնիկին,
Դետո կանչեց քույրիկին,
Ասաց. Արի գնանք բակ,
«Տուն-տուն» խաղանք ծառի տակ:
Քույրը ասաց.- Սաթիկ, տե՛ս,
Խռովել է արջուկը,
Արջուկն ասաց.- Սաթիկ, տե՛ս,
Խռովել է եւ մուկը,
Մկնիկն ասաց.- Սաթիկ, տե՛ս,
Խռովել է շնիկը,
Շնիկն ասաց.- Սաթիկ, տե՛ս,
Խռովել է փիսիկը,
Մեզ բոլորիս տար պարտեզ,
Որ ամենքս սիրենք քեզ:
Սաթիկն առավ բոլորին,
Ուրախ-ուրախ իջավ բակ,
Եվ սկսվեց մեր բակուն
Մի իսկական խրախճանք:

ՄԵԾ ԵՄ ԵՄ

Սովորել եմ
ճաշելը,
Մինչեւ տասը
Հաշվելը,
Գիտեմ նաեւ
Մեր հասցեն,
Ասա, մեծ չե՞մ,
Այ Արսեն:

ԽԱՆՈՒԹՈՒՄ

- Իմ լավ բալիկ,
Իմ Ալիկ,
Դու սիրում ես
Խաղալիք,
Ցույց տուր, որի՞ց առնեմ ես,
Զկնի՞կ, բաղի՞կ, թե՞ աղվես,
Գուցե տանկն այս, դե ասա՛:
- Չէ՛, տանկը ի՞նչ եմ անում,
Երեկ տեսա կինոյում՝
Տանկով մարդ են սպանում:

ԴԱՌՆԱՄ ՓՈՔՐԻԿ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍ

Յյուր է եկել
Մեզ ծիծառը,
Բողբոջել են
Թուփին ու ծառը,
Առնեմ բահը,
Առու հանեմ,
Այգին ջրեմ
Են եղրոսր պես,
Որ դպրոցում
Ինձ անվանեն
Փոքրի՞կ-կիոքրի՞կ
Գյուղատնտես:

ԾՈՒՅԼԵՐԻ ԶՐՈՒՅՑՅՈՒ

Ավոն, Դավոն,
Մի առավոտ,
Պառկել էին
Տան պատի մոտ:
Ու Դավոյից հարցրեց Ավոն.
-Ասա, Դավո,
Քանի՞ օրում
Դու կարող ես
Այս անկյունից մյուսն հասնել:
Դավոն ասաց.
-Առավոտյան թե շուտ ելնեմ,
Տատիկն օգնի՝
Ուտեմ, խմեմ,
Դե ի՞նչ ասեմ,
Երեկոյան գուցե հասնեմ:
Ու զարմացած
Ավոն ասաց.
-Դավո, շատ ես հետաքրքիր,
Ինքնաթի՞ն ես դու, թե հրթիո:

ԱՂՋԻԿՆԵՐԻ ՎԵՆԸ

-Ես ալ վարդ եմ,
-Ես՝ մանուշակ,
-Ես մեխակ եմ,
-Իսկ ես՝ շուշան,
-Ես՝ յասաման,
-Իսկ ես՝ հասմիկ,
-Ես՝ անթառամ,
-Ես էլ՝ նարգիզ,
-Այ աղջիկներ,
Շուշան, Զվարդ,
Նազիկ, Սուսիկ,
Յասմիկ, Նվարդ,
Շաղիկներ եք,
ճիշտ եք ասում,
Ապա տեսե՞ք,
Ոնց եք նազում,
Թե մեկ-մեկու
Չհավանեք,
Կրառամեք
Դուք լուր ու մունջ,
Իսկ իրար իետ
Դուք կկազմեք
Բուրումնավետ
Մի ծաղկեփունջ:

ԹԱՐԹԱԳԵՍԻ ԿԱՌՈՒՅՑՈՒՄ

Դայկը ասաց.
-Արտագես,
Արի գնանք
Թարթաղէս:
Ու գնացին երկուսով,
Մռով սարի ծախ ուսով,
Դենց որ հասան Թարթաղին,
Դայկը ասաց.-Դե արի,
Արի շրջենք կառույցում,
Տես, ինչե՞ր են կառուցում:
Երբ թունելին մոտեցան,
Արտագեսը զարմացավ.
-Գետը ո՞նց է փրփրել,
Ժայռն այս ինչպե՞ս են փորել:
Դայկը հանգիստ առավ քիչ,
Դետո պատմեց ամեն ինչ.
-Տեսնու՞ն ես այն մեքենան,
Լենինգրադից են բերել,
Իսկ այս մեկը՝ այս հսկան,
Մոսկվան է մեզ նվիրել:
Երեւանից, Սեւանից
Կառուցողներ են եկել,
Գիշեր ցերեկ միասին
Դսկա այդ ժայռը ճեղքել,

ԻԱՅ ՆԱՇԽՋ

Մեկտեղ փորել թունելը,
Փոխել հունը Թարթառի,
Խսկ աջ ափից մինչեւ ձախ,
Կպատճեշեն այս տարի:
Ու հետո էլ թունելը
Մեծ դարպասով կփակեն,
Ծով կդառնա Թարթառը,
Ալիքները կծափեն,
Նոր կառուցվող կայանում
Կփոխարկվեն շողերի,
Զրանցքներով կհոսեն,
Կհասնեն չոր հողերին,
ճերմակ բանքակ կդառնան,
Կդառնան նուռ ու խաղող,
Ու զմրուխտով կպատեն
Մեր հանդերը ոսկեշող:
Արտագեսը լսում էր
Ճայկի ամեն մի բառը,
Թվում էր, թե տեսնում է
Ծովի փոխված Թարթառը:

ԻՄ ՆԱՇԻՌ

ՓՈՔՐԻԿ ԱՅԳԵՊԱՆՆԵՐԸ

Գալիս են, գալիս
Մեր մանուկները-
Խաչատուր պապի
Փոքրիկ թռոները:
Գալիս են այգի
Գցեն այս գարնան,
Որ պապիկի պես
Այգեպան դառնան:

ԼԱՐԱՅԻ ՄԽԱԼԸ

Մի օր գալիս է Արան,
Տեսնում իր քույրը՝ Լարան
Լաց է լինում, ախ քաշուն,
Թե տիկնիկը չի ճաշուն:
Տատն ասուն է.
-Այ Լարա,
Անոթ է քեզ,
Սուս արա...
Զուր ես լացուն ու ճշուն,
Տիկնիկը հո չի՝ շնչուն,
Դրա համար,
Ին բալիկ,
Դա կոչվուն է
Խաղալիք:

ԻՄ ՆԱՇԻՌ

ՍԵԹԻ ԽԱՂԱԼԻՔՆԵՐԸ

Տանը ունեմ
Տասը հատ կով՝
Դորթուկներով,
Տասը հատ խոզ՝
Խոճկորներով,
Տասը ոչխար՝
Գառնուկներով,
Մի այդքան հավ՝
ճուտիկներով:
Բերեմ, սարքեմ
Մի մեծ ֆերմա,
Ու խնամենք
Ես ու Էմնան,
Առատ միս ու
Կաք ստանանք,
Որ մեր գյուղը
Հարստանա:

ԳԱՐՆԱՆ ԱՄՊԸ

Ամպը գետի վրա չոքեց,
Մի կուշտ խմեց ու բարձրացավ.
Երկինքն ամպին առավ գիրկը,
Ամպը շիկնեց ու թանձրացավ,
Ամպը ճչաց, գոռաց ամպը,
Բարակ-բարակ անձրեւ տեղաց,
Ամպը գնաց անձրեւի հետ,
Ծիածանե գոտին թողած:

ԱՐՏԱԾԵՍԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Տիգրանն ու Ես
Մեր քակում
Կառուցում Ենք
Մի ակումբ,
Սոս, Եկ քարտաշ
Դու դարձիր,
Մեզ հետ գործին
Մասնակցիր.
Դու կտաշես
Քարերը,
Ես կշարեմ
Պատերը,
Իսկ Տիգրանն ու
Վանիկը
Կպատրաստեն
Տանիքը:
Ճետո շուրջը
Կմաքրենք,
Զբոսայգի
Կղարձնենք,
Կզարդարենք
Ծառերով,
Պայծառ-պայծառ
Լույսերով...
Ինչպես ակումբն
Ավանի,
Որ ավարտել Են Երեկ
Վարպետները անվանի:

Ի՞ՆՉ ԵՄ ՆԿԱՐԵԼ

Սերն ու Յարութը
Ասացին.-Կարե՞ն,
Բեր տեսմենք հապա
Ի՞նչ ես նկարել:
-Ինչ եմ նկարե՞լ,
Դե տեսեք հիմա,-
Ասաց Կարենը
Իր ընկերներին:
-Այս մեր երկիրն է,
Իսկ այս՝ Մերկուրին,
Այս Վեներան է,
Այս էլ Ուրալը,
Յեռվում Մարսն է, ա՝յ,
Երկրի պես կլոր,
Վրան ավտոմատ
Կայանը մեր նոր:
Այս Պլուտոնն է,
Այս Յուպիտերը,
Իսկ այս Սատուրնն է
Գլխին անպերը:
Աջից Նեպտունն է,
Զախից՝ Արեւը,
Ուկեղեն թագը
Գլխավերեւը:
Հիմա ինքներդ

ԻԱՅ ՆԱՇԽՈՎ

Պատասխանեցեք,
Ի՞նչ եմ նկարել,
Հարություն ու Սեթ:
-ինչ ես նկարե՞լ,
Մի ողջ տիեզերք:

ՀԵՌՈՒՏԱՑՈՒՅՑԻ ԱՌԱՋ

-Հեռուստացույցը
Բացել եմ, Կարեն,-
Փոքրիկ եղբորը
Ասաց Մարինեն:

Բա քեզ չի ասե՞լ
Մեր քերի Մոսին,
Հայրիկն այնտեղից
Հիմա կխոսի:

Շուշ արի, հանգիստ
Նստենք, այ Կարեն,
Որ երթ նա խոսի,
Մենք չխանգարենք:

ԻՄ ԱՎԵՐՔ

ՓՈՔՐԻԿ ԽՈՂԱՐԱՐԸ

Այսօր ինքս
Կեփեմ ապուր,
Վարդին, Յայկին
Կկանչեմ հյուր:
Եթե հանկարծ
Լավ չստացվի,
Ընկերներս
Ինձ կներեն,
Փոքրիկ եմ ես,
Եփելը դեռ
Կսովորեմ:

ՔՆԿՈՏ ՆԻՆԵԼԸ

Սեթը քրոջն
Ասաց.- Նինել,
Լուսացել է,
Ի՞նչ ես քնել:
Դե շուտ վեր կաց,
Կեսօր դառավ,
Բաժակիդ մեջ
Կաթը սառավ:
Փիսոն ծամիդ
Յետ խաղում է
Ու քեզ վրա
Ծիծաղում է:

ԻՄ ՆԱՇԻՌ

ԲԵՐՔԻ ՏՈՆ

-Ամառ է, ամառ,
Հասել է արտօ,
Եկեք, մանուկներ,-
Կանչեց Յրանտը,-

Եկեք բերքի տոն
Խաղանք բոլորս,
Շուտ գործի անցեք,
Անցնում է օրը:

Վաչեն ասաց.- Ես
Արտօ կինձեմ,
Դե շուտ կոմքայնը
Հասցրու, Փառանձեմ:

-Ես իմ ավտոյով,-
Ասաց Յամեստը,-
Բերքը կտանձեմ,
Լցնեմ պահեստը:

Արտաշեսը թե՝
-Յերիք է խաղանք,
Ես ու Նանան էլ
Ցորենը կաղանք:

Սաթիկը ասաց.
-Իսկ ես հացթուխ եմ,
Սարոն ինձ կօգնի,
Հացը կրիսեմ:

ԻՄ ՆԱՇԻՌ

Նազիկը ասաց.
-Ես ու Համիկը
Այգուց կրերենք
Խաղողն ու միրգը:

Հայկանուշն էլ, թե.
Ես ու Ալիկը
Սեղան կրացենք
Բարիքով լիքը:

-Ապրեք, բալիկներ,-
Տեսավ ու ասաց
Քեռի Անտոնը,-
Այդպես է գալիս
Բերքի մեծ տոնը:

ՅՈԳԱՏԱՐ ՔՈՒՅՐԻԿԸ

Թուղթ ու մատիտ
Բեր, Կարեն,
Որ ես դպրոց
Նկարեմ:
Դպրոցում էլ՝
Նստարան,
Որտեղ նստի
Մեր Արան:

ԻԱՅ ՆԱՇԽՈՎ

ԻՄ ՆՎԵՐԸ

Մարտի ութին
Ի՞նչ նվիրեմ
Իմ մայրիկին.
-իմ նկարած
Նոր բացիկը՝
Վրան ծաղիկ,
Իմ պատրաստած
Կարմիր վարդը՝
Վրան շաղիկ:
Որ մայրիկը
Զգա նաեւ
Վարդի բույրը,
Նրա հետ եւ
Կնվիրեմ
Իմ համբույրը:

ԶԻ ԵՄ ՆՍՏԵԼ

Ճայրիկիս հետ նստել եմ ձի,
Գնում եմ գյուղ,
Ինչքան էլ նա արագ վազի,
Չունեմ երկյուղ:
Բայց հայրիկից խնդրում եմ ես.
-Դանդաղ գնանք,
Որ մեր «Քուռօկիկ» ձիու վրա
Երկար մնանք:

ԿՈՆՖԵՏԻ ԾԱՌ

Վայ, մայրիկ ջան,
Տես, Յամիկը
Ի՞նչ է արել.
Մի կոնֆետ է
Բերել պարտեզ,
Հողում թաղել,
Ինձ հարցնում է.
Պարտեզը ե՞րբ
Կկանաչի...
Կարծում է, թե
Կոնֆետի ծառ
Պիտի աճի:

ԱՇՈՏԻ ԳԱՍԳԱՏԸ

Ինձ ասում են,
Թե քույլ եմ,
Ինձ ասում են,
Թե ծույլ եմ...
Երբ ասում են՝
Նստում եմ,
Ինչ տալիս են,
Ուտում եմ,
Ուզած տեղս
Գնում եմ,
Ուզած պահին
Քնում եմ:
Դե, դու ասա,
Այ նանի,
Ծովյան այսքանը
Ո՞նց կանի:

ՀԱՅԿԻ ԿԱՏԱԿԸ

Հայկը եկավ դպրոցից,
Ասաց՝ մայրիկ, աչքու լուս,
Դասերս անգիր են արել.
Երեք «10» են տուն բերել:
Ուրախացավ մայրիկը,
Օրագիրը բացեց շուտ,
Ասաց՝ ինչո՞ւ ես խաբում,
Երբեք դու չես խոսել սուտ,
Չես սովորել դասերդ,
Ասա, ո՞ւր են «տասեր»-դ:
Հայկը տեղից վեր թռավ
Ու մորն ասաց ցնծալի.
-Դե՛ ծիծաղիր, մայրիկ ջան,
Այսօր մեկն է ապրիլի:

ՄԵՐ ԲԱՆՁԱՐԱՆՈՑԸ

Ունենք մի լավ բանջարանոց,
Մշակում է հայրս,
Հազած բլուզ, կապած գոգնոց,
Նրան օգնում է մայրս:
Ես էլ նրանց օգնում եմ միշտ,
Ցանում կինծ ու կոտեմ,
Ոեհան եմ ցանում, սամիթ,
Որ տիրոջ պես ուտեմ:
Ցանում եմ բողկ, գազար, բազուկ,
Ցանում եմ սոխ, սխտոր,
Մայրս հպարտ ասում է ինձ.
-Դու պատկերն ես քո հոր:

ՊԱՊԻՍ ԱՅԳԻՆ

Պապիկս ունի խաղողայգի
Ու մրգերի մառան,
Իսկ ես ունեմ փոքրիկ մի շուն
Ու մի թմփլիկ մռօան:
Դեռ փոքրիկ եմ ու չեմ կարող
Այգում օգնել պապիս,
Սակայն բարի իմ պապիկը
Սպասում է ճամփիս:
Միշտ գնում ենք պապիս այգին
Շունս, կատուս ու ես,
Եվ նրանք էլ պապիկիս մոտ
Թռչկոտում են ինձ պես:

Ո՞Վ Է ԱՍԵԼ

Ո՞վ է ասել, ո՞վ է ասել,
Թե փոքրիկ եմ ես,
Ո՞ր փոքրիկն է գործը սիրում
Իր հայրիկի պես:
Երբ մաքրում են բակ ու փողոց,
Ես էլ եմ օգնում,
Ծառատունկին՝ մեծ բահն առած,
Հորս մոտ են գնում:
Ծառ ենք տնկում մենք միասին,
Այգում, եզրին մայթի,
Որ գարնանը հասակ առնեն՝
Կանաչ շորեր հագին:
Ո՞վ է ասել, ո՞վ է ասել,
Թե փոքրիկ եմ ես,
Ո՞ր փոքրիկն է գործը սիրում
Իր հայրիկի պես:

2009թ., Ստեփանակերտ

ԻՄ ՆԱԿԱՌ

ԱՃԱՎԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ

ՄԱՍՈՒԿՆԵՐԻ ԴԱՄԱՐ

Աշխարհում մրցույթներ շատ են կազմակերպվում: Լինում են գիտության, երգի, գրականության եւ այլ մրցույթներ: Սակայն ուրիշ է մեր մրցույթը: Այն նայր հողի գույների եւ քաղցրության, աստվածային պարգևների խտացումը հանդիսացող արեւահամ մրգերի, պտուղների, բույսերի մրցույթը: Բոլորը գիտեն մեր քաղցրության եւ անհրաժեշտության մասին: Սակայն չի վճառում, որ իր ազատության եւ անկախության համար մարտնչող արցախցու ածեցրած բարիքները հանդես գան, մրցեն եւ ազդարարեն, որ ինչպես ընտիր է արցախցին, այնպես էլ ընտիր է նրա ստեղծած բարիքը:

ԽՆՉՈՐԸ

Կարմրաթշիկ խնձորն եմ ես,
Սիրունատես, հյութալի,
Առողջարար մոր կաթի պես
Փոքրերին եմ կյանք տալիս:

ԽԱՂՈՂԸ

Ես խաղողն եմ տեսակ-տեսակ,
Մաքրող դեղն եմ արյունի,
Ծառայում եմ ամեն տեսակ,
Ե՛վ պտուղ եմ, եւ գինի:

ԻՄ ԱՎԵՐՔ

ՏԱՆՉԸ

Տանձն եմ ընտիր հյութով հուօթի,
Յին եմ՝ Աստօն բերածը,
Ով ինձ ճաշից հետո ուտի,
Շուտ կմարսի կերածը:

ՀՈԽԸ

Ականջներում աղմուկ ունեք,
Գլխացավ ու հոդացավ,
Տարին բոլոր, թե ինձ ուտեք,
Չեք ունենա ոչ մի ցավ:

ԹՈՒԹԸ

Ես ամռանն եմ աշխարհ գալիս,
Իմ քաղցրությամբ մեղմ ու ժիր՝
Մեծերին օղի եմ տալիս,
Սանուկներին դոշաբ, չիր:

ԾԻՐԱԸԸ

Արարվում եմ սիրունատես,
Արեւահամ հյութերից,
Մարմինները մաքրում եմ ես
Վնասակար նյութերից:

ԻՄ ԱՎԵՐՔ

ԸՆԿՈՒՅՉԸ

Միշտ մրցում եմ ծիրանի հետ,
Դեռ դարերի խորքերից,
Մարսողական օրգանները
Ես մաքրում եմ որդերից:

ԴԵՂՁԸ

Քաղցր եմ, ինչպես նուշն ու մեղրը,
Դա իմ համն է ձեզ հուշում,
Իմացեք, որ ընտիր դեղ եմ,
Շաքարախտն եմ ես բուժում:

ՍԵԽԸ

Լուսնի նման ամեն տեղ եմ,
Մրգերի համն ունեմ ես,
Ներվեր բուժող ընտիր դեղ եմ,
Ծառայում եմ սիրով ձեզ:

ՍՈԽԸ

Ինձ կըողին ես չեմ ներում
Ու չեմ տանում թունդ նազը,
Բայց ճաշերի համն եմ բերում
Եվ բուժում եմ թունդ հազը:

ԻՄ ԱՎԵՐՔ

ՍԽՏՈՐԸ

Ստամոքսի ցավն եմ բուժում,
Անքնության դեղն եմ ես,
Երիկամի քարն եմ խժում
Զրաղացի քարի պես:

ԹՌՒՋԸ

Անունս սուրբ գիրքն է գրել,
Մեծամիտ չեմ, ինձ ներեք,
Թե ձեր միտքն եք ուզում սրել,
Ես պատրաստ եմ, ինձ կերեք:

ՆԱՐԻՆՃԸ

Ինձ հարգանքով պատիվ տվեք,
Արեւի պես վառ եմ, ջինջ,
Երբ հոգնում եք, ինձնից օգտվեք,
Կազդուրիչ եմ, ամոքիչ:

ԳԱԶԱՐԸ

Արյան պակա՞ս ունեք, խնդրեմ,
Խնդրեմ, ձեր ձա՞յնն է խզված,
Յուն թե եփած, սուփրին դրեք,
Ձեր բուժմանն եմ ես լծված:

ԻԱՅ ՆԱՇԻՐԻ

ԱՐՍԱՎԸ

Փայլում եմ ոնց ջինջ աչկներ,
Ասես քնքույշ սաթ եմ ես,
Լավ իմացեք, վարդ աղջկներ,
Երեխամոր կաթ եմ ես:

ՉԱՄԻՉԸ

Ես չամիչն եմ, չամիչը,
Ծնված քաղցր խաղողից,
Դեղերի մեջ ամեն ինչ եմ,
Սնված շողից ու հողից:

ՍԵՐԿԵՎԻԼԸ

Սերկեւիլն եմ թագուհի,
Ընտիր միրզ եմ էն գլխից,
Դրա համար տանտիրուիխն
Զգում է շուտ խլել ինձ:

ԲՈԼՈՐԸ ՄԻԱՍԻՆ

Մենք Արցախի ճոխ հնձանն ենք,
Համ ու հոտով միշտ գերող,
Նրա աշնան ծիածանն ենք,
Արցախսեցուն փառք բերող:
2003թ.

ԻՄ ՆԱՇԻՌ

ՀԵՔԻԱԹ ՊԱՌԱՎԻ, ԱՅԾԻ ԵՎ ԱՌՅՈՒԺԻ ՄԱՍԻՆ

Թե ո՞ր գյուղում, չգիտեմ,
Թե ո՞ր հյուղում, չգիտեմ...
Բայց լավ գիտեմ՝ Արցախում,
Օրենքների տակ ծախու,
Ապրում էր մի պառավ կին,
Հույսը՝ ճրագ, հոգսը՝ հին...

Պառավը մի այծ ուներ,
Իր տան ապրուստն ու սյունն էր,
Այծն էլ ուներ մի ուլիկ,
Այդ պառավին՝ ոնց բալիկ,
Այծը Աստծոն օրհնանքով,
Նրանց պահում էր կաթով...

Երբ իջնում էր երեկոն,
Նստում էին երեքով,
Կաթով կոտրած ծարավը՝
Մեղմ երգում էր պառավը.
«Մեկ, երկու, երեք, չորս,
Իմ հավան ա տասնչորս»:
Մեջքից մի քիչ կորացած,
Օրվա հոգսը մոռացած,
Կաթ դարձնելով կերածը,
Ուրախ մկկում էր այծը.
«Վեր կաց պարիր, ուլիկ ջան»,
Եվ ուլիկը ժրաջան,
Հոգում նանի օրորը,
Երջանկացնում էր մորը.

ԹԱ ՆԱՇԻՌ

«Մեկ, երկու, երեք, չորս,
Ես կպարեմ տասնչորս»:
Այդպես, ամեն երեկո,
Հոգսերի մեջ, երեքով,
Իրենց գործը կատարում,
Երգում էին ու պարում:

Մի անգամ էլ, ձմռանը,
Երբ խոտ չկար դռանը,
Այծը գնաց մեծ անտառ,
Ծանոթ էին թուփ ու ծառ,
Բողբոջներից կուշտ կերավ,
Եվ անտառից, երբ ելավ,
Հանկարծ դեմից երկու գող,
Պատրաստ բռնած թուր ու ձող,
Պատանդ վերցրին մայր այժին,
Տարան գյուղը դրացի:
Ասին. «Մերն է անտառը,
Մերն են այս դաշտն ու սարը,
Մեր բողբոջներն ես կերել,
Մեր ծառերն ես դու քերել,
Մազդ կտաս մեր յուրտին,
Իսկ կաթդ՝ մեր չոջուխին»:

Իսկ հետեւյալ
Առավոտ,
Պիհնդ փաթաթած
Զեռք ու ոտ,
Նանը նոր ցավն
Իր խորին,
Գյուղում պատմեց

ԻՄ ԱՎԵՐՔ

Բոլորին.
Որ չի եկել
Այծը տուն,
Որ գիշերը
Ինքն անքուն,
Մորը կանչող
Ուի քով,
Սպասել է
Տագնապով...
Որ պոզավոր
Իր այծին
Անգամ գայլը
Արնածին,
Եթե նույնիսկ
Կամենա,
Չի էլ կարող
Մոտենալ,
Որ իր այծը կաթնաբեր,
Դարձել է գող մարդու կեր:
Խորհուրդ տվեց ծեր Պետին,
Ուղիղ դիմել պարետին:
Եվ ուլիկի պոզից բռնած,
Իր ապրուստի հոգսից քրտնած,
Կորած այծի ցավը սրտում,
Նանը գնաց պարետատուն:
Ասաց. «Ճիմա
Ի՞նչ անեն,
Այս որբուկին
Ո՞ւր տանեմ,

ԻԱՅ ՆԱՇԽՈՎ

Ինչո՞վ սմեմ
Ես նրան,
Գտեք մորը,
Գեներալ»:

Սակայն պարետը վեր կացավ տեղից,
Ոլորեց ծայրը շիկահեր բեղի,
Նայեց արծվատես
Եվ խոսեց այսպես.
«Այծդ խախտել է սահմանն ուրիշի,
Նա պետք է լիներ զգոն եւ ուշիմ,
Եվ պարզվում է, որ նա գաղտագողի,
Աչքը տնկել է հարեւան հողին,
Մենք չենք զբաղվում գողության հարցով,
Այծդ կարող ես հետ բերել վարձով»:
Բողոք-դիմումը նետելով գետին,
Պառավը ըմբռստ դիմեց պարետին.
«Ճողեն գլուխը ես թագավորի,
Նա ժողովրդին հասցեց այս օրին:
Գողերն են հիմա երկիրը վարում,
Աստված նրա գահն ինչո՞ւ չի վառում»:

Պարետը ելավ ու նորից նստեց,
Նստեց ու սաստեց.
«Պառավ, քո այծը գողերն են տարել,
Մեր թագավորը քեզ ի՞նչ է արել,
Նա լավն է, բարի, գործում՝ անզիջում,
Ինչո՞ւ ես նրան այդպես անիծում»:
«Թե լավն է, իրոք, քո թագավորը,
Ինչո՞ւ է ապա
Օրենքը վատ,

ԻՄ ՆԱՇԻՌ

Կարգը վատ,
Պարետը վատ,
Կյանքը վատ,
Ինչո՞ւ է նա պաշտոն տալիս գռփողին,
Եվ գռփողն էլ պաշտպանում է միշտ գողին,
Գողն էլ խլել ու տարել է իմ այծին,
Ախ, որտեղի՞ց մեզ համար լուս կբացվի:
Ճողեմ գլուխը ես թագավորի,
Նա ժողովրդին հասցեց այս օրին»:-
Ասաց պառավն ու դուրս գնաց՝
Որբ ուլիկի պողից բռնած:
Բայց պառավը ճամփին դիմեց քաջ Առյուծին,
Որ հանել էր կորյուններին ըմբռստ ցույցի...
Ու երբ տեսավ ուլին՝ տատի լայն փեշի տակ,
Քաջ Առյուծը շարքերի մեջ դարձավ կրակ,
Ասաց. «Նանի, որբ ուլիկին ձեռքից չտաս,
Նեղ օրերի վերջը շուտով, շուտով կգա,
Ճետ կվերցնենք մենք քո այծին,
Կփոշմանի չար դրացին,
Որ ուզում է տերը դառնալ մեր անտառի,
Ճեքիաթային դաշտ ու սարի,
Կվերանա մեզ շղթայող օրենքն անհետ,
Ել չեն լինի նենք թագավոր ու կեղծ պարետ:
Չարից, գողից մենք կփրկենք Արցախը մեր,
Ու կդառնանք պապենական մեր հողին տեր»:

Դեկտեմբեր, 1990թ.

ՄԵՐ ԱՅԲՈՒԲԵՆԸ

Ա-ն Արարատված Արցախն է ազատ,
Բ-ն Բարիքներն են Հայոց սուրբ հողի,
Գ-ն Գարուններն են՝ ներկա ու գալիք,
Դ-ն Դարերն են մեր իմաստությամբ լի:
Ե-ն Երկինքն է մեր՝ աստղաբույլերով,
Զ-ն Չվարթ ձայնն է մեր մանուկների,
Է-ն Էռլյունն է մեր աշխարհաշեն,
Ը-ն Ընթացքն է մեր անքեկանելի:
Թ-ն Թռնրատունն ու թռնրահացն է մեր,
Ժ-ն Ժրաջան ու բարեբեր ոգին.
Ի-ն Իրավունքն է առած հաղթ թեւեր,
Լ-ն Լուծն է՝ լծված մեր բախտի խաչին:
Խ-ն Խուրծն է հնձած ոսկի արտերի,
Ծ-ն Ծնունդն է մեր մանկանց ու երգի,
Կ-ն Կալն է՝ առատ մեր հունձքը կալսող,
Ջ-ն Ջարությունն է հոգեւկան հերկի:
Զ-ն Զնիալներն են ձնձաղիկ ծնող,
Ղ-ն Ղողանջներն են արթնացման զանգի,
ճ-ն ճառընտիրն է եղեռնից փրկված,
Ս-ն Մռով սարն է՝ հառնած մեր հոգում:
Յ-ն Յուրահատուկ բախտն է մեզ տրված,
Ն-ն Նռան գինին՝ խոսքը կենացի,
Շ-ն Շրջյունն է մեր բարեբեր աշնան,
Ո-ն Ոգին է մեր՝ թեւավոր ու խենթ:
Չ-ն Չարերի դեմ մեր պարզած թուրն է,
Պ-ն Պարագիծն է մեր թեժ պարերի,
Զ-ն Զուրն է լեռան՝ ջրանցքներ դառած,
Ո-ն Ուրունն է՝ սերունդներ կրթող:

ԻՄ ԱՎԵՐՔ

Ս-ն Սերությունն է, որ սեր է բերում,
Վ-ն Վարդաստանն է՝ վաղորդյան շողով,
Տ-ն Տերն է, տունն է՝ Տիրոջ օրինանքով,
Ռ-ն Ռոպեն է՝ դարի քայլվածքով:
Ց-ն Ցնօթությունն է մեր այբուբենված,
Ու-ն Ուրախության ուժն ու երազը,
Փ-ն Փառքն է հայոց՝ աշխարհը գերող,
Ք-ն Քրիստոսված բարությունը մեր:
Օ-ն Օրիներգն է մեր, օրենքն է արդար,
Ֆ-ն Ֆրիկն է մեր, Ռաֆֆին է համճար:
Ֆա-մեղեղին է՝ աստվածանվեր,
Ֆրազն ու ֆազն է, ֆենոմենն է մեր:

2005, Ստեփանակերտ



Այբուբենված նվագ

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԹՈՂ ԱՆՇԵԶ ՄՆԱ

Օրը պայծառ էր, արեւն էր ժպտում,
Կապույտ աչքի պես պարզ էր երկինքը,
Չգիտեն ինչո՞ւ հանկարծ իմ սրտում
Մեղմորեն շրշաց իմ կյանքի գիրքը:

Թերթեցի մեկ-մեկ էջերը նրա...
Նորից փարվեցի կյանքիս հեքիաթին,
Կրօքիս տակ ասես գրկեցին իրար
Անցած օրերս, հուշերս անթիվ:

Երեք սեգ բարձունք տեսա ես այնտեղ,
Երեք ճոխ սեղան՝ ամեն բարձունքի,
Որպես թամադա երեք սեղանի,
Ես էի ընթացք տալիս խնջույքին:

Առաջին աստղոտ բարձունքի ուսին
Նստել էի ես՝ ջահել, առնացի,
Սոտս սիրածս էր՝ փունջը իմ լույսի,
Խմում էինք մեր սիրո կենացը:

Երկրորդ խնջույքը թեժ ու զվարթ էր,
Բայց մեր կենացը կիսել էի ես,
Կեսն իմ նորածին մանկանն էր արդեն,
Կենացի կեսը դեռ հասնում էր մեզ:

Ինձ ճերմակ տեսա բարձունքին երրորդ,
Իմ ճերմակահեր սիրածին հենված,
Եվ խմում էինք իրճվանքով անհուն,
Սիայն մեր որդու ու թոռան կենաց:

Մոռացել էինք մեզ ամբողջովին,
Մեզ տեսնում էինք մեր թոռնիկի մեջ,
Թող այս օրենքը երբեք չփոխվի,
Թող այս օրենքը միշտ մնա անշեց:

1980թ.

ՆՈՐՎԵԳԱԿԱՆ ՀՈՂՈՒՄ

**1. ՕՍԼՈՅՈՒՄ՝ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԻ
ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՄՈՏ**

Նորվեգական հողում զոհված հարազատներ,
Ազատության ջահեր՝ հավերժ հրաբորքոք,
Չեզ այցի ենք եկել Յայրենիքից մեր մեծ,-
Յայարտ մեր սրտերում անմարելի մորմոք:
Դուք ննջում եք խաղաղ այս բարձունքի վրա,
Չի մոռացել Օսլոն սխրանքը ձեր սրտանց,
Ծաղիկներ է բերում նորվեգուհին ահա,
Պատվանդանին դնում մի կարոտով անանց:
Յուշարձանից իր վեհ նայում է ձեզ սիրով
Նանսենը մեծ՝ խիղճը իր նուրբ հայրենիքի,
Եվ ուր որ է ասես, նա իր սրտի հրով
Պիտի ասի խոսքը ազնիվ երախտիքի:
Ազատաբաղծ հոգու երգը իր շրթերին
Իբսենն իր բարձունքից ահա նայում է ձեզ,
Գրիգն, ահա, առել ջութակն իր նրբածայն,
Չեր սխրանքի հիմնն է հնչեցնում ասես:
Նորվեգացին ելել, խոսքն է ասում իր թեժ,
Խաղաղության հուրն է աչքերի մեջ շողում,
Յամոզված է նա, որ ձեր բարձունքից հավերժ
Խաղաղ կյանքն եք հսկում նորվեգական հողում:

1984, Օսլո

2. ՄԱՐՎԱՆ ԲԵՐԴԻ ՄՈՏ

Քաղաքի ծայրին՝ ծովափին կապույտ,
Հառնել է մի բերդ, ոնց դեւ արնախում,
ԱՌԻՆ, քանի՛-քանի՛ ռազմագերիներ
Տանջվել են այստեղ մահվան երախում...
Զահել են եղել նրանք, երազուն՝
Մեր եղբայրները, հայրերը համառ.
Ստիպել են նրանց՝ բերդն այս կառուցել՝
Սուլանավերը թաքցնելու համար:
Եվ ով հյուծվել է՝ նետել են ծովը
Ու քրջացել վայրագությամբ նենգ:
Տասնինգ հազար գերիներն այդպես
Երազ են դարձել ալիքների հետ:
Օրերն են անցել մղձավանջային,
Փրկվել է նաեւ Տրոնիեյմը իին,
Իսկ այդ սեւ բերդը մնում է կանգուն,
Ֆաշիզմի հետքը՝ քաղաքի դեմքին:
Կանգնել ենք ահա տրոնիեյմցու հետ,
Ղեմքն այդ խոր վշտով ինձ պատմում է նա...
...Գուցե դու էլ ես ննջում այս ծովում,
Իմ ավագ եղբայր, ես ի՞նչ իմանամ:
Ցնցվում է հոգիս ցավից այդ անհուն,
Եվ հասկանում է ինձ նորվեգացին.
Մենք իրար դեմքի կարդում ենք ասես.
«Աշխարհը պիտի փրկենք կրակից,
Որ էլ ոչ մի տեղ ֆաշիզմ չծնվի,
Ոչ եղբայր կորցնենք, ոչ որդի, ոչ հայր,
Որ խաղաղ կյանքը միայն ծածանվի,
Աշխարհին արեւի բոլորի համար»:

1984թ., ք. Տրոնիեյմ

3. ԼՈՌԹՅԱՍՄԲ ՀԱՐԳԵՆՔ

Նորվեգիայի հյուսիսային շրջանների
ազատության համար զոհված զինվորների
հիշատակին

Բարձրահունչ խոսքեր պետք չեն, հիրավի,
Խոր լռությունը թող խոսի մի պահ,
Եկենք խորհուրդը հիշենք պատերի.
«Լռություն կա, որ արժե մի աշխարհ»:
Եվ առանց խոսքի հողը սիրեցին,
Եվ առանց խոսքի սրտերը տվին,
Եվ առանց խոսքի կյանքը փրկեցին,
Մեր երախտագետ սրտերն են վկա,
Մեր ոսկեղեղին արտերն են վկա,
Վկա են երգող մեր բալիկները,
Վկա են ծագող մեր գալիքները...
Եկեք վերիիշենք երգերը նրանց
Ու չմոռանանք վերքերը նրանց,
Եկեք վերիիշենք ձեռքերը նրանց,
Նրանց հերկերը պահենք հացարույր,
Նրանց պես տանենք բեռը մեր դարի,
Նրանց պես փրկենք գալիքն աշխարհի:

1984թ., ք. Ֆրիդրիխստատ

4. ՊԱՏԱՍԽԱՆ

Արեւմտագերմանական մի խումբ
ֆաշիստների, որոնց
հանդիպեցինք Օսլոյում.

Մենք կառուցել ենք,
Դուք ավերել եք,
Մենք հոգով ծաղկել,
Դուք ավերվել եք:
Դեղին մոլուցքով
ճչում եք նորից,
Չեք ուզում հեռու
Գնալ ձեր «հորից»,
Անգամ բեղեր եք
Պահում նրա պես,
Գոռում, ինչպես նա,
Աշխարհին ի տես:
Թե մոռացել եք
Դասը պատմության,
Նայեք շարքերին
Դուք խաղաղության,
Նրանք ելել են
Կյանքը գրկելու,
Գալիքի դատից
Դուք չեք փրկվելու:

1984թ., Օսլո

5. ԶՈՐՎԱԾՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ

Չոհվածների հիշատակը
Արձան չէ լոկ,
Չոհվածների հիշատակը
Սիրտ է, կարոտ,
Մոր աղցունք է
Այնքա՞ն վճիտ,
Քրոջ կանչ է
Ու եղբոր խիղճ,
Սիրո թեւ է,
Սիրո համբույր,
Կյանքի ծարավ
Ու կյանքի հուր,
ճանապարհ է
Վերելքների,
Ու ծիածան
Նոր բերքերի:
Խաղաղության ջահ է անշեզ՝
Գալիք բոլոր դարերի մեջ:

1984թ., Օսլո-Ստեփանակերտ

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՈՎՔ ՂԱՐԱԲԱԴԻ (ԵՐԳ)

Մեր ավանդական օջախ դու անմար,
Մեր քաջ պապերի կանգուն բերդապար,
Դարերից ծնված մեր բախտի կամար,
Սրտերից ծնված մեր հնչուն քնար:
Դու մեր վառ ներկա, պայծառ ապագա,
Մեր երազների, տենչերի փունջն անապական:

Ծաղկիր ու շողա մեր ազատ ջանքով,
Պարտական ենք քեզ մեր սրտով, կյանքով,
Փառք քեզ, Ղարաբաղ, քո հող ու հերլին,
Փառք քո վերելքին, քո երգին, քո առատ բերքին:

Յողվոր ես խնդուն ու մեծ գիտնական,
Ինաստուն, քարի այգեպան ես դու,
Եվ մեր դարավոր ու նոր պատմության
Ազնիվ ու արի պահապան ես դու:
Դու մեր վառ ներկա, պայծառ ապագա,
Մեր երազների, տենչերի փունջն անապական:

ԿՐԿՆԵՐԳ

Սերունդներիդ հետ քայլում ես հպարտ,
Թեւեր ես տալիս անգամ ժեռ քարին,
Լույսեր ես ցանում ամեն ակնթարթ,
Մեր սրտերի մեջ ու ճանապարհին:
Դու մեր վառ ներկա, պայծառ ապագա,
Մեր երազների, տենչերի փունջն անապական:

ԿՐԿՆԵՐԳ

1985թ., Ստեղանակերտ

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՎԵՐԺԻ ՈՐԴԻՆ

Նվիրում եմ Յրանտ Մաքելոյանին

Յայոց սարերի լանջերին կապույտ
Յավերժությունը արեւեց մի օր,
Յայոց սարերն էլ անառիկ ու լուրք,
Մի հին երգ էին երգում մեղմօրոր:
Շուրջը կապույտ էր, կապույտի մեջ նինջ,
Ոչ ամպրոպ կար խենթ, ոչ շանթ ու որոտ,
Ոչ Նարեկացու բողոքը կար ջինջ,
Ոչ Թումանյանի կանչերը բորբոք:
Անտարբերության շունչն էր ավերում,
Ու շեփորվում էր քծնանքի մի կոչ,
Ինչ կյանք է առել բազում դարերում,
Նորի անունով քանդվում էր անխոնջ:
Յավերժությունը նախատեց, ճշաց,
«Ո՞ւր են հանճարեղ քաջերը հայոց,
Ո՞ւր են մարդաշատ գյուղերը հայկյան,
Յայոց երկիրը դարձնում եք վայոց»:
ճշաց հավերժը, զայրույթից դողաց,
Ահնիձոր մտավ՝ սրտի մեջ խոր ցավ,
Իգնատ անունով մի հայի շողաց,
Օրինեց խրճիթը ու անհետացավ:
Անցան օրերը, ամիսներ անցան,
Իգնատի բակում արեւը ծլեց,
Ողջ Ահնիձորը աստղահունց դարձավ,
Յավերժի ուզած մանչուկը ծնվեց:
Ծնվեց մանչուկը ու դարձավ Յրանտ,
Եվ հերն անիծեց ստի ու չարի,
Եվ Ահնիձորի ցավով տառապած,

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դարձավ նոր խիղճը Հայոց աշխարհի:
Օգոստոսի պես կարմրեց ու վառեց,
Հայոց սարերի ծալքերը մտավ,
Մեր երազները սիրով բուրվառեց,
Ծառերի մեջ էլ մեր ցավը գտավ:
Մեր ծիչը հալեց, դարձրեց ծիածան
Եվ ասաց. -Դուք եք ձեր հողի տերը...
Նրա տենչերը ծաղիկներ դարձան,
Եվ վայելում է աշխարհի սերը:
Ու երբ նա գիրկը եկավ Արցախի,
Ու երբ սրտահույզ մտավ Ամարաս,
Հավերժությունը Մաշտոցի սիրով
Հայրաբար օրինեց գալուստը նրա:

21.12.1989, ք. Ստեփանակերտ



Զախից՝ գրականագետ
Զ. Ավետիսյանը, բանաստեղծի
որդին՝ Սուլեմանը

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼԻՏՎԱԿԱՆ ԵՐԳԵՐ

1. ԼԻՏՎԱ

Երբեք չեմ սպասել, որ այդքան քնքույշ կլինես,
Լիտվա, շնորհակալ եմ, որ այդպիսին ես դու:

Երբեք չեմ սպասել, որ այդքան գեղեցիկ կլինես,
Լիտվա, շնորհակալ եմ, որ այդպիսին ես դու:

Երբեք չեմ սպասել, որ այդքան անխոնջ կլինես,
Լիտվա, շնորհակալ եմ, որ այդպիսին ես դու:

Երբեք չեմ սպասել, որ այդքան հպարտ կլինես,
Լիտվա, շնորհակալ եմ, որ այդպիսին ես դու:

Երբեք չեմ սպասել, որ այդքան հերոս կլինես,
Լիտվա, շնորհակալ եմ, որ այդպիսին ես դու:

Երբեք չեմ սպասել, որ փարոս կլինես,
Լիտվա, շնորհակալ եմ, որ այդպիսին ես դու:

2. ՄԵԺԵԼԱՅՏԻՍ

Մեժելայտիս, Եղբայր, օգնիր ինձ, օգնիր,
Ոչ թե խանութըներում գնումներ անելու,
Այլ մարդու մեջ մարդուն գտնելու համար:

Մեժելայտիս, Եղբայր, օգնիր ինձ, օգնիր,
Ոչ թե թանգարաններում նկարներ դիտելու,
Այլ գեղեցիկը փնտրելու մարդկանց հոգիներում:

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սեժելայտիս, եղբայր, օգնիր ինձ, օգնիր,
Ոչ թե վարետե տեսնելու համար,
Այլ Գի դե Մանասի ոգին գտնելու:

Սեժելայտիս, եղբայր, օգնիր ինձ, օգնիր,
Քո երգած արեւային սրտերը գտնելու,
Սեժելայտիս, եղբայր, օգնի՞ր ինձ, օգնի՞ր...

3. ՊԻՐԶՅՈՒՊԻՍ ԳՅՈՒՂԻ ԽՈՍՔԸ

Յայրենական պատերազմի տարիներին
ֆաշիստները վառել են այդ գյուղը՝
բնակչության հետ մեկտեղ...

Իմ առաջվա երգը վերադարձեք դուք ինձ,
Որի մեջ թրթոռում էր իմ դարավոր ոգին,
Որտե՞ղ էիր, աշխարհ, եւ որտե՞ղ ես հիմա...

Արմատներն իմ առաջվա վերադարձեք դուք ինձ,
Կենաց ծառն իմ հնոց նրանցով էր դալար,
Որտե՞ղ էիր, աշխարհ, եւ որտե՞ղ ես հիմա...

Իմ առաջվա սիրտը վերադարձեք դուք ինձ,
Նրա մեջ էր եռում պապիս արյան կանչը,
Որտե՞ղ էիր, աշխարհ, եւ որտե՞ղ ես հիմա...

Յավատն իմ առաջվա վերադարձեք դուք ինձ,
Նրա մեջ էր ծփում գալիքն իմ սեփական,
Որտե՞ղ էիր, աշխարհ, եւ որտե՞ղ ես հիմա...

Մարդիկ, զգույշ եղեք, զգույշ եղեք, մարդիկ,
Դեռ դանակ է սրում չարը արդարի դեմ,
Զգույշ, նորից չասեք. «Որտե՞ղ էիր, աշխարհ»

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՇՈՒԹՑՈՒՆՆԵՐ

4. ԿԱՌԵԱՍԻ ՍԱՏԱՆԱՆԵՐԻ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Թանգարանում,
Սատանաներ են՝ բազում ու տարբեր...
Մարդիկ են ստեղծել...
Եվ բոլորը իրենց նման:
Տարբեր ազգերին պատկանող
Սատանաներ են,
Տարբեր ազգերի տարազներով,
Բայց տարազները՝ ծիշտ հոգիներ են,
Մարդկային հոգիներ,
Ամեն ինչին խառնվող,
Ամեն ինչին տեղյակ...
Հոգիներ են՝ կապույտ, սեւ, դեղին, կարմիր,
Խորամանկող, նաեւ բարի...
Պատկերացնում եք - բարի սատանա...
Ահա, այստեղ է,
Որ մարդիկ ավելի երկար են կանգնում,
Դիտում են, ժպտում, շեղակի նայում իրար.
Գուցե ոմանք ուզում են
Սատանայից փոխ առնել բարություն...
...Թող բարին կատարվի...

5. ՌԵՍՏՈՐԱՆՈՒՄ

Վիլյուս... Երեկո... ռեստորան...
Տուրիստներ ենք աշխույժ, արդեն քեֆի ծարավ,
Ղարաբաղն այդ պահին ամես ամբողջ հոգով
Զմեռային Վիլյուսը դարձրել էր հարավ:
Լիտվական նուրբ երգն է հնչում ալիք-ալիք,
Այնպես մոտ է մեր հին ու նոր երազի կանչին,

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Որ թվում է հայոց կարոտն առաջ իր մեջ
Մեր սրտերն է շոյում ջինջ Ներիսի ափին:
Մեր ծափերն են թնդում, շողում է ժախտը մեր,
Ու սեղան ենք բացել - Ղարաբաղյան սեղան,
Ընկերս ինձ խնդրում է, որ սրինգով մեր նուրբ
Ճնչեցնեմ երգեր հայկական:

Ու թարթախ ափից կտրած իմ եղեգնյա
Սրինգն են նվազում ինքնամոռաց ու լուրջ,
«Դե-յանան» երգի ղողանջները թախծոտ
Ասես թեւի տակ են առնում ռեստորանը ողջ:
Դահլիճը լուր է, հուզված լսում է նվազը իմ,
Ասես իր ջերմ երգն է լսում լիտվացին,
Նվազն ավարտում եմ, թրթում է հոգիս,
Շուրջն որոտում են ծափերը սրտածին:
Այս ի՞նչ հոգի ունես, իմ մայր ժողովուրդ,
Այս ի՞նչ թախիծ ունես լուսե երգերիդ մեջ...
...Ներիս գետի ափին լիտվացու մեծ սրտում
Երգդ արթնացրեց հազար երազ ու տենչ:

6. ՎԻԼՆՅՈՒՄ

Մնաս բարով, Վիլնյուս, Դու դարավոր քաղաք,
Դու նորակերտ քաղաք՝ իրաշք աշխարհ,
Այնպէս նուրբ ես ժպտում, այնպէս խաղաղ,
Ասես հույսի շող ես, լույսի նշխար:

Պատմությունդ այնքան հարուստ ու բազմերանգ,
Այնքան հերոսական, այնքան գերող,
Շոգու եռք է դարձել, դարձել մոր կանչ,
Երգ է դարձել՝ սրտերն իրար բերող:

ԽԱՌՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իմ Ղարաբաղ երկրի ազնիվ սերն եմ քերել,
Գանձասարիս նախշը, խոհը Ամարասիս,
Փռքրիկ իմ թարթառին քո Ներիսն է գերել,
Հմայված են քեզնով Մօռվ ու Քիրս:

Ափսոսում եմ, որ ես չգիտեմ լիտվերեն,
Սակայն ընթերցում եմ հոգիդ հպարտ,
Վերադարձիս պիտի պատմեմ իմ լեռներին,
Թե ինչով ես այդպես սեզ ու անպարտ...

1988թ., Խուճվար-Վետրվար

ՄԱՅՐՆ ՈՒ ՈՐԴԻՆ

Նվիրում եմ ընկերոջս՝ Բոլնիս-Խաչենցի
Միքայել Պոկանյանին
Ութսունամյա մայրը պառկել,
Մարում էր՝ ոնց արեւ,
Նրա կյանքը հույս ու փառք էր,
Աստված էր դառել:
Յիսունամյա որդին հուզված
Փայփայում էր մորը,
Եվ հիշում էր տառապալից
Նրա ամեն մի օրը:
-Կառողջանաս նորից, մայրիկ,
Թոռնիկներիդ հրով...
Մայրը ժպտաց միակ որդուն,
Ասաց անհուն սիրով.
«Ես իմ մասին չեմ մտածում,
Կուշտ եմ այս աշխարհից,
Իմ մեռնելուց հետո, որդիս,
Քեզ ո՞վ պիտի պահի»:

11.02.90թ., Երեւան,
հանրապետական հիվանդանոց

ԵՐԿՈՒ ԵՐԳ

1. ՎԱՐՎԻՐ ԱՅԴՊԵՍ

Մեծ Թաղեր գյուղի դպրոցի տնօրեն,
արցախյան ազատամարտի քաջ զինվորյալ
Առևա Ավետիսյանին...

Քիրսա սարի աչքը վրադ
Բարի լինի, լինի լուսեն,
Այս լեռների մեջ աստղազարդ
Քո հեքիաթն ես սիրով հյուսեն:
Կաթիլ-կաթիլ, նշխար-նշխար,
Բույն ես հյուսել ոնց ծիծեռնակ,
Յոզիդ երազ, սիրտդ աշխարհ՝
Արարումիդ, տենչիդ հենակ,
Արեւներ ես վառել կյանքի...
Բալիկներդ աստղերն են քո:
Մարմնացումն ես ազնիվ ջանքի,
Լեզենդներ ես հյուսում փառքով:
Գյուղի համար սերմնացան ես,
Ուսուցապետ լույս ու հույսի,
Մեծ Մաշտոցի ազնիվ սանն ես,
Ծանրությունն ես տանում ուսիդ:
Ուտքերիդ տակ հայրենի հող,
Գլխիդ վերեւ կապույտ երկինք,
Ծիածանվիր այդպես շենշող,
Կյանքդ դարձրած մի դասագիրք:
Վառվիր՝ ինչպես խարյուկն անշեց,
Ցանիր սրտիդ լույսը փառքով,
Թող պատմության ծալքերի մեջ
Փայլեն նաեւ էջերը քո:

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2. ԾՆՈՐՉԱԿԱԼ ԵՍ

Ուսուցչուհի Բիոլետա Դանիելյանին՝
Առաջի կյանքի ընկերուհուն

Ծիծեռնակի թեւին նայիր,
Շյուղ է բերում, որ բույն հյուսի,
Որ բույն հյուսի մի հմայիչ
Ու երազը փոխի լույսի:
Փայլին նայիր արեգակի,
Ո՞նց է մաղում շողերն իրա
իր օջախի ամեն պատի,
Բալիկների ճամփի վրա:
Գարնանային ցողին նայիր,
Ո՞նց է իջնում ուլունք-ուլունք,
Ցող է դնում ծառ ու ծաղկին,
Որ միշտ լինի վարդի բուրմունք:
Իմաստության ծառին նայիր,
Պտուղներին նայիր նրա,
Քիչ է մնում զինքը վառի
Ու լույսի գետ դառնա վարար:
Յերիաթային հարսին նայիր,
Յերոսուհուն նայիր քնքուշ,
Ո՞նց է նազում հայի լ-մայի լ,
Ժայխը վառ ու խոսքը նուշ:
Շնորհակալ եմ քեզնից, Աստված,
Դու իմաստուն, դու արարիչ,
Յոր պես նայիր այս աղջկան՝
Քեզ պես անքիծ, քեզ պես բարի:

02.11.1990թ., գ. Մեծ Թաղեր

ԱՐՑԱԽԻ ԶԱՍԳԵՐ

Ինչպես հայտնի է, 1990թ. ապրիլի 24-ին երկրագնդի համայն հայությունը անհուն վշտով ու ցասումով նշեց 1915-1923թթ. երիտրուրքերի եւ ազերի հրոսակների կողմից կազմակերպված ցեղասպանությունը Արեւմտյան Հայաստանուն եւ Կովկասի հայաշատ շրջաններուն:

Այդ օրը Ստեփանակերտ քաղաքի բոլոր բնակիչները սգո շքերթ կազմակերպեցին դեպի Հայրենական Մեծ պատերազմի, Սումգայիթի եւ հայոց երկրաշրժի գոհերի հիշատակին կառուց ված համալիրը:

Ստեփանակերտից մի խումբ մտավորականներ՝ բանաստեղծներ Գ. Գաբրիելյանը, Շ. Բեգլարյանը, տողերիս հեղինակը, Արցախի պետական համալսարանի դոցենտներ Յ. Գրիգորյանը, Ռ. Բալյայանը, Ա. Թովմանյանը ելույթ ունեցանք չարտոնված հանրահավաքում՝ ինչեցնելով մեր ցասումնալից խոսքը հայոց մեծ եղենի, ինչպես նաև Սումգայիթում, Բաքվում, Գանձակում կազմակերպված նոր ցեղասպանությունների մասին, պահանջելով դատապարտել հանցագործներին:

Պատրիվակ ընդունելով ԼՂԻՄ-ում հայտարարված արտակարգ դրության կարգը, զինվորական իշխանությունները երեք օր շարունակ քաղաքային պարետատանը պնդում էին, որ մենք խախտել ենք սահմանված կարգը եւ պետք է ենթարկվենք վարչական տույժի: Մենք բացատրում էինք, որ հայ ժողովողի դարավոր ավանդույթի համաձայն ծանր վշտի պահին պետք է ասենք միշտարանքի եւ ցասման խոսք: Բայց պարետատանը մեզ չլսեցին: Կալանքի ենթարկեցին բոլորիս: Մեզ հայտնի էին Աղրբեջանի կառավարող շրջաններին «ծառայող» մոսկովյան քաղաքական եւ զինվորական ներկայացուցիչների նպատակները՝ լռեցնել Արցախի հայ մտավորականությանը, որպեսզի չբացահայտեն ադրբեջանական ղեկավարների հեռուն տանող ձգուումները՝ փոփոխել լեռնաշխարհի ժողովրդագրական վիճակը եւ վերջապես չեղյալ համարել Լեռնային Ղարաբաղի ինքնավարությունը:

Բայց օրենքի «նման պաշտպաններին» հասկացրինք, որ հայ մտավորականի համար իր մայր ժողովրդի պատիվն ու ազատու-

ԽԱՌՆ ՔԱՆԱՏՆԴՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թյունը պաշտպանելու ճանապարհին այնքան էլ թանկ չեն ոչ սեփական կյանքը եւ ոչ էլ որեւէ չափի գումարով տուգանվելը:

Ճանրահավաքի ժամանակ մեր ելույթներում որպես առանցքային նպատակ, ընդգծված էր ազգային ազատագրական պայքարը շարունակելու կոչը:

Ես ելույթի ժամանակ կարդացել եմ իմ **«Խոսք ցասման»** բանաստեղծությունը, իսկ տնային կալամքի հենց առաջին օրը իմ ընկերներին եմ ձոնել բանաստեղծություններ, որ բերում եմ ամբողջությամբ:

1. ԽՈՍՔ ՑԱՍՄԱՆ

Խաչել են սրտերը մեր,
Դժնդակ մութ ու մուժում,
Մեր խաղաղ հոգին դարեր
Հող հերկող մաճ էր ուզում:
Մեր հանդը միշտ հողմահար
Դառնում էր մեր սուրբ հացը,
Մեզ հեռվից ժպտում էր հար
Մեր գալիք լուսաբացը:
Մեսրոպյան գիրն էր հնչում
Մեր մանկանց շրթի վրա,
Սուրբ հողը լույս էր շնչում
Քրտինքով մեր կենարար:
Արարող միտքը հայի
Աստղերի լեզուն սերտում,
Մասիսի անմար սիրով
Կամուրջ ու վանք էր կերտում:
Կերտում էր քաղաք ու շեն,
ճանփաներ բացում կյանքի,
Երգում էր պատիվ ու սեր,

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եվ բռնում փեշը ջանքի:
Բայց ավա՞ղ... ոսդիմերը
Թալանի թույնով տարված,
Մտան մեր օջախները՝
Սարերի լանջին փարված:
Ճեղեցին մեր արյունը,
Վառեցին գրքերը մեր,
Փլեցին տունն ու սյունը,
Պոճեցին ջրերը մեր:
Բայց ելավ հայը նորից,
Կայծակե թուրը առած,
Ու հանեց անկման հորից
Մեր ոգին՝ վրեժ դառած:
Նա ջարդեց նենգ Շապուհին,
Մեղմացավ Բյուզանդիան խիստ,
Խալիֆին ծնկեց գահին,
Բայց երբեք չառավ հանգիստ:
Թուրքերը խուժեցին նենգ,
Արաքսը եռաց ցավից,
Ծառս եղան սարերը մեր
Եվ Վանա լիճը ծավի:
Ու կրկին հայն արարեց,
Ու երգեց Մասսի լանջին,
Ապրելու տենչով վառվեց,
Քաջ Դավթի ձայնն ականջին:
Ու եղավ աշխարհամարտ,
Սեւ կապեց երկիրն հայոց,
Տասնիինգ թիվը դարձավ
Սահաբեր կրակ ու բոց:
Թշնամին՝ մահը ունքին,

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անունը Թալեաթ, Էնվեր,
Յաթաղան տվեց թուրքին,
Որ հեղի արյունը մեր:
Մեր արծիվ ջահելներին
Թուրքական բանակ տարան,
Խարելով որպես գերի,
Քշեցին կառափնարան:
Ու երկիր մի հինավուրց՝
Տառապյալ մի թանկ Եզերը,
Իր հողով արյունահունց,
Բուրվառվեց ճրագ ու երգ:
Դեր-Զորում ճիչը մանկանց
Խլացած Աստծուն հասավ,
Մայրերին խելագարված
Եփրատը անգամ չանսաց:
Աշխարհը Աստծո հանգույն
Փակել էր ունկերը իր,
Խեղդել էր գութը հոգում
Ու թաղել խիղճը նանիր:
Մեր բախտի աստղը մարեց,
Աղոտվեց լույսն աշխարհում,
Զոհվեցին մանուկ-տարեց,
Տասնիինգ այն սեւ տարում:
Գլխատվեց ազգը հայոց,
Զոհրապից մինչ Կոմիտաս,
Հայոցը դարձավ վայոց,
Բայց մնաց փոքրիկ մի թաս՝
Փոքրացած մի Հայաստան,
Արմատը խորունկ հողում,
Որ կերտեց մի նոր ոստամ՝

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արարող ու շողջողուն:
Թվում էր, թե նոր դարուն
Գազանը մարդ է դարձել,
Չի ունում էլ խավարուն
Եվ խղճի դուռն է բացել:
Բայց էլ ի՞նչ խղճի ուղի,
Գազանն է նորից քայլուն,
Թալեաթի բութ ուղեղի
Արնածոր միտքն է փայլուն:
Ճողի գող եւ գրքի գող,
Խուժանը նորից փրփրեց,
Սումգայիթ քաղաք կերտող
Ճայերի սիրտը քրքրեց:
Արյունը հասավ Բաքու,
Որ հայն էր կերտել արի,
Ճամիդի թռող անքուն
Թքուն է դեմքին դարի:
Իսկ դարի Տերը, օ՝, Տեր,
Պնդում է՝ թե ի՞նչ խուժան,
Որ իբր բանակը մեր
Ուշացավ լոկ երեք ժամ:
Չարերը թույն են թափուն
Արցախի ճամփին արդար,
Ուժեղի կամքով արթուն,
Չեն տալիս հային դադար:
Առել են օղակի մեջ
Սարերը մեր գեղեցիկ,
Ճայաստան աշխարհի դեն
Փակուն են ճամփեքը ծիգ:
Բայց կգա, կգա մի ժամ,

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կծաղկի երազը մեր,
Կպարտվի չարը դաժան,
Արդարը կառնի թեւեր:
Ճիշելով արյունը մեր,
Կքայլենք դեպի գալիք,
Արարման ավյունը մեր
Կծփա ալի՞ք - ալի՞ք,
Աշխարհը կզա խելքի,
Կհաղթի խոճի արփին,
Եվ հայը նորից կերգի
Մեր Վանա ծովի ափին:
Արցախը մեր մանանա,
Դարերին լույս կտանի,
Ու մի օր կմիանա
Իր մորը՝ Հայաստանին:

22.04.1990թ.

2. ԵԼԵՔ ՄԱՐՏԻ

Համլետ Գրիգորյանին

Ճե՛յ, այն ո՞վ է քնել հանգիստ,
Ո՞վ է նարդի խաղում այնտեղ,
Ճողն է տնքում մեր վեհանիստ,
Վերքին դնենք դարման ու դեղ:
Կատաղել է նենգ թշնամին,
Մեր օջախն է ուզում խլել,
Մեր պայքարի այս թեժ ժամին
Ո՞վ է ձեռքը գրպան դրել:
Թող բռունցքվի ցասումը ձեր,
Ոտքի ելեք՝ ժամն է մարտի,
Շարքի կանգնեք ջահել ու ծեր,

ԽԱՌՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ելեք, դարձեք խիզախ մարտիկ:
մեր սուրբ հողի տերերն ենք մենք
Եվ գինվորն ենք նրա համառ,
Ով պատրաստ է, թող գա ինձ հետ,
Թող գա, ցրենք ամպերը մաս:
Ապրենք ազատ, ազատ շնչենք,
Սնանք տերը մեր կերտած տան,
Թող մեր շրթին հավերժ հնչի.
«Քո զավակն ենք, մայր Հայաստան»:

3. ՀՆՉԵՑՐՈՒ ՀՈՐՈՎԵԼԴ

Գուրգեն Գարոհելյանին

Քիրսա սարից մինչեւ Մռով,
Մայր Արցախն է տնքում խռով,
Երգն է ճչում ծեր Թարթարի,
Զանգն է հնչում Գանձասարի,
Զեռքը առել խղճի թասը,
Տագնապում է Ամարասը,
Դիզափայտը աչք չի թարթում,
Զյունն է սառել Սարահարթում,
Ուշանում է գարունն արդար,
Որոնում է վիզ ու սատար,
Թղթում է մաշկը հողի,
Սպասում է հայկյան շողի,
Դե՛, հոգուդ մեջ մեր օրերը,
Հնչեցրո՛ւ հորովելը:

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4. ԱՅԳՈՒ ՏԵՐԸ

Հրաշյա Բեգլարյանին

Հրաշք այգու հրաշք տերը
Վեր է քաշել իր թեւերը,
Ղարաբաղցու սիրտն է կարդում,
Նրա սիրով միայն հարբում,
Զեռքը մեկնում քիրսա սարին,
Դժգոհում է. Այս հ՞նչ արին,
Ոստիսները մեզ խարեցին,
Բախսի դուռը մեր փակեցին,
Որ մեր ինչքը քամին տանի,
Մեզ խլեցին Հայաստանից:
Չէ, չենք ների եւ ոչ-ոքի,
Թե մեր ճամփին մուժն էլ չոքի:
Չեմ ճանաչում ես չար ուժին,
Եվ ով էլ մեր տունը խուժի,
Մենք կջարդենք վիզն ու ձեռքը,
Արցախն է մեր հատու գենքը:
Յուս չունենք մեր ուժից բացի,
Արիացի՛ր, դարաբաղցի:

5. ԱՂՋԻԿՆ ԱՐՑԱԽԻ

Ոռնա Բալայանին

Որ նա արեւի շաղիկ է ու շող,
Մենք այդ գիտեինք,
Որ նա Արցախի ծաղիկ է բուրող,
Այդ էլ գիտեինք:
Բայց չգիտեինք,
Որ նուրբ կրծքի տակ
Անվախ ֆիդայու սիրտ է բարախում,

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Որ արդարության դռներն է բախում,
Որ նա Արցախի շարժման կուր հունձքն է,
Որ նա կարող է պատռել իր կուրծքը,
Սիրտը դարձնել հուր,
Խոսքը՝ նետ ու թուր,
Հատել թշնամու ձեռքը եւ լեզուն,
Գալիքի հանդեպ հավատով լեցուն,
Արցախ, խիզախի՛ր քո արդար մարտում,
Քանզի այդպիսի աղջիկ ունես դու:

6. ԽԱՂԱՂ ՈՒ ԹԵԺ

Արկադյա Թովմասյանին

Նա մի խաղաղ ծով է,
Մի կարկաչուն առու,
Բայց պայքարում գոռ է,-
Շանթից ծնված գարուն:
Նա բարության դից է,-
Համբերատար մշակ,
Բայց կռվի մեջ ճիչ է,-
Հաղթանակի գուշակ:
Ցորեն հասկ է արտում,-
Մրգով լիքը սինի,
Զինվորյալ է մարտում,-
Թունդ է, ինչպես գինի:
Նա խաղողի ծութ է,-
Թալիսման է բարի,
Արցախի խենթ ծուտ է,-
Չարության դեմ դարի:
Թեժ է, ոնց հրաբուխ,-
Ոսդիմերին վա՞յ է,
Հա՞յ է ոտից գլուխ,-
Արցախածին հա՞յ է:

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵՂԱ ՔԵԶ, ԱՍՏՎԱԾ, ԱՍՈՒՄ Է ՆԵԼԼԻՆ

Լենինականում երկրաշարժից երկու
ոտքերից զրկված Նելլի Չարխյանին

Մեղա քեզ, աստված, որ քո հասցեին
Տրտունջի խոսքեր պիտի բարբառեմ,
Պետք էր իմ ճամփան ուրախ անցնեի,
Չէ՞ որ քո առատ լույսի մի տարրն եմ:
Լինելիության քո առասպելը
Երերում է իմ ջահել կրօքի տակ.
Ճայի դեմ այդպես չէր վարվի Բելը,
Ինչպես դու՝ Բարիդ, ուժով դժնդակ:
Ես մոմեր էի վառում քո հանդեպ,
Աղոթում էի, որ ուժեղ լինես,
Երազում էի, որ թշնամու դեմ
Ամենակործան ոստայնը հինես:
Մի՞թե չես ջոկում չարը եւ բարին,
Ու չես տարբերում լավն անգութ վատից,
Դու ինձ պատժեցիր ի ցույց աշխարհի,
Ո՞նց ես փրկվելու դու արդար դատից:
Եթե կաս, լսիր իմ արդար խոսքը,
Թեւեր տուր հասնեմ քո հավերժ գահին,
Տեսնեմ ինչպե՞ս ես կատարում գործդ,
Ո՞ւմ ես պաշտպանում, ո՞ւմ հանձնում մահին:
Պահանջեմ քեզնից, որ արդար լինես,
Որ առողջ քայլող իմ ոտքերը տաս,
Ես դեռ չեմ սիրել, դեռ ծարավ եմ ես,
Եթե կաս, պիտի իմ ցավը զգաս:
Տուր ինձ առաջվա թռչկոտելը իմ,
Իմ կանաչ-կարմիր բախտը ինձ դարձրու,
Եթե չես կարող, գոնե մեղանչիր,

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իմ վշտի մասին իմ մորից հարցրու:
Ես պիտի ապրեմ, ես պիտի սիրեմ,
Պիտի օջախի արեւ դաշնամ ես,
Իմ բախտին պիտի ես ինքս տիրեմ,
Եվ հավերժանամ սուրբ Մարիամի պես:

03.02.90թ., Երեւան
հանրապետական հիվանդանոց

ԱԶՈԽԻ ՔԱՐԱՆՉԱՎԻ ՄՈՏ

Աղբյուրի շրթին տաղը թեւում է,
Լցվել է հողի ծոցը արեւով,
Վանքը քայլում է հավերժի գրկում,
Խաչքարը լուր է բերում դարերից,
Գետը խոսում է թռչող քարերից:

Ճանապարհները ուսերն են պրկել,
Ոտնաձայներ են հնչում օդի մեջ,
Լանջը քացել է փեշը դեղնածուփ.
Դասը սերտում է մասրենին ձորի,
Ծառին ժայիտն է շիկնում խնձորի:

Քիրսը սանրում է միրուքն իր ոսկյա,
Իշխանագետը շարականվում է,
Աստղեր են վառվում քարանձավի մեջ,
Կոչեր են թռչում նրա պատերից,
Լուրեր են բերում մեր քաջ պապերից:

Աղոթք է կարդում Արեւսարը սեզ,
Սաղմոսն է հնչում նոր այգեկութի,
Ազոխա Ծուռը աչքը չի թարթում,
Թուրքը չոքել է ծայրին արտերի,
Ազոխա Ծուռը ինչպե՞ս համբերի:

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գերեզմաններից սրբերն են ելնում՝
Խաչի փոխարեն թրերը պարզած,
Ծռերն Ազդիսա կրակ են կտրել,
Հուրն է ծածանվում նրանց աչքերում,
Հավատն է հնչում նրանց Ասքերում:

Ազդիսա հողը ծոցը լցրել է,
Ազդիսա Ծուռը ծռել է կեպին,
Գոռ մարտի ելած երգում են մեկտեղ
Ազդիսա աղբրի գուռը քարեղեն,
Ազդիսա բախտի դուռը դարեղեն:

04.11.1990թ.

ՄՈՒՇԿԵՐԱՔ

(Մուշկերաքը իին գյուղատեղ է Ազդիսի
մոտ, որի հսկողությունը հանձնված է
Մեծ Հայրենականի մասնակից
Սերյոժա Դալլարյանին)

Մուշկը դեղին է հագել,
Հողը ժատում է,
Մուշկի աշնան խշշոցից
Առուն խրտնում է:
Արտը ծլել է նորից,
Լանջը շնչում է,
Վանջը խոսում է ձորից՝
Զանգը հնչում է...
Հին աղբյուրը երգում է,
Խաչքարը՝ վկան,
Երգով թուրքին հերքում է,
Հույսը կժպտա:

03.11.1990թ., Մուշկերաքի տեղամաս

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄՈՐ ԱՂՈԹՔԸ

Նվիրում եմ մինուճար որդու մայր Մարգա
Գարանյանին: Նրա որդին՝ Սեւանը,
հաշմանդամ էր դարձել Լեմինականում,
1988-ի երկրաշարժի ժամանակ

Ո՞վ, տեր Աստված, քեզ եմ դիմում
Հույսով ապրող մոր շրթերով,
Աղաչում եմ, լսիր դու ինձ,
Հավերժ լարված քո ունկերով:
Աղոթել եմ ճանապարհիդ,
Հավատացել քո մեծ ուժին,
Կատարել եմ պատգամներդ
Ու դեմ կանգնել մութ ու մուժին:
Հույսս կապել քո անվան հետ,
Աշխատել եմ փառքիդ համար,
Հիմա բախտը կարծես խռով
Ինձ պատժում է կամքով համառ:
Ես աստղերից լույս եմ փնջել,
Արեգակից առել կրակ,
Որ նվիրեմ իմ մինուճար,
Իմ աստղածին որդուն հրակ:
Հիմա թաղծուտ արտասվում եմ,
Համբուրում եմ միակ որդուս,
Մղկտում է սիրտս անվերջ,
Տիրություն է իջել հոգուս:
Օգնի՛ր, Աստված, փեշիդ ծայրն եմ,
Ես փոշին եմ քո ոտքերի,
Քո պատկերով որդուս մայրն եմ,
Հավատում եմ քո փառքերին:
Թող կազդուրվի մինուճարս,

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամբողջ կյանքս նա է միայն,
Մի խնայիր քո հանճարը,
Քեզ է նայում աշխարհն համայն:
Թող իմ որդին նոր կյանք մտնի,
Դառնա սիրո ծառա ու տեր,
Իր օջախն ու ճամփան գտնի,
Մարդկանց սեր տա եւ առնի սեր:
Թող ունենա շատ զավակներ,
Թող աստղերով լցվի տունս,
Թող թոռներիս համար միայն
Սիշտ խանգարվի հանգիստ քունս:
Թող իմ բակը ծաղկով լցվի,
Որդուս սիրուց սիրտս հեւա,
Որդիս այնքան հասակ առնի,
Որ անվանեն «Պապիկ Սեւան»:
Քեզ եմ դիմում ես ծնկաչոք,
Ամենազոր Աստված իմ սուրբ,
Քո ուժին են ապավինել
Իմ ջերմ հոգին, իմ սիրտը նուրբ:

11.01.90թ.

Երեւանի հանրապետական
հիվանդանոց, պալատ 19

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱՂԹԱՆՔ

ԱրՊՅ պրոռեկտոր, քիմիկոս Արտյոմ
Նիկոլայի Աբրահամյանին՝
ծննդյան 50-ամյակի առթիվ

Քիրսա սարի լանջերն ի վեր,
Լանջերն ի վար Քիրսա սարի,
Մի պատաճի՝ առած թեւեր,
Սիրով իր սեզ լեռնաշխարհի,
Երազելով գնաց հեռու,
Աստղաշողեր փնջեց լուսեն,
Կոփվեց մտքի ալիքներում,
Առած հարգանք եւ առած սեր,
Կրկին եկավ գիրկն Արցախի,
Ասաց. «Քոնն եմ, օջախ իմ սուրբ,
Աշխարհի հետ քեզ չեմ փոխի,
Դու իմ մայրն ես՝ սրտով քո նուրբ»:
Եվ ընծայեց հուրն իր հոգու
Իր աշխարհին, իր սաներին,
Ու սերմնացան դարձած ոգու,
Լուսն է հյուսում տարիների:
Առած փունջը հիսուն գարնան
Եվ հայացքը հառած հեռուն,
Մաքառումով իր անվարան,
Նոր տենչերի ջահն է վառում:
Բարձրացնենք բաժակները՝
Լիքը գինով լուսապարար,
Ծնորհավոր մաղթենք սրտանց
Ու նվիրենք եւս մի դար...

2006թ., Ստեփանակերտ

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՇՆՈՐՅԱՎՈՐԱՆՔ

Մեր Կեսմիրին՝ ծննդյան
50-ամյակի առթիվ

Կեսմիր՝ ասել է մի ամբողջ աշխարհ,
Վեսմիրը, իրոք, մի ողջ աշխարհ է,
Երկրի զինվոր է՝ քաջասիրտ, անահ,
Վկան՝ Արցախը հոգում սուրբ նշխար:
Վեսմիրը, իրոք, աշխարհ է մի ողջ,
Ծնողի հույս է, զավակի արեւ,
Եղբոր թիկունք է՝ հույզերով առողջ
Բարեկամի լույս, ընկերոջ թեւեր:
Սիրող աշխարհ է, Վեսմիրը, իրոք,
Սիրո մեջ աստղ՝ անմարում ու վառ,
Մեր Սվետայի սրտի մեջ կարոտ,
Սվետան իր սրտում՝ անխոնջ լուսարար:
Յինգ տասնյակ տարին ոսկե մի շղթա,
Ամեն մի օրը մի մեծ պատմություն,
Ամեն մի օրը ծաղիկների փունջ,
Երազի բարձունք ու սրբացած տուն:
Եկեք, Վեսմիրի կենացը խմենք,
Ասենք՝ դեռ կեսն է քո բաժին դարի,
Ասենք՝ հարյուրդ տոնելու ենք մենք,
Աստծո օրինանքով՝ ամեն մի տարի:

ԿՅԱՆՔԻ ԽՈՐՅՈՒՐԴ

Կյանքի խորհուրդը հուզում է անվերջ,
Բայց չենք հասկանում ոչ կյանքը, ոչ մեզ,
Սիշտ որոնում ենք տարիների մեջ
Նրա ավիշը, գույները պես-պես:
Լինում է հաճախ՝ կյանքի շերտերում

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մի կերպ գտնում ենք մի գանձ, մի երանգ,
Ու թեւավորված նրա հերկերում
Մենք շռայլում ենք եւ՝ սեր եւ՝ եռանդ:
Սպասում ենք մենք օրերի հերթում,
Բայց հեռվից մի ձեռք կանչում է նորից,
Դարձյալ քրտնում ենք որոնման երթում,
Ու ելնում դարձյալ երազի ձորից:
Այդպես կյանքը հար ծփում է մեր դեմ
Ու ծփածանվում գույներով իր պերճ,
Բախտավոր է նա, ով ճանփին գոնե
Մի լույս է վառում իր հրով անշեջ:
Կյանքի խորհուրդը ծալ-ծալ է ու բարդ,
Նա քեզ շոյում է իր ծով տենչերում,
Նվիրիր նրան մի ծաղիկ, մի վարդ
Եվ հավերժ կապրես նրա էջերում:

1990թ., Ստեփանակերտ

ՃՐԱԾՔ

Այս գիշեր, երազիս մեջ,
Գանձասար վանքն էր խոսում,
Թարթառը՝ ափերով պերճ,
Դեպի մեր բակն էր հոսում:

Խաչենը նուրբ թեւերով
Փարվել էր Ամարասին,
Գտիչը ճերմակ շորով,
Նման էր նորահարսի:

Մեր ոգին դարձած Առան,
Թշնամու թուրն էր ջարդում,
Հոռեկա վանքի դռան
Դավթակը երգ էր կարդում:

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նժդեհը՝ ձեռքը ուսիս,
Ժպտում էր մեզ հիացած,
Մոռվից մինչեւ Մասիս
Փայլում էր մի ծիածան:

1991թ., Երևան

ՍԵՐՍ ԿՅՈՍԻ

Նորից կանգնել եմ քո սեզ կատարին,
Արեւար, նորից ծփում եմ քեզ հետ,
Նորից նետվել եմ գիրկը պայքարի
Ու դարձել կյանքը հաստատող մի եռք:

Բախստ ճախրել է քո արծվի թեւին,
Եվ ձուլված է քո մայրական կանչին,
Աստղերի փունջը ինձ ուր էլ տանի,
Յոզիս լույս դարձած կիշնի քո լանջին,

Կիշնի քո լանջին, կդառնա մի գետ,
Յողդ կջրի երազիս գույնով,
Գյուղս քո փեշին կծաղկի հավետ,
Սերս կհոսի քո սիրո հունով:

1991թ., գ. Ակմաղբյուր

ԵՐԴՈՒՄ

Իմ Աստվածը դու ես,
Դու ես իմ հավատը,
Իմ գտածը դու ես,
Դու՝ իմ անարատը:
Քո դարպասը իմն է,
Իմն է ճանապարհոյ,
Քո մեծ դասը իմն է,

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իմն է լուսե գահի:
Դու՝ իմ հոգում արեւ,
Ես՝ արեւը քո կեզ,
Դու՝ ինձ թիկունք ու թեւ,
Ես՝ խորհուրդը քո թեժ:
Յանուն քո գալիքի
Կմարտնչեմ խիզախ,
Խինդիս միակ ալիք,
Իմ աննման Արցախ:

1991թ., Ստեփանակերտ

ՀԱՎԱՏՈՒՄ ԵՄ

Հավատում եմ, քո Մօռվի
Անունից ես խոսելու,
Քո Թարթառի, քո Խաչենի
Հին հունով ես հոսելու:

Գանձասարի աղոթքով ես
Շշնջալու Աստծո հետ,
Ամարասի աչք-ունքով ես
Հնայվելու առհավետ:
Մարտերի մեջ ոսխներիդ
Քո մաղով ես մաղելու,
Նահատակված հերոսներիդ
Քո ծեսով ես թաղելու:
Ազատության արեգակը
Վառելու ես քո սրտից,
Օտարների փոշ-պսակը
Վանելու ես քո գլխից:

1991թ., Երեւան

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՆՏԱՌԻ ՕՐԵՆՔԸ

Ոչ առաջինն ես եւ ոչ վերջինը,
Աշխարհ ես եկել, մի օր կգնաս,
Իմացիր, տրված քո կյանքի գինը,
Նրան տվածով դու պիտի մնաս:

Բնության շունչը լսիր անտառում,
Նրա ծփանքի գաղտնիքը բացիր.
Մեկը ծնվում է, իսկ մեկը՝ մարում,
Ծննդի-նահվան օրենքն իմացիր:

Տեսնո՞ւմ ես կաղնին՝ երկնքին հասած,
Երեկ մի շիվ էր, այսօր՝ նահապետ,
Թեկուզ շրշում է աստղերը ուսած,
Մեկ է, նա մի օր կլոի հավետ:

Սակայն ի՞նչ վեհ է եւ ինչքա՞ն հպարտ,
Անտառի ծափով պարում է կարծես,
Դու կաղնու նման վեր հառնիր անպարտ
Եվ ավիշդ տուր կյանքին նրա պես:

Մռայլությունդ քո հոգուց վանիր,
Երազներդ տուր սերնդին քո նոր,
Կաղնու պես առողջ սերմերդ ցանիր
Եվ շիվերի տակ նինջդ առ մի օր:

Մահվան օրենքը դաժան ու դառն է,
Ծնունդն է նրա հարվածը մերժում,
Մահվան-ծննդի օրենքը դա է,
Այդ օրենքով է կյանքը հավերժում...

1992թ., Ստեփանակերտ

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱՔԱՐԱՎԱԾ ՏԱՐԻՆԵՐ
1988

Փետրվարը Արցախում սառնաշունչ է, սառնասիրտ,
Սեզ սարերի փեշերին ծյունն է նստում ու սառչում,
Բայց այս անգամ լեռներում բորբոքվել էր մի խոր կիրք,
Զերմությունից անսովոր ծյունն իջնում էր ու հալչում:
Զարդվել էր մի լոռություն հոգիներում արթնացած,
Սպասումի մի խարույկ բռնկվել էր ծյուներում,
Ժաղովրդյան երազը սպասումով թարմացած
Ծփում էր խենթ ծովի պես խոլապար ու աններում:
Նամակների երամը ծիգ ծգվում էր դեպ Յյուսիս,
Մի բողոք էր շիկացել իին Կրեմլի անունով,
Մոսկվան կրկին դարձել էր բույնը խարված մեր հույսի,
Մեր պահանջը հոսում էր արդարության մեծ հունով.
«Մեզ պոկել է մեր մորից Ստալինը տիրակալ,
Ու նետել է սեւ գիրկը արյան ծարավ դրացու,
Կուսակցությունն աստղածին, լենինիզմը քանի կան,
Պահանջում ենք մեր մոր հետ հավերժական միացում:
Չենք սասանվում թշնամուց, չենք վախենում ոչնչով,
Մեր սրտերին գրել ենք՝ Լենին Պարտիա Գորբաչով»:
Ու խենթացած, օրերով ցրտերի մեջ լեռնային,
Դրոշների տակ ալվան գետն էր հոսում մարդկային:
Պատգամարեր, պաշտոնյա գալիս էին ու գնում
Ու մի խարված սպասում փշաքաղվում էր ցրտից,
Բայց ժողովուրդն անհամբեր բարի լուրին էր մնում,
Եվ չգիտեր, որ հեռվում-հրճվում էին սեւ ստից:
Բացվեց կեղծիքն ահավոր, պարզվեց դեմքը հրեշի,
Մեր սրտերը խոցեցին Սումգայիթյան եղեռնով,
«Ամեն պահանջ,- ասացին,- արդյունքն ամեն մի վեճի,

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՇՈՒԹՑՈՒՆՆԵՐ

Կվերջանա հենց այդպես՝ օրինված ՊԱԿ-ի օրենքով»:
Բայց խենթացել էինք մենք, քայլում էինք հողմահար,
Յրաբուխը պահանջի բռնկվում էր ահրելի,
Դեռ չեր մարել մեր սրտում արդարության հուրը վառ,
Չէինք սարսում դեպքերից եւ ընթացքից ահով լի:

1989

Անցավ տարին, տարվա հետ ձնագունդն էր մեծանուն,
Ուստինե մեր հույսը ձգում էին Մոսկվայից,
Ազատության ճամփեքին արյունն էին մեր ցանուն,
ՊԱԿ-ի համար մեր սիրտը ասես հունցված էր կավից:
Ում դեմ բացել էինք մեր հոգիները հրավառ,
Նա էր մատնուն կրակին մեր հույսերը արնածոր,
Մեր երազը դարձել էր վարդի մի թերթ հողմահար,
Արյան շղաղը էր հագել մեր ամեն մի դաշտ ու ծոր:
Եվ հայացինց օրենքը Գորբաչովյան օրինանքով
Սուլգայիթից ծավալվեց ու հղիացավ Գանձակում,
Քաղաքներ ու ավաններ՝ հառնած հայի խոլ ջանքով,
Հայի արյամք էր ցողվում Կրեմլյան սեւ ցանկում:
Խուժանը սուրն իր պարզեց Մինգեչաուր քաղաքում,
Յերսասծին Գարդմանը հայաթափվեց ծայրից ծայր,
Գորբաչովը փրկվելու միավոր էր հավաքում,
Թեկուզ երերուն էր խենք Միությունը մեր անծայր:
Մի խաղաքարտ էր դարձել արդարամիտ Արցախը,
Մահվան դաժան գերանդին Բաքվի դղներն էր թակում,
Եվ Կենտկոմը ցնորված կրծտացնում էր իր վախը,
Եվ պատժի սուր դակիչով հայի հոգին էր դակում:
Ութսունինը ավարտվեց Բաքվի դեղին սարսափով,
Սակայն պատանդ էին դեռ հայերը սեւ ահի մեջ,
Մահվան շքերթն այս անգամ անցավ միայն ծովափով,
Երերացող Կրեմլը դեռ պահում էր հույսն անշեց:

1990

Բարվի ամեն մի քարի հայի ձեռքի հետքը կա,
Հայկական է քաղաքը՝ կերտված նրա հանճարով,
Միջնաբերդը կուռուցված դարձյալ մտքով նախրյան,
Օղուզական ցեղերն են գերել սրով ու հրով:
Օղուզների թոռները՝ ազերիներն այսօրվա,
Ոչ քար տաշել գիտեին եւ ոչ էլ պատ շարելը,
Հայը նրան դարձրեց նավթագործ ու շինարար,
Եվ ազերին սովորեց առտնին գործեր վարելը:
Եվ փոխանակ պաշտելու իր ուսուցիչ հայերին,
Ազերու թռռն ամեն օր սկսեց նրան հալածել,
Երբ մի վեճ էր բռնկվում, երիտասարդ ազերին
Ասուն էր. «Այս հայերը մեր հողին են տիրացել»:
Ու երբ մի օր արցախցին բարձրացրեց ձայնը իր,
Որ միանա իր մորը՝ Հայաստանին հարազատ,
Բաքվում փրփրեց ազերին՝ նման դաժանի,
Էլ հ՞նչ գիտեր օղուզի թռռն ավարից, սրից զատ:
Իննսունի նոր տարին, Գորբաչովի օրինանքով,
Մահվան երախն իր բացեց հայերի դեմ սրարշավ,
Պրիմակովն էր եկել, մտել մզկիթ հրճվանքով,
Գորբաչովի ողջունը բերել նրանց հայադավ:
ՊԱԿ-ի թաքուն խորհրդով հայերի ջարդ սկսվեց,
Կատաղել էր ազերին հայի կերտած քաղաքում,
Մատներն իրար շինով Գորբաչովը սսկվեց,
Վերջին իր էջն էր գրում Կենտկոմը սեւ, արնախում:
Ողջ քաղաքը դատարկվեց իր շինարար տերերից,
Հայի արյունն էր հեղվում օջախներում իր կերտած,
Բայց ազերին չգիտեր, որ գրկվում է թեւերից,
Նա կարծում էր կփրկվի աղոթքներով իր սերտած:

ԽԱՌՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բաքում դարձավ հայազուրկ, դարձավ մի գորշ ավերակ,
Մնաց միայն հեղեղը օղուզական սերնդի,
Որ հորդորում էր անվերջ անհմաստ ու բացբերան,
Եվ գովում էր արմատը հեռվից եկած իր հունդի:
Ժխտում էր այն ամենը, ինչ հայկյան է՝ տեղական,
Որ իբրեւ ինքն է ծնվել Արցախում ու Շիրվանում,
Դավթակ քերթող ու Մովսես, Գանձակեցի, Մխիթար,
Համարում էր իրենը, նրանց գրին տիրանում:
Հաստագլուխ, պնդակող «Գիտնականը» ազերի,
Որ գողացել է արդեն պարսիկ-արաք մեծերին,
Սկսել է արշավը մշակույթի դեմ հայկյան,
Հափշտակող իր վազքում չի վարանում մի վայրկյան:
Ամոռալի այդ վազքին Գորբաչովն էր ողջունում,
Պրիմակովը քժնանքով ծափահարում էր անվերջ,
Եվ այդ քժնանքն անամոթ դրոշ էին դարձնում
«Գիտնականներն» ազերի իրենց անմիտ վեճի մեջ:
Սկսվել էր մի արշավ ժողովրդի դեմ Հայկի,
Հազարամյա հայկական գյուղերն էին դատարկվում,
Գորբաչովը ձգտում էր մի անհմաստ, սին փառքի,
Բայց չգիտեր՝ ասեղը չեն թաքցնի նուրբ պարկում:

1991

Պայքարում է Արցախը արդարացի խռովքով,
Դիմում է, որ աշխարհը սատար կանգնի իր մեջքին,
Սակայն Հայաստանն է լոկ հարազատի իր հոգով
Զերմացնում զավակին կրակներով իր եռքի:
Վառում են գյուղ ու ավան, շեն քաղաքներ են վառում,
Բայց կրակի հնոցում կոփվում է քաջ արցախցին,
Նա իր ազնիվ երազի լույս ափերին է փարվում,
Ազատությունն է կռում, մարտնչելով առնացի:

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յավատում է նա իրեն՝ մրրիկների մեջ կոփված,
Գիտե, որ իր երազի ծառը ոչ ոք չի հատի,
Յավատում է, որ մի օր լուսաժախտ ու փորձված,
Ինքն իր ձեռքով ոստիին արդարությամբ պիտ դատի:

1988-1991թ., Ստեփանակերտ

1992

Դարերի խորքից Առանի ձայնը ղողանջեց այդժամ,
Առանի թոռան՝ Եսայու թուրը շաչեց ահարկու.
«Ելեք սարն ի վեր ու փոշի դարձրեք ոստիին դաժան,
Ու ձեր պապերի պատիվը փրկեք հողմաշունչ մարտում:
Շուշին բերդ չէ լոկ, Շուշին ոգին է հայոց քաջերի,
Շուշվա չորս բոլոր ձեր նախնիների ոսկորներն են սուրբ,
Ապավինեցեք ձեր բազուկներին ու լույս-խաչերին,
Ու մի անսացեք կեղծ հարեւանի դիմումներին սուս:
Եկել է ժամը, հատուցման պահը մի տվեք ձեռքից,
Արծվաթռիչքով սարն ի վեր ելեք առավոտ-ծեզին»:
Ու ելան թափով քաջ ժողովրդի զավակները քաջ,
Ու դեպի բարձունք թեւերն իր պարզեց Առանի ոգին,
Ու Ղազանչեցոց սուրբ Եկեղեցին հրեշտակ դառած
Պատերն իր մաքրեց ներկերով գրված անունը թուրքի:
Եվ Ավարայրից՝ մայիսը հասած Սարդարապատին,
Սարդարապատից հասած մինչ Բեռլին, քաջերին հայոց,
Գարնան թարմ շնչով սարն ի վեր թեւեց ուժով եռակի,
Ու ծիածանվեց Արցախի վրա՝ ոնց կրակ ու բոց:
Եվ ծիածանն այդ դարձավ դրոշը նոր հաղթանակի,
Ու փրկված Շուշին շուկեց իր մեջքը, բացեց նոր մատյան,
Մեծ հաղթանակի պատգամը հանձնեց Յայոց Բանակին
Եվ ասաց. «Երբեք մեր սուրբ հատու չդնեք պատյան»:

09.05.1992թ., Երեւան սրտարանական հիվանդանոց

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՕՐՅՆՅԱԼ ԼԻՆԻ

Մեր քաղաքի բարերարներից՝
Եղվարդ Վերոյանին

Օրինյալ լինի ծնունդը քո՝
Խաօն է Աստծոն մատը,
Օրինյալ է կաթ-սնունդը քո,
Սուրբ է քո արմատը:
Ժամ է եղել աստղալույսի,
Երբ աշխարհ ես եկել,
Երազները աննինջ հոգսի
Ճոգուդ մեջ է բեկվել:
Քո տենչերի փունջը առած,
Վառած ջահը՝ ափիդ,
Կյանք շենացնող վարպետ դառած,
Լույս ես ցանել ճամփիդ:
Վաստակել ես քեզ արժանի
Մի լավ անուն՝ Եղվարդ,
Կառուցում ես շենքեր քանի,
Ցանում ծաղիկ ու վարդ:
Ինչ կերտում ես՝ մարոկանց համար,
Երկրի համար է հար,
Կամարվում ես գալիքի հետ,
Երազներով քո վառ:
Քո երազից ծնված երգը,
Ին սրտով է հաստված,
Բարերարի հրաշք երթըդ:
Թող միշտ օրինի Աստված:

1992թ., Ստեփանակերտ

ՍՊԱՍՈՒՄ

Աչքերի մեջ քո ծավի,
Կորած աստղերս են փնտրում,
Գութ չեմ հայցում քեզանից,
Քեզնից իմ սերն են խնդրում,
Իմ այն սերը, որ տվի
Հոժարակամ ու գժված,
Ո՞նց թողեցիր, որ չվի
Թեւավորը իմ դրժված:
Իսկ ես, իսկ ես՝ խարվածս,
Միամիտ ու աներկրա,
Քո հայացքում խեղդվածս,
Սպասում եմ, որ կգա
Այն պահը խենթ ու խելառ,
Որ քեզ խելքի կրերի,
Գուցե լցվի ու ծփա
Սիրո բաժակն իմ թերի:

1992թ., Ստեփանակերտ

ՔՈ ՍԱՐԵՐԸ

Իմ Յայաստան, գերում են ինձ քո սարերը,
Կարոտմերս պիտի ծաղկեն նրանց հույսով,
Ոտքերիս տակ երակվում են քո դարերը,
Ինչ կորցրել եմ, պիտի գտնեմ նրանց լույսով:

Երազներս կարկաչում են քո դաշտերում
Ու քո անվամբ հողից ելնում ծաղկապսակ,
Սիրտս ողկույզ պապենաշուրթ քո տաշտերում,
Իմ մաճառով պիտի խմեն կենացդ թանկ:

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պիտի գտնեմ հավերժության ճամփան քեզնով,
Անհունները բերեմ-փոխն ոտքերիդ տակ,
Քո հյուլեն եմ, պիտի առնեմ համբավ քեզնով,
Քո համբավին ընծայելով իմ սիրտը տաք:

1992թ., Երևան

ՕՐՍ ԱՆՑԱՎ

Օրս անցավ՝ սրտիս նման
Կարոտներից թպրտալով,
Օրս անցավ՝ երգիս նման
Մերթ թախծալի, մերթ ժպտալով:
Սպասեցի՝ սերս չեկավ,
Լոկ հուշերս եկան այցի,
Կրկին նրանց գիրկը ընկա
Ու կարոտած սիրտս բացի:
Ինձ հասկացան, ինձ հետ լացին,
Սփոփեցին սիրտս նորից,
Ասին. «Ոչինչ հետ չես դարձնի,
Մի անգամ ես ծնվել մորից:
Ոտքից գլուխս սեր ես եղել,
Սեր ես տվել դու բոլորին,
Ապրիր, շնչիր քո երգի հետ,
Մինչեւ կյանքը քո բոլորի»:

1992թ., 5 հունվար,
սրտաբանական հիվանդանոց

ԱՌԵԴՎԱԾ

Տիեզերքն ու երկիրը մեր
Դաշնությամբ են ապրում, իրավ,
Այդ դաշնությամբ, դար ու դարեր,
Պաշտպանում են, պահում իրար:

Տիեզերքի շերտերի մեջ
Արարվում է լույսն անմարում,
Եվ այդ լույսով երկիրը պերճ
Ստանում է մեծ համարում:

Տիեզերքից մինչեւ երկիր
Ուլունքվում են աստղերը վառ,
Ու ժպտալով՝ շողերն արբշիռ
Շաղ են տալիս երկինքն ի վար:

Սակայն մի տեղ մուրճն է իշխում
Ու մի տեղ էլ խորշակը խենթ,
Մի տեղ կենաց ծառն է խշշում,
Մի տեղ հնչում մահվան քայլերգ:

Առեղծվածն այս ե՞րբ կրացվի.
Երբ լույսը կա, խավարն ի՞նչ է,
Երբ խինդը կա, էլ ի՞նչ թախիծ,
Երբ վերելք կա, էլ ի՞նչ վայրէջք:

Մայր երկրի եւ տիեզերքի
Դաշնությունը ո՞նց հասկանաս,
Խաղալիք է նրանց ձեռքին
Մարդը՝ սաղմից մինչեւ պառնաս:

1992թ., Երեւան

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՏԵՍԻԼՔ

Անմոռանալի հգոր Յասրաբյանի
հիշատակին

Երկնքից աստղեր իջան այս գիշեր,
Իջան կարոտով, վառվելով իջան,
Շուրջը անմարում երազ ու հուշ էր,
Եվ նրանց խոսքն էր հնչում քչքչան:
Զահելներ էին՝ կրակված հոգով,
Եռացող սրտով զահելներ էին,
Ժպիտները ջերմ, խոսքը հրայրով,
Կարծես մթան մեջ լույս զահեր էին:
Յրեշտակների թեւեր ունեին,
Աստօն հետ էին զրուցում սրտանց,
Վահագնի նման հուրիեր ունեին,
Ամեն մեկը մի դից էր հաղթալանց:
Նրանց շարքերից մեկն առանձնացավ,
Ես ճանաչեցի, հգորն էր արի,
Նրա ոգին էր ջերմ ու սրտացավ,
Տեսիլք էր դարձել, իշել աշխարհին:
Մոտեցա նրան կարոտի հրով՝
Յոր գուրգուրանքով ջերմին գրկեցի,
-Քեզ սպասում են բոլորը սիրով,
Սպասում եմ՝ ում ինքդ փրկեցիր:
-Ես նրանց հետ եմ, -ասաց քնքշալից,-
Նրանց կանչերն եմ լսում ամեն օր,
Ամեն օր մարտից դասի եմ գալիս,
Եվ ընթերցում եմ ես գրքերը նոր:
-Քո կյանքը վերձիգ ճանապարհ դարձավ,
Եվ ամենալույս գիրքն է այդ ճամփան:
Նա ժպտաց, նորից երկինք բարձրացավ,
Ինչպես մի աստղը մեր Արցախս տան:

1992թ., Ստեփանակերտ

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵՆՈՒԹՅՈՒՆ

Ճեքիաթներս ո՞ւր գնացին,
Ճեքիաթներս՝ թռվացող,
Երազներս ո՞ւր մնացին,
Երազներս՝ լույսերի ծով:

Կյանքս մի՞թե ակնթարթ էր,
Ինչպե՞ս անցավ, ես չիմացա,
Մերթ հորդուն էր, մերթ հանդարտ էր,
Ես նրանով միշտ հիացած:

Ճիմա խորհող իմ հոգու հետ
Դարձել են մի մենավոր ժայռ.
Ճեքիաթներս՝ կորած անհետ,
Երազներս՝ խեղճ որբեւայր:

1992թ., Երեւան

ԷՔՍՊՐՈՒՏ

Նվեր Գոհարին, Նահրային, Արմինեին,
Արանց ծննդյան օրվա առթիվ,
Տերյանական պոեզիայի օրը,
«Պապունց տանը»

Արեւի պես մի Գոհար,
Մի Նահրա՝ աստղի պես,
Մի Արմինե՝ լուսակառ,
Այսօր ելել են հանդես,
Տերյանական երգերով,
Շշունջներով նրա նուրբ,
Դաստատում են Արցախի
Դարատեւման ոգին սուրբ:

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երեք հոգի, երեք սիրտ,
Երեք զարուն, երեք գիրք,
Երեք օջախ, երեք տուն,
Գալիք մանկանց երեք գիրկ:

28.11.1993թ., Ստեփանակերտ

ԱՐՑԱԽ (Երգ)

Քո որդին ու զինվորյալն եմ,
Քո հավատի նվիրյալն եմ,
Քո նորածին մանուկների
Խաչեղբայրն ու կնքահայրն եմ:

Քո հողվորը, քո մշակն եմ,
Քո գալիքի մեծ գուշակն եմ,
Գարուններիդ գրկում բուրող
Զնձաղիկն ու մանուշակն եմ:

Քո անտառի կաղնի ծառն եմ,
Քո շուրթերին թառած բառն եմ,
Կրակների միջից փրկված
Քո մատյանը ու քո տառն եմ:

ԿՐԿԱԵՐԳ

Քո ոտքի տակ փռված հողն եմ,
Օջախներիդ անմար պողն եմ,
Սիրտս լիքը քո երգերով,
Քո սրտաբուխ երգի տողն եմ:

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրկներգ

Օսար լուծը մի դաղ է քեզ,
Սիրտս հրե մի տաղ է քեզ,
Քո հայաշունչ երթի համար
Ամբողջ կյանքս մատաղ է քեզ:

Կրկներգ

13.01.1993, Ստեփանակերտ

ԽՈՇԵՐ՝ ԿՐԱԿԻ ՄԵԶ

Առեղծված է կյանքը, իրավ,
Եվ ընթացքն է առեղծված,
Այն բորբոք է սիրո հրով,
Թեկուզ ինչ որ չափ՝ եղծված:
Սիրո հրի տերը մարդն է,
Հուրն այդ նա է միշտ վառում,
Սակայն ինչո՞ւ ընթացքի մեջ
Բարակում է այդ առուն...

09.01.1993

Քանի՝ տարի՝ կրվի մեջ ենք
Տագնապահար, անհանգիստ,
Բայց պողպատից ամուր ժայռ ենք՝
Ծաղկազարդ ու վեհանիստ:
Աստծուն մի օր հարցրի. «Որն՝ է
Գաղտնիքը մեր կուռ կամքի»,
Ասաց. «Գաղտնիք չկա մի խոր,
Սերն իմաստն է ձեր կյանքի»:

10.02.1993

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աղջկա շրբին ծաղկում է սերը,
Սերը աղջկա սրտում երազ է,
Սիրո հովանին հենց ինքն է՝ Տերը,
Տիրոջ կամքով էլ սերը մուրազ է:

Կռունկի թեւ է աղջկա սերը,
Արտույտի երգ է ու ծիծառի պար,
Սիրո պատկեր է աղջկա թեւերը,
Աղջկա սիրտը կյանք է կենարաբ:

Առուն աղջկա սիրո շշունջն է,
Բարդին սլացքն է աղջկա սիրո,
Ուրին աղջկա սիրո տրտունջն է,
Վարդը հրաշքն է աղջկա սիրո:

Աշխարհն աղջկա սիրո բույնն է տաք,
Քարով մի խփեք աշխարհին, ճարդիկ,
Աստծո օրինանքով այս արեւի տակ
Թողեք այդ սերը անարցունք ծաղկի:

12.02.1993

Մի կռունկ անցավ՝ տխուր երգելով,
Իր թավ տիրությամբ սիրտս հերկելով,-
Երեւի սերն է կորցրել ճամփեքին,
Նրան ո՞նց օգնեմ իմ կարճ ձեռքերով:

13.02.1993

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաստատում եմ ես, որ կյանքը սեր է,
Սերը՝ հերոսին ճախրելու թեւ է,
Իր երազ կյանքի կարոտների մեջ,
Երանի նրան, ով սիրո տեր է:

15.02.1993

Կյանքիս ճամփին, են գլխից,
Որոնեցի սերը ջինջ,
Ոչ ես սիրո տեր դարձա,
Ոչ էլ սերը գտավ ինձ:

16.02.1993թ., Ստեփանակերտ

ՏԵՍՆԵՍ ՈՎ Է

Այս ուշ պահին տեսնես ո՞վ է
Խոհերի հետ կրիվ տալիս,
Ո՞վ է թախծում ու թախծի մեջ
Կորուստների վիշտը լալիս:
Այս ուշ պահին տեսնես ո՞վ է
Զինվորյալի ճամփան պահում,
Ո՞վ է վառվում անտես ու լո՛ւռ
Կարոտների իր աշխարհում:
Այս ուշ պահին տեսնես ո՞վ է
Ժամանակի շնչից հալվում,
Տեսնես ո՞վ է խոցված սրտով
Տառապանքի բերից ծալվում:
Ո՞վ է կորցրել սիրո հույսը,
Ո՞վ է փարվել հույսի շողին,
Ո՞վ է սիրտը պսակ դարձրել
Իր օջախին եւ իր հողին:

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս աշխարհում, չար աշխարհում,
Տեսնես էլ ո՞վ Արցախ ունի,
Տեսնես էլ ո՞ւմ շրթերին է
Ծիածանվում նոր անտունին:

07.02.1994թ., Ստեփանակերտ

ՇՈՂԻԿ

Շողիկ Գրիգորյանին, նրա ժմանյան
օրվա առթիվ

Նա եւ շող է, նա եւ ցող է,
Օջախի ծուխս, սրտի դող,
Գալիք սիրո անմար պող է,
Հորն ու մորը հիացնող:
Նա թուխս աստղ է, թուխս արեւ է,
Երջանկության թուխս կրակ,
Ունքերը կեռ, թուխս թեւեր են,
Խելքը խորունկ մի ծովակ:
Նա դեռեւս մոր հույսին է,
Հոր հույսին է անմարում,
Բայց հոր ու մոր ճանապարհին
Վաղը ինքն է մի գարուն:
Նա եւ ցող է, նա եւ շող է,
Արցախահուր մի պողիկ,
Եվ իզուր չեն նրան կոչել
Հույսի շողով լի Շողիկ:

02.01.1994թ., Ստեփանակերտ

ԽԱՌՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍՓոփԱՆՔ

Նահատակված ազատամարտիկ
Հակոբ Արպատի Ավանեսյանի
հիշատակին

Անունդ պապերիդ անվանք,
Անունդ անվանք սրբերի,
Հայրական օջախի հուրը
Դու երկար պիտի պահեիր,
Բայց, ավա՞ղ, դաժան էր թշնամին,
Թշնամու գնդակը՝ չարագույժ,
Քսանդ դեռ նոր լրացած
Դարձար մի տեսիլք, դարձար հուշ...

Գրքերդ սեղանին դարսած՝
Շաղախված երազիդ հրով,
Երազդ թեւերը բացած՝
Եվ օծված առաջին սիրով,
Քո սերը Արցախը դարձավ,
Դու նրա զոհյալը քաջազուն,
Արցախիդ փրկության ճանփեքին
Արդ, քո սուրբ հոգին է թեւածում:

Օրերի խենթացած վազքի հետ
Կսպասի հայրդ քեզ անվերջ,
Մորդ կարոտը կդառնա
Հեքիաթի կրակը անշեց,
Կսպասեն, կսպասեն քեզ երկար,
Բայց դուռը էլ երբեք չես բացի,
Նրանց հետ երգ ու կատակով
Էլ երբեք չես նստի դու հացի:

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այդպես է բախտը մեր հայոց,
Այդպես է բախտը մեր հողի,
Զինվոր ու զոհ է պահանջում
Ընդդեմ դարավոր ոստիսի,
Մի Յակոր պետք է սրբանա՝
Դարձած փրկության նահատակ,
Որ ծնվի մանչուկ մի Յակոր՝
Երազը՝ ծիածան, սիրտը՝ տաք:
Քսանդ դեռ նոր լրացած,
Սրբացած նահատակ որդի,
Թող քո հոր ու քո մոր սրտերին
Սփոփանք բերի քո հոգին...

08.01.1994թ., Ստեփանակերտ

ՔՈ ԱՆՌԻՆՈՎ

1.

Մի աղջիկ է նա քնքուշ անունով՝
Մոռվ սեգ սարի լանջերի ծաղիկ,
Քայլը կանչում է երազի հունով,
Զայնը հնչում է ինչպես նուրբ տաղիկ:
Յայացքն աստղերից փնջած շողիկ է,
Ղենքը բոլորած հրաշք-լուսնկա,
Ժափտն օջախի կրակ-պողիկ է,
Արցախա հրակ աղջիկն է, որ կա:
Նա բազմել է իմ տենչերի գահին,
Թող աստված նրան միշտ քաղցր պահի:

2.

Երազների թեւերին՝ իմ երազների,
Յեքիաթային, երփներանգ երազդ լիներ,

ԽԱԴՆ ՔԱՆԱՏԱԴՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տենչանքներդ ձուլվեին իմ մուրազներին,
Ու մի անխոս առասպել իր հենքը իիներ:
Առանց խոսք ու գրույցի թեւեինք անվերջ
Եվ օթեւան հիմնեինք արեգակի մոտ,
Եվ մեր սրտուն բռնկվեր մի կրակ անշեց,
Եվ այն դառնար հավերժող ու կապույտ կարոտ:
Այդ կարոտից ծնվեին երազնե՞ր քանի,
Այդ երազը ցող դառնար եւ իջներ հողին,
Ծաղիկ դառնար բուրավետ՝ անվանդ արժանի,
Աստվածային քո սիրով վառեր իմ հոգին:

22.06.1995թ., Ստեփանակերտ

ՄՐՏԻ ԽՈՍՔ

Ընկերոջ՝ գիտնական-մանկավարժ
Արամայիս Աղասյանի ծննդյան
60-ամյակի առթիվ

Մոռվ սարի հայացքի տակ,
Խաչեն գետի դալար ափին,
Ծիածանվեց հոգին շիտակ
Ու բարախեց սիրտդ նրբին:
Ու կրծքիդ տակ տենչեր վառած,
Ու փարված քո երազներին,
Մի հուսավառ մշակ դառած
Զեռք մեկնեցիր մուրազներիդ:
Թեւավորված երկրիդ կանչով
Դու գիտության ծովը մտար,
Քո քրտինքով ու վաստակով
Քո անունն ու տեղը գտար...
Ճիմա վաթսուն գարունների

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեր ես դարձել բուրումնավետ,
Լույսը առած քո թեւերին
Քայլում ես մայր Արցախի հետ:
Ընկերներիդ շրջապատում
Վաստակել ես սեր ու հարգանք,
Սրտի խորքից քեզ ենք մաղթում
Առողջություն, երջանիկ կյանք:

12.01.1996թ., Ստեփանակերտ

ԽՈՍՔ ՈՂՋՈՒՅՆԻ

Սիրով՝ տաղանդավոր երգահան, երգիչ,
Մարթն Յորգամցին

Դեռ Արցախա հիմնը չկար,
Քո «Ճայ երգը» հնչեց ոնց հիմն,
Դեպի լեզուն մեր հայկական
Ալեկոծվեց ծարավը հին:

Դու երգերիդ թեւով եկար
Ու երգ դառար մեր շրթերին,
Մեր ցավը կար, ցասումը կար,
Դարման արիր մեր վերքերին:

Մանկանց սրտում խոսքդ հնչեց,
Երգդ հնչեց խրամատում,
Մեր սարերում երգդ շրջեց,
Դրոշ դարձավ դաժան մարտուն:

Արդ եկել ես որդու սիրով,
Եկել ես քո երգերով բյուր,
Մայր Արցախը սրտի հրով
Քեզ տալիս է քաղցր համբույր:

ԽԱՌՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Չարք են կանգնել քիրս ու Մոռվ,
Խաչենագետ ու խենթ Թարթառ,
Ազատության պարն են պարում
Երգերիդ տակ քաղցրաբարբառ:

Ճավերժող է պարը մեր խենթ,
Ճավերժող է խոսքը հայի,
Ողջույնս քեզ, եղբայր Մարթեն,
Դու մեր երգի քաջ ֆիդայի:

17.04.1996թ., Ստեփանակերտ

ՂՈՂԱՆՁ ՍԻՐՈ

Ցվետանա Պասկալեւային՝ Արցախի
հերոս աղջկան...

Մեր ցավը խորն էր, ճամփան դժվարին,
Երազը մաքուր՝ ոնց սարի շուշան,
Մեր դեմ ելել էր մոլուցքով վայրի
Մեր արյունօռւշտ դրացին խուժան:

Կրակի մեջ էր գյուլիստանը հին,
Մռովն էր ցնցվել շղթաների մեջ,
Նա հեռվից եկավ՝ ոնց դրւստրն է անգին
Օգնության հասնում մորն իր սիրատենչ:

Տևախցիկը քնքուշ ուսերին,
Մեր տարեգիրը դարձավ իմաստուն,
Իր տենչը խառնեց մեր վառ հույսերին,
Մեր բաղծանքները վառած իր սրտում:

Մեր արդար ձայնի խոսնակը դարձավ,
Մեր խոսքը տարավ աշխարհից-աշխարհ,
Մեր տենչը նրա արյանը անցավ,
Ու մեր Արցախը համարեց սուրբ մայր:

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արցախը տունն է նրա հայրենի,
Մեր լուս աղջիկն է մեր ՑՎԵՏԱՆԱՆ,
Մեր Ռուգանի, մեր Գայանեի
Երազից ծնված ժառանգորդն է նա:

Մենք իյուսել ենք մեր արեւը հոգու՝
Մեր ազատության տենչերից անմար,
Մեր արեւ-հոգու մի շողն է մաքուր՝
Մեր ՑՎԵՏԱՆԱՆ բոլորիս համար:

1996թ., Ստեփանակերտ

ՄՈՐ ԿԱՆՉԸ

Նահատակ-ազատամարտիկ Ռոմա
Գրիգորյանի սուրբ հիշատակին՝
իր մոր՝ Գյուլչորա Գրիգորյանի
անունից...

Քեզ աշխարհ եմ բերել, որ իմ լույսը դառնաս,
Որ իմ հույսը դառնաս եւ ճրագը իմ տան,
Որ գրավես մտքի բարձունքները անհաս,
Որ քո շնչով ծաղկեն օջախ ու գերդաստան:
Բայց ընտրեցիր կյանքում զինվորյալի ուղին,
Ոնց Արցախա մի ծուռ նշանառու դարձար,
Քեզ իր գիրկը առավ Ուկրաինան անգին,
Եվ դու նրա գրկում գտար երգ ու ծիծաղ:
Քո երազի ծառին աստղեր էին վառվել,
Սիրո մոմն էր վառվել ջահել քո սրտի մեջ,
Դու զինվորի կյանքին այնպես էիր փարվել,
Ասես այս աշխարհում չկա ուրիշ մի տենչ:
Ասում էիր. «Մայրիկ, դու պիտի գաս ինձ մոտ,
Միակ զավակն եմ քո, ճրագն եմ քո սրտի,

ԽԱՌՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սայրիկ, ինչպես ապրեմ փայփայանքիդ կարոտ,
ինչպես ապրեմ առանց քո սրբազան գրկի»:
Ասում էի. «Կզամ, իմ մինուճար որդի,
Թրթիռներում սրտիդ մորդ սիրտն է հեւում,
Կզամ, որ արեւի քո ջերմացող հոգին,
Չէ՞ որ իմ երազը քո սիրով է թեւում»:
Սակայն դաժան եղավ հարեւանը մեր չար,
Մեր Արցախի ճամփին սփռեց մահ ու ավեր,
Եվ Արցախի կանչով Սասնա Դավիթ դարձար
Ու մարտի մեջ մտար՝ առած կրակ թեւեր:
Ասացիր. «Մեր Շուշին, մեզնից խլված Շուշին,
Սպասում է հայոց զավակներին շիտակ,
Գալիք սերունդները երբեք մեզ չեն հիշի,
Եթե թողնենք նրան թուրքի ոտքերի տակ»:
Եվ դու ելար, որդիս, ելար քաջերի հետ,
Քաջի մահով ընկար մեր Շուշիի ճամփին,
Չար թշնամին կորավ մեր լեռներից անհետ,
Սակայն, ավաղ, մարեց արեւը քո բախտի:
Մայր եմ, չեմ ցանկանում ուրիշներին ես ցավ,
Բայց իմ ցավը խորն է, իմ հեռացած արեւ,
Քո զոհվելուց հետո հինգ գարուն էլ անցավ,
Ոչ հարսանիք տեսա եւ ոչ պարող թեւեր:
Վերադարձիր, որդիս, աչքս ճամփին է քո,
Ես թոռնիկ եմ ուզում քո աչք-ունքով, քեզ պես,
Դարսի ծայն եմ ուզում լսել ջերմին հոգով,
Առանց քեզ ի՞նչ անեմ, որդիս, ապրեմ ինչպես:
Ճանապարհիդ փակ է, փակված ճամփիդ մեռնեմ,
Սրտիդ լույսով թող որ ողջ աշխարհը ժպտա,
Թող քո մասին ասեն. «Մեր հերոսն է, մերն է»,
Ու թող հպարտությամբ քո լույս անունը տան:

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իսկ ես քո կարոտից մոմի նման կայրվեմ,
Դռներդ բաց կանես եւ կը նդունես դու ինձ,
Ես գրկաբաց կգամ, որ երազիդ փարվեմ,
Ծաղկուն հասակը քո գուցե տեսնեմ նորից:

17.07.97թ., Զերմուկ

ՆՎԵՐ

Ակադեմիկոս Աբել Աղանքելյանին

Ճեռվից լսել էինք, Աբել, անունը քո,
Լսել էինք, ու քո գործով հպարտացել,
Եվ գիտեինք, որ դու մեզ ծուլվել ես հոգով,
Եվ Արցախի հանդեա քո մեծ սիրտը բացել:

Ճետո հանդիպեցինք, տեսանք ինչպես դու կաս,
Քո արցախյան մաքուր սիրով թեւեր առանք,
Եվ Արցախի բախտով, բախտով հայոց ազգի
Մեր երազով, կամքով մի հաղթ բռունցք դառանք:

Ճայրս կասեր՝ տղան պիտի խելոք լինի,
Ազգին սիրտն իր բերի եւ նվիրի թեւեր...
Ճորս երազածն ես, Աբել, մեր սիրելի,
Մեր հարգանքի թեւին մեր սիրտը քեզ նվեր:

19.09.1997թ., Ստեփանակերտ

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵՐ ԳՈԳ ԱՊԱՆ

Գուրգեն Գաբրիելյանին

Մեր հոբելյար, մեր Գոգ-ապան,
Տեղովը մեկ երգ է, հարկավ,
Արարում է նա ամեն օր,
Զայնը քաղցր ու երգը նոր:
Մեկ տեսնում ես հոգով հյուսած
Երգերի թարմ շարքերն ուսած,
Զանգում է, թե եկեք՝ կարդանք,
Զեզանում կա էլա հարգանք:
Զեռքը դրած սիրտ-հնոցին,
Հարուն է իր իին խնոցին,
Հորովելն է օծում շողով,
Հնչեցնում սրտի դողով:
Մերթ լինում է Ամարասում՝
Մեր հավատի խոսքը ասում,
Մերթ հասնում է սուրբ Դադիվանք,-
Ինքն էլ դարձած մեր դարդի վանք:
Զրուցում է Մաշտոցի հետ,
Այբուբենը դարձրած օրիներգ,
Կյանքն է գովում լույս ախաղոր պես,
Դժվար պահին դուզ ախաղոր պես:
«Հորովելը» գուլալ գետ է,
Իրեն ծնող սուրբ մոր հետ է...
Հույսը կախած լծեն կապան,
Արարում է մեր Գոգ-ապան:

1997թ., Ստեփանակերտ

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՇՈՒԹՑՈՒՆՆԵՐ

ՅՈՐ ԿԱՐՈՅԵ

Նահատակ-ազատամարտիկ, ուսանող,
Արքուր Պետրոսյանի սուրբ հիշատակին

Որդին եկավ դասից, գիրքը դրեց մի կողմ,
Չար թշնամու հանդեա ցասումը իր սրտում,
Ասաց. «մեր ոսոխը ինչպես պտտահողմ
Ավերակ է դարձնում Արցախը մեր ծաղկուն:
Պիտի զնամ, հայրիկ, հայրենիքն է կանչուն,
Ազգի բախտն է կանչուն, պատերազմ է ահեղ,
Ուն երակուն այսօր տաք արյունն է սառչուն,
Նա լրյալ է ու կեղծ, թեկուզ լինի անմեղ:
Կորիվն է սա վերջին՝ հայի կորիվն արդար,
Եթե տանուլ տվինք, ել չենք հարատելի,
Հայրիկ, պիտի կռվենք ոսոխի դեմ մեր չար,
Ու մեր բախտը դնենք հաղթանակի թելին:
Քառասնամյա հայրը լսեց ջահել որդուն,
Ասաց. «Տղաս, գիտես, զնդացրորդ եմ արդեն,
Վառվող մի տենչ ունեմ իմ հայրական հոգուն,
Բուհն ավարտես, հետո մեր թշնամուն ջարդենք:
Քո փոխարեն մարտուն չեմ խնայի թուրքին,
Կալանամ ցասմամբ ես ճակատից-ճակատ,
Հետո կգաս, որդիս, միանաս մեր վաշտին,
Ու միասին կելնենք դեպի լույսի գագաթ»:
Սակայն որդին կրկին իր վճիռը բերեց,
Ասաց. «Հայրիկ, այսօր մենք բոլորս ենք մարտիկ,
Թե ոսոխը նորից մեր երկիրը գերեց,
Արդեն ուշ կլինի նետվել ահեղ մարտիկ»:
Ու զնացին մեկտեղ հայր ու տղա՝ կռվի,
Մահվան հունձքի դիմաց բացելով թեժ կռակ,
«Մենք չենք թողնի թուրքը իր անունը գրի

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՇՈՒԹՑՈՒՆՆԵՐ

Մեր վանքերին ու մեր խաչքարերի վրա»:
Հայր ու որդի անցան կրակների միջով
Մայր Արաքսի ափից մինչեւ հսկա Մռով,
Դիմավորեց նրանց խաչենը զիլ ճիշով,
Թարթառը խենթ երգով հունից վեր-վար թռավ:
Փոկված ամեն մատուռ, ամեն եկեղեցի
Գերում էին որդուն որպես մի սուրբ մասունք,
Պատմաբան էր որդին, անգամ մի հին խեցի
Յին դարերի մասին մի զրույց էր բացում:
Ու Մռովի լանջին դաժան կրակ բացվեց,
Որդին կրակն առավ իր հաղթ կրծքի վրա,
Հայրը գրկեց որդուն, հոնգուր-հոնգուր լացեց,
Ասես հոդ ու երկինք խառնվել էին իրար:
Որդու վերջին խոսքը ծփաց շրջապատում,
«Հայրիկ, զգույշ եղիր, նենք է ոսդիմ շատ»,
Որդու կյանքը դարձավ հերոսական պատում,
Զահել սիրտը ձուլվեց կյանքին արեւաշատ:
Հայրը կրվեց նաեւ փոխարենն իր որդու,
Կապանքներից փրկեց Մռով ու Քիրսա սար,
Շարականվեց ազատ Թարթառ գետը հորդուն,
Խաչեն գետը հուշի իր մեղեղին ասաց:
Սակայն հոր սրտի մեջ մի անթեղված ցավ կա,
Անանց մի կարոտ կա հերոս որդու հանդեպ,
Գիտե, որ իր որոնին երբեք էլ տուն չի գա,
Էլ սեղան չի նստի հաղթանակած հոր հետ:
Երբ անունն է տալիս նահատակված որդու,
Ասես նրա խոսքը փոխվում է մի Ասքի.
«Տղաս շատ էր խելոք եւ վախ չուներ սրտում,
Շրթին Արցախ բառն էր, հոգում պատկերն ազգի:
Նա պատմության դասն էր սերտել քանի տարի,
Կարծես զինվորյալն էր Արքա Տիգրան Մեծի,

ԽԱՌՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զինակիցն էր ասես Վարդան զորավարի,
Կարծես ինքն է թամբել Դավիթ Բեկի ալ ձին:
Սարդարապատն ասես թեւ էր տվել նրան,
Քաջ Նժդեհի ոգին միշտ էլ նրա հետ էր,
Նրա թրթռացող շրբունքների վրա
Անունն Անդրանիկի ամենավեհ եղան էր:
Շատ էր ջահել որդիս, բեղը նոր էր ծլել,
Խոսքը հնչում էր ոնց կարմիր երազ ու տենչ,
Կարծես Բաղրամյանից արցախական մի թել
Եկել-շող էր դարձել նրա աչքերի մեջ:
Խորն է վերքիս սպին, վիշտս մորմոքուն է,
Զավակ կորցնելը միշտ ցավ է մի անխնա,
Սրտի կորուստ է դա եւ հար բորոքոքուն է,
Չէ՞ որ հոր ժառանգը որդին պիտի դառնա:
Ես նայում եմ շուրջս, լուս է ամենուրեք,
Այդ լույսերի մեջ եմ հիմա տեսնում որդուս,
Որտեղ պար եմ տեսնում, լսում մարտական երգ,
Թվում է, թե նա էլ պարում է եւ երգում:
Եվ երբ լսում եմ ես պատերազմի մասին,
Որդուս խոսքն եմ հիշում ջերմին ու իմաստուն.
«ճիշտ ենք ապրել, թե՝ ոչ, դա գալիքը կասի,
Իսկ ճիշտ ապրելն այն է, որ ունենաս տեղ-տուն,
Որ չքողնես խլեն պատիվդ ու հողդ,
Որ քո ազգանունը դարերի մեջ ապրի,
Որ չմարի երբեք քո արեւի շողը՝
Սերունդների համար դարձած գարնան արփի»:
Որդիս շատ էր խելոք, խիզախ մարտիկ էր նա,
Իր հայրենի հողի նվիրյալն էր ջահել,
Թող որ կյանքը լույսի փոխվի հոգեհնա,
Ել չտեսնենք կրիվ, էլ չտեսնենք մահեր»:

18-19 հուլիս, 1997թ., Զերմուկ

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՔՐՈԶ ԱՌՈԹՔԸ

Գնդապետ Էլմիրա Աղայանի Եղբայրների՝
Երկվորյակներ Արևադի Եւ Արմոյի
անժամանակ մահվան առթիվ

Ով դու սուրբ Մարիամ, օգնիր վշտիս մեջ,
Որ չմոլորվեմ հայացքիդ առջեւ,
Ես, որ ունեցա հազար ու մի տենչ,
Հիմա սգի մեջ ողբում եմ անթել:
Դու մայր ես, Մարիամ, խաչվել է որդիդ,
Դարձել հավերժող հույսը աշխարհի,
Որդուդ գրկել են Աստվածն ու Հոգին,
Նա մեր հավատն է եւ լույսը բարի:
Դու Աստվածամայր, Դու Աստվածածին,
Քնքույշ քույր էի՝ միշտ էլ սրտացավ,
Սոր գորովանքով ես փայփայեցի
Իմ Եղբայրներին՝ մի-մի ծիածան:
Սիրտս ու հոգիս շողերի փոխած
Ցանեցի նրանց դժվարին ճամփին,
Քույր էի, սակայն մայրական սրտով
Նրանց բախտի մեջ գտա իմ արփին:
Արևադիաս՝ Մռով, Արմոս՝ Քիրսա սար,
Դարձան թեւերս, թիկունքս դարձան,
Հարսեր ունեցա խելոք, ոսկեվարս,
Եղբայրներիս հետ իմ ուղին անցա:
Նրանք ոնց աստղեր կային իմ հոգում,
Ուրախության մեջ, տխրության պահին,
Փայփայում էի ոնց մայրը որդուն:

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՇՈՒԹՑՈՒՆՆԵՐ

Ով Աստվածածին, Ով Աստվածամայր,
Փլվեցին մեկեն սարերս հսկա,
Մարեցին մեկեն աստղերս անմար,
Դիմա չգիտեն ես կամ, թե՝ չկամ:
Նստել եմ թափուր, աղոթքը շրթիս,
Այս ի՞նչ աղետ էր, որ ինձ պատահեց,
Մի անհուն ցավ է ծանրացել սրտիս,
Կորստյան հուրը ինչո՞ւ ինձ վառեց:
Դու քո մեծ հոգու անդորրը ջերմին
Ընծայիր վշտիս ծով ալիքներին,
Սփոփիր սիրտս, որ ես ել օգնեմ
Իմ բալիկների ժիր բալիկներին:
Օգնիր ինձ, Մարիամ, օգնիր ցավիս մեջ,
Իմ եղբայրներին ընդունիր մոր պես,
Փայփայիր նրանց քո սիրով անշեջ,
Մոր ցաված սրտով պաղատում եմ քեզ:
Ինձ համբերություն հաղորդիր, Մարիամ,
Քո խոցված սրտի ուժն ինձ պարգևելիր,
Մոմեր կվառեն քո ոտքերի տակ,
Մայրություն արա իմ եղբայրներին:
Դու իմ փոխարեն նրանց փայփայիր,
Աղաչում եմ ես, Քո ցավը տանեմ,
Եղբայրներիս մոտ իմ տեղը պահիր,
Որ գամ եւ նորից մայրություն անեմ:

22-ը ղեկտեմբերի, 1997թ., Ստեփանակերտ

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵՐ ՆԱՐԱՊԵՏ

Ժողովրդական դերասան Բենիկ Օվչյանին՝
ծմնդյան 80-ամյակի առթիվ:

Ողջո՞ւն, Վարպետ, ողջո՞ւն ու սեր
Քո գարունված տարիներին,
Այսպես փառք են տվել դարեր
Հաղթանակած արիներին:
Չարի երթը խաթարեցիր
ճամփաներում քո դեգերուն,
Քանի՛ դերեր կատարեցիր,
Բայց մնացիր միշտ քո դերում:
Միշտ քո դերում՝ մեծ արցախցի,
Վառված բարու անմար հրով,
Անցար դու քո ուղին անբիծ՝
Սիրտդ օծած ոսկեջրով:
Դու մեր բեմի անխոնջ հսկա,
Օրինված լույսով Փափազյանի,
Ուսիդ առած նրա ներկան,
Քայլում ես դեպ լուսե գալիք:
Քո մի թեւը՝ սարը Քիրսա,
Իսկ մի թեւը՝ լեռը Մռով,
Արվեստի մեջ ինքդ մի սար՝
Երազներով քո անխռով:
Տարիների հոսքում անկանգ
Միշտ խոսել ես մեր սրտի հետ,
Ու կխոսես, քանի դեռ կաս,
Դու իմաստուն մեր Նահապետ:

1998թ., Ստեփանակերտ

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱ

Ասկերանի շրջանի վարչակազմի ղեկավար,
քաջն սպա Սամվել Յակոբյանին

Աստվածային կամքով, ուժով աստվածային,
Սամվելներ է ծնում ժողովուրդը մեր հին,
Նրանք հողն են սիրում սիրով գերմարդկային
Ու նվիրում նրան իրենց կյանքը անգին:
Իմ այս երգը սրտի հպարտության խոսք է,
Զոնված հերոս զինվոր Սամվել Յակոբյանին,
Նրա ճամփին թող միշտ ժպտա արեւը բորբ,
Ու շուք անի նրան Յայոց եղբեւանին,
Որ սեգ Արցախը մեր հայի շնչով ապրի,
Մեր դրոշը ծփա Քիրս-Մռովի վրա...
Յավատում եմ գալիք մեր Մեծ Յաղթանակին,
Քանզի Սամվելներն են զորությունը նրա:

05.02.1999թ., Ասկերան

ԵՐԱԶԻ ՅԱՑԸ

Զորի Բալայանին

-Զորի, հացարովի ժամանակ երազտեսնո՞ւմ էիր...
-Տեսնում էի, երազիս հաց էի տեսնում...
(Թերթերից)

Երազում հաց էիր տեսնում,
Յացը հրաշք է, Զորի,
Երազում հացը նեցուկ է,
Խորիուրդ է լույսի ու նորի,
Երազում հացը բարի է,
Բարիք է խոստանում ազգին,
Երբ մեր դեմ հեղեղն է չարի,

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հացը ակունքն է Ասքի:
Երազում հացը նվեր է,
Զարկերն ու պատկերը սրտի,
Երազում հացը թեւեր է,
ճախրում է տապին ու ցրտին:
Հացը դուստրն է Արեւի,
Անձրեւից հետո՝ ծիածան,
Երազդ հաղբանակ կրերի
Մեր ազգին՝ դեռեւս ցիր ու ցան:
Հացը պատիվ է, Զորի,
Նա շունչն է մեր ընտրած պայքարի,
Հացը հավատն է բոլորիս,
Երազդ թող բարին կատարի:

25.09.1990թ., Ստեփանակերտ

ՓԱՌՔ ՈՒ ՊԱՏԻՎ

Նվիրում եմ մեր Արցախի հերոս, «Ոսկե արծիվ»
շքամշանի ասպետ Զորի Բալայանին՝
ծննդյան 70-ամյակի առթիվ

Ինչպես քիրսը ու Մռովը,
Դու ամեն օր մեր կողքին ես,
Կյանքի հետ հաշտ, թե՝ խռով ենք,
Դու խոսքաշեն մեր ոգին ես:
Թարթառի պես խոսում մեզ հետ,
Արաքսի պես խռովում ես,
Մեր երազով խոսում մեզ հետ,
Մեր բախտի մեջ խորովվում ես:
Զեռքդ դրած մեր խոր վերքին,
Մեր ցավերով հառաջում ես,
Սրտով ձուլված մեր նոր երթին,

ԽԱՌՆ ՔԱՆԱՏԱԴՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարտերի մեջ շառաչում ես:
Քո հավատով մեր հավատի
Արծիվներն են հար թեւածում,
Քո կոչով մեր արդար դատի
Ազատ հորիզոնն է բացվում:
Դու մաքառման մեր հուսաբերդ,
Անդրանիկի լուսե պատգամ,
Մեր խռովքի ավիշ ու երգ,
Մեր պայքարի հրածին կամք:
Խոսքը կանչն է մեր սրտերի,
Կյանքո՞՝ գալիք օրվան ընծա,
Ամեն գիրքդ մեր թեւերին
Մարտի կանչող հնչուն ծնծղա:
Տառապանքը հույսի շող է,
Նվիրումն՝ միշտ անպատիր,
Երազանքո՞ գարնան ցող է,
Քո ծնունդին փառք ու պատիվ:

10.02.2005 - 05.12.2009թ., Ստեփանակերտ



Կրտսեր որդու՝ Կարենի հետ

ԽԱՌՆ ՔԱՆԱՏՆԴՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՆԹԵՂՆ ԱՐՑԱԽԱԿԱՆ

Միրով՝ տաղանդավոր գրող ու պատմաբան,
մեծ հայրենասեր, Սուշկապատի ծնունդ
Բ. Ռևոլքարյանին՝ ծննդյան
70-ամյակի առթիվ

Մուշկապատի մուշկահոտը ծածանվում է անապական,
Մուշկապատը բարձունքներից ողջունում է բարձունքներին,
Մուշկապատը՝ զուլալ առու, ակունքներից ավանդական
Ակոսելով ճանապարհը, ջուր է տանում ակունքներին:

Մուշկապատի խորհուրդը խոր բաց է արել փեշերը ջինջ
Ու դարձել է արցախական առեղծվածի մատյանը սուրբ,
Նրա հանդեպ չեն դադարում ազերական ծիչ ու կրինչ՝
իբր սուտ են Մուշկապատը, Մուշկապատի երկինքը լուրթ:

Բայց պապերի հին բարձունքից նոր բարձունքին հենված
հպարտ,

Արարում է Մուշկապատը մայր Արցախի անհուն սիրով,
Նա իր խոսքն ու երգն է գրում սրտով՝ բարի, հոգով՝ անպարտ,
Մերթ պատմիչի գրչով իր սուրու մերթ երգչի վառող հրով:

Հմուտ մշակ Մուշկապատը սերմնացան է Յայոց հողում,
Խսկ հայ հողի սերմնացանը աստղացան է արեւատենչ,
Մայր Արցախի կաթով սնված Մուշկապատից լույս է շողում,
Դա կանթեղն է արցախական, որ կվառվի դարերի մեջ:

06.12.1995թ., Ստեփանակերտ

ԵՐԳ ՀԱՎԵՐԺԱՑՄԱՆ

ԼՂՂ պաշտպանության բանակի կենտրոնական
պաշտպանական շրջանի հրամանատար,
«Մարտական խաչ» առաջին աստիճանի
կրկնակի շքանշանակիր, գնդապետ
Սամվել Կարապետյանին

1. ՔԵԶ ՓԱՌՔ ՈՒ ՊԱՏԻՎ

Ես քեզ տեսել եմ դարերի խորքում,
Դարձած աջ թեւը ՝ այլ Նահապետի,
Ես քեզ տեսել եմ Տիգրանի զորքում
Եվ գնդում Վարդան Սպարապետի:
Տեսել եմ ես քեզ Գոչավանքի մոտ,
Արար Բուղային ծնկի բերելիս,
Տեսել եմ՝ Մռով սարում քարքարոտ,
Չինգիզ Խանի գոռ զորքը գերելիս:
Տեսել եմ Դավիթ Բեկի երթի մեջ՝
Սյունիք-Արցախի փրկարար կռվում,
Տեսել եմ՝ ոնց է դաժան թշնամին
Քո ոսքերի տակ դողալով փովում:
Քեզ ողջունել է Անդրանիկը քաջ,
Նժդեհը ձեռքն է դրել քո ուսին
Եվ ասել. «Որդիս, ազգը կապրի հար,
Թե ապավինի իր ուժի հույսին»:
Այդպես, քայլել ես դարերի միջով
Ու կոփել սիրտդ կամքով զինվորի,
Մեր հարատեւման դուռը ճոհնչով
Բացվել է նաեւ բազուկներով քո:
Մեր ժողովրդի բարդ ճանապարհին
Քայլել ես՝ նրա ուժով զորացած,
Եվ աչքերի դեմ այս չար աշխարհի,

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պարզել ես Դավթի սուրբ հրացայտ:
Մերք մարտնչել ես Արաքսի ափին,
Մերք Քարվաճառի գերված սարերում,
Մեր ազատության դժվարին ճամփին
Քո հրաշք գործը կապրի դարերում:
Թեժ գնդակներ են անցել քո սրտով,
Սակայն չես թողել մարտերը երբեք,
Առյուծների պես զինվորները քո
Մարտերից-մարտ են սլացել քեզ հետ:
Մեր լեռնաշխարհի այգաբացում պերճ
Քո երազներն են շափաղում, Սամվել,
Չորապետների անմար բույլի մեջ
Քո հերոսական անունն է գրվել:
Կյանքդ հավերժող Ասքի է փոխվել,
Կամքդ դարձել է հաղթական ոգի,
Եվ ժողովուրդը ասում է սիրով.
«Քե՞զ փառք ու պատիվ, ին Սամվել որդի»:

05.09.1998

2. ԱՅՆ ԶՈՐԱՊԵՏՏՆ ԵՍ

Այն զորապետն ես, որի արյան մեջ
Երկու սուրբ բար կա՝ Յայրենիք, Պատիվ,
Եվ որոնց համար սիրով քո անշեջ
Վերքեր ես կրել մարտերում անթիվ:

Այն զորապետն ես, որին զինվորը
Պաշտում է՝ ինչպես եղբօրն իր ավագ,
Լսում է՝ ինչպես հարազատ հորը,
Յավատում՝ ինչպես ընկերոջը թանկ:

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այն զորապետն ես, որ առաջինն է
Շոյում-փայփայում գենքերը մեր նոր,
Որի ականջը երկրի կանչին է,
Ինչպես զավակն է լսում ձայնը մոր:

Այն զորապետն ես, որի վառ արյամբ
ճամփան է բացվել Արաքսից-Մօռվ,
Որի անունն է հնչում ամեն տան,
Եվ մանուկների խաղում անխօռվ:

Այն զորապետն ես, որի ոտքի տակ
Ծաղկում է հավետ երկիրը շենչող,
Այն զորապետն ես, որով հապրտ է
Մայր ժողովուրդը՝ հերոսներ ծնող:

20.02.1999

3. ԽԻԶԱԽՈՒԹՅՈՒՆ

Ս. Կարապետյանի ծմնղյան
օրվա առթիվ

Խիզախությունը Աստծո պարգել է,
Երջանկություն է խիզախությունը,
Խիզախությունը պատիվ ու թել է,
Երանություն է խիզախությունը:

Սակայն նրան են ասում՝ երանի,
Ով ազատության ճամփան է հարթուն,
Ով Դավթի թոռն է, ծոռն է Առանի,
Ում հոգին կրակ ու խիղճն է արթուն:

Ով պայքարի մեջ իր հուրն է վառուն,
Ով թուրն է առնում թշնամու դիմաց,
Ով կրակների միջից է հառնում
Եվ իր սեղանին դնում աղ ու հաց:

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ով սիրտն է դարձնում բարության աղբյուր,
Ում՝ ժպիտների փունջ են նվիրում,
Ում տարիներն են դաշնում աստղաբույլ,
Ում՝ ժողովուրդն է մոր նման սիրում:

Այս քո մասին է իմ խոսքը, Սամվել,
Եթե ես չասեմ, դարերը կասեն,
Արյունդ երկրիդ համար ես քամել,
Եթե ես չասեմ, սարերը կասեն:

Եթե ես չասեմ, Թարթառը կասի,
Բարբառը կասի Արցախ աշխարհի,
Եթե ես չասեմ, Մոռվը կասի,
Կասեն հայրերը, մայրերը բարի:

Քո խիզախությամբ Աստծո պարգև ես,
Քեզ նմաններն են երկիր փրկողը,
Դու Շայոց հողից ծնված Անթեյ ես,
Եթե ես չասեմ, կասի մայր հողը:

09.09.1999թ., Ստեփանակերտ

ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Նրա «XX դարի հայ քնարերգության
զարգացման միտումները» դոկտորական
թեզը կարդալուց հետո

Ողջույն Վարդան, իմ աստղածին բանաստեղծ,-
Դրաշագեղ երանգների ծիածան,
Վաղուց գիտեմ հյուսվածքները քո անեղծ,
Են գլխից ես դարձել հմուտ սերմնացան:
Դու նման ես արծվակտուց այն հավքին,
Որ իր կուտը որոնում է երկնքում,
Ես ծանոթ եմ պոետական քո հանքին,

ԽԱՌՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բառերի դեմ դու երբեք չես երկնչում:
Ինձ հուզել է երգդ սիրո ու ցավի,-
Եվ հողեղեն, եւ ոգեղեն քնքշանքով,
Քո երգի մեջ դարի շունչն է, հիրավի,
Որ տրվում է պուտական տանջանքով:
Ես գիտեի նաեւ գինը քո խոսքի,
Դու Սեւակի զարմից սերված իմ եղբայր,
Առնչվել եմ բառակերտման քո հոսքին,
Քեզ գտնելիս չեմ որոնել ես երկար:
Արդ, քո թեզն է հայրտ բազմել սեղանիս՝
Մարմին առած գիտնականի վաստակով,
Զեռքդ դրած քո խոհերի եղանին,
Դայոց երգի կալն ես կալսել քրտնաքոր:
Որպես կալվոր՝ իրիկնային քամու դեմ
Զատել ես մեր երգ-ցորենը մղեղից,
Բանաստեղծի ավյունով ես ելել բեմ,
Գիտես ջոկել ջինջ աղբյուրը հեղեղից:
Թումանյանի աստղալույսով ջերմացած,
Դու Տերյանի երգի այգին ես մտել,
Մեծ Զարենցի հրաբխից խենթացած,
Շիրազի հորդ երգի ակունքն ես գտել:
Դու գտել ես Սեսրոպացած Սեւակին,
Զրույց բացել եմինի հետ աստղալուս,
Սիլվայի հետ ողջույն տվել սեր-ասքին,
Սահյանի հետ ծաղիկ փնջել նրբահյուս:
Առած երգի գաղտնիքների բանալին,
Նրանց սրտի նրբին լարերն ես տեսել,
Դու տեսել ես, թե ոնց վշտից դառնաղի
Ծիլ են տալիս հայամորմոք երգ ու սեր:
Սարինյանի իմաստության խոսքն առած,

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զրբաշյանի մտքի եռքն ես օրորում,
Աղաբաբյան-քննադատի լույս դառած
Խոհերի մեջ քո խոհերն ես որոնում:
Չեզք ես մեկնում Թամրազյանին կապուտաչ,
Դուռն ես բացում Գասպարյանի հնձանի,
Կարծիքները դասդասում ես ծախս ու աջ,
Խոսքերիդ մեջ հավատարիմ քո ձայնին:
Մեր այս դարի երգաբույլի հերքի մեջ
Մեր տառապած ազգի երթն ես նշնարում,
Պոետական քո թոհիչքով բազմատենչ,
Գնահատման քո աշխարհն ես արարում:
Որոնումով, գտնումներով քո լուսեն,
Բանաստեղծ ես՝ քննադատի խստությամբ:
Քո այս թեզում, որ երազով ես հյուսել,
Քննադատ ես՝ բանաստեղծի նրբությամբ
Այս թեզի մեջ դու դրել ես քո հոգին,
Ու քո երգից ոչ ոք այն չի բաժանի,
Վկան՝ համակ երգի փոխված քո ոգին,
Դոկտոր ես դու՝ այդ անվանը արժանի:

06.01.1998թ.

ՍՐՏԻ ԽՈՍՔ

Սարգիս Արրահամյանի սուրբ հիշատակին

Համո Սահյանն ասաց մի օր.
«Մեր մայրերն են՝ քույր Շոշ ու Լոր,
Քեզ օրինել է հայրը քո՝ Քիրս,
Ինձ օրինել է հայրն իմ՝ Մասիս:
Մենք այս կյանքում իրար գտանք,
Եղանք ազնիվ ու մտերիմ,
Եվ ուխտեցինք ընկեր մնալ»

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նստարանից մինչեւ շիրիմ»:
Մահը եկավ, ձեզ բաժանեց,
Հողն Արցախի, քեզ գիրկն առավ
Ու Սահյանն էլ մի օր հալվեց
Երգը շրթին նոր երգ դառավ:
Տարիները եկամ-անցան,
Ոտքի ելան եւ Շոշ, եւ Լոր,
Բազում կյանքեր երազ դարձան
Ժողովրդի պայքարում նոր:
Զեր անունը դրոշ դարձած
Ծածանվեցին շարքերի մեջ,
Դուք դարերի շքերթներուն
Երգի փոխված կապրեք հավերժ,
Կհանդիպեք նորից իրար,
Եվ իմաստուն, եւ մտերիմ.
Ու կքայլեք ու կքայլեք
Հետեւ թողած մահ ու շիրիմ:

1998թ., Ստեփանակերտ

ԵՍ ՀԻՇԵՑԻ

Ես հիշեցի...
Հիշեցի ես այս երեկո
Քո աստղալուս ժայխտները, քնքշանքը քո,
Քո նազանքը՝ գարնանային հովի նման,
Անրջանք՝ կապուտաչյա ծովի նման:

Ես հիշեցի...
Հարբեցնող բույրը մետաքս գանգուրներիդ,
Երազային համը՝ չեղած համբույրներիդ,
Քո հայացքի վառող հուրդ արեւային,
Քո աչքերի թուխ արեւը հարավային...

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ես հիշեցի...
Սիրտս ջերմին մի երգ դարձավ
Ու քո անվամբ երազ սիրո ուղին անցավ,
Եկավ... Եկավ... քո վարսերի մեջ մոլորվեց,
Ին երազած սիրո շնչիր մեջ խորովվեց:

1999թ., Ստեփանակերտ

1. ԲԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԻԿԸ

Անմոռանալի հարեւանիս, պետական գործիչ
Սուրեն Ղազարյանի հիշատակին

Բարության թեւերը հզոր են,
Պարզվում է՝ երգեր ունի նա,
Բարության ցավերը խոշոր են,
Պարզվում է՝ վերքեր ունի նա:

Բարությունն արմատներ ունի,
Ավիշ է թույրը բարության,
Նա լույսի նուրբ մատներ ունի,
Բուժիչ է թույրը բարության:

Բարության ծառը հավերժ է,
Նա՝ կյանքի իինք ու հենարան,
Նա մարդկանց սրտերի մեջ է,
Չի մտնում երբեք մենարան:

Բարության մայրը արեւն է,
Զեզ վկա Սուրենը, մարդիկ,
Բարին կյանքի հաղթ թեւերն է,
Բարին՝ բարության մարտիկ:

15.02.2002

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2. ԱԽ, ՍՈՒՏ ԼԻՆԵՐ

Ա՞խ, սուտ լիներ, ա՞խ, սուտ լիներ, մահը սուտ լիներ,
Աստծո հյուսած օրենքի մեջ մի քիչ գութ լիներ,
Չծերանար բարի մարդը՝ Աստծո օրինությամբ,
Աստված լրիվ աստվածանար Մարդու օգնությամբ:

Ճանդիպեին Մարդ ու Աստված, խելք-խելքի տային,
Կյանքի-մահվան հարցերի մեջ մի խոսքի գային,
Աստծո կերտած Մարդու սրտում չկաթեր սեւ թույն,
Աստված օգներ, որ Մարդն ապրի Աստծո հանգույն:

Թե չէ քանի՛ հազար տարի վախվորած, անքուն,
Բարի Մարդը առ Վերինը աղոթք է կարդում,
Բայց ցնդվում է այդ աղոթքը՝ փշուր-փշուր եղած,
Աստծո համար ապաշխարանք եղած թե չեղած:

Ա՞խ, սուտ լիներ, ա՞խ, սուտ լիներ, մահը սուտ լիներ,
Աստծո օծած իրամանում մի քիչ գութ լիներ,
Ճանդիպեին Մարդ ու Աստված, խելք-խելքի տային,
Կյանքի-մահվան հարցերի մեջ մի խոսքի գային:

16.02.02թ., կես գիշեր



Աջից՝ անձնուրաց ազատամարտիկ
Մեղա Ղազանչյանը եւ իր երեխաները

ԽԱՌՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՐԱԿԱՆ ՊԱՏԳԱՍ

Նվիրում եմ ԼՂՅ պաշտպանության նախարար,
գեներալ լեյտենանտ Սեյրան ՕՉԱՆՅԱՍԻՆ՝
ծննդյան 40-ամյակի առթիվ...

Ին խոհերի մեջ Արցախի ծայնն է,
Նրա անցյալն է, նրա ապագան,
Նրա երազի նուրբ ծիածանն է
Ու մեր պապերի սերն անապական:
Ին խոհերի մեջ Վարդանի թուրն է
Եվ ընդվզումն է քաջ Անդրանիկի,
Մաշտոցի վառած հավերժող հուրն է,
Կենաց ավիշն է մայր հայրենիքի:
Սարդարապատի կանթեղն է անմար
Եվ Բաղրամյանի վարած մարտերը,
Դայ զինվորյալի կամքն է՝ միշտ համառ
Եվ նրա արյամբ օծված վարդերը:
Ին խոհերի մեջ Արցախի բախտն է,
Փրկված պատիվն է նորօրյա երթուն,
Քո եւ զինվորիդ անզիջում մարտն է՝
Դարի շրթերին դարձած սուրբ երդում:
Դու հայ մարտիկի լուսե պատվանուն,
Ին որդի եւ իմ հրամանատար,
Մեր այսքան բարի եւ չար աշխարհուն
Բանակդ դեպի լույս ափերը տար:
Քո զինվորների ուժը բռունցքիր,
Սրերով գոցիր թշնամու ճամփան,
Եվ ծփանքները հաղթական հունձքիդ
Օժիր Նժդեհի մտքով մարտական:
Ընդունիր երգս՝ որանս հոր պատգամ,
Միշտ պարզած պահիր մեր Թուր-Կայծակին,

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թրերը պատյան չեն դնում անգամ
Հաղթանակների արեւածագին:
Դու հայ սպայի լուսե պատվանուն,
Ին որդի եւ իմ հրամանատար,
Հզոր բանակդ այս բարդ աշխարհում
Դեպի մեր վերջին հաղթանակը տար:

2002թ., հուլիս, Ստեփանակերտ

ՄԱՂԹԱՆՔ

Երգահան Զաքար Քեշիշյանին

Վարիր, Զաքար, վարիր,
Երգի երթը վարիր,
Երգի հետքը վարիր
Զո լույս ճամփին
Վառիր, Զաքար, վառիր,
Երգի հույսը վառիր,
Երգի լույսը վառիր՝
Ինչան արկի:
Կապիր, Զաքար, կապիր,
Երգի նոր ծիածան
Ժողովորի հոգում
Մեր ցիրուցան,
Հեռու Լիբանանից,
Կիլիկիո տան հուշից
Կարուտները հասցրու
Փրկված Շուշի:
Ծաղկեցրու, Զաքար,
Սիրո զիգզագ ուղին...
Սիրո անբիժ հյուղի
Լույսը վառիր,

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սերը քո անձնական,
Սերը անանձնական,
Որպես հոգու անուրջ,
Դարձրու կամուրջ:
Երջանիկ ես, Զաքար,
Ունես երգի քանքար,
Եվ Դիցուհի ունես
Քաղցր սիրո,
Երջանիկ ես, Զաքար,
Չո Արցախով վարքար,
Եվ Արցախում գտած
Եղբայրներով:

1.09.2005թ., Ստեփանակերտ

Տարիքս անցան, երազս մնաց,
Երազներիս մեջ պատանի եմ դեռ,
Ծաղիկների մեջ թեւերս միշտ բաց,
Ապրում եմ ինչպես մայիսյան թիթեռ:
Մտքով փարզում եմ վարդերին բուրող,
Ընպելով ցողը աստղաբույլերի,
Երազանքներս նետեր են սուրող,
Սիրտս հնոց է՝ վառվող թույրերի:
Ապրում եմ՝ երգիս տողերին ծարավ,
Խոհս արեւի գիրկն է ինձ տանում,
Հույզիս աշխարհը աղբյուր է վարար,
Կյանքը ինձ երբեք չի դավաճանում:
Եվ կապրեմ այսպես, կմնամ այսպես,
Կքայլեմ անվերջ Աստծո ճամփով,
Կարարեմ կյանքում խաչի պապիս պես,
Կյանքին սիրահար, երազներով կեզ:

2005թ., Ստեփանակերտ

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՅԱՎ Է, ՄՐՄՈՒՌ Է

Թոռնիկիս՝ Արայիկի հիշատակին

Բոլորում է արդեն տարին,
Սրինգս լուր է,
Սիրտս սիրտ չէ, զոհն է չարի,
Յավ է, մրմուր է:
Արցունքներս չեն չորանում,
Թախիծն ծով է,
Հոգիս ամպի սար է դառնում,
Բերկրանքի սով է:
Ժախտներս մշուշոտ են,
Կարոտ եմ ձայնիդ,
Երազներս սուր-փշոտ են,
Կարոտ եմ քայլիդ:
Ո՞ւմ նախատեմ՝ կյանքի՞ն, մարդո՞ւմ,
Թե՝ Տիրոջը Վերին,
Թոռը պապի հույսն է ծաղկուն,
Պապի հույսն է՝ լ մարի...

21.05.2005թ., Ստեփանակերտ

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

ՀՀ Աժ-ում մի պատգամավորի
«Ելույթից» հետո

Ես մի ցավ ունեմ-դա Ղարաբաղն է,
Որ Հայոց սրտից պոկել են «մարդիկ»,
Հանուն աթոռի ցավս ով մոռանա,
Ես նրա հանդեպ կղառնան մարտիկ:
Եղբայրս էլ լինի եւ անգամ որդիս,
Իմ հայկյան նետը սիրտը կխրեն,

ԽԱՌՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԱՐ

Անգամ Աստվածը, թե ներում խնդրի,
Նրան էլ սրով գետնին կփռեմ:
Գեղամա լեռան անունով կոչվի,
Սիփան սարի, թե անվամբ Մռովի,
Դավաճանը պիտ հավիտյան կորչի,
Վասակ Սյունի է, ով էլ մեզ դավի:
Ես մի ցավ ունեմ-դա Ղարաբաղն է,
Նա պիտի ծուլվի մայր Հայաստանին,
Նա Հայոց պատվի լուս-շամանդաղն է,
Ով չհասկացավ, մահն իր կգտնի,
Նա կգտնի իր մահը անարգել,
Մատնացույց կարվի գալիքին ի տես,
Եթե չհասցնեմ գործն իմ ավարտել,
Թոռն իմ կավարտի Եղիշեի պես:

2005թ., Ստեփանակերտ

ԵՐԿՈՒ ԸՆԿԵՐ

Նվիրում եմ անվանի գիտնակամներ
Սերգեյ Մելքոնյանին եւ Գառնիկ Անանյանին՝
«Ձերմուկ»առողջարանում բուժվելու առթիվ

Երկու ընկեր՝ Սերգեյ-Գառնիկ,
Երկու հսկա, բերդ անառիկ,
Արեւի հետ ելնում քնից,
Կուշտ խմում են «Ձերմուկ» ջրից,
Խմում են, որ ջահելանան,
Ոչ թե արագ ահելանան...
Կուշտ խմում են «Ձերմուկ» ջրից,
Ասես ուժ են առնում իրից,
Սասնա Դավթի Կայծակ-թրից...
Սեր Սերգեյը՝ քարի գիտակ,

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սեր Գառնիկը՝ բարի գիտակ:
Խոսք են տալիս ու խոսք առնում,
Խոսքի ուժով հպարտ հառնում,
Հիշում անցած օրերը վառ,-
Սերք երջանիկ, մերք՝ հողմահար,
Ժախտներն են հիշում սիրո,
Օրինում ուժն ու սերը Տիրոջ...
Ասում՝ մենք ոնց Մեծ սերմնացան,
Կյանքին բերինք հուղ-ծիածան,
Մտքի ծովում իմաստնացանք,
Բազում խոչ ու խութեր անցանք,
Տկարացանք, սակայն ինչո՞ւ,
Մենք միշտ կայինք ամեն ինչում:
Դեհ, ուրեմն, Ելնենք նորից,
Ոնց Ռավիթը՝ Մսրա հորից,
Ելնենք, խմենք «Զերմուկ» ջրից,
Վրեժ լուծենք կյանքի սրից,
Հրաժեշտ տանք ահելներին
Ու միանանք ջահելներին,
Առաջվա պես հպարտ հառնենք,
Գիտության նոր բարձունքն առնենք,
Մտնենք սիրո ծաղկուն ճամփան,
Չմոռանանք սեր ու համբավ...

19.08.2005թ., Զերմուկ

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՅՍ ԼԵՌՆԵՐԻ ԳՐԿՈՒՄ

Նվիրում եմ «Ձերմուկ» առողջարանի
գլխավոր բժիշկ, հարգարժան
Ստեփան Ավագյանին

Այս լեռների գրկում,
Աստղոտ այս լեռների,
Աստված իր օրինանքով
Թող քեզ բարիք բերի:
Առողջությանք քո կուռ
Առողջարան պահես,
Ճիվանդների սիրտը
Քո բարությանք շահես:
Քո անվան հետ մարդիկ
Իրենց հույսն են կապում,
Քեզ կոչում են մարտիկ
Առողջության մարտում:
Դալար մնա ձեռքդ
Գրկում մեր լեռների,
Նոր բարձրացող շենքդ
Թող երկինքը քերի:
Թող չսպառվի երբեք
Լույսի աղբյուրը քո,
Կյանքդ դառնա օրիներգ,
Ապրես ուրախ հոգով:
Այս լեռների գրկում՝
Աստղոտ այս լեռների,
Աստված իմ խնդրանքով
Քեզ բարիքներ բերի:

21.08.2005թ., Ձերմուկ

ԽԱՌՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՐՈՏԻ ԿԱՆՉ

Ալիսա Կիրակոսյանին՝ Արցախ
այցելելու առթիվ

Արցախա հողում ես հաօնած կաղնի,
Ին արմատների, շյուղերի տերն եմ,
Սակայն միշտ քեզ հետ խոցվել եմ սրտից,
Քանզի կորուսյալ երկիրը մերն է,
Ղեր-Զորում ջարդված թեւերը մերն են,
Ավազի փոխված սերերը մերն են,
Ուժացվող-հզոր Սփյուռքը մերն է,
Սամումի փոխվող մեղմ սյուքը մերն է...
Մի ժողովուրդ ենք՝ եւ տասնյակ լեզու,
Մի հոգի ունենք՝ տասնյակ տարբերակ,
Մի երեւան է՝ լույսերով օծուն,
Արաքսից այն կողմ՝ երկիր ավերակ:
Սփյուռքը էլի մեր հույսն է, Ալիս,
Սփյուռքի երգը մեր հույզն է, Ալիս,
Իսպաներենը քեզնով հայացավ,
Արգենտինան մեզ քեզնով մոտեցավ,
Բուենոս-Այրեսը խոսեց երգիդ մեջ,
Լոս-Անջելեսը բացեց իր գիրկը,
Սակայն արցունքուտ կարոտից ծնված
Քո աստղը վառեց Հայոց երկինքը:
Ողջույնի ծափ չէ խոսքս, Ալիսա,
Տրոփող սրտիս երգն եմ քեզ բերում,
Երբ սրտի կանչով Արցախ եք գալիս,
Մենք ավելի ենք Արցախը սիրում:
Մենք առավել ենք արցախցի դառնում,
Մենք առավել ենք կարոտում իրար,
Դուք առավել եք մեր հոգում հաօնում,

ԽԱԴՆ ՔԱՆԱՏՆԴՇՈՒԹՑՈՒՆՆԵՐ

Զեր երգն է գրվում մեր սրտի վրա:
Դուք Արցախ գալով՝ ձեր երգերի հետ
Ժպտում է մեր կուռ անպարտությունը,
Անպարտության հետ՝ փարված գալիքին,
Ծփում է եւ մեր հպարտությունը...
Պատուիհանները մեր բաց են լույսին,
Համազարկվում է հաղթանակը մեր,
Զեր այցելությամբ, քույր մեր, Ալիսա,
Աստվածն՝ ինքն էլ է առնում նոր թեւեր:

24.10.2005թ., Ստեփանակերտ

ՄՈՐՄՈՔ

Արեւմտյան Հայաստանը պատկերող
ֆիլմը դիտելուց հետո

Նորից մտքով շրջում եմ ես
Իմ կորուսյալ հայրենիքում,
Հարազատ մոր օջախի պես
Երգ է դառնում նա իմ հոգում:
Մեր հավատն է՝ նախշակամար.
Մեր հավատն է՝ փշուր-փշուր,
Մեր հավատն է՝ նախշ ու հնար.
Մեր հավատը՝ երազի ջուր:
Դու՝ կորուսյալ իմ Հայաստան,
Իմ սրտի կես, իմ արյան կանչ,
Դու կարոտն իմ Արցախս տան,
Դու մեր հույսը՝ կանաչ-կանաչ:
Սուրբ Կարապետ՝ երգերիս գուռ,
Հոգուս պատկեր իմ Աղթամար,
Սուրբ Մաշտոցի գրերի դուռ,
Խորենացու մտքի կամար:

ԽԱՌՆ ՔԱՆԱՏՆԴՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դու Չարենցի արնավառ որք,
Դու Շիրազի երազ Անի,
Թե մի օր ձեզ տուն չբերենք,
Թող գետն ընկնենք ու մեզ տանի:

2005թ., Ստեփանակերտ

1. ԲԱՐԻ ԼՈՒՅ

Արդյ ճահատակված ուսանողների
քանդակ-հոլշաքարի առջեւ

Բարի լույս, տղերք,
Զեր բարի լույսը մեր հույսն է, որ կա,
Զեր բարի լույսը՝ շողոտ տիեզերք,
Զեր բարի լույսը՝ սերեր՝ արեւկա:
Զեր հայացքներում հեքիաթն է կյանքի,
Ազգի փրկության Ասքն է կարկաչուն,
Զեր սխրանքները երգն են մեր փառքի,
Հրդեհված երգը, որ էլ չի հանգչում:
Զեր հայացքներում՝ մայրերի շոյանք,
Զեր հայացքներում՝ թախծոտ երազներ,
Զեր հայացքներում՝ հայրերի հորդոր,
Զեր հայացքներում՝ չհոգնող թեւեր:
Բարի լույս, տղերք, հազար բարի լույս,
Զեր կենաց գինով լիքն է մեր թասը,
Թեկուզ գնացիք որպես ուսանող,
Բայց մենք ենք հիմա լսում ձեր դասը:

09.05.2006թ., Ստեփանակերտ

2. ԱՆՑՎՈՐ, ԽՈՆԱՐԴՎԻՐ

Անցվոր, խոնարհվիր այս հուշարձանին,
Այստեղ ննջում են հերոսները մեր,
Իրենց պապերի ոգուն արժանի,
Նրանք դարձել են փարոսները մեր:
Դաժան թշնամուց, վրեժով լեցուն,
Նրանք փրկել են երկիրը մեր թանկ,
